

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ  
ՆԱՄԱԼՍԱՐԱՆ

## ՍԵՐԳԵՅ ՍԵՂՈՅԱՆ

ԱՌԱՔԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆԻ  
ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԻՐԱՎԱՔԱՆԱԿԱՆ  
ԲՆՈՒՅԹԸ ԵՎ ՈՐԱԿԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ  
ԱՊԱՅՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ  
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱԿԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ՍԵՐԳԵՅ ՄԵՂՐՅԱՆ**

**ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆԻ  
ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ  
ԲՆՈՒՅԹԸ ԵՎ ՈՐԱԿԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ  
ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ  
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**ԵՐԵՎԱՆ  
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
2020**

ՀՏԴ 347  
ԳՄԴ 67.404  
Մ 586

*Հրատարակության է երաշխավորել ԵՊՀ իրավագիտության  
ֆակուլտետի գիտական խորհուրդը:*

**Մեղրյան Ս. Գ.** – իրավաբանական գիտությունների թեկնածու,  
ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի դոցենտ

Մեղրյան Սերգեյ Գուրգենի  
Մ 586 Առաջին ատյանի դատարանի դատական ակտերի իրավաբանա-  
կան բնույթը և որակական կայունության ապահովման հիմնա-  
խնդիրները քաղաքացիական դատավարությունում/Ս. Գ. Մեղրյան:  
Եր.: ԵՊՀ հրատ., 2020, 194 էջ:

### **Գրախոսներ՝**

**Հովհաննիսյան Վ. Վ.,** ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի  
վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

**Մարկոսյան Տ. Ա.,** ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի  
ասիստենտ, իրավ. գիտ. թեկնածու, ՀՀ ՏՄՊՊՀ անդամ

*Մենագրությունում ՀՀ և այլ երկրների քաղաքացիական դատավարության  
օրենսդրության, ՄԻԵԴ վճիռների, Սահմանադրական դատարանի, Վճռաբեկ դա-  
տարանի որոշումների, դատական պրակտիկայի նյութերի և դատական վիճակա-  
գրության փյալների, ինչպես նաև տեսական աղբյուրների ուսումնասիրության հի-  
ման վրա վերլուծվել և լուսաբանվել են առաջին ատյանի ընդհանուր իրավասության  
դատարանների դատական ակտերի ինստիտուտը, ՀՀ նոր ՔԴՕ-ի ընդունմամբ գոր-  
ծող դատավարական օրենսդրության մեջ կատարված փոփոխությունները, վեր են  
հանվել ներկայումս գործող իրավակարգավորման թերություններն ու բացթողմնե-  
րը, կատարվել են ինստիտուտի հետագա զարգացմանն ուղղված առաջարկություն-  
ներ:*

*Աշխատությունը կարող է օգտակար լինել իրավաբանական բուհերի, դպրոցնե-  
րի և ֆակուլտետների ուսանողների, մագիստրանտների, ասպիրանտների, դասա-  
խոսների, փաստաբանների, դատական մարմինների աշխատողների, ինչպես նաև  
դատական ակտերի հիմնախնդրով հետաքրքրվող այլ անձանց համար:*

ՀՏԴ 347  
ԳՄԴ 67.404

ISBN 978-5-8084-2427-2

© Մեղրյան Ս. Գ., 2020  
© ԵՊՀ հրատ., 2020

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**ՆԱԽԱԲԱՆ** ..... 5

## **ԳԼՈՒԽ I**

**ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ԿԱՅԱՑՎՈՂ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԷՈՒԹՅՈՒՆԸ**..... 9

**§1. Առաջին ատյանի դատարանի դատական ակտերի հասկացությունը և տեսակները**..... 9

**§2. Վճռի էությունը և տեսակները** ..... 13

**§3. Դատական որոշումների էությունը և տեսակները** ..... 36

**§4. Վճարման կարգադրությունը՝ որպես դատական ակտի ինքնուրույն տեսակ** ..... 52

## **ԳԼՈՒԽ II**

**ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՅԱՑՎՈՂ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**..... 68

**§1. Առաջին ատյանի դատարանի կողմից կայացվող դատական ակտերին ներկայացվող պահանջները**..... 68

*1.1. Դատական ակտի օրինականությունը*..... 70

*1.2. Դատական ակտի հիմնավորվածությունը* ..... 81

*1.3. Դատական ակտի պատճառաբանվածությունը*..... 89

*1.4. Որոշակիությունը (կարեգորիկ բնույթը)*..... 101

*1.5. Դատական ակտի անպայմանականությունը* ..... 104

*1.6. Դատական ակտի լրիվությունը* ..... 105

*1.7. Դատական ակտերին ներկայացվող այլ պահանջներ*..... 107

<b>§2. Առաջին ատյանի դատարանի կողմից կայացվող դատական ակտերի ձևը, կառուցվածքը և բովանդակությունը.....</b>	<b>110</b>
2.1. Վճռի կառուցվածքը և բովանդակությունը.....	113
2.2. Առանձին ակտի ձևով կայացվող որոշումների կառուցվածքը և բովանդակությունը.....	125
2.3. Վճարման կարգադրության կառուցվածքը և բովանդակությունը .....	130

**ԳԼՈՒԽ III**

<b>ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՅԱՑՎՈՂ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆ ՈՒԺԸ.....</b>	<b>137</b>
---	------------

<b>§1. Դատական ակտերի օրինական ուժի մեջ մտնելու հասկացությունը և ժամկետները.....</b>	<b>137</b>
<b>§2. Առաջին ատյանի դատարանի դատական ակտերի օրինական ուժի մեջ մտնելու հետևանքները .....</b>	<b>145</b>
2.1. Եզրափակիչ դատական ակտի օրինական ուժի հետևանքները .....	145
2.2. Միջանկյալ դատական ակտերի օրինական ուժի իրավական հետևանքները.....	159

**ԳԼՈՒԽ IV**

<b>ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՑՈՒՄՆ ԱՅՆ ԿԱՅԱՑՆՈՂ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ .....</b>	<b>165</b>
---	------------

<b>§1. Լրացուցիչ վճիռ (որոշում) կայացնելը .....</b>	<b>166</b>
<b>§2. Վրիպակները, գրասխալները և թվաբանական սխալներն ուղղելը .....</b>	<b>175</b>
<b>§3. Դատական ակտի պարզաբանումը .....</b>	<b>180</b>

<b>ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ, ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿ.....</b>	<b>185</b>
---	------------

## ՆԱԽԱԲԱՆ

Դատական իշխանության մարմինների գործունեությունն այլ պետական մարմինների գործունեությունից տարբերվում է նրանով, որ այն իրականացվում է օրենքով ամրագրված հատուկ դատավարական ձևով, իսկ գործունեության արդյունքները ձևակերպվում են Հայաստանի Հանրապետության անունից կայացված դատական ակտերում՝ վճիռներում, որոշումներում, վճարման կարգադրություններում:

Դատական ակտերում իրացվում են դատական իշխանության նպատակները՝ քաղաքացիների, կազմակերպությունների և իրավունքի այլ սուբյեկտների խախտված կամ վիճարկվող իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանությունը, դրանց անարգել իրականացման հնարավորության ապահովումը: Դատական ակտերի միջոցով դատական իշխանությունը ոչ միայն նպաստում է քաղաքացիական շրջանառության բնականոն զարգացմանը, այլ նաև իրականացնում է նախականիչ և դաստիարակչական գործառույթներ:

Քաղաքացիական դատավարությունում դատական ակտեր կայացվում են վարույթի բոլոր տեսակներում, դատավարության բոլոր փուլերում: Դատական ակտերը, ըստ էության, արտացոլում են և՛ գործով դատավարության ընթացքը, և՛ բուն արդյունքները: Դրանք ոչ միայն եզրափակում են գործի առանձին փուլերը կամ ընդհանրապես վարույթը տվյալ դատական ատյանում, այլ նաև ուղեկցում են արդարադատության իրականացման ողջ գործընթացը՝ գործի հարուցման պահից մինչև վճռի կայացման, վերաքննիչ ու վճռաբեկ վերանայման ու կատարման պահը:

Դատական իշխանության մարմինների կողմից իրականացվող արդարադատության որակը մեծապես պայմանավորված է ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանների կայացրած դատական ակտերի որակով և կայունությամբ:

Առաջին ատյանի դատարանի դատական ակտերն են առաջին հերթին արտացոլում դատարանի՝ որպես քաղաքացիական գործե-

րով արդարադատություն իրականացնելու համար լիազորված պետական (դատական) իշխանության մարմնի իրավակիրառ գործունեության մակարդակը, դրա համապատասխանությունը ՀՀ-ի կողմից վավերացված միջազգային պայմանագրերով, այդ թվում նաև՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով և ՄԻԵԴ վճիռներով սահմանված սկզբունքներին ու ստանդարտներին: Դատական համակարգի առաջին օղակի դատական ակտերի վերլուծության արդյունքներով կարելի է դատողություններ անել այն մասին, թե որքանով են Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը և դատական համակարգն ապահովում իրավունքի սուբյեկտների դատական պաշտպանության, արդար դատաքննության, արդյունավետ միջոցներով իրավունքի պաշտպանություն ստանալու սահմանադրական և միջազգային-իրավական հանրաճանաչ իրավունքները:

Քաղաքացիական գործերի հարուցման, քննության և լուծման դատավարական ձևի շրջանակներում քաղաքացիական դատավարական օրենսդրությունն ավանդաբար կանոնակարգում է առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների կողմից կայացվող բոլոր տեսակի դատական ակտերի կայացման, հրապարակման, հասցեատերերին հանձնելու կարգը, դատական ակտերի ձևը, կառուցվածքը և բովանդակությունը, սահմանում է դրանց ներկայացվող պահանջները, օրինական ուժի մեջ մտնելու կարգը և գործողության իրավական հետևանքները, դատական ակտերում առկա թերությունները, այդ թվում՝ դատական սխալները վերացնելու դատավարական եղանակները՝ ըստ էության, ամրագրելով դատական ակտերի որակական կայունության ապահովման երաշխիքների կուռ համակարգ:

Չնայած թեմայի կարևորությանը և Հայաստանի Հանրապետությունում դեռևս 1998 թվականից սկսված դատաիրավական բարեփոխումների շարունակական բնույթին՝ դատական ակտերի ինստիտուտն Հայաստանի Հանրապետությունում գիտական մակարդակով համակողմանիորեն չի ուսումնասիրվել:

«Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների կողմից կայացվող դատական ակտեր» հասկացության, նման ակտերի էության, դրանց ներկայացվող պահանջների, օրինական ուժի և դրա իրավական հետևանքների հիմնահարցերի համակողմանի լուսաբանումը ՀՀ-ում կատարվել է կա՛մ դասագրքերի<sup>1</sup>, կա՛մ ուսումնական ձեռնարկների շրջանակներում<sup>2</sup>: Իհարկե, թեմային առնչվող որոշ հարցեր արծարծվել են նաև հայ հեղինակների առանձին մենագրություններում, ատենախոսություններում և գիտական հոդվածներում<sup>3</sup>, սակայն հաշվի առնելով կատարված հետազոտությունների առարկան՝ նշված աշխատություններում ուսումնասիրվել են դատական ակտերի ինստիտուտին վերաբերող միայն առանձին հարցեր:

Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների կողմից կայացվող դատական ակտերի ինստիտուտի համակողմանի վերլուծության առաջին փորձը կատարել ենք 2010 թվականին լույս տեսած «Առաջին ատյանի դատարանի քաղաքացիական գործերով դատական ակտերը» վերտառությամբ աշխատության շրջանակներում, ու թեև 2018 թվականի փետրվարի 9-ին ընդունված նոր Քաղաքացիական դատավարության օրենսգրքում<sup>4</sup> հիմնականում կենսագործվել է նշված հետազոտության արդյունքում մշակված առաջարկությունների զգալի մասը, թեմայի հետագա ուսումնասիրությունն իր արդիականությունը և հրատապությունը չի կորցրել:

Անվիճելի է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության նոր

---

<sup>1</sup> Տե՛ս, օրինակ, **Պեքրոսյան Ռ. Գ.**, Հայաստանի քաղաքացիական դատավարություն, 3-րդ հրատ., Եր., Երևանի համալս. հրատ., 2007, էջ 452-482:

<sup>2</sup> Տե՛ս, օրինակ, **Դավթյան Ա. Հ.**, Քաղաքացիական դատավարություն, Եր., «Տիգրան Մեծ» հրատ., 2007, էջ 149-159:

<sup>3</sup> Տե՛ս, օրինակ, **Պեքրոսյան Ռ. Գ.**, Դատարանը և քաղաքացիական դատավարությունը Արևելյան Հայաստանում XIX-XX դարերում (պատմաիրավական հետազոտություն և օրենսդրության իրավահամեմատական վերլուծություն), Երևանի համալս. հրատ., Եր., 2001, **Հովհաննիսյան Վ. Վ.**, Վերաքննության կարգով դատական ակտերի վերանայման հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում, Եր., ԵՊՀ հրատ., 2013:

<sup>4</sup> Ուժի մեջ է մտել 09.04.2018 թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2018.03.05/16(1374): Այսուհետ՝ ՔԴՕ:



օրենսգիրքը ընդունվեց և նույնիսկ հասցրեց հետագա փոփոխությունների ենթարկվել որոշակի շտապողականության պայմաններում, ինչի արդյունքում օրենքում տեղ գտան բազմաթիվ հակասական, ոչ հստակ և խնդրահարույց կարգավորումներ, իրավական կարգավորման բացեր: Այդ իրողությունը, անկասկած, հղի է բազմաթիվ անցանկալի հետևանքներով, քանի որ յուրաքանչյուր իրավական ինստիտուտ (դատական ակտերի ինստիտուտն առավել ևս) կարող է կիրառման արդյունավետություն ապահովել միայն այն դեպքում, երբ զերծ է դրա արդյունավետ կիրառմանը խոչընդոտող թերություններից, ապահովված են դրա կատարելագործմանն առնչվող խնդիրների լուծման համակողմանիությունն ու իրավական մյուս ինստիտուտների հետ փոխհամաձայնեցված գործունեությունը: Այդ բարդ խնդիրների արդյունավետ լուծումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ գիտական հետազոտություններում բազմակողմանիորեն վերլուծված է առկա իրավական կարգավորումը, վեր է հանված ոլորտին առնչվող լավագույն փորձը, նախանշված է ինստիտուտի արդյունավետության ապահովման հստակ տեսլականը, և մշակված են դրա հետագա զարգացման համար անհրաժեշտ կողմնորոշիչները:

Նոր օրենսգրքի ընդունման արդյունքում կատարված և ներկայումս էլ արդեն նախանշվող փոփոխություններն ու լրացումները, օբյեկտիվ անհրաժեշտություն են դարձնում դրանց նորովի գիտական իմաստավորումը, համակարգային բազմակողմանի վերլուծությունը և հետագա կատարելագործման ուղիների մշակումը:

Վերը շարադրվածով և մի շարք այլ հանգամանքներով էլ պայմանավորված է սույն աշխատության շրջանակներում կատարված ուսումնասիրության արդիականությունը<sup>5</sup>:

---

<sup>5</sup> **Ծանոթագրություն:** Սույն աշխատությունը շարադրված է 2019 թվականի ապրիլի 1-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության գործող իրավական ակտերի հիման վրա, ուստի այստեղ արտացոլված չեն տպագրության հանձնելուց հետո Հայաստանի Հանրապետությունում նոր ընդունված նորմատիվ իրավական ակտերը կամ գործող իրավական ակտերում կատարված փոփոխություններն ու լրացումները:

# ԳԼՈՒԽ I

## ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ԿԱՅԱՑՎՈՂ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԷՈՒԹՅՈՒՆԸ

### ***§1. Առաջին ատյանի դատարանի դատական ակտերի հասկացությունը և տեսակները***

Քաղաքացիական դատավարությունը, ինչպես հայտնի է, հետապնդում է մի շարք նպատակներ, այդ թվում՝ գործի ըստ էության լուծումը և իրավունքի սուբյեկտների խախտված կամ վիճարկվող իրավունքների, օրինական շահերի պաշտպանությունը: Այդ նպատակին հասնելու համար առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանները (այսուհետ՝ առաջին ատյանի դատարան) դատավարության բոլոր փուլերում՝ վարույթի հարուցման պահից մինչև դրա ավարտը, լուծում են բազմաթիվ խնդիրներ՝ վարույթի մասնակիցների հետ մտնելով քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ կարգավորվող զանազան հարաբերությունների մեջ և միաժամանակ իրացնելով դատավարական իրավունքի նորմերը: Վերջիններս իրացնում են ոչ միայն դատարանները, այլ նաև քաղաքացիական գործի քննությանը մասնակցող բոլոր անձինք իրենց իրավունքներն իրականացնելու, պարտականությունները կատարելու, դատավարական օրենսդրությամբ ամրագրված արգելքները պահպանելու միջոցով: Սակայն միայն դատարանն է, որը՝ որպես քաղաքացիական գործերով արդարադատություն իրականացնելու համար լիազորված պետական (դատական) իշխանության մարմին, իրավունքի նորմերի իրացման այլ ձևերի հետ մեկտեղ իրականացնում է իրավակիրառ գործունեություն: Վերջինս միշտ կապված է համապատասխան իրավակիրառ ակտի ընդունման և ձևակերպման հետ:

Քաղաքացիական գործի հարուցման, քննության և լուծման, ինչպես նաև կատարողական վարույթի ընթացքում դատարանը սեփական նախաձեռնությամբ կամ կողմերի դիմումով (միջնորդությամբ) իրականացնում է իրենց նշանակությամբ տարաբնույթ իրավական արժեք ունեցող գործողություններ և համապատասխանաբար կայացնում է տարբեր իրավաբանական բնույթ ունեցող որոշումներ, որոնք, ուղղված լինելով քաղաքացիական դատավարության միջանկյալ խնդիրների լուծմանը և վերջնական նպատակների իրագործմանը, արտահայտում են դատավարական և նյութաիրավական հարցերի (խնդիրների) լուծման կապակցությամբ դատարանի իշխանական բնույթի դատողությունները, պատճառաբանություններն ու եզրակացությունները և ձևակերպվում են օրենքով խստորեն սահմանված դատավարական ձև ունեցող փաստաթղթերում՝ դատական ակտերում:

Մ. Կ. Տրեուշնիկովի բնորոշմամբ դատական ակտը դատարանի (դատավորի) կողմից գրավոր ձևակերպված ակտ է, որում արտահայտված են դատավարական և նյութաիրավական հարցերի լուծման կապակցությամբ դատարանի իշխանական բնույթի դատողություններն ու եզրակացությունները<sup>6</sup>: Մ. Կ. Ջագայնովան քաղաքացիական գործերով կայացվող դատական ակտերը բնորոշում է որպես քաղաքացիական գործերով արդարադատության իրականացման կապակցությամբ կայացվող դատավարական ակտերփաստաթղթեր, որոնցում արտացոլվում են քաղաքացիական գործունեության արդյունքները, ինչպես նաև արդարադատական գործունեության ընթացքում ծագող ընթացակարգային հարցերի լուծումը<sup>7</sup>:

ՔԴՕ 188-րդ հոդվածի համաձայն՝ առաջին ատյանի դատարա-

<sup>6</sup> Տե՛ս Гражданский процесс. Под ред. М. К. Треушников, М.: «Городец», 2003, էջ 364:

<sup>7</sup> Տե՛ս **Загайнова С. К.**, Судебные акты в гражданском и арбитражном процессе: теоретические и прикладные проблемы. Автореф. дисс... д.ю.н., Екатеринбург, 2008, էջ 14:

նը կայացնում է վճիռներ, որոշումներ, իսկ օրենքով նախատեսված դեպքերում արձակում է նաև վճարման կարգադրություններ: Նշված դատական ակտերը միմյանցից տարբերվում են թե՛ իրենց նշանակությամբ և թե՛ իրավաբանական բնույթով:

ՔԴՕ 189-րդ հոդվածի 1-ին մասում ձևակերպված ընդհանուր կանոնի ուժով առաջին ատյանի դատարանը գործն ըստ էության լուծելու դեպքում կայացնում է վճիռ: Ընդ որում, վճռահատությամբ են ըստ էության լուծվում և՛ հայցային բնույթի գործերը, որոնցով դատական քննության առարկան իրավունքի մասին վեճն է, և՛ հատուկ վարույթի գործերը, որոնց շրջանակներում դատարանի խնդիրն է շահագրգիռ անձի դիմումով վերացնել փաստի վերաբերյալ առկա կամ հնարավոր վեճը:

Հետևաբար, **վճիռը կարող է բնորոշվել որպես առաջին ատյանի դատարանի կողմից կայացվող դատական ակտ, որով ըստ էության լուծվում է գործը, այն է՝ հաստատվում են վիճելի իրավունքի, վիճելի պարտականության, վիճելի իրավահարաբերության առկայությունը կամ բացակայությունը, հատուկ վարույթի գործերով՝ այլ իրավական հանգամանքները, ինչի հետևանքով այդ իրավահարաբերությունը և/կամ իրավական հանգամանքները վիճելից դառնում են անվիճելի, իսկ դատական ակտով հաստատված սուբյեկտիվ պարտականությունները՝ ենթակա հարկադիր կատարման:** Դատավարագիտության մեջ համընդհանուր ճանաչում գտած նման բնորոշումը թույլ է տալիս վճիռն այլ կերպ անվանել նաև «գործն (վեճը) ըստ էության լուծող դատական ակտ»:

Գործն ըստ էության լուծող դատական ակտերում է առավել ակնհայտորեն արտահայտվում դատական իշխանության կամքը խախտված կամ վիճարկվող իրավունքների, իսկ հատուկ վարույթի գործերով՝ օրենքով պահպանվող շահերի պաշտպանության կապակցությամբ:

Գործն ըստ էության լուծող դատական ակտերից՝ վճիռներից բացի, գործը քննող դատարանը կայացնում է նաև **որոշումներ**,

որոնք լուծում են ոչ թե իրավունքի պաշտպանությանն ուղղված վարույթի հիմնական հարցը՝ հայցվորի, պատասխանողի կամ դիմողի կողմից հայտարարված նյութաիրավական պահանջները, այլ դատական, արբիտրաժային, հաշտարարական կամ կատարողական վարույթի ընթացքում ծագող մասնավոր (ընթացիկ) հարցերը:

ՔԴՕ 188-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ օրենսգրքով նախատեսված դեպքերում առաջին ատյանի դատարանն արձակում է **վճարման կարգադրություններ**:

Ներկայումս քաղաքացիական դատավարությունում գործառում է նաև վճարման կարգադրություն արձակելու գործերի վարույթը, որը խախտված սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության պարզեցված ընթացակարգ է (ՔԴՕ 43-րդ գլուխ): Այդ կապակցությամբ որպես քաղաքացիական գործերով կայացվող դատական ակտերի ինքնուրույն տեսակ հարկավոր է դիտարկել նաև վճարման կարգադրությունը, որի արձակմամբ առաջին ատյանի դատարանում որոշակի կատեգորիայի գործերով ավարտվում է դատավարական գործունեությունը<sup>8</sup>:

Վճարման կարգադրություն արձակելու գործերի վարույթը կարգավորող նորմերի բովանդակությունից բխում է, որ *վճարման կարգադրությունը պարտապանից որոշակի դրամական գումարներ բռնագանձելու վերաբերյալ առերևույթ (prima face) հիմնավոր պահանջով առանց դատական նիստ հրավիրելու, բանավոր ապացույցներ հետազոտելու և պահանջի հիմնավորվածությունն ըստ էության ստուգելու, դատարանի կողմից դիմողի ներկայացված առերևույթ արժանահավասար ապացույցների հիման վրա կայացվող դատական ակտ է, որը ստանում է օրինական ուժի մեջ մտած վճռի ուժ՝ օրենքով սահմանված ժամկետում դրա վերաբերյալ պարտապանի կողմից ա-*

---

<sup>8</sup> Վճարման կարգադրություն արձակելու գործերի մասին մանրամասն տե՛ս **Մեղրյան Ս. Գ.**, Պարզեցված ընթացակարգերը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում (գիտագործնական մեկնաբանություն), Երևանի պետ. համալսարան, Եր., ԵՊՀ հրատ., 2019:

*նարկություններ չներկայացնելու դեպքում:*

Իր նպատակային ուղղվածությամբ և մի շարք այլ հատկանիշներով վճարման կարգադրությունն ըստ էության չի տարբերվում վճռից: Չնայած նրան, որ կարգադրության վարույթը հայցային ու մյուս վարույթների համեմատ ինքնուրույն, պարզեցված վարույթ է և անմիջականորեն ուղղված չէ գործի փաստական հանգամանքները պարզելուն ու վեճն ըստ էության լուծելուն, այն կատարում է գործն ըստ էության լուծող դատական ակտի գործառույթներ, քանի որ վճարման կարգադրության՝ օրինական ուժի մեջ մտած վճռի ուժ ստանալուց հետո վիճելի իրավահարաբերությունը դառնում է անվիճելի, կարգադրությամբ սահմանված դրամական պարտականությունը՝ ենթակա հարկադիր կատարման, և միաժամանակ բացառվում է տվյալ պահանջով ու միևնույն հիմքերով կրկին դատարան դիմելու հնարավորությունը, ինչի հետևանքով նախկինում վիճելի նյութաիրավական հարաբերությունը խստորեն որոշակիացվում է՝ ձեռք բերելով կայունություն և համապարտադիրություն:

Դատական ակտերի վերը հիշատակված տեսակների առարկան՝ դատավարական և նյութաիրավական հարցերի լուծումը, տարբեր են, որը և կանխորոշում է մնացած հատկանիշներով դրանց միջև եղած տարբերությունները: Տարբեր են դրանց բովանդակությունը, կայացման և բողոքարկման կարգը, օրինական ուժի մեջ մտնելու ժամկետները, իրավական հետևանքները և այլն: Նշված առանձնահատկություններին մենք կանդրադառնանք սույն աշխատության հետագա շարադրանքում:

## **§2. Վճռի էությունը և տեսակները**

Վճռի իրավական բնույթը, էությունը կարելի է ճիշտ հասկանալ՝ միայն արդարադատության այն նպատակներից ելնելով, որոնց իրականացման համար հարուցվում է գործը, ծավալվում է գործը քննող դատարանի ու դատավարության մասնակիցների հետագա դատավարական գործունեությունը:

Վճռի՝ որպես գործն ըստ էության լուծող դատական ակտի էությունը մեծապես կանխորոշված է քաղաքացիական գործերով արդարադատության նպատակներով<sup>9</sup>: Դրանցից առաջնային նշանակություն ունի գործով հաստատված հանգամանքների և հավաքված ապացույցների հիման վրա կողմերի իրավունքները և պարտականությունները կոնկրետացնելու ու որոշակիացնելու միջոցով խախտված կամ վիճարկվող իրավունքի պաշտպանությունը<sup>10</sup>: Քաղաքացիական գործերով իրականացվող արդարադատության ֆակուլտատիվ, սակայն ոչ պակաս կարևոր նպատակներից են պետական և հասարակական շահերի պահպանությունը, օրինականության և իրավակարգի ամրապնդումը, իրավախախտումների կանխումը, իրավունքի սուբյեկտներին իրավունքի նորմերը հարգելու ոգով դաստիարակելը և այլն<sup>11</sup>:

Վճռի կայացմամբ դադարում է իրավունքի մասին կողմերի միջև եղած վեճը, վերացվում է կողմերից մեկի թույլ տված խախտումը, այսինքն՝ ամրապնդվում են իրավակարգը և օրինականությունը քաղաքացիական իրավահարաբերություններում, քաղաքացիական շրջանառության մեջ: Հրապարակայնության պայմաններում կայացված վճիռը գործի քննությանն առնչվող բոլոր անձանց դաստիարակում է օրենքների կատարման, քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքները, պատիվն ու արժանապատվությունը, գործարար համբավը, ինչպես նաև հասարակական համակեցության

---

<sup>9</sup> Տե՛ս Теория правосудия. В 3-х томах. *Фурсов Д. А., Харламова И. В.*, Т. 2, Гражданское судопроизводство как форма отправления правосудия, М.: «Статут», 2009, էջ 437:

<sup>10</sup> Տե՛ս *Гурвич М. А.*, Лекции по советскому гражданскому процессу, М., 1950, էջ 153-154:

<sup>11</sup> Տե՛ս *Жилин Г. А.*, Цели гражданского судопроизводства и их реализация в суде первой инстанции, М.: «Городец», 2000, էջ 12-13: Ուշագրավ է, որ նշված ֆակուլտատիվ նպատակները հետապնդում է ոչ միայն քաղաքացիական դատավարությունը: Դրանք քաղաքացիական դատավարության վերջնական արդյունքների ածանցյալ հետևանքներն են, ուստի ճիշտ է խոսել այն մասին, որ քաղաքացիական գործերով արդարադատության իրականացումը նպաստում է նաև այդ նպատակների իրականացմանը:

կանոնները հարգելու ոգով: Վճիռն այդ խնդիրն իրականացնում է հռչակելով իրավունքի այն նորմերը, որոնց անհրաժեշտ է ենթարկվել, կողմերին վարքագծի կոնկրետ կանոններ պատվիրելով, իրավունքի պաշտպանության ձևը որոշելով, այդ պաշտպանությունն ապահովելով, վճռով որոշված իրավագործությունները երաշխավորելով<sup>12</sup>:

Հանդիսանալով քաղաքացիական գործով արդարադատության իրականացման ամբողջ ընթացակարգի վերջնական արդյունքը՝ վճիռն անգնահատելի նշանակություն ունի դատավարության նպատակների իրացման համար: Սակայն պետք է նկատի ունենալ, որ չի կարելի նույնացնել վճռահատությունը դատավարության նպատակների հետ: Գործն ըստ էության լուծող ակտ կայացնելն ինքնանպատակ չէ. այն արդարադատության առջև դրված նպատակների իրականացման միջոց է: Չէ՞ որ հենց այդ նպատակներին հասնելու համար է հարուցվում վարույթը, ծավալվում դատարանի ու դատավարության մասնակիցների դատավարական գործունեությունը:

**Վճիռը, առաջին հերթին, իրավունքի սուբյեկտների սուբյեկտիվ իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանն ուղղված ակտ է:**

Որպես դատավարության հիմնական նպատակների իրացման միջոց՝ վճիռն ունի մի շարք հատկանիշներ, որոնք անբաժանելի են միմյանցից, իրենց ամբողջությամբ կանխորոշում են նրա էությունը և թույլ են տալիս այն սահմանազատել իրավունքի սուբյեկտների իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությանն ուղղված այլ ակտերից (վարչական, արբիտրաժային ակտերից, ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումներից և այլն):

Վճիռն արդարադատության իրականացման համար լիազորված պետական մարմնի ակտ է, **արդարադատության ակտ**, որը, ի

---

<sup>12</sup> Տե՛ս **Պեդրոսյան Ռ. Գ.**, Հայաստանի քաղաքացիական դատավարություն, երրորդ հրատ., Եր., Երևանի համալս. հրատ., 2007, էջ 456:



տարբերություն այլ յուրիսդիկցիոն մարմինների կայացրած ակտերի, իրականացվում (կայացվում) է պետության անունից: Դատարանն այն կայացնում է Հայաստանի Հանրապետության անունից (ԴՕ 13 հոդ., մաս 1, ՔԴՕ 189 հոդ., մաս 2):

Ռ. Գ. Պետրոսյանի դիպուկ բնորոշմամբ վճռի էությունը, նրա իրավական բնույթն այն է, որ վերջինս օրենքով սահմանված կարգով պետության անունից կայացված արդարադատության ակտ է, որը գործն ըստ էության լուծելու միջոցով պաշտպանում է կողմերի իրավունքները, ազատություններն ու օրինական շահերը, ինչպես նաև պետության շահերը<sup>13</sup>:

Վճռի էությունն արտահայտվում է նրանում, որ այն ներգործում է նյութական հարաբերությունների վրա՝ հաստատելով նյութական իրավունքի սուբյեկտների փոխհարաբերությունները (իրավահարաբերության առկայությունը կամ բացակայությունը), իսկ ոչ հայցային գործերով՝ այլ իրավական նշանակություն ունեցող հանգամանքներ, նաև վերացնելով դրանց վիճելիությունը, ստեղծելով իրավունքների և օրինական շահերի անխոչընդոտ իրականացման իրավական հնարավորություն, և դրանով իսկ իրականացնում է իրավունքի սուբյեկտների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը<sup>14</sup>:

Վճիռը, անկախ այն հանգամանքից՝ հայցը (դիմումը) բավարարվել է, թե ոչ, ներգործում է նյութական իրավահարաբերության սուբյեկտների վարքագծի վրա. բոլորը պարտավոր են գործել վճռին համապատասխան<sup>15</sup>: Տվյալ հանգամանքը հիմք է տվել որոշ հեղինակների կարծիք հայտնելու, որ վճիռը **կարգավորիչ ակտ** է, և դրա էությունը վիճելի իրավահարաբերությունն անվիճելի դարձնելու մեջ է<sup>16</sup>: Վճռի կարգավորիչ բնույթը դրսևորվում է նրանում, որ դրա մի-

<sup>13</sup> Տե՛ս *Պետրոսյան Ռ. Գ.*, Հայաստանի քաղաքացիական դատավարություն, երկրորդ հրատ., Եր., Երևանի համալս. հրատ., 2003, էջ 426:

<sup>14</sup> Տե՛ս *Гурвич М. А.*, Судебное решение (теоретические проблемы), М., 1976, էջ 14:

<sup>15</sup> Տե՛ս *Завадская Л. Н.*, Реализация судебных решений, М., 1982, էջ 17:

<sup>16</sup> Տե՛ս *Абрамов С. Н.*, Советский гражданский процесс, М., 1958, էջ 263:

ջոցով է դատարանը ներգործում իրավահարաբերության մասնակիցների վարքագծի վրա, վիճելի և ենթադրյալ հարաբերությունները դարձնում է իրականում գոյություն ունեցող և անվիճելի:

Դատարանի վճիռը **հաստատողական ակտ** է, այլ ոչ սահմանող<sup>17</sup>: Դատարանն իր ակտերով իրավունքի նորմեր չի սահմանում, այլ կիրառում է իրավունքի նորմերը, հաստատում է իրավահարաբերությունների առաջացումը, դադարումը կամ վերափոխումը՝ անհրաժեշտության դեպքում իրացնելով իրավունքի նորմով նախատեսված սանկցիան<sup>18</sup>: Վճիռը չի կարող փոփոխել իրական իրավահարաբերությունները: Այն օժտված չէ նոր բովանդակությամբ իրավաբանական փաստի ուժով: Վճիռը միայն վերացնում է անորոշությունը, կարող է հաստատել իրավահարաբերության փոփոխման հիմք հանդիսացող հանգամանքների (իրավաբանական փաստերի) ծագումը, ինչն անհրաժեշտ է իրավունքի պաշտպանության համար: Ուստի այն միշտ պետք է հիմնված լինի վիճող կողմերի իրական իրավահարաբերությունների վրա, որոնք, լինելով վիճելի, իրավական ճիշտ որակման և բովանդակային հստակեցման կարիք են զգում<sup>19</sup>: Դատարանը գործին մասնակցող անձանց համար նոր իրավունքներ և պարտականություններ չի «հորինում»: Այդպիսի իրավունք նա չունի: Քննելով և լուծելով վիճելի իրավահարաբերությունը՝ դատարանն այն դարձնում է անվիճելի, խիստ որոշակի, ընդ որում՝ անկախ դրա մասնակիցների հարաբերություններում նախկինում եղած խառնաշփոթից, նրանց միջև առկա հակասությունների բնույթից և թույլ տված թերացումներից:

Դատարանը պարտավոր է քննել և լուծել վեճը նույնիսկ այն

---

<sup>17</sup> Տե՛ս Թեория правосудия, в 3-х томах. **Фурсов Д. А., Харламова И. В.**, т. 2: Гражданское судопроизводство как форма отправления правосудия, М.: «Статут», 2009, էջ 440:

<sup>18</sup> Տե՛ս Гражданское процессуальное право, под ред. М. С. Шакарян, М.: «Проспект», 2004, էջ 270-271:

<sup>19</sup> Տե՛ս Թеория правосудия. В 3-х томах. **Фурсов Д. А., Харламова И. В.**, Т. 2: Гражданское судопроизводство как форма отправления правосудия. М.: «Статут», 2009, էջ 440-441:

դեպքերում, երբ տվյալ վիճելի հարաբերությունն ուղղակիորեն կարգավորված չէ օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, և բացակայում են դրանց նկատմամբ կիրառելի գործարար շրջանառության սովորույթներ: Նման դեպքերում էլ դատարանը վարքագծի նոր կանոններ չի սահմանում, այլ կիրառում է օրենքի անալոգիա, այլ կերպ ասած՝ նույնանման հարաբերություններ կարգավորող օրենքի նորմերը, իսկ նման նորմերի բացակայության դեպքում դատարանը վեճը լուծում է՝ ելնելով իրավունքի սկզբունքներից՝ կիրառելով իրավունքի անալոգիա (ՔԴՕ 4 հոդ., մաս 1):

Գրեթե բոլոր դատավարագետները գործն ըստ էության լուծող դատական ակտի էությունը կապում են այնպիսի կարևորագույն հատկանիշի հետ, ինչպիսին է դրա հրամայողական բնույթը: Վճռի հրամայողական բնույթը պայմանավորված է նրանով, որ այն գործին մասնակցող անձանց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ պարունակում է պետության անունից դատարանի հռչակած պատվիրանները, որոնք պարտադիր են ինչպես նրանց, այնպես էլ այլ անձանց համար և կամավոր չկատարվելու դեպքում ենթակա են հարկադիր կատարման: Վճիռը կատարողական վարույթում իրականացվող հարկադրանքի իրավական հիմք է<sup>20</sup>: Այն **հրամայողական ակտ** է. պարտադիր է դրա հասցեատերերի համար, իսկ դրանում հրամայական ձևով ամրագրված դատարանի պատվիրանները, ապահովված լինելով պետական հարկադրանքի ուժով, ենթակա են անշեղ պահպանման և կատարման:

Վճռի կայացման ժամանակ դատարանն իր կողմից հաստատված իրավահարաբերությունների և փաստերի նկատմամբ կիրառում է նյութական իրավունքի նորմերը, ուստի, այն պետք է դիտարկվի նաև որպես սուբյեկտիվ իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանն ուղղված **իրավակիրառ ակտ**: Ընդ որում՝ գործն ըստ էության լուծող դատական ակտն անհատական ակտ է,

---

<sup>20</sup> Տե՛ս «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածը:

որով դատարանն ապահովում է իրավունքի նորմերի հարկադիր գործողությունը<sup>21</sup>:

Այլ իրավակիրառ ակտերից դատական ակտերը, այդ թվում՝ վճիռը, տարբերվում են մի շարք հատկանիշներով, որոնք ընդհանուր առմամբ հանգում են հետևյալին:

– *Վճիռը կայացվում է որոշակի դատավարական կարգով*: Գործող ԲԴՕ-ն կարգավորում է վճռի կայացման, հրապարակման և գործին մասնակցող անձանց հանձնելու դատավարական կարգը: Իրավակիրառ այլ ակտերից վճիռը տարբերվում է նախևառաջ դրա կայացման, հրապարակման և գործին մասնակցող անձանց հանձնելու հատուկ ընթացակարգով:

– *Վճիռը դատավարական ակտ-փաստաթուղթ է, որը կայացվում է դատավարական օրենքով սահմանված ձևով, ունի օրենքով սահմանված բովանդակություն և վավերապայմաններ, համապատասխանում է տվյալ տեսակի դատական ակտին ներկայացվող պահանջներին, պարունակում է դատարանի անհատական իշխանական պարզված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ իրավունքի նորմերը կիրառելու մասին*<sup>22</sup>: Գործող քաղաքացիադատավարական օրենսդրության համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը պետք է ձևակերպվեն գրավոր, դրանց կառուցվածքում առանձնացվում են ներածական, նկարագրական, պատճառաբանական և եզրափակիչ մասեր, որոնք պիտի բավարարեն օրենքով սահմանված որոշակի պահանջների՝ լինելով օրինական, հիմնավորված, պատճառաբանված, որոշակի և լրիվ<sup>23</sup>:

– *Գործն ըստ էության լուծող դատական ակտերը ստուգվում և վերանայվում են հարուկ կարգով*: Տվյալ առանձնահատկությունը

---

<sup>21</sup> Տե՛ս **Васильев С. В.**, Гражданский процесс, Харьков: «Одиссей», 2007, էջ 295:

<sup>22</sup> Տե՛ս Арбитражный процесс. Под ред. В. В. Яркова, М.: «Юрист», 1998, էջ 240-241:

<sup>23</sup> Դատական ակտերին ներկայացվող պահանջների մասին կխոսվի սույն աշխատության 2-րդ գլխում:

պայմանավորված է այն դերով, որն ունի դատական իշխանությունն իշխանությունների տարանջատման համակարգում: Օրենսդիր և գործադիր իշխանության ակտերը կարող են ստուգվել և վերացվել (վերանայվել) ինչպես դրանց մարմինների և պաշտոնատար անձանց կողմից, այնպես էլ դատական կարգով: Մինչդեռ դատական ակտերի ստուգումը և վերանայումը հնարավոր են բացառապես դատական կարգով: Օրենսդիր և գործադիր իշխանության մարմինները չեն կարող ստուգողական ու հսկողական գործառույթներ իրականացնել դատական ակտերի նկատմամբ:

Դատական ակտերի վերանայման ընթացակարգի ևս մեկ առանձնահատկությունը պայմանավորված է նրանով, որ այն կարող է իրականացվել բացառապես վերադաս դատական ատյանի կողմից, ընդ որում՝ ՔԴՕ-ով կանոնակարգված որոշակի վարույթի (վերաքննիչ, վճռաբեկ, նոր և նոր երևան եկած հանգամանքներով վերանայման) շրջանակներում: Քաղաքացիադատավարական օրենքը մանրամասն կարգավորում է դատական ակտերի վերանայման ընթացակարգը, վերադաս դատական ատյանների լիազորությունները և դատական ակտերը բեկանելու հիմքերը:

*– Բոլոր դատական ակտերի, այդ թվում՝ վճիռների վերջնական բնույթը, դրանց գործողությունը կապված են օրինական ուժի մեջ մտնելու փաստի հետ:* Օրինական ուժի մեջ մտնելու պահից է վճիռը դառնում վերջնական, ձեռք բերում անհերքելիության, բացառիկության, նախադատելիության, պարտադիրության և կատարելիության հատկանիշներ<sup>24</sup>:

*– Քաղաքացիական գործերով կայացված վճիռները կարող են ունենալ անդրազգային գործողություն, այսինքն՝ ի տարբերություն պետական իշխանության այլ մարմինների ակտերի՝ կարող են ճանաչվել և կատարվել այլ երկրների տարածքում: Ընդ որում, ՀՀ դատարանների կայացրած վճիռներն օտարերկրյա պետություններում*

---

<sup>24</sup> Օրինական ուժի և դրա իրավական հետևանքների մասին կխոսվի սույն աշխատության 3-րդ գլխում:

ճանաչվում և կատարվում են ՀՀ մասնակցությամբ երկկողմ կամ բազմակողմ միջազգային պայմանագրերի հիման վրա, տվյալ պայմանագրերով սահմանված կարգով:

Հաշվի առնելով և ամփոփելով վերը շարադրվածը՝ կարելի է առանձնացնել վճռի՝ որպես գործն ըստ էության լուծող դատական ակտի հետևյալ հատկանիշները, որոնց ամբողջությունը կանխորոշում է նրա իրավական բնույթը: Դրանք հանգում են հետևյալին.

1. վճիռն արդարադատության ակտ է, որը կայացվում է բացառապես արդարադատության իրականացման համար լիազորված պետական մարմնի՝ դատարանի կողմից, և որի միջոցով դատարանի վարույթում գտնվող գործը լուծվում է ըստ էության.

2. վճիռը նպատակաուղղված ակտ է, որը գործն ըստ էության լուծելու միջոցով պաշտպանում է հայցային բնույթի գործերով գործին մասնակցող անձանց, իսկ հատուկ վարույթի գործերով՝ դիմողի և այլ շահագրգռված անձանց իրավունքները, ազատություններն ու օրինական շահերը, ինչպես նաև նպաստում է պետական և հասարակական շահերի պահպանությանը, օրինականության և իրավակարգի ամրապնդմանը, իրավախախտումների կանխմանը, իրավունքի սուբյեկտներին իրավունքի նորմերը, այլ անձանց իրավունքները, ազատությունները, պատիվն ու արժանապատվությունը հարգելու ոգով դաստիարակելուն.

4. վճիռը հաստատողական, հրամայողական բնույթի կարգավորիչ ակտ է, որը, հաստատելով կողմերի միջև առկա իրական իրավահարաբերությունները, իսկ հատուկ վարույթի գործերով՝ այլ իրավական հանգամանքները, հրամայական ձևով ամրագրում է դատարանի անհատական-կոնկրետ իշխանական պատվիրանները՝ դրանով իսկ ներգործելով իրավահարաբերության մասնակիցների վարքագծի վրա.

5. վճիռն իրավակիրառ, անհատական ակտ է, որով դատարանն ապահովում է իրավունքի նորմերի հարկադիր գործողությունը, որը սահմանում է վիճելի իրավահարաբերության և դրա հան-

գամանքների նկատմամբ ընդհանուր նորմատիվային կանոնների գործողության ճշգրիտ և հստակ սահմանները, ունի կոնկրետ հասցեատերեր, որոնց վրա տարածվում են վճռի օրինական ուժի սուբյեկտիվ սահմանները:

6. վճիռը դատավարական ակտ է, որը կայացվում է դատավարական օրենքով սահմանված կարգով և ձևով, ունի օրենքով սահմանված բովանդակություն և վավերապայմաններ, պետք է համապատասխանի տվյալ տեսակի դատական ակտին ներկայացվող պահանջներին, ստուգվում, վերանայվում և կատարվում է օրենքով սահմանված հատուկ կարգով, կարող է ունենալ անդրազգային գործողություն, և որի վերջնական բնույթն ու գործողությունը կապված են օրինական ուժի մեջ մտնելու փաստի հետ:

Ընդհանրացնելով գործն ըստ էության լուծող դատական ակտերի իրավական բնույթի հատկանիշները՝ կարելի է եզրահանգել, որ *վճռի էությունն այն է, որ վերջինս առաջին արյանի դատարանի կողմից օրենքով սահմանված դատավարական ձևով պետության անունից կայացված արդարադատության ակտ է, որը գործն ըստ էության լուծելու, իրավունքի նորմերի հարկադիր գործողությունն ապահովելու միջոցով ներգործում է իրավահարաբերության մասնակիցների վարքագծի վրա՝ դրանով իսկ պաշտպանելով գործին մասնակցող անձանց իրավունքները, ազատություններն ու օրինական շահերը, ինչպես նաև նպաստելով պետական և հասարակական շահերի պահպանությանը, օրինականության և իրավակարգի ամրապնդմանը, իրավախախտումների կանխմանը, իրավունքի սուբյեկտներին իրավունքի նորմերը, այլ անձանց իրավունքները, ազատությունները, պատիվն ու արժանապատվությունը հարգելու ոգով դաստիարակելուն:*

**Գործն ըստ էության լուծող դատական ակտերի տեսակները:**  
Քաղաքացիական գործի շարժը, քաղաքացիադատավարական իրավահարաբերությունների համակարգի զարգացումը ենթարկ-

վում են որոշակի ալգորիթմի, որն ունի իր սկիզբը և վերջը: Քաղաքացիական հայրը (հատուկ վարույթի գործերով դիմումը) վարույթի հարուցման հիմք է և կանխորոշում է վարույթի բովանդակությունն ու հիմնական ուղղվածությունը, իսկ դատարանի վճիռն արտացոլում է դատավարության արդյունքները: Հայցով (դիմումով) դատարան դիմող սուբյեկտն առաջադրում է հարցեր, իսկ վճիռը պարունակում է դրանց պատասխանները: Դատարանի վճիռը փոխկապակցված է առաջադրված պահանջներն, պայմանավորված է ներկայացված հայցի (դիմումի) էությամբ ու բովանդակությամբ, քանի որ դատարանն իրավունք չունի հայցվորին տալու այն, ինչը նա չի պահանջում, կամ ավելին, քան նա պահանջում է: Այլ կերպ ասած՝ բոլոր վարույթներում առկա է որոշակի համաչափություն, որն արտահայտվում է հարուցված հայցի (ներկայացված դիմումի) և կայացվող վճռի հարաբերակցության, փոխպայմանավորվածության մեջ:

Ինչպես հայտնի է, *ըստ դատավարական կոնկրետ նպատակի*, այսինքն՝ ըստ նրա, թե ինչպիսի վճռի կայացման է ձգտում հասնել հայցվորը տվյալ գործով, հայցերը բաժանվում են երեք տեսակի՝ վճռող, ճանաչողական և վերափոխիչ հայցեր: Ըստ այդմ էլ՝ առաջին աստիճանի դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտերը ևս դատավարագիտության մեջ բաժանվում են վճռող, ճանաչողական և վերափոխիչ վճիռների:

Գործն ըստ էության լուծող **վճռող ակտերն** առավել տարածված են դատական պրակտիկայում: Նման վճիռներ կայացվում են բոլոր այն դեպքերում, երբ հարուցվում է վճռող հայց, որով հայցվորը խնդրում է ճանաչել իր և պատասխանողի միջև որոշակի իրավահարաբերության առկայությունը (օրինակ՝ փոխառության, դելիկտային, ռեստիտուցիոն և այլն) և պարտավորեցնել պատասխանողին իր օգտին կատարել որոշակի գործողություններ (օրինակ՝ վերադարձնել փոխառության գումարը և վճարել հաշվարկված տոկոսները, հատուցել պատճառված վնասը, վերադարձնել անվավեր



գործարքով փոխանցված իրերը) կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողությունների կատարումից (օրինակ՝ չօգտագործել հայցվորին պատկանող ապրանքային նշանը, չիրացնել հեղինակային իրավունքների խախտմամբ հրատարակված ստեղծագործությունը և այլն):

Գործն ըստ էության լուծող վճռող ակտերն այլ կերպ անվանվում են նաև «կատարողական վճիռներ», քանի որ գործին մասնակցող անձին պարտավորեցնում են կատարել որոշակի գործողություններ կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողությունների կատարումից, այլ կերպ ասած՝ դրսևորել վճռի կատարմանն ուղղված որոշակի վարքագիծ: Ընդ որում, օրինական ուժի մեջ մտնելուց հետո պարտապանի կողմից վճիռը կամովին չկատարվելու դեպքում այն կարող է հարկադիր կատարողի միջոցով կատարվել հարկադրաբար:

Կատարողական այն վճիռները, որոնք սահմանում են պատասխանողի պարտականությունը՝ զերծ մնալու որոշակի գործողություններ կատարելու միջոցով հայցվորի իրավունքը խախտելուց, դատավարագիտության մեջ անվանվում են նաև «արգելող վճիռներ»:

Կատարողական վճիռների հիմքում միշտ դրվում է իրավաբանական փաստերի բարդ համակցություն, որովհետև հայցը բավարարող վճիռը հիմնավորելու համար դատարանը պետք է հաստատված համարի ոչ միայն կողմերի միջև համապատասխան իրավահարաբերության, հայցվորի մոտ համապատասխան սուբյեկտիվ իրավունքի, պատասխանողի մոտ սուբյեկտիվ պարտականության առկայությունը հաստատող փաստերը, այլ նաև պատասխանողի կողմից հայցվորի իրավունքների խախտումը հաստատող փաստը: Նույն տրամաբանությամբ էլ հայցը մերժելիս վճռի հիմքում պետք է դրվի կա՛մ կողմերի միջև համապատասխան իրավահարաբերության, կա՛մ հայցվորի մոտ համապատասխան սուբյեկտիվ իրավունքի բացակայության, կա՛մ պատասխանողի կողմից հայցվորի իրավունքների խախտման բացակայության փաստը:

Այսպիսով՝ վճռող են կոչվում գործն ըստ էության լուծող դատարանն այն ակտերը, որոնցով դատարանը ճանաչում (հաստատում) է կողմերի միջև որոշակի իրավահարաբերության առկայությունը և պարտավորեցնում է կատարել որոշակի գործողություններ կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողությունների կատարումից:

**Ճանաչողական վճիռները** կայացվում են բոլոր այն դեպքերում, երբ հարուցվում է ճանաչողական (հաստատողական) հայց: Ճանաչողական հայցը դեռևս չխախտված իրավունքը հնարավոր խախտումներից պաշտպանելուն, իրավունքի վիճելիությունը կամ անորոշությունը վերացնելուն ուղղված հայցն է, որով հայցվորը խնդրում է դատարանից ճանաչել իր իրավունքը, հաստատել իր և պատասխանողի միջև վիճելի իրավահարաբերության առկայությունը կամ բացակայությունը՝ առանց պարտավորեցնելու պատասխանողին կատարելու որոշակի գործողություններ:

Վճռի քննարկվող տեսակի էությունն այն է, որ վերջինս հաստատում է կողմերի միջև որոշակի իրավահարաբերության առկայությունը կամ բացակայությունը և պարունակում է կողմերից որևէ մեկին ուղղված իշխանական կարգադրություն՝ ձեռնպահ մնալու դատական քննությանը հաստատված իրավունքի առկայությունը կամ բացակայությունը վիճարկելուց:

Ճանաչողական վճռով դատարանը պատասխանողի վրա որոշակի պարտավորություններ չի դնում, բայց հաստատելով հայցվորի իրավունքը՝ դրանում մտցնում է որոշակիություն, կանխում է պատասխանողի կողմից այդ իրավունքի ապագա խախտումները, հայցվորի մոտ վստահություն է սերմանում իր իրավունքների անձեռնմխելիության նկատմամբ:

Ճանաչողական վճիռներով կատարողական վարույթներ չեն հարուցվում, քանի որ, ինչպես վերոն արդեն նշվել է, դրանցով կողմը չի պարտավորեցվում կատարել որոշակի գործողություններ կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողությունների կատարումից:

Դատավարագիտության մեջ ճանաչողական վճիռները ևս դա-

սակարգվում են երկու տեսակի՝ պոզիտիվ (դրական ճանաչողական) և նեգատիվ (բացասական ճանաչողական) վճիռներ: Ուշագրավ է, որ տվյալ դասակարգման հիմքում ևս դրվում է ճանաչողական հայցերի դասակարգումը:

Դրական են այն ճանաչողական վճիռները, որոնցով դատարանը ճանաչում է հայցվորի և պատասխանողի միջև որոշակի իրավահարաբերության, հայցվորի որոշակի սուբյեկտիվ իրավունքի առկայությունը (օրինակ՝ ճանաչում է հայցվորի սեփականության իրավունքը, հայցվորին ճանաչում է հեղինակ կամ համահեղինակ): Բացասական են կոչվում այն ճանաչողական վճիռները, որոնցով հաստատվում է կողմերի միջև որոշակի իրավահարաբերության, որոշակի սուբյեկտիվ իրավունքի կամ պարտականության բացակայությունը (օրինակ՝ հաստատվում է ամուսնության անվավերությունը, վերացվում է որդեգրումը, ժխտվում է հայրությունը և այլն):

Դեռևս հռոմեական իրավունքում ճանաչողական վճիռները կոչվում էին «նախադատելի վճիռներ», քանի որ դրանք ունեին նախադատելի նշանակություն: Նման վճիռներով հաստատված փաստերը նույն իրավահարաբերություններից բխող այլ վեճերի քննության ժամանակ ապացուցման կարիք չեն զգում: Օրինակ, եթե մի գործի շրջանակներում անձը ճանաչվել է ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքների իրավատեր, ապրանքային նշանի ապօրինի օգտագործումը դադարեցնելու վերաբերյալ պահանջով նույն անձանց մասնակցությամբ մեկ այլ գործի քննության ժամանակ նշանի պատկանելության հարցը քննարկման առարկա չի դառնում, այդ փաստը դատարանը հանում է ապացուցման առարկայից:

*Այսպիսով՝ ճանաչողական են կոչվում այն վճիռները, որոնցով դատարանը ճանաչում (հաստատում) է կողմերի միջև որոշակի իրավահարաբերության առկայությունը կամ բացակայությունը:*

**Վերափոխիչ կամ կոնստրիկտիվ** են կոչվում իրավահարաբերություններ սրբեղծելուն, փոփոխելուն կամ դադարեցնելուն ուղղ-

*ված վճիռները*: Նման վճիռ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը կայացնում է այն դեպքերում, երբ բավարարում է ներկայացված վերափոխիչ հայցը (օրինակ՝ պայմանագիր կնքելուն հարկադրելու, անվավեր գործարքը վավեր ճանաչելու, հանգամանքների էական փոփոխության կապակցությամբ պայմանագիրը փոփոխելու կամ լուծելու, սերվիտուտ սահմանելու, ամուսնալուծության, ալիմենտի չափը փոփոխելու և նմանատիպ այլ պահանջները): Նման վճիռների կայացմամբ դատարանն օրենքով նախատեսված դեպքերում հաստատում է իրավահարաբերությունների ծագման, փոփոխման կամ դադարման հիմք հանդիսացող վիճելի հանգամանքների գոյությունը և պարտավորեցնում է կողմերին դրսևորել ծագած կամ փոփոխված իրավահարաբերության բովանդակությանը համապատասխանող կամ իրավահարաբերության դադարման արդյունքում դրսևորման ենթակա վարքագիծ:

Վերափոխիչ հայցերի և վերափոխիչ վճիռների տեսությունը մշակել է Մ. Ա. Գուրվիչը: Տվյալ տեսության հիմքում դրվել է այն գաղափարը, որ եթե համապատասխան իրավահարաբերությունը սահմանելու, փոփոխելու կամ դադարեցնելու իրավագործությունը չի իրականացվում շահագրգիռ անձանց՝ իրենց իսկ կողմից փոխադարձ համաձայնությամբ կնքված պայմանագրով, կամ եթե իրավահարաբերության վերափոխումն օրենքի համաձայն հնարավոր է միայն դատական կարգով, ծագում է վերափոխիչ հայցի հարուցման և վերափոխիչ վճռի կայացման անհրաժեշտություն<sup>25</sup>:

Ժամանակակից քաղաքացիական օրենսդրության առանձին նորմերի ուսումնասիրությունը ևս վկայում է այն մասին, որ դատարանն օժտված է իրավահարաբերությունների ծագմանը, փոփոխմանը և դադարմանն ուղղված վճիռների կայացման լիազորությամբ: Այսպես, ՀՀ քաղ. օր. 10 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները

---

<sup>25</sup> Տե՛ս *Гурвич М. А.*, Учение об иске (состав, виды), М.: ВЮЗИ, 1981, էջ 21-38:

րը ծագում են նաև քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանող դատական ակտերից, իսկ նույն օրենսգրքի 14-րդ հոդվածում որպես իրավունքի պաշտպանության եղանակ նշված է իրավահարաբերությունը դադարեցնելը կամ փոփոխելը:

Վերն արդեն նշել ենք, որ վճիռը չի կարող փոփոխել իրական իրավահարաբերությունները. այն օժտված չէ նոր բովանդակությամբ իրավաբանական փաստի ուժով: Վճիռը միայն վերացնում է անորոշությունը, կարող է հաստատել իրավահարաբերության ծագման, փոփոխման կամ դադարման հիմք հանդիսացող հանգամանքների (իրավաբանական փաստերի) ծագումը, ինչն անհրաժեշտ է իրավունքի պաշտպանության համար:

Վերափոխիչ վճիռները միշտ հիմնված են լինում վիճող կողմերի իրական իրավահարաբերությունների վրա, որոնք, լինելով վիճելի, իրավական ճիշտ որակման և բովանդակային հստակեցման կարիք են զգում<sup>26</sup>:

Վերափոխիչ վճիռները, ըստ իրենց նպատակային ուղղվածության, տեսության մեջ հասկանալի պատճառներով բաժանվում են երեք տեսակի՝ իրավաստեղծ, իրավափոփոխիչ և իրավահարաբերությունը դադարեցնող վճիռներ:

Գործն ըստ էության լուծող դատական ակտերը գրականության մեջ դասակարգվում են ինչպես ըստ դատավարական նպատակի, այնպես էլ այլ չափանիշներով:

*Ըստ վարույթի տեսակի՝* ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտերը բաժանվում են հետևյալ տեսակների՝

***ա) ընդհանուր հայցային վարույթի կարգով կայացվող վճիռներ,***

***բ) հափուկ հայցային վարույթի կարգով կայացվող վճիռներ,***

---

<sup>26</sup> См. Теория правосудия. В 3-х томах. **Фурсов Д. А., Харламова И. В.**, т. 2: Гражданское судопроизводство как форма отправления правосудия, М.: «Статут», 2009, էջ 440-441:

**գ) հատուկ վարույթի կարգով կայացված վճիռներ:**

Ըստ վճռի բնույթի և բովանդակության՝ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտերը լինում են՝

**ա) հիմնական և**

**բ) լրացուցիչ<sup>27</sup>:**

Գործն ըստ էության լուծող դատական ակտերը դասակարգվում են նաև ըստ դատական քննության առարկա դարձած վիճելի իրավահարաբերության բնույթի: Այդպիսիք են **կորպորատիվ, սնանկության, աշխատանքային, ընտանեկան և այլ իրավահարաբերություններից բխող վեճերով կայացվող վճիռները**: Տվյալ դասակարգումը կարևոր նշանակություն ունի դատական պրակտիկայի ամփոփման, վիճակագրական նյութերի մշակման, միատեսակ դատական պրակտիկայի ապահովմանն ուղղված այլ աշխատանքների կատարման համար: Այն թույլ է տալիս նաև ճիշտ որոշել դատական պաշտպանության ուղղությունը և ծավալը, վեճերի սուբյեկտիվ կազմը, վեր հանել տվյալ վեճի դատավարական առանձնահատկությունները:

Օրենսդրորեն առանձնացվում և հատուկ իրավական կարգավորման են ենթարկվում՝ **ա) սկզբնական և հակընդդեմ հայցերը լրիվ կամ մասնակի բավարարող, բ) վարույթը հաշտությամբ ավարտելու մասին, գ) դրամական միջոցներ բռնագանձելու և գույք հատկացնելու մասին, դ) մի քանի հայցվորի օգտին կամ մի քանի պատասխանողի դեմ կայացված, ե) պայմանագիրը կնքելուն հարկադրելու կամ պայմանագիրը փոփոխելու մասին, զ) պատասխանողին որոշակի գործողություններ կատարելուն պարտադրող, է) պարզեցված ընթացակարգերով կայացված վճիռները և այլն**: Ուշագրավ է, որ դասակարգման որևէ չափանիշ վճիռների նշված սահմանազատման հիմքում օրենսդիրը չի դրել: Գործն ըստ էության լուծող դատական ակտերի բաժանումը տեսակ-

<sup>27</sup> Լրացուցիչ վճռի մասին տե՛ս սույն աշխատության 4-րդ գլուխը:

ների տվյալ դեպքում կատարվել է՝ առանձին կատեգորիայի գործերով կայացվող վճիռների առանձին մասերի բովանդակությանը հատուկ պահանջներ ներկայացնելու, օրինական ուժի մեջ մտնելու և բողոքարկման հատուկ ժամկետներ սահմանելու, այլ առանձնահատկություններ հաշվի առնելու անհրաժեշտությունից ելնելով: Օրինակ՝ ՔԴՕ 194-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ դրամական միջոցները գանձելու վերաբերյալ հայցը բավարարելու դեպքում դատարանը վճռի եզրափակիչ մասում սահմանում է բռնագանձվող գումարի ընդհանուր չափը՝ առանձին նշելով հիմնական պարտքի, տուժանքի (տուգանքի, տույժի) չափերը, ինչպես նաև այն գումարի չափը, որի վրա հաշվեգրվում են տոկոսներ, այդ տոկոսների չափը և դրանց հաշվեգրման սկզբի տարին, ամիսը և ամսաթիվը:

Այլ երկրների օրենսդրությանը հայտնի և խորհրդային դատավարագիտության կողմից քննադատված ու չընդունված վճիռների տեսակներից են մասնակի, միջանկյալ, պայմանական, այլընտրանքային, ֆակուլտատիվ և հեռակա վճիռները:

**Մասնակի** է համարվում այն վճիռը, որով լուծվում են ոչ թե հայտարարված բոլոր պահանջները, այլ միայն դրանց մի մասը: Մասնակի վճիռը կայացնելուց հետո դատարանը շարունակում է մնացած պահանջներով գործի քննությունը, որի արդյունքներով վճիռ է կայացնում այդ պահանջների կապակցությամբ<sup>28</sup>: Մասնակի վճիռներ կայացվում են այն նպատակով, որ ակնհայտորեն հիմնավորված և անվիճելի պահանջների կատարումը չհետաձգվի այն պահանջներին անդրադառնալու պատճառով, որոնց հիմնավորվածությունը կասկածելի է թվում: Մասնակի վճիռների ինստիտուտը նախատեսված էր նախահեղափոխական Ռուսաստանի դատավարական օրենսդրությամբ: Խորհրդային դատավարագիտությունը վճիռ էր ճանաչում միայն այնպիսի դատական ակտը, որն ըստ

<sup>28</sup> См. у *Мальшев К. И.*, Курс русского гражданского судопроизводства, в 3-х томах, т. 1, СПб., 1874, էջ 140:

էութեան գործը լուծում է ամբողջ ծավալով, այլ ոչ մասնակիորեն: ՀՀ քաղաքացիական դատավարական օրենսդրությունը ևս, հետևելով տվյալ մոտեցմանը, մասնակի վճիռների կայացման հնարավորություն չի նախատեսում՝ գործն ըստ էութեան լուծող դատական ակտերին ներկայացնելով լրիվութեան պահանջը<sup>29</sup>:

**Միջանկյալ** են կոչվում այն վճիռները, որոնք քաղաքացիական գործը լուծում են միայն սկզբունքորեն, ճանաչում են միայն սուբյեկտիվ իրավունքների և պարտականությունների առկայության հարցը՝ չլուծված թողնելով բռնագանձվելիք գումարների չափը կամ հանձնման ենթակա գույքի կազմը և արժեքները: Տվյալ հարցերին դատարանը շահագրգռված անձանց պահանջով անդրադառնում է հետագայում մեկ այլ վճիռի շրջանակներում:

Խորհրդային ժամանակաշրջանի դատավարագիտությունը միանշանակ հերքեց դատական ակտերի քննարկվող տեսակը: Մի շարք հեղինակների կարծիքով միջանկյալ վճիռների կայացման հնարավորությունը խոչընդոտում է վեճերի արագ քննությանը, անհարկի դատական քաջբշուքի պատճառ է դառնում, քանի որ միևնույն վիճելի իրավահարաբերությունը երկու անգամ է լինում դատական քննության առարկա<sup>30</sup>:

ՀՀ գործող դատավարական օրենսդրությունը միջանկյալ վճիռներ կայացնելու հնարավորություն չի նախատեսում:

**Պայմանական** են համարվում այն վճիռները, որոնց կատարումը կախվածության մեջ է դրվում որոշակի պայմանների վրա հասնելու հանգամանքից, այն է՝ որոշակի իրադարձություն տեղի ունենալուց կամ որոշակի իրավաբանական նշանակություն ունեցող գործողության կատարումից: Վճռով սահմանված պայմանը վրա հասնելուց հետո դատարանը ևս մեկ վճիռ է կայացնում՝ հիմք ըն-

---

<sup>29</sup> Վճիռն ներկայացվող պահանջների, այդ թվում՝ լրիվութեան մասին մանրամասն տե՛ս սույն աշխատության 2-րդ գլխի 1-ին ենթագլուխը:

<sup>30</sup> Տե՛ս, օրինակ, *Перетерский И. С.*, Очерки судоустройства и гражданского процесса иностранных государств, М., 1952, էջ 129:



դունելով իրավունքի մասին վեճին նախկինում տրված լուծումը<sup>31</sup>: Պայմանական վճռի մասին կարելի է խոսել, օրինակ, այն դեպքերում, երբ դատարանը վտարման մասին վճիռ է կայացնում՝ դրա կատարումը պայմանավորելով պատասխանողի կողմից բնակության համար պիտանի այլ բնակտարածության ձեռքբերման կամ նրան այլ բնակարան տրամադրելու փաստով:

Դատական ակտերի տվյալ տարատեսակի կայացման հնարավորությունը ՔԴՕ-ն ևս բացառում է: Օրենսդիրը հիմք է ընդունել այն դատավարագետների դիրքորոշումը, որոնք պայմանական վճիռների ինստիտուտը դիտարկում են որպես դատական քաջքշուքի պատճառ, դատական իշխանության հեղինակությունը նսեմացնող և արդարադատության էությունը խաթարող երևույթ<sup>32</sup>:

Արտասահմանյան որոշ երկրների դատավարական օրենսդրությամբ նախատեսված վճռի այս տեսակը ՀՀ օրենսդրությամբ չի նախատեսվել նաև այն պատճառով, որ ՔԴՕ-ն պարունակում է վճռի կատարումը հետաձգելու ինստիտուտը, որը ոչ միայն լիարժեքորեն փոխարինում է պայմանական վճռի ինստիտուտին, այլ նաև կիրառվում է բոլոր կողմերի շահերի հաշվառմամբ:

**Այլընտրանքային** են այն վճիռները, որոնցով դատարանն ըստ էության լուծում է ներկայացված բոլոր պահանջները, սակայն սահմանում է խախտված իրավունքի պաշտպանության այլընտրանքային եղանակներ, այլ կերպ ասած՝ վճռի կատարման մեկից ավելի եղանակներ, որոնցից ընտրություն կատարելու հնարավորությունը վերապահվում է վճռով պարտապան ճանաչված անձին: Նման վճիռներ կայացնելու հնարավորություն ՔԴՕ-ն ուղղակիորեն չի սահմանում՝ փոխարենը նախատեսելով շահագրգիռ անձի կողմից դատական ակտի կատարման կարգը և եղանակը փոխելու միջնոր-

---

<sup>31</sup> Ст'а Теория правосудия, в 3-х томах, **Фурсов Д. А., Харламова И. В.**, т. 2: Гражданское судопроизводство как форма отправления правосудия, М.: «Статут», 2009, էջ 431:

<sup>32</sup> Ст'а նույն տեղում:

դրությամբ դատարանին դիմելու հնարավորությունը<sup>33</sup>: Սակայն, մեր կարծիքով, նման մոտեցումն այնքան էլ արդարացված չէ, հատկապես եթե նկատի ունենանք Քաղ. օր. 359-րդ հոդվածով սահմանված կանոնն առ այն, որ պարտատիրոջն այս կամ այն գույքը հանձնելու կամ մի քանի գործողություններից որևէ մեկը կատարելու պարտականություն ունեցող պարտապանը դրանցից ցանկացածի ընտրության իրավունք ունի, եթե այլ բան չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից կամ պարտավորության պայմաններից: Նման պայմաններում վճիռ կայացնելիս պարտապանին նույն այլընտրանքը չտրամադրելը ոչնչով արդարացվել չի կարող և, ըստ էության, կարող է դիտարկվել որպես օրենքով սահմանված հնարավոր վարքագծի արհեստական սահմանափակում: Իսկ ինչպես հայտնի է, դատարանը՝ որպես իրավակիրառ մարմին, վեճը պետք է լուծի «Օրենքների և դրանց համապատասխան ընդունված այլ իրավական ակտերի հիման վրա, դատարանի վճիռը չի կարող հակասել օրենքին»:

Թեև նմանատիպ իրավիճակներում ոչինչ չի արգելում դատարանին վճռի եզրափակիչ մասում սահմանելու դատական ակտի կատարման այլընտրանք, այնուամենայնիվ գտնում ենք, որ ՔԴՕ-ն նպատակահարմար է լրացնել այլընտրանքային պարտավորությունից բխող պահանջը բավարարող վճռի եզրափակիչ մասին ներկայացվող հատուկ պահանջներ սահմանող նորմով:

**Ցակուկրափիվ** վճիռները ևս առանձնացվում են ըստ դրանց կատարման եղանակի: Նման դատական ակտերի էությունը նրանում է, որ վեճն ըստ էության ամբողջ ծավալով լուծող դատական ակտը վճռի կատարման առաջնային եղանակի հետ մեկտեղ սահմանում է այնպիսի լրացուցիչ եղանակ, որը կիրառվում է պարտավոր անձի կողմից վճիռը կատարելուց հրաժարվելու կամ կատարման անհնարինության դեպքում:

---

<sup>33</sup> Տե՛ս «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» «Օրենքի 22-րդ հոդվածը»:

«Օրենսդիրը ևս չի փոխառել ֆակուլտատիվ վճիռների ինստիտուտն այլ երկրների օրենսդրությունից: Ընդ որում, ֆակուլտատիվ վճիռ կայացնելու հնարավորություն նախատեսված չէ այն դեպքերի համար, երբ վճիռ կայացնելիս մտավախություն կա, որ պարտավորությունը բնեղենով կատարելը կարող է դառնալ անհնարին, և անհրաժեշտություն կառաջանա փոխարենը գանձելու դրամական փոխհատուցում: Այսպես, Քաղ. օր. 48-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մահացած ճանաչված քաղաքացու գույքը հատուցելի գործարքներով ձեռք բերած անձինք պարտավոր են նրան վերադարձնել այդ գույքը, եթե ապացուցվում է, որ գույքը ձեռք բերելիս նրանք գիտեին, որ մահացած ճանաչված քաղաքացին կենդանի է, իսկ այդ գույքը բնեղենով վերադարձնելու անհնարինության դեպքում պարտավոր են հատուցել դրա արժեքը: Քաղ. օր. 304-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործարքի անվավերության դեպքում կողմերից յուրաքանչյուրը պարտավոր է մյուս կողմին վերադարձնել գործարքով ամբողջ ստացածը, իսկ ստացածը բնեղենով վերադարձնելու անհնարինության դեպքում՝ դրա արժեքը դրամով:

Նմանատիպ իրավիճակները հաշվի առնելով՝ օրենսդիրը ՔԴՕ 194-րդ հոդվածում սահմանել է, որ գույք հատկացնելու դեպքում դատարանը նշում է ոչ միայն հանձնման ենթակա գույքի անվանումը և գտնվելու վայրը, այլ նաև դրա արժեքը: Միաժամանակ պարտատիրոջն օրենքով հնարավորություն է տրվում դիմելու դատական ակտը կայացրած դատարանին վճռի կատարման եղանակը փոփոխելու խնդրանքով, եթե դրա կատարման ընթացքում պարզվի, որ հանձնման ենթակա գույքը բնեղենով վերադարձնելը հնարավոր չէ<sup>34</sup>: Փաստորեն, եթե բնեղենով պարտավորությունը կատարելու հնարավորությունը բացահայտվում է գործի քննության արդյունքում (օրինակ՝ հաստատվում է գույքի ոչնչացման կամ բարեխիղճ ձեռք բերողին օտարելու փաստը), դատարանը պետք է վճիռ կայացնի ոչ

<sup>34</sup> Տե՛ս «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» «Օրենքի 22-րդ հոդվածը:

թե գույքը բնեղենով վերադարձնելու, այլ դրա արժեքը հատուցելու, դրամական միջոցներ գանձելու մասին: Իսկ եթե նման անհնարինությունը պարզվում է կատարողական վարույթի ընթացքում, դատարանի կողմից վճռում սահմանված հանձնման ենթակա գույքի արժեքը թույլ է տալիս, առանց քննարկելու այդ գույքի արժեքը, փոփոխել վճռի կատարման եղանակը: Այդուհանդերձ, կարծում ենք, որ նմանատիպ իրավիճակներում վճռի կատարման եղանակի փոփոխման համար դատարան դիմելու և դատական կարգով հարցը լուծելու օրենսդրի պահանջն ավելորդ դատական քաջքշուքի պատճառ է հանդիսանում և լիովին կարող է փոխարինվել դատարանին ֆակուլտատիվ վճիռ կայացնելու հնարավորության ընձեռմամբ: Եթե ՀՀ ՔԴՕ-ն, հետևելով այլ երկրների օրենսդրությանը<sup>35</sup>, սահմաներ, որ գույք հատկացնելու դեպքում դատարանը նշում է հանձնման ենթակա գույքի անվանումը, ինչպես նաև դրա արժեքը, *որը ենթակա է բռնագանձման, այն դեպքերում, երբ վճռի կատարման ընթացքում պարզվում է հանձնման ենթակա գույքի բացակայությունը*, ապա վճռի կատարման եղանակը փոփոխելու, հետևաբար նաև այդ հարցով դատարանին դիմելու անհրաժեշտություն չէր ծագի, իսկ վճիռը կկատարվեր դատարանի կողմից նախապես սահմանված լրացուցիչ (ֆակուլտատիվ) եղանակով:

**Հեռակա վճիռները** հեռակա դատավարության կարգով ընդունված գործն ըստ էության լուծող դատական ակտերն են: Դրանք լայնորեն կիրառվում են մի շարք երկրներում, այդ թվում՝ ՌԴ-ում, Անգլիայում, ԱՄՆ-ում, և ուղղված են դատական նիստին չներկայանալու միջոցով պատասխանողի կողմից գործի քննությունը ձգձգելու փորձերը կանխելուն<sup>36</sup>:

Հեռակա վճռի ինստիտուտը նոր ՔԴՕ ընդունմամբ ներդրվեց

---

<sup>35</sup> Տե՛ս, օրինակ, ՌԴ ՔԴՕ 205-րդ հոդվածը:

<sup>36</sup> Տե՛ս Теория правосудия, в 3-х томах, **Фурсов Д. А., Харламова И. В.**, т. 2: Гражданское судопроизводство как форма отправления правосудия, М.: «Статут», 2009, էջ 433:

նաև ՀՀ-ում: Հեռակա դատավարության (հեռակա վճռի) ինստիտուտի առանձնահատկությունները հանգում են նրան, որ դատական նիստի ժամանակի և վայրի մասին պատշաճորեն ծանուցված պատասխանողի չներկայանալը և գործն իր բացակայությամբ, ներկայացված նյութերի հիման վրա քննելու վերաբերյալ միջնորդություն չներկայացնելը դիտարկվում են որպես հայցի դեմ պաշտպանվելու ցանկության բացակայություն, ինչը հիմք ընդունելով՝ դատարանը նախնական դատական նիստում հայցվորի իրավական դիրքորոշումը լսելուց և գործում առկա ապացույցները հետազոտելուց հետո անցնում է գործն ըստ էության լուծող վճռի կայացման՝ կաշկանդված չլինելով պատասխանողի և/կամ նրա դիրքորոշման բացակայությամբ<sup>37</sup>:

### **§3. Դատական որոշումների էությունը և տեսակները**

Ինչպես վերն արդեն նշվել է, քաղաքացիական գործի հարուցման, քննության և լուծման, ինչպես նաև կատարողական վարույթի ընթացքում դատարանը սեփական նախաձեռնությամբ կամ կողմերի միջնորդությամբ իրականացնում է իրենց նշանակությամբ տարբեր իրավական արժեք և տարբեր նպատակային ուղղվածություն ունեցող գործողություններ: Դրանց զգալի մասն ուղղված է առանձին դատավարական (ընթացակարգային) հարցերի ու դատարանի առջև դրված միջանկյալ դատավարական խնդիրների լուծմանը: Վերջիններիս ճիշտ, հաջորդական ու հետևողական լուծմամբ են ստեղծվում անհրաժեշտ պայմաններ դատավարության հետագա զարգացման ու գործի (վճռի) ըստ էության լուծման, վճռահատության, դատավարության վերջնական նպատակներին հասնելու հա-

---

<sup>37</sup> Հեռակա դատաքննության մասին մանրամասն տե՛ս **Մեղրյան Ս. Գ.**, Պարզեցված ընթացակարգերը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում (գիտագործնական մեկնաբանություն), Երևանի պետ. համալսարան, Եր., ԵՊՀ հրատ., 2019:

մար<sup>38</sup>:

Ուղղված լինելով կոնկրետ գործի շրջանակներում ընթացակարգային (պրոցեսուալ) բնույթի խնդիրների լուծմանը (դատարան դիմելու իրավունքի իրացմանը, գործը դատաքննության նախապատրաստելուն, դատական նիստի բնականոն ընթացքն ապահովելուն, գործով ապացույցներ ձեռք բերելուն, ուժի մեջ մտած տարաբնույթ ակտերի հարկադիր կատարման համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը և այլն)՝ այդ գործողությունները կատարվում են դատավարական օրենսդրությամբ խստորեն սահմանված դատավարական ձևով և ձևակերպվում են դատարանի որոշումներով, որոնք արտահայտում են դատարանի իշխանական դատողությունները, պատճառաբանություններն ու եզրակացությունները՝ ընթացակարգային (պրոցեսուալ) հարցերի ու խնդիրների լուծման, այլ ոչ թե գործն ըստ էության լուծելու կապակցությամբ: Այդ իսկ պատճառով դատարանի նման որոշումները գրականության և օրենսդրության մեջ անվանվում են նաև գործն ըստ էության չլուծող դատական ակտեր:

Ըստ իրենց նշանակության և իրավաբանական բնույթի՝ որոշումները բաժանվում են երկու խմբի՝

1) առաջին ատյանի դատարանում վարույթը եզրափակող որոշումներ:

2) միջանկյալ որոշումներ:

**Առաջին ատյանի դատարանում վարույթը եզրափակող որոշումներն** իրենց դատավարական նշանակությամբ նման են գործն ըստ էության լուծող դատական ակտին՝ վճռին: Միևնույն ժամանակ դրանք չեն դիտարկվում որպես գործն ըստ էության լուծող դատական ակտեր, քանի որ էապես տարբերվում են վճռից իրենց նյութաիրավական նշանակությամբ և իրավական բնույթով:

Առաջին ատյանի դատարանում վարույթը եզրափակող որո-

---

<sup>38</sup> Տե՛ս *Жилин Г. А.*, Цели гражданского судопроизводства и их реализация в суде первой инстанции, М.: «Городец», 2000, էջ 59:

շումների թվին են դասվել առաջին հերթին գործի վարույթը կարճելու կամ հայցը (դիմումը) առանց քննության թողնելու մասին որոշումները: Այդ որոշումների կայացմամբ գործի ըստ էության քննությունը դադարեցվում է, փվյալ գործով վարույթն ավարտվում է՝ հանգեցնելով սկսված արդարադատական գործընթացի և դրա բովանդակությունը կազմող դատավարական իրավահարաբերությունների դադարման: Ի տարբերություն վճռի՝ գործի վարույթը կարճելու և հայցը (դիմումը) առանց քննության թողնելու մասին որոշումներով վեճն (գործը) ըստ էության չի լուծվում. հայտարարված նյութաիրավական պահանջները (հայցը, դիմումը) բավարարելու կամ մերժելու կապակցությամբ դատարանը հրամայողական հետևություններ չի անում՝ վարույթն ավարտելով առանց այդ պահանջներին համարժեք նյութաիրավական պատասխան տալու:

Հարկ է նկատել, որ գործող դատավարական օրենսդրությունը սահմանում է նաև առաջին աստիճանի դատարանում վարույթների (գործերի) որոշ տեսակներ, որոնք թեև հարուցվում են շահագրգիռ անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության նպատակով, սակայն չեն հեղափոխում գործն (վեճը) ըստ էության լուծելու նպատակ. ունեն իրավունքի պաշտպանության այլընտրանքային ձևերի կամ դատական ակտերի հարկադիր կատարման գործընթացի նկատմամբ վերահսկող և օժանդակող նշանակություն: Այդ գործերի թվին են դասվում՝ ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու, արբիտրաժի վճռի, ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու, օտարերկրյա արբիտրաժի վճռի ճանաչման և հարկադիր կատարման, օտարերկրյա դատական ակտը ճանաչելու և կատարման թույլատրելու, կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու, դատական ակտի կատարումը հետաձգելու կամ տարաժամկետելու, դատական ակտի կատարման եղանակն ու կարգը փոխելու, դատական ակտի կատարման շրջադարձ կատա-

րելու վերաբերյալ դիմումներով գործերը:

Ակնհայտ է, որ թվարկված կատեգորիայի գործերով առաջին ատյանի դատարանը գործ ունի այնպիսի իրավիճակների հետ, երբ քաղաքացիական շրջանառության մասնակիցների միջև ծագած վեճն իրավունքի պաշտպանության այս կամ այն ձևի շրջանակներում արդեն ըստ էության լուծված է, և ծագել է կայացված ակտի իրավաչափությունը հաստատելու, դրա հարկադիր կատարումն ապահովելու կամ կատարման ընթացքում ծագած խոչընդոտները վերացնելու անհրաժեշտություն: Այդ կատեգորիայի գործերով դատարանը կողմերի միջև այլևս լուծված վեճը կրկին ըստ էության չի քննարկում՝ բավարարվելով օրենքով կանխորոշված այն հիմքերի ստուգմամբ, որոնք անհրաժեշտ են համապատասխան դատական ակտ կայացնելու համար:

Հենց այս տրամաբանությամբ թվարկված վարույթների շրջանակներում գործի քննության արդյունքում կայացված ակտերն օրենսդիրը չի դասել գործն ըստ էության լուծող դատական ակտերի թվին՝ սահմանելով, որ այդ հարցերով ներկայացված դիմումների քննության արդյունքում դատարանը կայացնում է ոչ թե վճիռներ, այլ վարույթը եզրափակող որոշումներ<sup>39</sup>:

**Միջանկյալ որոշումները** այն դատական ակտերն են, որոնցով վարույթը չի եզրափակվում (ՔԴՕ 5 հոդ., մաս 3):

Եթե եզրափակիչ դատական ակտերով դատարանը «վերջակետ» է դնում գործում, այն է՝ ըստ էության լուծում է հայտարարված պահանջների բավարարման կամ մերժման հարցը կամ ավարտում է վարույթն առանց գործն ըստ էության լուծելու, ապա դատավարության ընթացքում ծագող հարցերի հետևողական և հաջորդական կարգավորման միջոցով դատարանը լուծում է դատավարական օրենքով իր առջև դրված խնդիրները (դատարան դիմելու իրավունքի իրացումը, գործի նախապատրաստումը և այլն): Այդ խնդիրների

<sup>39</sup> Տե՛ս ՔԴՕ 320-րդ, 325-րդ, 330-րդ, 335-րդ, 340-րդ, 345-րդ և 356-րդ, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 22-րդ, 24-րդ և 27-րդ հոդվածները:



հետևողական լուծման միջոցով են ստեղծվում անհրաժեշտ պայմաններ՝ գործն ըստ էության լուծելու և դատավարության հիմնական նպատակին հասնելու համար:

Ի տարբերություն եզրափակիչ դատական ակտերի՝ *միջանկյալ որոշումներ են կոչվում այն դատական ակտերը, որոնք կայացվում են ոչ թե գործն ըստ էության լուծելու կամ գործով վարույթն ավարտելու, այլ քաղաքացիական գործի հարուցման, դատական քննության և վճիռների կատարման ընթացքում ծագող միջանկյալ դատավարական բնույթի հարցերով*: Այդ իսկ պատճառով տվյալ տեսակի դատական ակտերը և՛ դատավարագիտության, և՛ օրենսդրության մեջ այլ կերպ անվանվում են «միջանկյալ դատական ակտեր»: Այդպիսիք են, օրինակ, հայցադիմումը (դիմումը) վարույթ ընդունելու, հայցադիմումը (դիմումը) վերադարձնելու, հայցադիմումի (դիմումի) ընդունումը մերժելու, հայցի ապահովման միջոց կիրառելու, հայցի ապահովումը վերացնելու, նախնական դատական նիստ նշանակելու, գործն ըստ ընդդատության ուղարկելու, ոչ պատշաճ կողմին պատշաճով փոխարինելու, որպես երրորդ անձ ներգրավելու, գործի քննությունը հետաձգելու, գործի վարույթը կասեցնելու, գործի վարույթը վերսկսելու, փորձաքննություն նշանակելու, ապացույց պահանջելու, դատական հանձնարարություն տալու, դատական սանկցիա կիրառելու և ՔԴՕ-ով նախատեսված մի շարք այլ դատական ակտեր, որոնցով լուծվում են դատավարական բնույթի միջանկյալ (ընթացակարգային) խնդիրներ, այլ ոչ թե հայցվորի կամ դիմողի կողմից հայտարարված նյութափրավական բնույթի պահանջները:

Առաջին ատյանի դատարանի բոլոր ակտերը, որոնցով գործն ըստ էության չի լուծվում (անկախ դրանց եզրափակիչ կամ միջանկյալ լինելուց), օժտված են վճռին հատուկ գրեթե բոլոր հատկանիշներով, միայն այն տարբերությամբ, որ դատական որոշումները չեն շոշափում նյութափրավական վեճի էությունը, չեն լուծում վեճն ըստ էության, վերաբերում են բացառապես իրավունքի պաշտպանության ընթացակարգին և ունեն այլ նպատակային ուղղվածություն:

Դատավարագիտության մեջ դատական որոշումների իրավական բնույթը բանավեճի առարկա է: Մի շարք հեղինակներ (Ն. Ի. Ավդենկո, Յու. Ա. Շիրոկոպոյաս, Յու. Ն. Չույկով) գտնում են, որ դրանք արդարադատության ակտեր չեն, քանի որ դրանցով նյութաիրավական վեճ չի լուծվում: Նրանց կարծիքով դատարանի որոշումները վերաբերում են գործն ըստ էության քննելուն, այլ ոչ լուծելուն<sup>40</sup>:

Այլ հեղինակներ (Լ. Վ. Տումանովա, Ա. Ֆ. Կոզլով, Կ. Ի. Կոմիսարով, Ի. Ե. Էնգելման, Գ. Ա. Ժիլին) դատական որոշումները վճիռների հետ մեկտեղ դիտարկում են որպես արդարադատության ակտեր՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ դրանք ևս ուղղված են արդարադատության առջև դրված նպատակներին: Ըստ նշված հեղինակների՝ Ա՛ վճիռը, Ա՛ որոշումները ծառայում են միևնույն նպատակին, այն է՝ գործի (վեճի) քննությանը և լուծմանը, վեճի դադարմանը: Նրանց միջև տարբերությունը միայն նրանց բովանդակության և ձևի մեջ է<sup>41</sup>:

Ինչպես նշում է Ս. Կ. Ջազայնովան, արդարադատության իրականացման գործունեությունն ընդգրկում է ինչպես վճռով վեճի ըստ էության լուծումը, այնպես էլ այն գործունեությունը, որն ուղեկցում է դրա (լուծման) վերջնական ձևակերպումը<sup>42</sup>:

---

<sup>40</sup> Տե՛ս *Широкопояс Ю. А.*, Акты суда общей юрисдикции об окончании производства по делу без принятия судебного решения. Автореф. дис. ... к.ю.н., Саратов, 2006, էջ 8, *Авдеенко Н. И.*, Механизм и пределы регулирующего воздействия гражданского процессуального права, Л., 1969, էջ 52, *Чуйков Ю. Н.*, Частные определения в советском гражданском судопроизводстве. Автореф. дис. ... к.ю.н., Харьков, 1971, էջ 7:

<sup>41</sup> Տե՛ս *Туманова Л. В.*, Новое гражданское процессуальное законодательство в свете Европейской конвенции о защите прав человека и основных свобод // Проблемы защиты прав и охраняемых законом интересов: Сб. науч. трудов, Тверь, 2003, էջ 87, *Козлов А. Ф.*, Суд первой инстанции как субъект советского гражданского процессуального права. Автореф. дис. ... д.ю.н., Свердловск, 1970, էջ 22, *Жилин Г. А.*, Суд первой инстанции в гражданском процессе, М., 2000, էջ 126, *Энгельман И. Е.*, Курс русского гражданского судопроизводства, Юрьев, 1912 (по книге: Гражданский процесс. Хрестоматия. Под ред. М. К. Треушниковой, М., 2005, էջ 544):

<sup>42</sup> Տե՛ս *Загайнова С. К.*, Судебные акты в гражданском и арбитражном процессе: теоретические и прикладные проблемы. Дисс... д.ю.н., Екатеринбург, 2008, էջ 323:

Մեր կարծիքով դատական բոլոր որոշումները հետևյալ հատկանիշների ուժով պետք է դիտարկվեն որպես արդարադատության ակտեր:

1. Դրանց վերջնական նպատակը համընկնում է քաղաքացիական դատավարության վերջնական նպատակներին:

2. Դրանք կայացվում են արդարադատության իրականացման համար լիազորված պետական մարմինների՝ դատարանների կողմից և արտահայտում են դատարանի իշխանական կամքը, սակայն ոչ թե վեճի (գործի) լուծման կապակցությամբ, այլ գործի քննությունը ղեկավարելու և այս կամ այն ընթացակարգային խնդիրը լուծելու հարցում:

3. Դատարանի որոշումները ևս իրավակիրառ ակտեր են, քանի որ կայացվում են դատավարական նորմերի հիման վրա և դանց համապատասխան՝ ուղղված են բացառապես քաղաքացիական դատավարական նորմերի իրացմանը:

4. Որոշումներով են ձևակերպվում դատավարական հիմնական այն գործողությունները, որոնց հիման վրա ծագում, փոփոխվում կամ դադարում են դատավարական իրավահարաբերություններ: Դրանք զուտ դատավարական բնույթ և նշանակություն ունեցող իրավաբանական փաստեր են:

5. Որոշումները վճիռների և վճարման կարգադրությունների նման մտնում են օրինական ուժի մեջ:

6. Օրենքով նախատեսված դեպքերում դրանք կարող են բողոքարկվել վերադաս դատական ատյան:

7. Որոշումներն ունեն կատարողական ուժ: Մի շարք որոշումներ ենթակա են հարկադիր կատարման (օրինակ՝ հայցի ապահովման մասին):

Որոշումներն արդարադատության ակտ չհամարող հեղինակների այն պնդումը, թե որոշումների շրջանակներում դատարաններն իրացնում են ոչ թե արդարադատության, այլ ուրիշ գործառույթներ, այնքան էլ հիմնավոր չի թվում: Կոնկրետ քաղաքացիա-

կան գործերի քննության և լուծման ժամանակ առաջին ատյանի դատարանը, արդարադատությունից բացի, այլ գործառույթներ չի իրականացնում: Հասարակության մեջ դատական իշխանության հիմնական առաքելությունը քաղաքացիների և կազմակերպությունների իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանությունն է: Այդ առաքելությունն իրականացվում է բացառապես արդարադատության շրջանակներում: Ուստի գործի հարուցման, քննության և վարույթն ավարտելու կապակցությամբ դատարանի կայացրած որոշումները պետք է դիտարկվեն որպես արդարադատության ակտեր, որոնցում արտացոլվում են դատական իշխանության գործառույթները:

Առաջին ատյանի դատարանի որոշումները օրենսդրության և իրավաբանական գրականության մեջ **դասակարգվում** են տարբեր հիմքերով՝ ելնելով տարբեր չափանիշներից:

Ինչպես նշեց վերը, *ըստ տվյալ աղյուսում վարույթի հետագա ընթացքի վրա ազդեցության՝* որոշումները բաժանվում են երկու տեսակի՝

- **միջանկյալ որոշումներ,**
- **եզրափակիչ որոշումներ:**

Ընդ որում, ՔԴՕ 5-րդ հոդվածի 2-րդ մասում չթվարկված դատական որոշումներն օրենսդիրը դիտարկել է միջանկյալ դատական ակտեր:

Նշված դասակարգումն ունի չափազանց մեծ գործնական նշանակություն՝ հաշվի առնելով այն, որ ՔԴՕ հետագա շարադրանքում մի շարք դատավարական կանոնների կիրառելիությունը պայմանավորվում է որոշումների եզրափակիչ կամ միջանկյալ բնույթով: Այսպես, տարբեր պահանջներ են ներկայացվում նշված դատական ակտերի բովանդակությանը, հրապարակմանը, սահմանված են օրինական ուժի մեջ մտնելու և բողոքարկելու էապես տարբերվող կանոններ, ձևական և բովանդակային առումով այլ են դրանց վերանայման ընթացակարգերը և այլն:

*Ըստ նպատակային ուղղվածության՝ որոշումները բաժանվում են երեք խմբի՝*

- նախապատրաստական որոշումներ,
- արգելող որոշումներ,
- լրացնող որոշումներ:

**Նախապատրաստական որոշումներն** այն միջանկյալ դատական ակտերն են, որոնք ուղղված են վարույթի ծագմանը և հետագա կանոնավոր ընթացքն ապահովելուն: Նախապատրաստական բնույթի որոշումներ կարող են կայացվել առաջին ատյանի դատարանում գործի քննության բոլոր փուլերում: Դրանք կայացվում են և՛ գործի հարուցման փուլում (օրինակ՝ հայցի նախնական ապահովման, հայցադիմումը (դիմումը) վարույթ ընդունելու, հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշումները), և՛ գործը դատաքննության նախապատրաստելու փուլում (օրինակ՝ նախնական դատական նիստ նշանակելու, գործով հաշտարարություն նշանակելու, ապացուցման պարտականությունը բաշխելու կամ բաշխելու մասին որոշումը փոփոխելու, ապացույց պահանջելու, փորձաքննություն նշանակելու, հայցի ապահովման միջոցը փոփոխելու, վարույթը կասեցնելու, գործը դատաքննության նշանակելու), և՛ դատաքննության փուլում (օրինակ՝ գործը դադարեցնելու, դատական նիստի լուսանկարահանում թույլատրելու, դատական նիստի կարգը խախտող անձանց նկատմամբ դատական սանկցիաներ կիրառելու, գործի քննությունը հետաձգելու մասին, գործի քննությունը վերսկսելու մասին որոշումները):

Բոլոր դեպքերում նախապատրաստական բնույթի որոշումներն ուղղված են գործի քննության համար անհրաժեշտ ու բավարար պայմանների ստեղծմանը և վարույթի կանոնավոր զարգացումն ապահովելուն: Դրա համար էլ այդ ակտերը հաճախ անվանվում են նաև «ապահովող» որոշումներ:

**Արգելող** են կոչվում այն որոշումները, որոնք ուղղված են վարույթի ծագումը կամ հետագա ընթացքը խափանելուն: Նման որո-

շումները, հենվելով դատավարական օրենսդրությամբ ամրագրված արգելքների վրա, տարբեր հիմքերով արձանագրում են, որ հնարավոր չէ վարույթ հարուցել կամ հարուցված վարույթը շարունակել: ՔԴՕ-ի վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել արգելող բնույթի հետևյալ որոշումները՝ հայցադիմումը վերադարձնելու (ՔԴՕ 125 հոդ.), հայցադիմումի ընդունումը մերժելու (ՔԴՕ 126 հոդ.), հայցը կամ դիմումն առանց քննության թողնելու (ՔԴՕ 181 հոդ.), գործի վարույթը կարճելու (ՔԴՕ 183 հոդ.) մասին որոշումները:

**Լրացնող** են կոչվում այն որոշումները, որոնք կայացվում են կայացված այլ դատական ակտի կատարելիությունն ապահովելու նկատառումներով և ուղղված են դատական ակտը հրապարակելուց հետո դրանում բացահայտված տարբեր թերությունների (ուղղագրական, թվաբանական սխալների, վրիպակների) վերացմանը, հրապարակված վճռի կատարման համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը: Լրացնող որոշումների օրինակ են դատական ակտում թույլ տրված վրիպակները, գրասխալները և թվաբանական սխալներն ուղղելու (ՔԴՕ 197 հոդ.), վճռի կատարման ապահովման միջոցներ կիրառելու (ՔԴՕ 195 հոդ.), վճռի կատարման եղանակները և կարգը սահմանելու (ԴԱՀԿ մասին օրենքի 22 հոդ.), կատարողական թերթը պարզաբանելու (ԴԱՀԿ մասին օրենքի 35 հոդ.) մասին որոշումները:

*Ըստ կայացման ձևի՝* դատարանի առաջին ատյանի որոշումները բաժանվում են՝

– առանձին դատավարական փաստաթղթի ձևով կայացվող որոշումների,

– դատական նիստի ընթացքում դատարանի կողմից բանավոր կայացվող որոշումների:

ՔԴՕ 199-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ առաջին ատյանի դատարանն **առանձին դատավարական փաստաթղթի (ակտի) ձևով** ընդունում է այն որոշումները, որոնք՝

1) ենթակա են բողոքարկման.

2) ընդունվում են դատական նիստից դուրս.

3) օրենսգրքի համաձայն՝ պետք է ընդունվեն առանձին ակտի ձևով:

Բողոքարկման ենթակա դատական որոշումներն առանձին ակտի ձևով կայացնելու պահանջն առաջին հերթին պայմանավորված է դատական որոշման դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունքի իրականացման խնդիրը դատավարության մասնակցի համար առավել դյուրին դարձնելու, բողոքի հիման վրա դատական ակտը վերանայող դատարանին դատական նիստերի արձանագրությունների հետազոտման ժամանակատար գործընթացից ազատելու և, իհարկե, վարույթի հետագա ընթացքի վրա էական ազդեցություն ունեցող որոշումների պարզությունը, որոշակիությունն ու պատճառաբանվածությունն ապահովելու նկատառումներով:

Առանձին ակտի ձևով պետք է կայացվեն նաև բոլոր այն որոշումները, որոնք դատարանը կայացնում է դատական նիստից դուրս՝ մինչև գործի բանավոր դատական քննությունը (օրինակ՝ հայցադիմումը վարույթ ընդունելու, հայցադիմումը վերադարձնելու, նախնական դատական նիստ նշանակելու, պարզեցված վարույթ կիրառելու, գործը դատաքննության նշանակելու, հայցի ապահովման միջոց կիրառելու, փորձաքննություն նշանակելու մասին և այլն) կամ բանավոր դատական քննությունն ավարտելուց հետո (օրինակ՝ գործի դատաքննությունը վերսկսելու, լրացուցիչ վճիռ կայացնելը մերժելու, վճռի կատարման ապահովման միջոց կիրառելու, վճռի կատարման կարգն ու եղանակները փոփոխելու մասին և այլն): Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ առանց առանձին դատավարական փաստաթուղթ կազմելու օրենսդիրը թույլատրում է կայացնել որոշումներ բացառապես դրանք դատական նիստում բանավոր հայտարարելու և դատական նիստի արձանագրության մեջ ներառելու պայմանով (ՔԴՕ 199 հոդ., մաս 2): Իսկ քանի որ դատարանի որոշումը չի կարող գրավոր ձևակերպում չստանալ այն դեպքերում, երբ դատարանի գործողությունները կատարվում են դատա-

կան նիստից դուրս, չեն արձանագրվում, նրա կայացրած որոշման արտահայտման միակ թույլատրելի եղանակն այն առանձին դատավարական փաստաթղթով ձևակերպելն է: Ընդ որում, նման դեպքերում կայացված որոշման բողոքարկման հնարավորությունը որևէ կերպ չի արժևորվում: Օրինակ, թեև հայցադիմումը վարույթ ընդունելու, հայցի ապահովման միջոց կիրառելու, նախնական դատական նիստ նշանակելու կամ գործը դատաքննության նշանակելու մասին որոշումները բողոքարկման ենթակա չեն, դրանք պետք է կայացվեն առանձին ակտի ձևով և ուղարկվեն գործին մասնակցող անձանց (տե՛ս ՔԴՕ 125-րդ, 131-րդ, 174-րդ և այլ հոդվածները):

Հաշվի առնելով մի շարք որոշումների դատավարական նշանակությունը և վարույթի մասնակիցների դատավարական իրավունքներն իրացնելու համար անհրաժեշտ պայմաններ ապահովելու հրամայականը՝ օրենսդիրը որոշ դեպքերում սահմանել է դրանք առանձին ակտի ձևով կայացնելու իմպերատիվ պահանջ՝ անկախ նրանից, որ տվյալ որոշումները ենթակա չեն բողոքարկման և կարող են կայացվել նաև դատական նիստի ընթացքում: Այդպիսի որոշումներ են, օրինակ, ապացուցման պարտականությունը բաշխելու կամ այն փոփոխելու մասին որոշումները՝ գործին մասնակցող անձի բացակայությամբ կայացվելու դեպքում (ՔԴՕ 169 հոդ., մաս 6), հայցի առարկայի կամ հիմքի փոփոխությունը թույլատրելու մասին որոշումը՝ գործին մասնակցող անձի բացակայությամբ կայացվելու դեպքում (ՔԴՕ 170 հոդ., մաս 4), ոչ պատշաճ պատասխանողին փոխարինելու մասին (ՔԴՕ 172 հոդ.), նոր պատասխանող ներգրավելու մասին (ՔԴՕ 173 հոդ.), արագացված դատաքննություն կիրառելու մասին (ՔԴՕ 304 հոդ.) և մի շարք այլ որոշումներ:

Բոլոր այն որոշումները, որոնց համար սահմանված չէ առանձին ակտի ձևով կայացնելու պահանջ, դատարանի հայեցողությամբ կարող են ընդունվել առանձին ակտի ձևով կամ ամրագրվել դատական նիստի արձանագրության մեջ:

Քանի որ առանձին ակտի ձևով չձևակերպվող որոշումները



պարտադիր կերպով ներառվում են դատական նիստի արձանագրության մեջ, նման որոշումները կոչվում են նաև «արձանագրային որոշումներ»:

Հարկ է նկատել, որ օրենսդիրը, ըստ էության, դատարաններին տվել է անսահմանափակ հնարավորություն՝ իր հայեցողությամբ, ըստ նպատակահարմարության, առանձին ակտով ձևակերպելու այն որոշումները, որոնք կարող են կայացվել արձանագրային կարգով: Այդուհանդերձ, գործնականում դատարաններն այդպիսի որոշումները չեն կայացնում արձանագրային կարգով, առանց «խորհրդակցական սենյակ» հեռանալու, եթե դրանք կայացնելու համար գնահատման ենթակա հանգամանքները բարդ են, պահանջվում են լայն փաստարկումներ կամ օրենսդրության խորը վերլուծություն, գործին մասնակցող անձինք լուծվող հարցի կապակցությամբ արտահայտել են տարբեր կարծիքներ և այլն:

*Ըստ բողոքարկման հնարավորության՝* դատարանի որոշումները լինում են՝

- բողոքարկման ենթակա,
- բողոքարկման ոչ ենթակա:

ՔԴՕ 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործին մասնակցող անձինք ունեն առաջին աստիճանի դատարանի դատական ակտերի վերաքննության կարգով վերանայման իրավունք ՔԴՕ-ով նախատեսված դեպքերում և կարգով: Ըստ նույն հոդվածի 4-րդ մասի՝ գործին մասնակից չդարձած, ինչպես նաև դատավարության մասնակից չհանդիսացող անձը դատական ակտը կարող է բողոքարկել ՔԴՕ-ով նախատեսված դեպքերում և կարգով:

ՔԴՕ 361-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է վերաքննության կարգով բողոքարկման ենթակա որոշումների ցանկը: Այդպիսիք են՝

- 1) հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշումը.
- 2) հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը.
- 3) հայցի ապահովման միջոց կիրառելու, հակընդդեմ ապահովում կիրառելու վերաբերյալ միջնորդությունները մերժելու, հայցի

ապահովումը վերացնելու մասին որոշումը.

4) լրացուցիչ վճիռ կայացնելը մերժելու մասին որոշումը, վճռի վրիպակները, գրասխալները և թվաբանական սխալներն ուղղելու կամ ուղղում կատարելը մերժելու մասին որոշումը.

5) գործի վարույթը կասեցնելու, գործի վարույթը վերսկսելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասին դատարանի որոշումը.

6) հայցը (դիմումը) առանց քննության թողնելու մասին որոշումը.

7) գործի վարույթը կարճելու մասին որոշումը.

8) դատական տուգանք կիրառելու մասին որոշումը.

9) օտարերկրյա արբիտրաժային վճռի ճանաչման և հարկադիր կատարման վերաբերյալ դիմումի քննության արդյունքում կայացված որոշումը.

10) ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումի քննության արդյունքում կայացված որոշումը.

11) ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումի քննության արդյունքում կայացված որոշումը.

12) օտարերկրյա դատական ակտը ճանաչելու և կատարման թույլատրելու վերաբերյալ դիմումի քննության արդյունքում կայացված որոշումը.

13) կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդության քննության արդյունքում կայացված որոշումը.

14) դատական ակտի կատարման շրջադարձ կատարելու վերաբերյալ դիմումի քննության արդյունքում կայացված որոշումը.

15) այլ որոշումներ՝ օրենքով սահմանված դեպքերում:

Ինչպես նկատում ենք, բողոքարկման ենթակա որոշումների ցանկն ավարտվում է «այլ որոշումներ՝ օրենքով սահմանված դեպքերում».

քերում» արտահայտությամբ, ինչը թույլ է տալիս ձևակերպել ընդհանուր կանոն առ այն, որ առաջին առյուծի դատարանի որոշումները (եզրափակիչ և միջանկյալ) կարող են բողոքարկվել վերաքննության կարգով միայն ՔԴՕ-ով և այլ օրենքներով նախատեսված դեպքերում: Հետևում է, որ **բողոքարկման ենթակա** որոշումներ են այն որոշումները, որոնց բողոքարկման հնարավորությունն ուղղակիորեն նախատեսված է օրենքով: Համապատասխանաբար, որպես **բողոքարկման ոչ ենթակա** որոշումներ պետք է դիտարկել այն որոշումները, որոնք վերաքննության կարգով բողոքարկելու հնարավորություն օրենքն ուղղակիորեն չի նախատեսում:

Ուշագրավ է Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումը դատական որոշումների բողոքարկելիության հարցի կապակցությամբ<sup>43</sup>:

Արձանագրելով, որ կայացված դատական ակտի բողոքարկումն անձի՝ Սահմանադրությամբ և միջազգային-իրավական ակտերով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի կարևոր բաղադրատարրերից է, Սահմանադրական դատարանն ընդգծել է, որ օրենսդրի սահմանած իրավակարգավորումը վերաբերում է ոչ թե միջանկյալ դատական ակտերի բողոքարկելիությանն ընդհանրապես, այլ բողոքարկման կարգին: Այսինքն՝ օրենսդիրը, յուրաքանչյուր կոնկրետ դեպքում սահմանելով տվյալ դատական որոշման անմիջական բողոքարկման հնարավորություն, չի բացառել դատական որոշումների բողոքարկելիությունը եզրափակիչ դատական ակտերի բողոքարկման շրջանակներում:

Սահմանադրական դատարանը նշել է, որ օրենսդիրը, կարգավորելով դատական ակտերի բողոքարկելիության հարցը, տարբերակում է դրանց բողոքարկման երկու հիմնական կարգ, այն է՝ բողոքարկում եզրափակիչ դատական ակտի բողոքարկման շրջանակներում՝ «**հետաձգված բողոքարկում**», և դատական ակտի «**անմի-**

---

<sup>43</sup> Տե՛ս Սահմանադրական դատարանի թիվ ՍԴՌ-719 28.11.2007 թ., թիվ ՍԴՌ-918 28.09.2010 թ. և թիվ ՍԴՌ-922 02.11.2010 թ. որոշումները:

**ջական բողոքարկում»:** Եթե վարույթի հետագա ընթացքը կասեցնող որոշման դեմ իրավական պաշտպանության միակ հնարավոր միջոցն անմիջական բողոքարկումն է, և ըստ այդմ՝ օրենսդրից պահանջվում է նախատեսել տվյալ ակտի անմիջական բողոքարկման կարգ, ապա չկասեցված և շարունակվող վարույթի ընթացքում ընդունված որոշման բողոքարկման նշված երկու կարգերի միջև ընտրությունն օրենսդրի հայեցողության շրջանակում է:

Ըստ այդմ՝ քննարկվող հարցի կապակցությամբ դատավարական օրենսդրության հիմքում դրվել է այն մոտեցումը, որ անմիջական բողոքարկման են ենթակա բոլոր այն ակտերը, որոնք կարող են կասեցնել կամ խոչընդոտել դատարանի մատչելիության իրավունքի իրացման ընթացքը, արգելակել իրավունքի պաշտպանության գործընթացը, իսկ անմիջականորեն բողոքարկման ոչ ենթակա ակտերի թվին են դասվել այն որոշումները, որոնք իրենց բնույթով չեն արգելակում գործի հետագա ընթացքը, չեն կասեցնում դրա քննության հնարավորությունը և վերաբերում են դատավորի՝ քննությունը կազմակերպելու հայեցողությանը:

Սահմանադրական դատարանի դիպուկ բնորոշմամբ օրենսդրի նման մոտեցումն իր հերթին բխում է այն ողջամիտ տրամաբանությունից, որ հարուցված, չկասեցված և շարունակվող վարույթի տրամաբանական ավարտը եզրափակիչ դատական ակտի կայացումն է, հետևաբար՝ նման վարույթի շրջանակներում կայացված ակտերն անձի իրավունքի ենթադրյալ խախտման դեպքում կարող են վիճարկվել եզրափակիչ դատական ակտի բողոքարկման շրջանակներում («հետաձգված» բողոքարկման կարգով): Մինչդեռ կասեցված կամ ընդհատված վարույթի պարագայում նման հնարավորությունը բացառվում է, և միջանկյալ դատական ակտի դեմ պաշտպանության միակ միջոցը այն անմիջականորեն բողոքարկելու հնարավորությունն է:

Սահմանադրական դատարանը դատարանի մատչելիությունը չսահմանափակող դատական ակտերի անմիջականորեն բողո-

քարկման հնարավորության բացակայության իրավաչափությունը գնահատել է նաև հետապնդվող իրավաչափ նպատակի լույսի ներքո՝ արձանագրելով, որ դատական որոշումների «հետաձգված բողոքարկման» կարգի սահմանումը հետապնդում է գործի քննությունը ողջամիտ ժամկետում կազմակերպելու, դատաքննությունն անհարկի ձգձգումներից զերծ պահելու պահանջը երաշխավորելու, ինչպես նաև դատավարական գործընթացի արդյունավետությունն ապահովելու իրավաչափ նպատակ<sup>44</sup>:

#### **§4. Վճարման կարգադրությունը՝ որպես դատական ակտի ինքնուրույն տեսակ**

Ներկայումս քաղաքացիական դատավարությունում գործառույթ է վճարման կարգադրություն արձակելու գործերի վարույթը<sup>45</sup>, որը խախտված սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության պարզեցված ընթացակարգ է: Այդ կապակցությամբ որպես քաղաքացիական գործերով կայացվող դատական ակտերի ինքնուրույն տեսակ ՔԴՕ 188-րդ հոդվածում վճիռների և որոշումների հետ մեկտեղ մատնանշվում են նաև վճարման կարգադրությունները:

---

<sup>44</sup> Միջազգային փորձի ուսումնասիրությունը ևս վկայում է, որ ելնելով վերոհիշյալ իրավաչափ նպատակի իրացման անհրաժեշտությունից՝ միջանկյալ բնույթի որոշումների անմիջական բողոքարկման հնարավորությունը նվազագույնի հասցնելը և դրանց «հետաձգված բողոքարկման» կարգին նախապատվություն տալն իրավաչափ են: Այսպես, Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն այս խնդրի առնչությամբ 1995 թ. փետրվարի 7-ին ընդունել է «Քաղաքացիական և տնտեսական գործերով բողոքարկման համակարգերի և ընթացակարգերի գործադրման և գործունեության կատարելագործման մասին» R(95)5 հանձնարարականը, որի 1-ին կետի a) ենթակետը սահմանում է. «Սկզբունքորեն պետք է գոյություն ունենա վերադաս դատարանի («երկրորդ ատյանի դատարան») կողմից ստորադաս դատարանի («առաջին ատյանի դատարան») կողմից կայացված ցանկացած որոշման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու հնարավորություն»: Միաժամանակ նույն հանձնարարականի 3-րդ հոդվածում (կետ «d») ամրագրված է, որ պետությունները կարող են «... հետաձգել որոշակի միջանկյալ հարցերի բողոքարկման իրավունքի իրականացումը մինչև հիմնական գործով գլխավոր բողոքի ներկայացումը»:

<sup>45</sup> Այսուհետ նաև՝ «կարգադրության վարույթ»:

Վճարման կարգադրություն արձակելու վարույթն իր ներկա տեսքով նորույթ է ՀՀ իրավակարգի համար և որոշակի առումով տարբերվում է ինչպես Հայաստանում գործառած նմանատիպ ինստիտուտներից, այնպես էլ ներկայումս մի շարք երկրներում (Ավստրիա, Գերմանիա, ՌԴ և այլն) կիրառվող դատավարական կառուցակարգերից, որոնք իրենց բնույթով շատ նման են կարգադրության վարույթին (դատական հրաման, դատական կարգադրություն, մուրհակային վարույթ, փաստաթղթային վարույթ և այլն) ու դատավարական ավանդական ընթացակարգից դուրս գործառող պարզեցված ընթացակարգեր են:

Քննարկվող ինստիտուտների պատմական նախատիպը ծագել է դեռևս Հին Հռոմում ձևավորված ֆորմուլյար դատավարության դարաշրջանում, երբ ռեստրիկցիաների հետ մեկտեղ գոյություն ունեին դատավարական պաշտպանության այնպիսի միջոցներ, ինչպիսիք էին ինտերդիկտները: Վերջիններս հայցվորի խնդրանքով պրետորի կողմից տրվող հրամաններ էին, որոնք կարգադրում էին պարտապանին կատարելու որոշակի գործողություն (decretum) կամ արգելում էին դրա կատարումը (interdictum)<sup>46</sup>: Դրանք արձակվում էին յուրաքանչյուր կոնկրետ դեպքի համար և հայտարարվում էին կողմերի ներկայությամբ: Արձակված ինտերդիկտի չկատարումը հանգեցնում էր հետագա դատական քննության<sup>47</sup>:

Որոշակի մոդիֆիկացիաներով պարտքի բռնագանձման պարզեցված ձևը փոխառվեց զարգացած իրավական համակարգ ունեցող մի շարք եվրոպական երկրների կողմից: Այսպես, օրինակ, Գերմանիայի ԲԴՕ-ում իրավունքի պաշտպանության պարզեցված կառուցակարգերը ներդրվել և շարունակում են գոյություն ունենալ «Գրավոր ապացույցների հիման վրա պարզեցված վարույթ և մուր-

---

<sup>46</sup> Տե՛ս *Новицкий И. Б., Перетерский И. С.*, Римское частное право. М., 1948, էջ 48, Ինտերդիկտների առանձին տեսակների մասին տե՛ս նաև *Վ. Դ. Ավերիսյան*, Հռոմեական մասնավոր իրավունք, Եր., Երևանի համալս. հրատ., 2010, 196-198 էջը:

<sup>47</sup> Տե՛ս *Салогубова Е. В.*, Римское гражданский процесс. М., 1997, էջ 65:

հակային վարույթ» և «Պարտքի մարումը դատական հրամանի կարգով» անվանումներով:

Պարզեցված վարույթներ նախատեսվել ու կիրառվել են նաև մինչհեղափոխական Ռուսաստանում և դրան հետևելով՝ Հայաստանի երկրորդ հանրապետության առաջին (1923 թ.) ՔԴՕ-ում (210-219-րդ հոդվածներ), որտեղ այն կոչվել են «Հիշեցման վարույթ»<sup>48</sup>: ՌԴ գործող ՔԴՕ-ում ամրագրված է պարզեցված ընթացակարգերի երկու տեսակ՝ «Դատական հրաման» (գլուխ 11) և «Հեռակա դատավարություն» (գլուխ 22):

Նշված պարզեցված ընթացակարգերից կարգադրության վարույթն առավել նման է դատական հրաման արձակելու գործերի վարույթին, քանի որ բոլոր այն երկրներում, որտեղ կիրառվում է դատական հրամանի ինստիտուտը, այդ վարույթի շրջանակներում դատական հրամանն արձակվում է առանց դատական նիստ հրավիրելու, պարտքն անվիճելիորեն հաստատող փաստաթղթերի առկայությամբ, ուժի մեջ մտնելու պահից ստանում է օրինական ուժ, գործն ըստ էության լուծող դատական ակտի ուժ և ենթակա է հարկադիր կատարման:

Ինչպես վերն արդեն նշել ենք, վճարման կարգադրություն արձակելու գործերի վարույթը հիշեցնող «հիշեցման վարույթ» նախատեսվել է նաև Հայաստանի երկրորդ հանրապետության 1923 թ. ՔԴՕ-ում, որին նվիրված էին 210-219-րդ հոդվածները (գլուխ XXIV): ՀՍՍՀ 1923 թ. քաղաքացիական դատավարության օրենսգիրքը դատավարական այս կառուցակարգի հիմքում դրել էր մեկ կանխադրույթ, այն է՝ եթե պարտատիրոջ պահանջը հաստատող փաստաթուղթը ձևակերպված է օրինական կարգով, ուստի պարտապանը չի կարող ըստ էության առարկություններ անել հաստատված այդ

---

<sup>48</sup> Տե՛ս **Պեդրոսյան Ռ. Գ.**, Դատարանը և քաղաքացիական դատավարությունը Արևելյան Հայաստանում XIX-XX դարերում (պատմաիրավական հետազոտություն և օրենսդրության իրավահամեմատական վերլուծություն), Երևանի համալս. հրատ., Եր., 2001, էջ 435:

պահանջի (պահանջների) դեմ, քանի որ ինքն է իրեն պարտավորեցրել վճարման: Հենց դրա համար էլ իրավաբանական գրականության մեջ այն բնութագրվում էր որպես պարզեցված կամ փաստաթղթային վարույթ կամ դատական հրաման: Նման դեպքերում դատական վարույթը հեշտացնելու կամ պարզեցնելու նպատակով դատարանին թույլ է տրվում փաստաթղթերով հաստատված պարտքը բռնագանձել առանց դատական նիստ հրավիրելու կայացված դատական ակտով: Սակայն նշված վարույթը դադարեց գործել նոտարիատի և դատարանի միջև իրավասությունների հերթական վերաբաշխման ժամանակ՝ 1929 թ. օգոստոսի 22-ին: Ամբողջ ՍՍՀՄ տարածքում (այդ թվում՝ ՀՍՍՀ-ում) այսպես կոչված անվիճելի գործերի քննությունը վերապահվեց նոտարիատի իրավասությանը, և անվիճելի պարտքերի գանձումն իրականացվում էր նոտարների կատարողական մակագրությունների միջոցով<sup>49</sup>: Ռ. Գ. Պետրոսյանն իրավացիորեն նշում է, որ այդ ինստիտուտի վերացումը պայմանավորված էր նրանով, որ Խորհրդային Հայաստանի քաղաքացիական դատավարությունը, որը տառացիորեն հետևում էր խորհրդային դատավարությանը, աստիճանաբար հրաժարվում էր քաղաքացիական դատավարության տնօրինչականության ու մրցակցության սկզբունքներից, մրցակցային դատավարությունում ոչ միայն կողմերի, այլ նաև դատարանի դատավարական ակտիվ դերից, ձգտում էր քաղաքացիական շրջանառության բոլոր կարևոր հարցերը լուծել վարչական մարմինների միջոցով<sup>50</sup>:

Նշված պատճառներով ՀՀ 1964 թ. ՔԴՕ-ում հիշեցման վարույթը (դատական հրաման արձակելու վարույթը) չնախատեսվեց և շուրջ 20 տարի Հայաստանի քաղաքացիական դատավարությունում

---

<sup>49</sup> Տե՛ս Гражданский процесс. Под ред. **М. К. Треушников**, М.: «Городец», 2003, էջ 384:

<sup>50</sup> Տե՛ս **Պեպրոսյան Ռ. Գ.**, Դատարանը և քաղաքացիական դատավարությունը Արևելյան Հայաստանում XIX-XX դարերում (պատմաիրավական հետազոտություն և օրենսդրության իրավահամեմատական վերլուծություն), Երևանի համալս. հրատ., Եր., 2001, էջ 434:



որևէ ձևով չէր գործառու: Միննույն ժամանակ 1974 թ. դեկտեմբերի 26-ին ընդունված և 1975 թ. ապրիլի 1-ից գործողության մեջ դրված «Պետական նոտարիատի մասին» ՀՍՍՀ օրենքի 75-րդ հոդվածը, ելնելով իրավահարաբերությունների բնույթից և պարտավորությունների հիմնավորվածությունից, թույլատրում էր պարտավորությունների կատարում անվիճելի կարգով, այն է՝ պարտապանից դրամական գումարներ բռնագանձելու կամ գույք պահանջելու համար նոտարական մարմինները պարտատիրոջ խնդրանքով կատարողական մակագրություններ էին անում պարտքը հաստատող փաստաթղթերի վրա: Դա, իհարկե, մի կողմից ապահովում էր անվիճելի ճանաչված պարտավորությունների արագ և հեշտ կատարումը, խախտված քաղաքացիական իրավունքների շուտափույթ վերականգնումը, կարգապահ էր դարձնում իրենց պարտավորությունների կատարման մեջ թերացող պարտապաններին, մյուս կողմից՝ թերևս ցանցում էր պարտքի անվիճելի բռնագանձման գործերը քննող դատարանների ծանրաբեռնվածությունը: Կատարողական մակագրությունը պարտապանի կողմից հոժարական չկատարելու դեպքում բռնագանձումը կարող էր կատարվել միայն պարտատիրոջ հայցով կայացված դատական վճռի հիման վրա: Նկատի ունենալով, որ շահագրգռված անձինք նոտարի կատարողական մակագրությունները դեպքերի մեծամասնությամբ վիճարկում էին դատարանում հայցային վարույթի կարգով, «Նոտարիատի մասին» ՀՀ գործող օրենքի<sup>51</sup> ընդունմամբ կատարված նոտարիատի և դատարանի միջև իրավասությունների հերթական վերաբաշխման ժամանակ կատարողական մակագրությունների կատարման նոտարական իրավասությունը վերացվեց՝ հանելով նոտարի կողմից իրականացվող գործողությունների ցանկից:

1985 թ. փետրվարի 27-ին ընդունվեց ՀՍՍՀ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագիրը՝ «Անչափահաս երեխա-

---

<sup>51</sup> Ընդունվել է 2001 թ. դեկտեմբերի 4-ին: Տե՛ս ՀՀՊՏ 2002/2(177), 10.01.2002:

ների օգտին ալիմենտների բռնագանձման կարգը փոփոխելու վերաբերյալ»<sup>52</sup>: Հրամանագրի հիմքում դրվեց ալիմենտի բռնագանձման վերաբերյալ անվիճելի գործերը վիճելի գործերից սահմանազատելու նպատակահարմարությունը: Սահմանվեց, որ իրավունքի մասին վեճի առկայության դեպքում գործը քննվում և լուծվում է հայցային վարույթի կարգով, իսկ վեճի բացակայության դեպքում դատավորին վերապահվեց առանց քաղաքացիական գործ հարուցելու անչափահաս երեխաների համար ալիմենտ գանձելու մասին որոշում կայացնելու իրավունք:

Նշված հրամանագրով Հայաստանի ամուսնալնտանեկան օրենսդրության մեջ ստեղծվեց քննարկվող ինստիտուտի նոր նախատիպ, որը գրականության մեջ դիտարկվում է որպես դատական հրամանի վերածննդի առաջին ուղենիշերից մեկը<sup>53</sup>:

Շուկայական տնտեսության անցնելու և եվրաինտեգրման գործընթացներին ներգրավվելու կապակցությամբ Հայաստանի Հանրապետության առջև դրվեց արդարադատության մատչելիության ապահովման, քաղաքացիական դատավարության արդյունավետության բարձրացման, դատական ընթացակարգի թեթևացման նպատակով դատական պաշտպանության իրավունքի համապարփակ իրականացումը երաշխավորող դատավարական պարզեցված կառուցակարգերի ներդրման խնդիր:

Վերջինիս լուծման կապակցությամբ ԱԺ-ի կողմից 2004 թ. օգոստոսի 5-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով<sup>54</sup> ՔԴՕ-ն լրացվեց նոր՝

---

<sup>52</sup> Տե՛ս ՀՍՍՀ ԳՍՍ 1985 թ., թիվ 4: Նույնանուն և նույնաբովանդակ հրամանագիր է ընդունվել նաև 1985 թ. փետրվարի 20-ին ՌՍՖՍՀ Գերագույն սովետի նախագահության կողմից:

<sup>53</sup> Տե՛ս *Черемин М. А.*, Приказное производство в российском гражданском процессе, М., 2001, էջ 24-25, Гражданский процесс. Под ред. М. К. Треушников, М.: «Городец», 2003, էջ 385:

<sup>54</sup> Տե՛ս ՀՀՊՏ, 2005/51(423), 12.08.05:

«Վճարման կարգադրություն արձակելու գործերի վարույթը» վերտառությամբ 36<sup>1</sup>-րդ գլխով (204<sup>1</sup>-204<sup>8</sup>-րդ հոդվածներ), որը որոշակիորեն այլընտրանքային վարույթ էր և՛ ներկայումս գործող արագացված դատաքննության, և՛ նախկինում գործառած նոտարական մակագրությունների ինստիտուտի համեմատ:

Վճարման կարգադրության ինստիտուտը նախատեսվեց նաև ներկայումս գործող ՔԴՕ-ում:

Վարույթի քննարկվող տեսակը կարգավորվում է ՔԴՕ-ի «Վճարման կարգադրություն արձակելու գործերի վարույթը» վերտառությամբ 43-րդ գլխի շրջանակներում, որում վարույթի տվյալ տեսակին նվիրվել են 307-314-րդ հոդվածները:

Ընդհանուր առմամբ կարգադրության վարույթը կարող է բնորոշվել որպես քաղաքացիական գործերի լուծման պարզեցված ընթացակարգի տեսակ, որի շրջանակներում դատարանը պարտադիրոջ ներկայացրած դիմումի հիման վրա առանց դատական նիստ հրավիրելու և առանց գործն ըստ էության քննելու կայացնում է դատական ակտ (իրաման, կարգադրություն), որը չվիճարկվելու դեպքում ստանում է եզրափակիչ դատական ակտի՝ վճռի ուժ և ենթակա է հարկադիր կատարման: Այս վարույթի կարգով դատական ակտ կայացնելու համար գործի փաստական հանգամանքները չեն պարզվում և չեն հաստատվում, որովհետև դատարանը պարտապանի դիրքորոշումը և պատճառաբանությունները չի քննարկում, գործի իրավաբանական որակումը չի տալիս: Դատական ակտ կայացնելիս դատարանը հենվում է միայն պահանջն առերևույթ (*prima facie*) հիմնավորված և ապացույցներով հաստատված լինելու փաստի վրա: Մյուս կողմից, այս ինստիտուտը թույլ է տալիս հաշվի առնել նաև պարտապանի շահերը, այսինքն՝ ֆիզիկական և իրավաբանական այն անձանց շահերը, որոնց դեմ հարուցվել է կարգադրության վարույթը, քանի որ եթե վճարման կարգադրությունը սահմանված կարգով վիճարկվում է, ապա այն կորցնում է ուժը (վերացվում է):

ՔԴՕ-ն վճարման կարգադրության հասկացությունը չի սահմանում՝ ի տարբերություն ՌԴ ՔԴՕ-ի, որի 121-րդ հոդվածում դատական հրամանը սահմանվում է որպես դատական որոշում, որը կայացվում է դատավորի կողմից միանձնյա, օրենսգրքով նախատեսված պահանջներով պարտապանից դրամական գումարներ բռնագանձելու կամ շարժական գույք վերցնելու վերաբերյալ դիմումների հիման վրա:

Հաշվի առնելով կարգադրության վարույթի առանձնահատկությունները<sup>55</sup> ***վճարման կարգադրությունը կարելի է բնորոշել որպես պարտապանից որոշակի դրամական գումարներ բռնագանձելու պահանջով դիմումի հիման վրա դատարանի կողմից միանձնյա առանց դատական նիստ հրավիրելու և առանց պահանջի հիմնավորվածությունն ըստ էության ստուգելու կայացվող դատական ակտ:***

Վճարման կարգադրության վարույթը դատավարագիտության տեսանկյունից կարող է դիտարկվել որպես հրամայական վարույթի տարատեսակ:

Հրամայական վարույթի և դատական հրամանի իրավական բնույթը գրականության մեջ տարակարծությունների տեղիք է տալիս:

Մի խումբ հեղինակներ դատական հրամանը դիտարկում են որպես քաղաքացիական գործերի քննության և լուծման պարզեցված ձև:<sup>56</sup> Մյուսներն այն դիտարկում են ոչ թե որպես քաղաքացիա-

---

<sup>55</sup> Այդ մասին մանրամասն տե՛ս **Մեղրյան Ս. Գ.**, Պարզեցված ընթացակարգերը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում (գիտագործնական մեկնաբանություն, Երևանի պետ. համալսարան, Եր., ԵՊՀ հրատ., 2019:

<sup>56</sup> Տե՛ս, օրինակ, **Загайнова С. К.**, Судебный приказ как форма реализации судебной власти в гражданском процессе // Современная доктрина гражданского, арбитражного процесса и исполнительного производства: теория и практика. Сб. науч. статей, Краснодар, СПб., 2004, էջ 530, **Решетникова И. В., Ярко В. В.**, Гражданское право и гражданский процесс в современной России, Екатеринбург, 1999, էջ 182, **Решетняк В. И., Черных И. И.**, Заочное производство и судебный приказ в гражданс-

կան դատավարության տեսակ, այլ որպես այլընտրանքային ընթացակարգ, որն իրականացվում է դատավորի կողմից պարտապանի իրավունքի արագացված պաշտպանության և պահանջի վիճելիությունը կամ անվիճելիությունը պարզելու համար<sup>57</sup>: Հայ իրականության մեջ ներկայումս նաև տեսակետ է հնչում, թե կարգադրության վարույթի շրջանակներում դատարանը սոսկ տեխնիկական բնույթի գործառույթ է կատարում, որն ուղղված է վեճի առկայությունը բացահայտելուն, ինչն անհարիր է դատական իշխանության մարմնի էությանը, և հնչում են առաջարկներ վարույթի տվյալ տեսակն ընդհանրապես վերացնելու վերաբերյալ:

Տ. Վ. Սախնովան, Տ. Պ. Շիշմարյովան, կարծիք են հայտնում, որ թեև հրամայական վարույթն ինքնուրույն դատական ընթացակարգ է, նրա էությունն այլ է, դատավարական չէ: Այն դատավարության տեսակ չէ, այլ հատուկ դատական ընթացակարգ, որն ուղղված է նյութական իրավահարաբերության սուբյեկտի անվիճելի նյութաիրավական շահերի պաշտպանությանը: Համապատասխանաբար, եթե հայցային և հատուկ վարույթներում առաջին հերթին իրացվում է արդարադատություն իրականացնելու գործառույթը, և դրանք հանդես են գալիս որպես դատական պաշտպանության իրավունքի իրացման դատավարական միջոցներ, ապա հրամայական վարույթի դեպքում այդ մասին խոսք անգամ լինել չի կարող<sup>58</sup>:

Ն. Ա. Գրոմոշինայի բնորոշմամբ հրամայական վարույթը դատարանի իրավակիրառական գործունեություն է, որն իրականացվում է օրենքով սահմանված պարզեցված ընթացակարգի շրջա-

---

ком процессе, М., 1997, էջ 41, **Сысоев Д. В.**, Реализация права на судебную защиту в приказном производстве в общих судах. Автореф. дисс. ... к.ю.н., Минск, 2006, էջ 4:

<sup>57</sup> Տե՛ս *Гражданское процессуальное право: Учебник*. Под ред. М. С. Шакарян. М., 2004, էջ 298:

<sup>58</sup> Տե՛ս **Сахнова Т. В., Шишмарева Т. П.**, О судебных процедурах в цивилистическом процессе, или к вопросу о дифференциации процессуальной формы // Теоретические и практические проблемы гражданского, арбитражного процесса и исполнительного производства. Сб. науч. статей, Краснодар, СПб., 2005, էջ 53:

նակներում և ուղղված է օրենքով նախատեսված դեպքերում պարտապանից դրամական գումարների բռնագանձմանը կամ շարժական գույքը վերցնելուն: Ըստ հեղինակի՝ այն դժվար է բնորոշել որպես դատավարության տեսակ, քանի որ հրամայական վարույթն իրականացվում է քաղաքացիական դատավարական ձևի շրջանակներից դուրս՝ օրենքով սահմանված որոշակի ընթացակարգի պահպանմամբ<sup>59</sup>:

Միասնական կարծիք չկա նաև դատական հրամանի իրավական բնույթի վերաբերյալ: Հեղինակների մի մասն այն դիտարկում է որպես դատական ակտ, որում իրացվում է դատական իշխանությունը<sup>60</sup>, մյուսները՝ որպես դատարանի վճռի «փոխնակ»<sup>61</sup>, երրորդները՝ որպես «դատավարական ձևից դուրս կայացվող և արդարադատության ակտեր չհանդիսացող որոշումներ»<sup>62</sup>:

Ն. Ի. Մասլեննիկովայի կարծիքով դատական հրամանը դատարանի վճռի փոխնակ է (суррогат) և չի դասվում իրավակիրառ ակտերի թվին, քանի որ այն արձակելիս դատարանն իրավակիրառական գործունեության հիմնական փուլերը չի անցնում. լրիվ ծավալով չի պարզում գործի փաստական հանգամանքները (պարտապանի դիրքորոշումը չի քննարկվում), իրավահարաբերության իրավաբանական որակում չի կատարում (այն ունի միակողմանի բնույթ, հենվում է բացառապես պարտատիրոջ կողմից տրամադրված տեղեկատվության վրա)<sup>63</sup>: Է. Մ. Մուրադյանի կարծիքով դատական հրամանը արդարադատության ակտ չէ, սակայն ունի կատարողա-

---

<sup>59</sup> Ст'у Комментарий к гражданскому процессуальному кодексу Российской Федерации. Под ред. М. С. Шакарян, М.: «Проспект», 2003, էջ 242:

<sup>60</sup> Ст'у, օրինակ, *Решетняк В. И., Черных И. И.*, Заочное производство и судебный приказ в гражданском процессе, М., 1997, էջ 50-51:

<sup>61</sup> Ст'у *Масленникова Н. И.*, Судебный приказ // Российский юридический журнал, 1996, № 3, էջ 40:

<sup>62</sup> Ст'у *Громошина Н. А.*, Упрощение процесса: все ли сделано правильно? // Lex Russica. Научные труды МГЮА, 2004, № 1, էջ 185:

<sup>63</sup> Ст'у *Масленникова Н. И.*, Судебный приказ // Российский юридический журнал, 1996, № 3, էջ 40:

կան փաստաթղթի ուժ<sup>64</sup>:

Հրամայական վարույթի իրավական բնույթի վերաբերյալ արտահայտվել է նաև հակառակ տեսակետը, ըստ որի՝ հրամայական վարույթի իրականացումն ընդհանուր հայցային դատավարական ձևի շրջանակներից դուրս արգելք չէ այն դատավարության ինքնուրույն, հատուկ և պարզեցված տեսակ համարելու, իսկ դատական հրամանն էլ՝ դատական ակտի ինքնուրույն տեսակ դիտարկելու համար<sup>65</sup>: Հայ հեղինակների դիրքորոշումն առավել համահունչ է վերջին տեսակետին<sup>66</sup>, որն առավել հիմնավորված ենք համարում նաև մենք հետևյալ պատճառներով:

Իր նպատակային ուղղվածությամբ և մի շարք այլ հատկանիշներով վճարման կարգադրությունն ըստ էության չի տարբերվում գործն ըստ էության լուծող դատական ակտերից: Չնայած նրան, որ կարգադրության վարույթը հայցային ու մյուս վարույթների համեմատ ինքնուրույն, պարզեցված վարույթ է և անմիջականորեն ուղղված չէ գործի փաստական հանգամանքները պարզելուն, վճարման կարգադրությունը կատարում է գործը լուծող դատական ակտի գործառույթներ, քանզի վճարման կարգադրության՝ օրինական ուժի մեջ մտած վճրի ուժ ստանալուց հետո վիճելի իրավահարաբերությունը դառնում է անվիճելի, կարգադրությամբ սահմանված դրամական պարտականությունը՝ ենթակա հարկադիր կատարման, ու միաժամանակ բացառվում է տվյալ պահանջով ու միևնույն հիմքերով կրկին դատարան դիմելու հնարավորությունը, որի հետևանքով նախկինում վիճելի նյութաիրավական հարաբերությունը խիստ որոշակիանում է՝ ձեռք բերելով կայունություն և համապարտադիրություն:

---

<sup>64</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 213:

<sup>65</sup> Տե՛ս Гражданский процесс. Под ред. В. А. Мусина, Н. А. Чечиной, Д. М. Чечота, М., 2001, էջ 313:

<sup>66</sup> Տե՛ս **Պեպրոսյան Ռ. Գ.**, Դատարանը և քաղաքացիական դատավարությունը Արևելյան Հայաստանում XIX-XX դարերում (պատմաիրավական հետազոտություն և օրենսդրության իրավահամեմատական վերլուծություն), Երևանի համալս. հրատ., Եր., 2001, էջ 433-437:

Չի կարելի համաձայնել նաև արտահայտված այն կարծիքին, թե դատական հրամանը վճռի «փոխնակ» է և իրավակիրառ ակտ չէ: Նման դիրքորոշումն էականորեն նսեմացնում է դատական հրամանի՝ որպես քաղաքացիների և կազմակերպությունների իրավունքների պաշտպանությունն ապահովող արդարադատության ակտի նշանակությունը:

Դատական հրամանն արձակվում է օրենքով կարգավորված, թեկուզև պարզեցված, սակայն որոշակի դատավարական ձևով: Այլ դատական ակտերի նման այն արձակվում է պետական իշխանության մարմնի՝ դատարանի կողմից: Կարգադրության վարույթում իրացվում է դատական իշխանության հիմնական գործառույթը՝ արդարադատության իրականացումը: Չնայած դատական հրամանի արձակման ընթացակարգը վճռի կայացման համեմատ պարզեցված է, դա չի զրկում նրան արդարադատության ակտի հատկանիշներից: Արդարադատությունը բնութագրվում է ոչ թե կատարվող դատավարական գործողությունների քանակով կամ ծավալով, այլ նրանով, թե որքանով են այդ ընթացակարգի շրջանակներում նվաճվում քաղաքացիական դատավարությունում դատական իշխանության առջև այսօր դրված նպատակները<sup>67</sup>: Դատական հրամանի արձակմամբ ապահովվում է պարտատիրոջ իրավունքների իրականացումը, ուստի կարելի է պնդել, որ սովյալ դեպքում նա ստանում է դատական պաշտպանություն:

Չի կարելի համաձայնել արտահայտված այն կարծիքին, թե կարգադրության վարույթի շրջանակներում դատարանը սոսկ տեխնիկական բնույթի գործառույթ է կատարում: Տվյալ կարծիքի կողմնակիցները, փորձելով հիմնավորել իրենց դիրքորոշումը, նշում են, որ դատարանը կոչված է արդեն իսկ ծագած վեճի վերաբերյալ գործ քննելու, իսկ քանի որ դատարանը վեճի առկայությունը բացահայտելու մարմին չէ, կարգադրության վարույթն անհարիր է դատական

---

<sup>67</sup> Տե՛ս **Загайнова С. К.**, Судебные акты в гражданском и арбитражном процессе: теоретические и прикладные проблемы, Екатеринбург, 2008, էջ 307:



իշխանության մարմնի էությանը և պետք է վերացվի: Այն, որ պարտապանի կողմից արձակված վճարման կարգադրության դեմ առարկություն ներկայացնելը վկայում է վեճի առկայության մասին և հանգեցնում է վճարման կարգադրության վերացման, կարծում ենք՝ ամենևին էլ չի նշանակում, որ վճարման կարգադրությունն արձակվում է վեճի առկայությունը կամ բացակայությունը պարզելու նպատակով. դատարանի նպատակը խախտված, սակայն առերևույթ վիճարկման ոչ ենթակա իրավունքի պաշտպանությունն է: Հակառակ դեպքում նման նպատակ կարող ենք վերագրել նաև հատուկ վարույթների բոլոր գործերին, որոնք ունեն անվիճելի, միակողմանի բնույթ, և որոնց ընթացքում վեճ ծագելու դեպքում դատարանը պարտավոր է դիմումն առանց քննության թողնելու մասին որոշում կայացնել: Դատարանի առաքելությունը, մեր կարծիքով, չի հանգում բացառապես վեճերի ըստ էության քննության և լուծման միջոցով խախտված և վիճարկվող իրավունքների պաշտպանությանը: Դատարանը խախտված իրավունքների պաշտպանություն կարող է իրականացնել նաև այն դեպքերում, երբ այդ սուբյեկտիվ պարտականությունը չի վիճարկվում այն կողմ անձի կողմից, ունի անվիճելի բնույթ, սակայն առկա է այն հարկադրաբար կատարելու համար անվիճելի հիմքեր ստեղծելու անհրաժեշտություն: Վեճի հնարավոր (առերևույթ) բացակայությունն էլ հիմք է դառնում գործը պարզեցված կարգով՝ առանց դատական նիստ հրավիրելու և վճիռ կայացնելու լուծելու համար:

Վարույթի քննարկվող տեսակի կարևորությունը, արդյունավետությունը և կենսունակությունն ընդգծվում են մի շարք դատավարագետների կողմից<sup>68</sup>: Իր հերթին նախկին ՔԴՕ-ի՝ «Վճարման կարգադրություն արձակելու գործերի վարույթը» վերտառությամբ 36՝-րդ գլխի կիրառման շուրջ տասնհինգամյա պրակտիկայի վերա-

---

<sup>68</sup> Ст'а, орինակ, **Жуйков В. М.**, Проблемы гражданского судопроизводства, М., 2001, էջ 62-63, Комментарий к гражданскому процессуальному кодексу Российской Федерации, под ред. М. С. Шакарян, М.: изд. «Кодекс», էջ 242:

բերյալ հրապարակված դատական վիճակագրության տվյալները ցույց են տալիս, որ վարույթի քննարկվող տեսակի գոյությունն արդարացված է, իսկ քաղաքացիական գործերի լուծման տվյալ պարզեցված ընթացակարգը՝ խիստ արդյունավետ: Այսպես՝ 2006 թվականին Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններն արձակել են 24.974 վճարման կարգադրություններ, որոնցից չվիճարկվելու հիմքով օրինական ուժի մեջ մտած վճռի ուժ է ստացել 17.447-ը, 2007 թվականին՝ 49.540-ը, որոնցից օրինական ուժի մեջ մտած վճռի ուժ է ստացել 28.549-ը, 2014 թվականին՝ 58375 -ը, որոնցից օրինական ուժի մեջ մտած վճռի ուժ է ստացել 29.542-ը, 2015 թվականին՝ 61.899-ը, որոնցից օրինական ուժի մեջ մտած վճռի ուժ է ստացել 28.204-ը, 2016 թվականին՝ 50.215-ը, որոնցից օրինական ուժի մեջ մտած վճռի ուժ է ստացել 21.995-ը, 2017 թվականին՝ 77.525-ը, որոնցից օրինական ուժի մեջ մտած վճռի ուժ է ստացել 33.301-ը, 2018 թվականին՝ 66.530-ը, որոնցից օրինական ուժի մեջ մտած վճռի ուժ է ստացել 28.080-ը<sup>69</sup>:

Քննարկվող ինստիտուտի ներդրումը, անշուշտ, դրական երևույթ է: Այն խախտված սուբյեկտիվ իրավունքների արագ և ռեալ դատական պաշտպանության մասին սահմանադրական դրույթների իրացման կարևորագույն երաշխիքներից է, որը միևնույն ժամանակ հնարավորություն է տալիս բեռնաթափելու դատարաններին, նրանց ազատելու մասնավոր վեճերը քննելու բարդ ու ծախսատար դատավարական ձևից, գործերի քննության ընդլայնված ընթացակարգից, ապացույցների հետազոտումից, բարձրացնում է դատական ակտերի դերը, ուժեղացնում է իրավունքի նախականիսչ գործառույթը, իրավունքի սուբյեկտների մոտ դաստիարակում է իրենց վրա վերցրած պարտավորությունները ժամանակին կատարելու

---

<sup>69</sup> Տե՛ս Առաջին ատյանի դատարանների կողմից վճարման կարգադրություն արձակելու վարույթների ընթացքի մասին տարեկան հաշվետվությունները // Դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայք՝ [www.court.am](http://www.court.am):

պատասխանատվություն և այլն:

Ն. Ա. Գրոմոշինայի կարծիքով դատական հրամանը, վճռի հետ շատ ընդհանրություններ ունենալով հանդերձ, նրա տարատեսակ չէ<sup>70</sup>: Ըստ հեղինակի՝ դատական հրամանն ավելի նվազ իրավաբանական ուժ ունի, քան դատարանի վճիռը, որովհետև ՔԴՕ-ն նախատեսում է դրա վերացման պարզեցված կարգ: Եվ իրոք, եթե պարտապանը սահմանված ժամկետում առարկություն է ներկայացնում, վճարման կարգադրությունը վերացվում է (ՔԴՕ 313 հոդ.), ՌԴ-ում էլ դատարանն իր որոշմամբ վերացնում է դատական հրամանը, եթե դրա կատարման վերաբերյալ սահմանված ժամկետում դատարանը ստանում է պարտապանի առարկությունները (ՌԴ ՔԴՕ 129 հոդ.): Սակայն չի կարելի համաձայնել Ն. Ա. Գրոմոշինայի այն տեսակետին, թե դատական հրամանը («-ում՝ վճարման կարգադրությունը) ավելի նվազ իրավաբանական ուժ ունի, քան դատարանի վճիռը՝ հաշվի առնելով ՔԴՕ 314-րդ հոդվածի դրույթը, ըստ որի՝ պարտապանի կողմից վճարման կարգադրությունն ստանալու օրվանից հետո՝ երկու շաբաթվա ընթացքում, դատարանում առարկություն չստացվելու դեպքում վճարման կարգադրությունն ստանում է օրինական ուժի մեջ մտած վճռի ուժ և ենթակա է հարկադիր կատարման: Գրեթե նույնաբովանդակ կանոն է սահմանվում ՌԴ ՔԴՕ 130-րդ հոդվածով: Օրինական ուժի մեջ մտած՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի ուժ ստացած վճարման կարգադրությունը առաջացնում է վճռի օրինական ուժի իրավական գրեթե բոլոր հետևանքները՝ բացառությամբ նախադատելիության (քանի որ քննարկվող դատական ակտով դատարանը փաստեր չի հաստատում):

Փորձելով հիմնավորել իր տեսակետը՝ Ն. Ա. Գրոմոշինան մատնանշում է այն հանգամանքը, որ վճիռը ոչ միայն նյութական իրավունքի նորմի կիրառման ակտ է, այլ նաև մանրակրկտորեն

---

<sup>70</sup> См. Комментарий к гражданскому процессуальному кодексу Российской Федерации, под ред. М. С. Шакарян, М.: «Проспект», 2003, էջ 243:

կարգավորված քաղաքացիադատավարական բարդ ձևի արդյունք, որի շրջանակում ընթանում են քաղաքացիական գործերի քննությունը և լուծումը, մինչդեռ դատական հրամանը կայացվում է առանց որևէ դատական քննության՝ պարզեցված կարգով<sup>71</sup>: Կարծում ենք, որ, թեև նշված փաստարկն ինքնին վիճարկման ենթակա չէ, այդուհանդերձ չի կարող վկայել դատական հրամանի (վճարման կարգադրության) վճռի համեմատ ավելի նվազ իրավաբանական ուժի մասին: Այն ընդամենը բացառում է դատական հրամանի (վճարման կարգադրության) և դատական այլ ակտերի, այդ թվում՝ վճռի նույնացումը:

Այս տեսանկյունից ողջունելի ենք համարում ՀՀ ՔԴՕ 188-րդ հոդվածի գոյությունը: Վերջինս սահմանում է քաղաքացիական գործերով կայացվող դատական ակտերի տեսակները՝ որպես այդպիսիք նշելով վճիռները, որոշումները և վճարման կարգադրությունները:

---

<sup>71</sup> St'u Гражданское процессуальное право России. Учебник, М.: «Былина», 1999, էջ 214-215:

## ԳԼՈՒԽ II

### ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՅԱՑՎՈՂ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

#### ***§1. Առաջին արյանի դատարանի կողմից կայացվող դատական ակտերին ներկայացվող պահանջները***

Դատական ակտերը՝ որպես արդարադատություն իրականացնող պետական իրավասու մարմնի իրավակիրառ ակտեր, պետք է համապատասխանեն որոշակի պահանջների: Օրենսդրությունը և դատական պրակտիկան, հաշվի առնելով դատական ակտերի իրավապահպան, իրավակիրառ, կարգավորիչ, նախականիսիչ և դատիարակչական բնույթը, ելնելով դրանց հեղինակությունը և կայունությունն ապահովելու անհրաժեշտությունից, դատական ակտերին ներկայացնում են որոշակի պահանջներ:

Դատական ակտերին ներկայացվող պահանջները դատավարագիտության մեջ խորը վերլուծությունների և բանավեճերի առարկա են հանդիսացել<sup>72</sup>: Ներկայումս դրանց անհրաժեշտությունը և հատկապես շրջանակը գրեթե կասկած չեն առաջացնում:

Դատական ակտերին ներկայացվող պահանջների օրենսդրական ամրագրումն անհրաժեշտ է հետևյալ պատճառներով՝

- նման պահանջները այն դատավարական ձևի անքակտելի տարրն են, որով իրականացվում են քաղաքացիական գործի քննու-

---

<sup>72</sup> Տե՛ս, օրինակ, *Գурвич М. А.*, Судебное решение (теоретические проблемы), М., 1976, *Викунт М. А., Зайцев И. М.*, Гражданский процесс: Курс лекций, Саратов, 1998, *Ткачев Н. И.*, Законность и обоснованность судебных постановлений по гражданским делам, Саратов, 1987, *Загайнова С. К.*, Судебные акты в гражданском и арбитражном процессе: теоретические и прикладные проблемы, Дисс... д.ю.н. Екатеринбург, 2008, *Сахнова Т. В.*, Курс гражданского процесса: теоретические начала и основные институты, М.: «Волтерс Клувер», 2008 և այլն:

թյունը և լուծումը,

- դատական ակտերը սահմանված պահանջներին համապատասխան կայացնելն ապահովում է դրանց կայունությունը և նպաստում է դատական իշխանության հեղինակության մեծացմանը, քաղաքացիներին և կազմակերպություններին իրավունքի նորմերը, այլ անձանց իրավունքները, ազատությունները և օրինական շահերը, պատիվը և արժանապատվությունը հարգելու ոգով դաստիարակելու նպատակի իրականացմանը,

- գործին մասնակցող անձանց թույլ են տալիս կոնկրետ գործով կայացված դատական ակտերն օրենքով սահմանված պահանջների հետ համադրելու միջոցով գնահատել կոնկրետ քաղաքացիական գործի քննության և լուծման կապակցությամբ դատարանի գործունեությունը,

- դրանք դատական ակտերը վերաքննության և վճռաբեկության կարգով ստուգելու և վերանայելու չափանիշներ են (բողոքարկվող դատական ակտերի համապատասխանությունն օրենքով սահմանված պահանջներին ստուգելու համար վերադաս դատական ատյանները պետք է հստակ պատկերացումներ ունենան դատական ակտին ներկայացվող պահանջների վերաբերյալ)<sup>73</sup>:

Գործող օրենսդրությունը միասնականացրել է դատական ակտերին ներկայացվող հիմնական պահանջները՝ սահմանելով, որ բոլոր ներառյալ վերաքննիչ և վճռաբեկ դատարանների դատական ակտերը պետք է լինեն օրինական, հիմնավորված և պատճառաբանված (ՔԴՕ 6 հոդ.): Այդ պահանջները վերաբերում են ոչ միայն եզրափակիչ, այլ նաև միջանկյալ դատական ակտերին: Նշված պահանջների բովանդակությունը համապատասխանաբար բացահայտվել է ՔԴՕ 7-9-րդ հոդվածներում: Ընդ որում, ուշագրավ է այն, որ եթե դատական ակտի հիմնավորվածության և պատճառաբանվածության վերաբերյալ ՔԴՕ 8-րդ և 9-րդ հոդվածներով սահման-

---

<sup>73</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 22:

ված պահանջները կիրառելի են ոչ բոլոր դատական ակտերի նկատմամբ՝ հաշվի առնելով դրանց բնույթը, նշանակությունը և մի շարք այլ հանգամանքներ, ապա օրինականության պահանջը որևէ բացառություն չի նախատեսում, քանի որ ՀՀ-ում օրինականությունը երկրի հիմնական օրենքի մակարդակով հռչակված է որպես հիմնական սկզբունք:

### **1.1. Դատական ակտի օրինականությունը**

*Դատական ակտն օրինական է, եթե այն կայացվել է Սահմանադրության, սահմանադրական օրենքների, Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի, այլ օրենքների և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի պահանջների պահպանմամբ, որոնց նորմերը կիրառելի են տվյալ գործը քննելիս և լուծելիս (ՔԴՕ 7 հոդ.)*: Այլ կերպ ասած՝ դատարանի եզրափակիչ և միջանկյալ ակտերը կարող են համարվել օրինական, եթե կայացվել են գործով կիրառման ենթակա դատավարական և նյութական իրավունքի համապատասխան նորմերի պահանջների պահպանմամբ:

Դատավարագիտության մեջ դատական ակտին ներկայացվող օրինականության պահանջի բովանդակությունը բացահայտվում է դատական ակտերը բեկանելու օրենսդրորեն սահմանված հիմքերի վերլուծության միջոցով<sup>74</sup>:

**Դատավարական նորմերի պահանջների պահպանումը և ճիշտ կիրառումը**: Դատավարության ընթացքում դատավարական նորմերն իրացվում են տարբեր ձևերով: Տեսաբանների կողմից նշվում են դատավարական նորմերի իրացման այնպիսի ձևեր, ինչպիսիք են կիրառումը, պահպանումը, կատարումը և օգտագործումը<sup>75</sup>: *Կիրառումն* ուղղված է դատավարության մասնակիցների գոր-

<sup>74</sup> Տե՛ս, օրինակ, **Сахнова Т. В.**, Курс гражданского процесса: теоретические начала и основные институты, М.: «Волтерс Клувер», 2008, էջ 432:

<sup>75</sup> Ավելի մանրամասն տե՛ս **Мельников А. А.**, Советский гражданский процессуаль-

ծունեության կարգավորմանը և իրականացվում է բացառապես դատարանի կողմից միջանկյալ դատական ակտերի կայացման միջոցով: Դատավարական նորմերի կիրառումը բնութագրում է նաև դատարանի գործունեությունը քաղաքացիական գործը քննելու և լուծելու կապակցությամբ, ինչն արտացոլվում է եզրափակիչ դատական ակտի պատճառաբանական մասում: Պահպանումն ուղղված է արգելող նորմերի իրացմանը (օրինակ՝ ոչ թույլատրելի ապացույցներով գործի հանգամանքները հաստատելու կամ հերքելու անթույլատրելիությունը): Կատարումը պարտավորեցնող նորմերի իրացման ձևն է (օրինակ՝ օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում ինքնաբացարկ հայտնելու դատավորի պարտականության): Դատավարական իրավունքի օգտագործումը վերաբերում է այն դեպքերին, երբ դատավարության սուբյեկտն իրականացնում է իր իրավունքը (օրինակ՝ գործին մասնակցող անձն իրականացնում է ՔԴՕ-ով իրեն վերապահված դատավարական իրավունքները, դատարանը հրավիրում է նախնական դատական նիստ և այլն):

Դատավարական նորմերի իրացման նշված ձևերի առանձնահատկությունն այն է, որ դրանցից յուրաքանչյուրի իրականացումը հնարավոր է բացառապես դատարանի իրավակիրառ միջնորդավորող գործունեությունն արտացոլող դատական ակտերի կայացման միջոցով: Այդ իսկ պատճառով դատական ակտի օրինականության պահանջը նախևառաջ ենթադրում է դատարանի կողմից դատավարական նորմերի ճիշտ կիրառում: Սակայն դատական սխալը կարող է կապված լինել նաև արգելող նորմի չպահպանման, պարտավորեցնող նորմի չկատարման կամ կիրառման ենթակա դատավարական նորմը չկիրառելու հետ: Այդ իսկ պատճառով դատական ակտը համարվում է օրինական, եթե դատարանի կողմից պահպանվել, կատարվել և ճիշտ են կիրառվել դատավարական իրավունքի նորմերը: Եվ պատահական չէ, որ դատական ակտը բեկանելու համա-



պատասխան հիմքը ձևակերպելիս օրենսդիրն օգտագործել է «դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը» արտահայտությունը (ՔԴՕ 363 հոդ., մաս 1, կետ 2), որի շրջանակներում «նորմի խախտում» բառակապակցությունը ենթադրում է դատավարական նորմի պահանջների չպահպանում և/կամ չկատարում, իսկ սխալ կիրառումը՝ համապատասխան նորմի չկիրառում կամ կիրառում այն դեպքերում, երբ այդ նորմը չպետք է կիրառվեր, կա՛մ ոչ այն նորմի կիրառում, որը պետք է կիրառվեր, կա՛մ կիրառված նորմի սխալ մեկնաբանություն:

ՔԴՕ 365-րդ հոդվածով օրենսդիրը սահմանել է դատական ակտերը բեկանելու հիմքերի երկու խումբ՝ 1) դատական ակտի բեկանման անվերապահ հիմքեր և 2) որոշակի պայմանի առկայության դեպքում դատական ակտի անօրինականության հանգեցնող և այն բեկանելու հիմք հանդիսացող հանգամանքներ:

Վճիռը բեկանելու անվերապահ հիմքերը նշվում են ՔԴՕ 365-րդ հոդվածի 2-րդ մասում, որի համաձայն՝ դատական ակտը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե՝

1) դատարանը գործը քննել է ոչ օրինական կազմով, այդ թվում՝ այնպիսի դատավորի կողմից, որը պարտավոր էր ինքնաբացարկ հայտնել:

2) դատարանը գործը քննել է բողոք բերած անձի բացակայությամբ, որը սույն օրենսգրքի իմաստով չի համարվում ծանուցված դատական նիստի ժամանակի և վայրի մասին:

3) դատական ակտը ստորագրված կամ կնքված չէ:

4) դատական ակտը ստորագրված կամ կնքված չէ այն կայացրած դատավորի կողմից:

5) դատական ակտը կայացրել է այն դատավորը, որը տվյալ գործը քննող դատարանի կազմում ընդգրկված չէ:

6) գործից բացակայում է դատական նիստի արձանագրությունը:

7) դատական նիստի արձանագրումը կատարվել է այնպիսի

թերություններով, որոնք անհնար են դարձնում բողոքի քննության համար նշանակություն ունեցող հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը պարզելը.

8) գործի քննության ընթացքում չի ապահովվել գործին մասնակցող անձի թարգմանիչ ունենալու իրավունքը.

9) դատական ակտը չունի պատճառաբանական մաս.

10) դատական ակտն ազդում է գործին մասնակից չդարձած անձանց իրավունքների և պարտականությունների վրա՝ բացառությամբ այն դեպքի, երբ դատարանը քննվող գործի մասին ծանուցել է տվյալ անձին, սակայն վերջինս չի ցանկացել ներգրավվել գործին.

11) ստորադաս դատարանում առկա է եղել գործի վարույթը կարճելու հիմք.

12) ստորադաս դատարանում առկա է եղել հայցը կամ դիմումն առանց քննության թողնելու հիմք:

Օրենքում թվարկված խախտումները միշտ հանգեցնում են կայացված դատական ակտի անօրինականությանը, քանի որ աղավաղում են դրա էությունը<sup>76</sup>:

Ինչ վերաբերում է դատական ակտը բեկանելու այն հիմքերին, որոնք կայացված դատական ակտի անօրինականության են հանգեցնում բացառապես օրենքով նախատեսված որոշակի պայմանի առկայության դեպքում<sup>77</sup>, դրանք ձևակերպված են ՔԴՕ 365-րդ հոդվածի 1-ին մասում, որի համաձայն՝ դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը դատական ակտի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել գործի սխալ լուծման:

Ուշագրավ է, որ յուրաքանչյուր կոնկրետ գործով բողոքը քննող

---

<sup>76</sup> Տե՛ս *Сахнова Т. В.*, Курс гражданского процесса: теоретические начала и основные институты, М.: «Волтерс Клувер», 2008, էջ 436:

<sup>77</sup> Այդ հիմքերը դատավարական գրականության մեջ կոչվում են նաև «բեկանման պայմանական հիմքեր»: Տե՛ս, օրինակ, *Պեպրոսյան Ռ. Գ.*, Հայաստանի քաղաքացիական դատավարություն, երրորդ հրատ., Եր., Երևանի համալս. հրատ., 2007, էջ 575:

դատարանն է որոշում, թե դատավարական իրավունքի նորմերի կոնկրետ խախտումը ինչպես է ազդել գործի ճիշտ լուծման վրա: Միաժամանակ դատական ակտը վերանայող դատարանը չի կարող անտեսել ՔԴՕ 365-րդ հոդվածի 1-ին մասի պահանջն այն մասին, որ դատարանի՝ ըստ էության ճիշտ դատական ակտը չի կարող բեկանվել միայն ձևական նկատառումներով: Բանն այն է, որ դատավարական իրավունքի նորմերի խախտումները շատ դեպքերում ազդեցություն չեն ունենում դատարանի վերջնական եզրակացությունների վրա (օրինակ, եթե դատարանը առանց օրենքով սահմանված հիմքերի բազմիցս հետաձգել է գործի դատաքննությունը կամ խախտել է հայցի ապահովման դատավարական կարգը, հարցաքննել է վկաների, որոնց ցուցմունքները չեն վերաբերում գործին): Նման դեպքերում, եթե գործն (հարցը) ճիշտ է լուծվել, ապա դրանք հիմք չեն դատական ակտի բեկանման համար, հակառակ դեպքում մենք գործ կունենանք դատական ակտը ձևական նկատառումներով բեկանելու հետ:

Քաղաքացիական դատավարության տեսության մեջ չի մշակվել այն չափանիշը, որը թույլ է տալիս որոշել, թե որ դեպքերում դատավարական իրավունքի նորմի խախտումը կարող է հանգեցնել գործի սխալ լուծման, թեև առերևույթ չի հանգեցրել:

Ինչպես իրավագիտորեն նշում է Տ. Վ. Սախնովան, որպես այդպիսի չափանիշ կարող են դիտարկվել դատական պաշտպանության՝ օրենքով ամրագրված երաշխիքները: Եվ իրոք, եթե այդ երաշխիքները խախտվում են (օրինակ՝ մրցակցությունը, կողմերի իրավահավասարությունը, ներկայացուցչի միջոցով դատավարությանը մասնակցելու իրավունքը), այդ հանգամանքը կարող է հանգեցնել գործի սխալ լուծման, և հակառակը, եթե դատավարական օրենսդրության պահանջների խախտումը կապված չէ կողմի դատավարական շահերի պաշտպանության երաշխիքների հետ, այն կարող է

դիտարկվել որպես ոչ էական, գործի սխալ լուծման չհանգեցնող<sup>78</sup>:

**Նյութական իրավունքի նորմերի պահպանումը և ճիշտ կիրառումը:** Գործի լուծումը ենթադրում է դատավարության առարկայի՝ վիճելի իրավահարաբերության նկատմամբ նյութական իրավունքի նորմերի կիրառում: Չնայած այն հանգամանքին, որ տվյալ դեպքում օրենսդիրն օգտագործում է «նյութական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը» ձևակերպումը (ՔԴՕ 363 հոդ., մաս 1, կետ 1), դատավարության մեջ նյութական իրավունքի նորմերի իրացման միակ ձևը իրավական նորմերի (այդ թվում՝ արգելող նորմերի) կիրառումն է<sup>79</sup>:

Վեճն ըստ էության լուծելու համար դատարանը քաղաքացիական դատավարական ձևի պահանջներին խիստ համապատասխան իրականացված դատավարական գործունեության արդյունքում (դատավարական նորմերի պահանջների պահպանմամբ ու ճիշտ կիրառմամբ) պետք է պարզի վիճող կողմերի իրական հարաբերությունները, տա դրանց իրավաբանական ճիշտ որակումը, գտնի այն նորմը կամ նորմերը, որոնք կարգավորում են տվյալ վիճելի իրավահարաբերությունը, ճիշտ մեկնաբանի (պարզաբանի) վիճելի իրավահարաբերությունը կարգավորող իրավական նորմի (նորմերի) բովանդակությունը, դրանց հիման վրա պարզի կողմերի սուբյեկտիվ իրավունքների և պարտականությունների ծագման, փոփոխման կամ դադարման հիմք հանդիսացող հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը և ըստ էության ճիշտ հետևություններ անի կողմերի իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ՝ դրանք դատավարական օրենքով սահմանված կարգով ձևակերպելով եզրափակիչ դատական ակտում:

Դատարանի եզրափակիչ դատական ակտը չի կարող ճանաչ-

<sup>78</sup> Տե՛ս *Сахнова Т. В.*, Курс гражданского процесса: теоретические начала и основные институты, М.: «Волтерс Клувер», 2008, էջ 434:

<sup>79</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 436:

վել օրինական, եթե նշված գործընթացի տարրերից որևէ մեկում ա-  
րատ է թույլ տրվել, այլ կերպ ասած՝ սխալ են կիրառվել նյութական  
իրավունքի նորմերը:

Նյութական իրավունքի նորմերը սխալ կիրառելու հիմքով դա-  
տական ակտը բեկանելու հիմքերը թվարկված են ՔԴՕ 364-րդ հոդ-  
վածի 1-ին մասում, ըստ որի՝ նյութական իրավունքի նորմը համար-  
վում է խախտված կամ սխալ կիրառված, եթե դատարանը՝

1) չի կիրառել այն օրենքը կամ Հայաստանի Հանրապետության  
միջազգային պայմանագիրը կամ իրավական այլ ակտը, որը պետք  
է կիրառել:

2) կիրառել է այն օրենքը կամ Հայաստանի Հանրապետության  
միջազգային պայմանագիրը կամ իրավական այլ ակտը, որը չպետք  
է կիրառել:

3) սխալ է մեկնաբանել օրենքը կամ Հայաստանի Հանրապե-  
տության միջազգային պայմանագիրը կամ իրավական այլ ակտը:

Ուշագրավ է, որ նյութական իրավունքի նորմերի խախտման  
կամ սխալ կիրառման նշված դրսևորումները թվարկելիս, մեր կար-  
ծիքով, օրենսդիրը որոշակի բացթողում է թույլ տվել: Մասնավորա-  
պես, ՀՀ քաղ. օր. 7-րդ և 9-րդ հոդվածների բովանդակությունից  
ուղղակիորեն բխում է, որ քաղաքացիաիրավական հարաբերու-  
թյունների կարգավորման աղբյուր են հանդիսանում ոչ միայն իրա-  
վական ակտերը, այլ նաև գործարար շրջանառության սովորույթնե-  
րը՝ ձեռնարկատիրական գործունեության որևէ բնագավառում ձևա-  
վորված և լայնորեն կիրառվող օրենսդրությամբ չնախատեսված  
վարքագծի կանոնները (Քաղ. օր. 7 հոդ., մաս 1), որոնք ենթակա են  
կիրառման բոլոր այն դեպքերում, երբ վիճելի հարաբերություններն  
ուղղակիորեն կարգավորված չեն օրենքով կամ կողմերի համաձայ-  
նությամբ (Քաղ. օր. 9 հոդ., մաս 1): Գործարար շրջանառության սո-  
վորույթներով քաղաքացիաիրավական հարաբերությունների կար-  
գավորման մասին օրենքի ուղղակի ցուցումներ են պարունակվում,  
օրինակ՝ Քաղ. օր. 347-րդ, 349-րդ, 353-րդ, 437-րդ և 443-րդ հոդ-

վածներում: Այսպես, Քաղ. օր. 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան, իսկ նման պահանջների ու պայմանագրերի բացակայության դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներին համապատասխան: Կամ՝ ըստ Քաղ. օր. 349-րդ հոդվածի, պարտատերն իրավունք ունի չընդունել պարտավորության մաս առ մաս կատարումը, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով, այլ իրավական ակտերով, պարտավորության պայմաններով և չի բխում գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

Հիմք ընդունելով ասվածը՝ կարելի է ենթադրել, որ վեճի լուծման ժամանակ դատարանը կարող է խախտել կամ սխալ կիրառել ոչ միայն օրենքը, միջազգային պայմանագիրը կամ այլ իրավական ակտը, այլ նաև այդպիսին չհանդիսացող գործարար շրջանառության սովորույթը, ինչը ևս կարող է հանգեցնել գործի սխալ լուծման: Նման իրավիճակում ՔԴՕ 364-րդ հոդվածում օրենքի, միջազգային պայմանագրերի և այլ իրավական ակտերի հետ մեկտեղ գործարար շրջանառության սովորույթները չնշելը, մեր կարծիքով, ճիշտ չէ: Ուստի գտնում ենք, որ ՔԴՕ 364-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերում անհրաժեշտ է «իրավական այլ ակտը» բառերից հետո ավելացնել «կամ գործարար շրջանառության սովորույթը» բառերը: Կարելի է նաև «օրենքը կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիրը կամ իրավական այլ ակտը» արտահայտության փոխարեն օգտագործել «իրավական նորմը» բառակապակցությունը:

Անդրադառնանք նյութական իրավունքի նորմերի խախտման կամ սխալ կիրառման առանձին դրսևորումների վերլուծությանը:

*Կիրառման ենթակա իրավական նորմի չկիրառումն* առկա է այն դեպքերում, երբ դատարանը եզրափակիչ դատական ակտի հիմքում չի դրել տվյալ վիճելի իրավահարաբերությունը կարգավո-

րող իրավական նորմը (նորմերը), դատական ակտում չի հենվել դրա (դրանց) վրա և գործը լուծել է դրան (դրանց) հակառակ: Օրինակ՝ դատարանը, չնայած Քաղ. օր. 618-րդ հոդվածի դրույթներին, մերժել է վարձակալված գույքի հիմնական վերանորոգման ծախսերը վարձատուից բռնագանձելու վերաբերյալ վարձակալի հայցը՝ պատճառաբանելով, որ Քաղ. օր.-ով վարձակալին նման պահանջ ներկայացնելու իրավունք չի վերապահվում: Նման դեպքերում կարելի է խոսել այն մասին, որ բացակայում է վճռի իրավական հիմքը, որի հետևանքով այն չի կարող ճանաչվել օրինական:

Կիրառման ենթակա իրավական նորմի չկիրառումը առավել հաճախ պրակտիկայում կապված է լինում կիրառման ոչ ենթակա իրավական նորմի կիրառման հետ<sup>80</sup>:

*Կիրառման ոչ ենթակա իրավական նորմի կիրառումը* առկա է այն դեպքերում, երբ դատարանը սխալ է որակել կողմերի իրական իրավահարաբերությունները (օրինակ՝ կողմերի պայմանագրային հարաբերությունները որակել է քաղաքացիաիրավական, մինչդեռ դրանք աշխատանքային են) և վեճը լուծել է այլ իրավահարաբերություն կարգավորող իրավական նորմերի հիման վրա: Իսկ իրավահարաբերության սխալ որակումը, ինչպես հայտնի է, կարող է հանգեցնել ոչ միայն կողմերի իրավունքները և պարտականությունները, այլ նաև կողմերի պատասխանատվությունը (հատուցման ենթակա վնասը, բռնագանձման ենթակա տոկոսները և այլն) սխալ որոշելուն:

Իրավակիրառման քննարկվող արատի մասին կարելի է խոսել նաև այն դեպքերում, երբ դատարանը կիրառել է այդպիսի իրավական ակտ ընդունելու իրավասություն չունեցող մարմնի կողմից ընդունված կամ ուժը կորցրած, սահմանադրական դատարանի կողմից հակասահմանադրական ճանաչված, վարչական դատարանի

---

<sup>80</sup> См. Комментарий к гражданскому процессуальному кодексу Российской Федерации, под ред. М. С. Шакарян, М.: «Кодекс», 2003, էջ 585:

կողմից անվավեր ճանաչված իրավական ակտ (նորմ): Կիրառման ոչ ենթակա իրավական ակտի կիրառումն առկա է նաև այն դեպքերում, երբ դատարանը կիրառման ենթակա իրավաբանական ավելի բարձր ուժ ունեցող ակտի փոխարեն կիրառել է դրա համեմատ ստորադաս և իրավահարաբերությունն այլ կերպ կարգավորող իրավական ակտ (օրինակ՝ կիրառման ենթակա օրենքի փոխարեն ենթաօրենսդրական բնույթի ակտ) կամ կիրառման ենթակա իրավական ակտի փոխարեն՝ գործարար շրջանառության սովորույթ<sup>81</sup>, գործարար շրջանառության սովորույթների կիրառման փոխարեն վեճը լուծել է օրենքի կամ իրավունքի անալոգիայի կիրառմամբ<sup>82</sup>:

*Իրավական նորմի սխալ մեկնաբանությունն* առկա է այն դեպքերում, երբ դատարանը, ճիշտ որակելով կողմերի իրավահարաբերությունը, սխալ է պարզաբանել վիճելի իրավահարաբերությունը կարգավորող իրավական նորմի բովանդակությունը, վերջինիս վերլուծության արդյունքում սխալ հետևություններ է արել կողմերի սուբյեկտիվ իրավունքների և պարտականությունների վերաբերյալ:

Դատական ակտի օրինականությունը մեծապես կախված է ոչ միայն դատարանի կողմից վիճելի իրավահարաբերությունը կարգավորող նորմերը ճիշտ ընտրելուց, այլ նաև դրանց իմաստի և բովանդակության ճիշտ մեկնաբանությունից: Նյութական իրավունքի նորմերը ճիշտ կիրառելու համար դատարանը պետք է հստակորեն բացահայտի դրանց բովանդակությունը՝ պահպանելով իրավական նորմը մեկնաբանելու կանոնները: Բացի դրանից՝ իրավական նոր-

---

<sup>81</sup> Քաղ. օր. 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ օրենսդրության պարտադիր դրույթներին կամ պայմանագրին հակասող գործարար շրջանառության սովորույթները չեն կիրառվում:

<sup>82</sup> ՔԴՕ 4-րդ հոդվածի 1-ին մասի և Քաղ. օր. 9-րդ հոդվածի բովանդակությունից բխում է, որ վեճը լուծելիս դատարանը կարող է կիրառել օրենքի անալոգիա բացառապես այն դեպքերում, երբ վիճելի իրավահարաբերություններն ուղակիորեն կարգավորված չեն օրենքով, այլ իրավական ակտերով կամ կողմերի համաձայնությամբ, և բացակայում է դրանց նկատմամբ կիրառելի գործարար շրջանառության սովորույթը, իսկ իրավունքի անալոգիա կարող է կիրառվել միայն օրենքի անալոգիայի կիրառման անհնարինության դեպքում:



մը մեկնաբանելիս դատարանը պետք է հաշվի առնի.

1) Վճռաբեկ դատարանի՝ նմանատիպ փաստական հանգամանքներ ունեցող քաղաքացիական գործերով նախկինում կայացված որոշումները, որոնցում արտահայտված են բարձրագույն դատական ատյանի հիմնավորումները և կիրառման ենթակա օրենքի մեկնաբանությունները.

2) Եվրոպական դատարանի վճիռները, որոնց շրջանակներում Եվրոպական դատարանը կատարել է «Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների մասին» կոնվենցիայի՝ տվյալ գործով կիրառման ենթակա առանձին դրույթների մեկնաբանությունը.

3) Սահմանադրական դատարանի այն որոշումները, որոնց շրջանակներում տրվել է Սահմանադրության՝ տվյալ գործով կիրառման ենթակա դրույթների մեկնաբանությունը, ինչպես նաև այն որոշումները, որոնցով լուծվել է այս կամ այն իրավական ակտի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը:

ՔԴՕ 364-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված դատական ակտի անօրինականության դրսևորումներն օրենսդրի կողմից դասվել են միայն նյութական իրավունքի նորմերի խախտման կամ սխալ կիրառման դեպքերին: Մինչդեռ դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումն ունի միևնույն դրսևորումները: Ընդ որում, ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումները կամ սխալ կիրառումը փոխկապակցված են: Այսպես՝ կիրառման ենթակա նյութական իրավունքի նորմի չկիրառումը հանգեցնում է նաև դատավարական նորմերի պահանջների խախտման, օրինակ՝ գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների շրջանակի ոչ ճիշտ որոշման, ապացուցման բեռի սխալ բաշխման, ապացույցների թույլատրելիության կանոնների խախտման և այլն<sup>83</sup>:

Հարկ է նկատել, որ նյութական իրավունքի նորմերի խախտու-

---

<sup>83</sup> См. Комментарий к гражданскому процессуальному кодексу Российской Федерации, под ред. М. С. Шакарян, М.: «Кодекс», 2003, էջ 586:

մը գնահատելիս ևս բողոքը քննող դատարանն է որոշում, թե այդ կոնկրետ խախտումը ինչպես է ազդել գործի ճիշտ լուծման վրա՝ նկատի ունենալով ՔԴՕ 364-րդ հոդվածի 2-րդ մասում ձևակերպված կանոնն առ այն, որ նյութական իրավունքի նորմի խախտումը կամ սխալ կիրառումը դատական ակտի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է գործի սխալ լուծման: Հետևում է, որ կայացված դատական ակտը չի կարող ճանաչվել անօրինական և բեկանվել այն դեպքերում, երբ առկա է նյութական իրավունքի նորմերի՝ գործի ելքի վրա ազդեցություն չունեցող խախտումներ:

### **1.2. Դատական ակտի հիմնավորվածությունը**

Ընդհանուր կանոնի համաձայն՝ ցանկացած դատական ակտ պետք է լինի ոչ միայն օրինական, այլ նաև հիմնավորված:

Դատական ակտի հիմնավորվածության պահանջն ընդունվում է գրեթե բոլոր դատավարագետների կողմից և այս կամ այն ձևով իր արտացոլումն է գտել ինչպես 1964 թ., 1998 թ., այնպես էլ 2018 թ. դատավարական օրենսգրքերում:

ՀԽՍՀ 1964 թ. ՔԴՕ 305-րդ հոդվածը դատարանի վճիռը վճռաբեկության կարգով բեկանելու հիմքերի թվում դիտարկում էր.

1) գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների ոչ լրիվ որոշումը,

2) գործի լուծման համար նշանակություն ունեցող այն հանգամանքների չապացուցված լինելը, որոնք դատարանը համարում է հաստատված,

3) դատարանի՝ վճռում շարադրված եզրահանգումների չհամապատասխանելը գործի հանգամանքներին:

Միաժամանակ օրենքը սահմանում էր, որ դատարանի՝ ըստ էության ճիշտ վճիռը չի կարող բեկանվել միայն ձևական նկատառումներով (ՔԴՕ 305 հոդ., մաս 2):

Նույնաբովանդակ նորմ էր պարունակում նաև ՌՍՖՍՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը, իսկ ներկայումս էլ ՌԴ

ՔԴՕ 362-րդ հոդվածը:

Դատարանի վճիռը բեկանելու նման հիմքերի առկայության պայմաններում ռուս և հայ դատավարագետները դատական ակտի հիմնավորվածության պահանջի բովանդակությունը նախկինում բացահայտում էին, իսկ ներկայումս էլ շարունակում են բացահայտել դրանց վերլուծության միջոցով: Այսպես ռուս դատավարագետներից Մ. Գ. Ավդյուկովը կարծիք է հայտնել, որ վճռի հիմնավորվածությունն արտահայտվում է նրանում, որ կողմերի իրավահարաբերությունների մասին դատարանի եզրահանգումները հիմնվում են միայն գործի՝ դատական նիստում ուսումնասիրված տվյալների վրա<sup>84</sup>:

Վ. Ն. Շչյոգոլովի կարծիքով, վճռի հիմնավորվածությունը գործի փաստական հանգամանքների մասին դատարանի հետևությունների համապատասխանությունն է իրականությանը<sup>85</sup>:

Ն. Ա. Չեչինան վճռի հիմնավորվածությունը դիտարկում է որպես պահանջ, որը նշանակում է, որ՝ 1) դատարանը պարզել է դատավարության մասնակիցների միջև գոյություն ունեցող իրական իրավահարաբերությունները, 2) այդ իրավահարաբերությունների բովանդակությունը շարադրված է վճռի տեքստում, 3) վճիռը պարունակում է այն հանգամանքների և ապացույցների մանրամասն վերլուծությունը, որոնց օգնությամբ դատարանը պարզել է կողմերի միջև օբյեկտիվորեն գոյություն ունեցող հարաբերությունները՝ օբյեկտիվ ճշմարտությունը<sup>86</sup>:

Ըստ Ա. Ֆ. Կլեյմանի՝ վճռի հիմնավորվածությունը նշանակում է, որ գործի լուծման համար իրավական նշանակություն ունեցող փաստական հանգամանքների մասին դատարանի եզրահանգումները պետք է հիմնված լինեն օբյեկտիվ ճշմարտության, օրենքով

<sup>84</sup> Տե՛ս *Авдюков М. Г.*, Судебное решение, М., 1959, էջ 103:

<sup>85</sup> Տե՛ս *Щеголов В. Н.*, Законность и обоснованность судебного решения. Автореф. дисс. ...к.ю.н., Томск, 1955, էջ 5:

<sup>86</sup> Տե՛ս *Чечина Н. А.*, Норма права и судебное решение. В кн.: Избранные труды по гражданскому процессу, СПб., 2004, էջ 163-164:

նախատեսված ապացուցման միջոցների օգնությամբ գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա<sup>87</sup>:

Հիմնավորվածության պահանջը, ըստ Մ. Ա. Գուրվիչի, ենթադրում է երկու պայման. 1) վճռում պետք է արտահայտվեն դատողություններ՝ օրենքի համաձայն տվյալ գործով ապացուցման ենթակա բոլոր իրավաբանական փաստերի գոյության և բովանդակության հարցի վերաբերյալ, 2) այդ դատողությունները պետք է լինեն ճշմարիտ<sup>88</sup>:

Ն.Ի. Տկաչովի կարծիքով դատական ակտը կարելի է հիմնավորված համարել այն դեպքերում, երբ՝ 1) դատարանը լրիվ պարզել է գործի համար նշանակություն ունեցող հանգամանքները, 2) այդ հանգամանքներն ապացուցված են, 3) դատարանի եզրահանգումները համապատասխանում են գործի՝ դատական ակտում շարադրված հանգամանքներին, բխում են դրանցից<sup>89</sup>: Ուշագրավ է, որ Ն. Ի. Տկաչովն առաջինն է օրինականության և հիմնավորվածության պահանջները տարածում ոչ միայն վճռի, այլ նաև միջանկյալ որոշումների և վերադաս դատական ատյանների դատական ակտերի վրա:

Հայ հեղինակներից Ռ. Գ. Պետրոսյանը, ամփոփելով ռուսական դատավարագիտության մեջ ձևավորված ընդհանուր մոտեցումները և հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայումս ՀՀ օրենսդիրը դատարաններին ազատել է օբյեկտիվ ճշմարտությունը բացահայտելու պարտականությունից, վճռի հիմնավորվածությունը կապում է գործի հանգամանքների վերաբերյալ դատարանի եզրա-

---

<sup>87</sup> Տե՛ս *Клейман А. Ф.*, Новейшие течения в советской науке гражданского процессуального права. В кн.: Гражданский процесс. Хрестоматия: Учебное пособие. Под ред. М. К. Треушников, М., 2005, էջ 535-536:

<sup>88</sup> Տե՛ս *Гурвич М. А.*, Судебное решение (теоретические проблемы). В кн.: Избранные труды в 2-х томах, т.1, Краснодар, 2006, էջ 368:

<sup>89</sup> Տե՛ս *Ткачев Н. И.* Законность и обоснованность постановлений суда по гражданским делам, Саратов, 1987, էջ 49:

կացությունները կողմերի իրական փոխհարաբերություններին և դատարանի կողմից հաստատված ճշմարտությանը համապատասխանելու փաստի հետ<sup>90</sup>: Ըստ հեղինակի՝ վճիռը հիմնավորված է համարվում, եթե՝

ա) դատարանը գործի լուծման համար նշանակություն ունեցող իրավաբանական փաստերի շրջանակը որոշել է լրիվ և այդ փաստերից յուրաքանչյուրի առկայության կամ բացակայության մասին իր դատողությունները հիմնավորել է վճռում,

բ) կողմերի իրավունքները և պարտականությունները որոշելու համար իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի առկայության կամ բացակայության վերաբերյալ իր դատողությունները հիմնավորել է օրենքով թույլատրված և դատական նիստում օրենքով սահմանված կարգով հետազոտված ապացուցման միջոցներով,

գ) այն ապացույցները, որոնց վրա հիմնված են դատարանի եզրակացությունները, արժանահավատ են, չեն հակասում գործի մյուս տվյալներին,

դ) դատարանն իր կողմից հաստատված փաստերից ճիշտ եզրակացություններ է արել կողմերի փոխհարաբերությունների մասին<sup>91</sup>:

Եզրափակիչ դատական ակտի հիմնավորվածության նման ձևակերպումը ներկայումս լիովին ընդունելի ենք համարում հետևյալ պատճառաբանությամբ:

Օրենսդիրն իրոք հրաժարվել այն բանաձևից, որի համաձայն՝ «դատարանը պարտավոր է պարզել գործի լուծման համար նշանակություն ունեցող իրական հանգամանքները», ինչը նախկինում դիտարկվում էր որպես գործով օբյեկտիվ ճշմարտությունը բացահայտելու անհրաժեշտ նախապայման: Գործող օրենսդրության մեջ

---

<sup>90</sup> Տե՛ս **Պեդրոսյան Ռ. Գ.**, Հայաստանի քաղաքացիական դատավարություն, Երրորդ հրատ., Եր., Երևանի համալս. հրատ., 2007, էջ 458:

<sup>91</sup> Տե՛ս նույն տեղում:

գործի իրական հանգամանքները պարզելու դատարանի պարտականության մատնանշման բացակայությունը վկայում է օբյեկտիվ ճշմարտության սկզբունքից հրաժարվելու մասին, և այդ կապակցությամբ վճռի հիմնավորվածությունը դիտարկելիս այն վճռի ճշմարտացիության հետ ուղղակիորեն չկապելը, մեր կարծիքով, արդարացված է: Ինչպես նշում է Գ. Ա. Ժիլինը, եթե դատարանի վճռում շարադրված են գործի համար նշանակություն ունեցող փաստերը, որոնք հաստատված են ապացուցման պարտականության բաշխման հաշվառմամբ կողմերի ներկայացրած ապացույցներով, որոնք բավարարում են ապացույցների թույլատրելիության և վերաբերելիության պահանջները, իսկ դատարանի սպառիչ եզրահանգումները բխում են տվյալ գործով հաստատված փաստերից, այդպիսի որոշումը կհամարվի հիմնավորված, իսկ նրա ճշմարտացիությունը՝ ենթադրվող»<sup>92</sup>: Այդ հանգամանքն է հիմք տվել մի շարք հեղինակների խոսելու այն մասին, որ ներկայումս քաղաքացիական դատավարության հիմքում ընկած է ոչ թե օբյեկտիվ ճշմարտության, այլ «դատական ճշմարտության» սկզբունքը, որի համաձայն՝ դատարանը վճիռ է կայացնում այն կողմի օգտին, որն առավել հաջող է կատարել իր վրա դրված ապացուցման պարտականությունը<sup>93</sup>:

Ասվածի հիման վրա կարելի է եզրակացնել, որ վճիռը կհամարվի հիմնավորված այն դեպքերում, երբ դատարանը գործի լուծման համար բավարար ծավալով որոշել է գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների շրջանակը, օրենքով թույլատրված և դատական նիստում օրենքով սահմանված կարգով հետազոտված ապացույցների գնահատման հիման վրա այդ հանգամանքներից յուրաքանչյուրի առկայությունը կամ բացակայությունը համարել է հաստատված (ապացուցված), իսկ վճռում արված հետևությունները

---

<sup>92</sup> Տե՛ս *Жилин Г. А.*, Гражданское дело в суде первой инстанции, М., 2000, էջ 130:

<sup>93</sup> Տե՛ս *Плюхина М. А.*, Процессуальные средства обеспечения эффективности судопроизводства по гражданским делам. Автореф. дисс. ...к.ю.н. Екатеринбург, 2002, էջ 7:

համապատասխանում են այդ հանգամանքներին:

Միայն նշված պայմանների ապահովման դեպքում դատարանի վճիռը պետք է համարել հիմնավորված: Իսկ ինչ վերաբերում է դրա համապատասխանությանն օբյեկտիվ ճշմարտությանը, ապա այդպիսին պետք է ենթադրվի դատական ակտի ճշմարտացիության կանխավարկածի ուժով, որը ներկայումս քաղաքացիական դատավարության հիմնարար դրույթներից է և ընկած է վճռի օրինական ուժի գրեթե բոլոր հատկանիշների հիմքում<sup>94</sup>:

Չնայած ՀՀ 1998 թ. ՔԴՕ-ն, ի տարբերություն ՌԴ ՔԴՕ-ի կամ ՀԽՍՀ 1964 թ. ՔԴՕ-ի, չէր նախատեսում դատական ակտը բեկանելու այնպիսի հիմքեր, ինչպիսիք են գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների ոչ լրիվ որոշումը, գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների չապացուցված լինելը, դատարանի՝ վճռում շարադրված եզրահանգումների չհամապատասխանելը գործի հանգամանքներին, այնուամենայնիվ, դրա 130-132-րդ հոդվածների վերլուծությունը թույլ է տալիս նկատել, որ օրենսդիրը, թեկուզ և անուղղակիորեն, բայց բացահայտել էր վճռի հիմնավորվածության պահանջի բովանդակությունը՝ դատարանին պարտավորեցնելով՝

ա) վճիռը հիմնավորել բացառապես դատական նիստում հետազոտված ապացույցներով (130 հոդ., մաս 2),

բ) որոշել և վճռում նշել, թե գործի համար նշանակություն ունեցող որ հանգամանքներն են պարզվել, և որոնք չեն պարզվել (131 հոդ., մաս 1, կետ 2, 132 հոդ., մաս 1, պարբ. 4),

գ) գնահատել ապացույցները (131 հոդ., մաս 1, կետ 1) և վճռում նշել ապացույցները, որոնց վրա հիմնված են դատարանի հետևությունները (132 հոդ., մաս 1, պարբ. 4),

դ) որոշել և վճռում նշել այն օրենքները, միջազգային պայմա-

---

<sup>94</sup> Տե՛ս *Загайнова С. К.*, Судебные акты в гражданском и арбитражном процессе: теоретические и прикладные проблемы. Дисс... д.ю.н., Екатеринбург, 2008, էջ 187-188:

նագրերը և իրավական այլ ակտերը, որոնցով դատարանը ղեկավարվել է վճիռ կայացնելիս (131 հոդ., մաս 1, կետ 3, 132 հոդ., մաս 1, պարբ. 4),

ե) որոշել հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցը (131 հոդ., մաս 1, կետ 4) և վճռում եզրահանգումներ անել յուրաքանչյուր հայցապահանջը բավարարելու կամ մերժելու մասին (ՔԴՕ 132 հոդ., մաս 1, պարբ. 5):

Նշված պայմանների (պահանջների) հաշվառմամբ կարելի է պնդել, որ վճիռը համարվում է հիմնավորված, եթե դատարանը վճռի շրջանակներում ճիշտ է որոշել և շարադրել գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների շրջանակը, այդ հանգամանքներից յուրաքանչյուրի առկայության կամ բացակայության մասին իր դատողությունները հիմնավորել է բացառապես դատական նիստում հետազոտված թույլատրելի և վերաբերելի ապացույցներով, վճռում նշել և գնահատել է ապացույցները, որոնց վրա հիմնված են դատարանի հետևությունները, մատնանշել է այն իրավական նորմերը, որոնցով դատարանը ղեկավարվել է վճիռ կայացնելիս, և, վերջապես, իր կողմից հաստատված հանգամանքներից ճիշտ եզրակացություններ է արել կողմերի փոխհարաբերությունների մասին:

Գործող ՔԴՕ 8-րդ հոդվածի համաձայն՝ *դատական ակտը հիմնավորված է, եթե պարունակում է այն կայացնելու համար անհրաժեշտ և բավարար փաստական և իրավական հիմքերը*: Նման ընդհանրական ձևակերպումը թույլ է տվել օրենսդրին նախ դատական ակտերին ներկայացվող հիմնավորվածության պահանջը միասնականացնել բոլոր դատական ակտերի, ներառյալ վերադաս դատական ատյանների կողմից կայացվող դատական ակտերի համար, և երկրորդ՝ ընդգծել, որ հիմնավորված համարվելու համար դատական ակտը պետք է պարունակի այն կայացնելու համար անհրաժեշտ և՛ փաստական, և՛ իրավական հիմքերը:

Դատական ակտի հիմնավորվածության պահանջը դատական



ակտի օրինականության հետ մեկտեղ բողոքարկված դատական ակտերը վերաքննության և վճռաբեկության կարգով ստուգելու և վերանայելու չափանիշ է: Սակայն քանի որ դատական ակտի հիմնավորվածության պահանջի խախտումը դատական ակտը բեկանելու անվերապահ հիմքերի թվին չի դասվում<sup>95</sup>, այն ՔԴՕ 364-րդ հոդվածի 2-րդ մասի և 365-րդ հոդվածի 1-ին մասի ուժով կարող է դիտարկվել որպես դատական ակտի բեկանման հիմք, եթե ազդել է գործի ելքի վրա, հանգեցրել է գործի սխալ լուծման:

Ինչպես նկատեցինք, դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածության պահանջներն ինքնուրույն բովանդակություն ունեն և չեն նույնացվում: Սակայն դրանք անխզելիորեն փոխկապակցված են: Եզրափակիչ դատական ակտը կարող է հիմնավորված լինել փաստերով ու ապացույցներով, բայց անօրինական լինել վիճելի իրավահարաբերությունը կարգավորող նորմերի սխալ ընտրության պատճառով: Դատական ակտ կայացնելիս դատարանը կարող է ճիշտ որակել դատավարության առարկան, բայց կայացվող ակտը հիմնավորել ոչ թույլատրելի, միմյանց հակասող կամ ոչ բավարար ապացույցներով: Նման դեպքում էլ դատական ակտը ոչ միայն անհիմն է, այլ նաև անօրինական, քանի որ դատարանը խախտել է ապացույցների հետազոտման և/կամ գնահատման կանոնները: Այդ իսկ պատճառով դատավարագիտության մեջ որպես աքսիոմա է դիտարկվում այն, որ «ամեն մի չհիմնավորված դատական ակտ նաև անօրինական է, բայց ամեն մի հիմնավորված դա-

---

<sup>95</sup> Հատկանշական է, որ ՔԴՕ 380-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը և 405-րդ հոդված 1-ին մասի 1-ին կետը վերադաս դատական ատյաններին հնարավորություն (լիազորություն) են ընձեռում վերաքննիչ բողոքը մերժելիս հիմնավորել կամ պատճառաբանել անփոփոխ թողնված դատական ակտը, եթե այն թերի կամ սխալ է հիմնավորված կամ պատճառաբանված: Միևնույն ժամանակ հարկ է նկատի ունենալ, որ դատական ակտում պատճառաբանական մասի բացակայությունը (որտեղ շարադրվում են դատական ակտի փաստական և իրավական հիմքերը) օրենսդիրը դիտարկել է, որպես դատական ակտը բեկանելու անվերապահ հիմք (ՔԴՕ 365 հոդ., մաս 1, կետ 9):

տական ակտ չէ, որ օրինական է»<sup>96</sup>: Դատական ակտի հիմնավորվածությունը դրա օրինականության հենքն է<sup>97</sup>: Ինչպես բազմիցս իրավագիտորեն նշել է Վճռաբեկ դատարանը, վճռի հիմնավորումը ընդգծում է դատական գործունեության և դատական վճռի օրինականությունը<sup>98</sup>:

### **1.3. Դատական ակտի պատճառաբանվածությունը**

Շատ դատավարագետներ դատական ակտերին ներկայացվող պահանջների շարքում դիտարկում են դրա պատճառաբանված լինելը: Քաղաքացիական դատավարության իրավունքի գիտության մեջ դատական ակտերին ներկայացվող նման պահանջը որոշ հեղինակների կողմից առանձնացվել է, սակայն այն ուղղակիորեն օրենսդրական ամրագրում խորհրդային շրջանում չի ստացել:

Ներկայումս գործող ՔԴՕ-ն դատական ակտերին ներկայացվող պահանջների թվում հատուկ առանձնացնում է նաև պատճառաբանված լինելու պահանջը (ՔԴՕ 6 հոդ., մաս 2): Միևնույն ժամանակ ՔԴՕ 9-րդ հոդվածի 1-ին մասում սահմանվում է. «*Դատական ակտը պատճառաբանված է, եթե դրանում արտացոլված են ապացույցների գնահատման, փաստերի հաստատման և իրավունքի կիրառման գործընթացի կապակցությամբ դատարանի դատողությունների ընթացքը և դրանից բխող եզրահանգումները*»:

Նպատակահարմար ենք համարում անդրադառնալ դատական ակտի պատճառաբանվածության պահանջի էությանը, պատճառաբանվածության և դատական ակտին ներկայացվող այլ պահանջների փոխհարաբերակցությանը:

---

<sup>96</sup> Տե՛ս **Պեդրոսյան Ռ. Գ.**, Հայաստանի քաղաքացիական դատավարություն, երրորդ հրատ., Եր., Երևանի համալս. հրատ., 2007, էջ 468, **Сахнова Т. В.**, Курс гражданского процесса: теоретические начала и основные институты, М.: «Волтерс Клувер», 2008, էջ 441:

<sup>97</sup> Տե՛ս **Сахнова Т. В.**, նշվ. աշխ., էջ 441:

<sup>98</sup> Տե՛ս, օրինակ, Վճռաբեկ դատարանի թիվ 3-2504/ՏԴ քաղաքացիական գործով 21.12.2006 թ. որոշումը:

Դատավարագիտության մեջ դատական ակտի պատճառաբանվածությունը մի դեպքում դիտարկվում է որպես դատական ակտի հիմնավորվածության լրացուցիչ պայման,<sup>99</sup> մեկ այլ դեպքում՝ որպես ինքնուրույն պահանջ<sup>100</sup>:

Բոլոր դեպքերում դատական ակտի պատճառաբանվածությունը դիտարկվում է որպես դատական ակտի հատկություն, որը թույլ է տալիս ըմբռնել վիճելի իրավահարաբերության որակման, ապացույցների հետազոտման և գնահատման, կիրառման ենթակա իրավական նորմերի ընտրության և մեկնաբանման ողջ գործընթացը, այն սկսելուց ընդհուպ մինչև եզրահանգումների ձևակերպումը դատարանի կատարած դատողությունների ընթացքը:

Մ. Ա. Վիկուտը նշում էր, որ պատճառաբանվածությունը դատական ակտի հիմնավորվածությունից տարբերվող պահանջ է, քանի որ, հիմնավորվածությունը նշանակում է, որ դատարանի եզրահանգումները պետք է հիմնվեն ապացույցների վրա, իսկ պատճառաբանվածությունը նշանակում է, որ դատական ակտը պարունակում է դատողություններ հետազոտված ապացույցների, դրանց գնահատման, ինչպես նաև վիճելի իրավահարաբերության որակման ժամանակ դատարանի կողմից կիրառվող իրավական նորմի մեկնաբանության մասին<sup>101</sup>:

Կ. Ա. Լեբեդի կարծիքով պատճառաբանվածությունը դատական ակտերին ներկայացվող ինքնուրույն պահանջ է, որը անհրաժեշտ է սահմանազատել դատական ակտի հիմնավորվածությունից: Նշված պահանջների սահմանազատումը հեղինակը կատարում է՝ հիմք ընդունելով պատճառաբանվածության գործնական նշանակու-

---

<sup>99</sup> Տե՛ս, օրինակ, *Ткачев Н. И.*, Законность и обоснованность судебных постановлений по гражданским делам, Саратов, 1987, էջ 27:

<sup>100</sup> Տե՛ս, օրինակ, *Лебедь К. А.*, Решение арбитражного суда, М., 2005, էջ 80-83:

<sup>101</sup> Տե՛ս *Викунт М. А.*, Законность и обоснованность актов социалистического правосудия как главное условие выполнения задач гражданского судопроизводства. В кн.: Цивилистические проблемы правового статуса личности в социалистическом обществе, Саратов, 1982, էջ 124:

թյունը, որի էությունը դատարանի ուշադրությունը դատական ակտի պատճառաբանման վրա կենտրոնացնելու անհրաժեշտության մեջ և այն պատճառներն ու շարժառիթները նշելու մեջ է, որոնք ցույց են տալիս դատական ակտ կայացնելիս դատարանի իրականացրած մտավոր, տրամաբանական գործունեությունը: Պատճառաբանվածությունը նա դիտարկում է որպես փաստերի և իրավահարաբերությունների մասին գրավոր դատողությունների արդյունքում կատարված գրավոր եզրահանգումները դատական ակտում նշելու պահանջ<sup>102</sup>:

Նմանատիպ դիրքորոշում է արտահայտել Ե. Վ. Խախայրովան, որի կարծիքով, պետք է պատճառաբանված համարել այն վճիռը, որում լրիվ և բազմակողմանիորեն արտացոլված են դատարանի՝ գործի համար նշանակություն ունեցող ապացույցների հետազոտմանն ու գնահատմանն ուղղված գործունեության արդյունքները՝ այն շարժառիթների մատնանշմամբ, որոնցով դատարանն այս կամ այն ապացույցները ընդունել է, իսկ մյուսները մերժել<sup>103</sup>:

Ս. Կ. Ջազայնովան իրավացիորեն նկատում է, որ և՛ Կ. Ա. Լեբեդը, և՛ Ե. Վ. Խախայրովան վճռի պատճառաբանվածությունը փաստացի տարածել են միայն փաստերի և ապացույցների վրա՝ մի կողմում թողնելով վիճելի իրավահարաբերության իրավաբանական որակումը, ինչն այնքան էլ արդարացված չէ<sup>104</sup>:

Համամիտ ենք այն հեղինակների հետ, որոնց կարծիքով դատական ակտի օրինականությունը և հիմնավորվածությունը մեծապես պայմանավորված են պատշաճ պատճառաբանությամբ: Պատճառաբանությունը կոնկրետ դատական ակտում օրինականության և հիմնավորվածության պահանջների իրացման ժամանակ դատարանի մտավոր, տրամաբանական գործունեության արտացոլումն է:

<sup>102</sup> Տե՛ս *Лебедь К. А.*, Решение арбитражного суда, М., 2005, էջ 80:

<sup>103</sup> Տե՛ս *Хохалева Е. В.*, Обоснованность решения суда общей юрисдикции. Автореф. дисс. ... к.ю.н. Саратов, 2005, էջ 14:

<sup>104</sup> Տե՛ս *Загайнова С. К.*, Судебные акты в гражданском и арбитражном процессе: теоретические и прикладные проблемы. Дисс... д.ю.н., Екатеринбург, 2008, էջ 190:

Դատական ակտի օրինականության և հիմնավորվածության պահանջների պատշաճ իրացման մասին կարող է խոսք լինել միայն այն դեպքերում, երբ դատական ակտի բովանդակությունից հստակորեն երևում են իրավունքի կիրառման, գործի փաստական հանգամանքների և ապացույցների գնահատման, իրավահարաբերության որակման կապակցությամբ դատարանի դատողությունների ընթացքը և դրանցից տրամաբանորեն բխող արդյունքները (եզրահանգումները): Դատական մտավոր գործունեության տվյալ ալգորիթմն էլ կազմում է դատական ակտի այնպիսի հատկանիշը, ինչպիսին պատճառաբանվածությունն է:

Հիմնավորված վճիռը պետք է պատճառաբանված լինի, սակայն դրանք նույնական պահանջներ չեն: Հիմնավորվածությունն օբյեկտիվ կատեգորիա է, քանի որ այդ պահանջի ուժով դատական ակտը պետք է հիմնված լինի դատարանի կողմից պարզված որոշակի հանգամանքների և իրավական նորմերի վրա (ունենա փաստական և իրավական բավարար և անհրաժեշտ հիմքեր): Մինչդեռ պատճառաբանումը սուբյեկտիվ կատեգորիա է, այն է՝ իրավաբանական գործունեության ընթացքում իրականացվող տրամաբանական-իրավական փաստարկում<sup>105</sup>:

Դատական ակտի պատճառաբանությունը կապված է դատարանի կողմից այն շարժառիթները շարադրելու հետ, որոնց հիման վրա նա հանգել է այս կամ այն եզրակացության: Ընդ որում, դրանք պետք է վերաբերեն ինչպես իրավունքի, այնպես էլ փաստի հարցերին: Որպես իրավական պահանջ՝ պատճառաբանվածությունը մի կողմից արտացոլում է գործով հաստատված փաստական հանգամանքների և դատարանի եզրահանգումների միջև կապը և թույլ է տալիս բացահայտել հետազոտված ապացույցների միջև առկա հակասությունները<sup>106</sup>: Մյուս կողմից՝ դատական ակտի պատճառա-

<sup>105</sup> Տե՛ս *Сахнова Т. В.*, Курс гражданского процесса: теоретические начала и основные институты, М.: «Волтерс Клувер», 2008, էջ 440:

<sup>106</sup> Տե՛ս *Толочко А. Н.*, Роль мотивировки в обеспечении законности, обоснованности

բանվածությունը ցույց է տալիս, թե ինչպես է դատարանը հասկանում կիրառվող նյութաիրավական կամ դատավարական նորմը:

Շարադրվածի հաշվառմամբ ՔԴՕ 9-րդ հոդվածում օրենսդիրը նախատեսել է դատական ակտը պատճառաբանելու դատարանի պարտականության մի շարք մասնավորեցումներ:

Նախ սահմանվել է ընդհանուր կանոն առ այն, որ *դատարանը պարտավոր է դատական ակտում անդրադառնալ գործին մասնակցող անձանց կողմից ներկայացված բոլոր էական փաստարկներին, վկայակոչված իրավական հիմքերին և ներկայացված ապացույցներին* (մաս 2): Այլ կերպ ասած՝ դատական ակտը չի կարող համարվել պատշաճորեն պատճառաբանված, եթե դրանում արտացոլված չեն գործի փաստական կամ իրավական կողմին վերաբերող հարցերի կապակցությամբ գործին մասնակցող անձի ներկայացրած որևէ էական փաստարկ ընդունելու կամ չընդունելու դատարանի շարժառիթները, շարադրված չէ, թե ինչ նկատառումներով, որ իրավական նորմերի և ինչպիսի փաստերի հիման վրա է դատարանն այս կամ այն ապացույցը համարել անթույլատրելի, ոչ վերաբերելի կամ անարժանահավատ:

Երկրորդ՝ *դատական ակտը չի կարող պատճառաբանվել ենթադրություններով՝ բացառությամբ այնպիսի ենթադրությունների, որոնք թույլատրելի են օրենքով ամրագրված կանխավարկածներով* (մաս 3): Այլ կերպ ասած՝ գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապացույցի արժանահավատությունը կամ անարժանահավատությունը չեն կարող ենթադրվել, եթե օրենսդրությամբ ուղղակիորեն ամրագրված չէ նման ենթադրությամբ ղեկավարվելու դատարանի լիազորությունը<sup>107</sup>:

Երրորդ՝ *դատական ակտը չի կարող պատճառաբանվել վերա-*

---

и справедливости актов социалистического правосудия, выносимых судом первой инстанции по уголовным делам. Автореф. дисс. ...к.ю.н., Харьков, 1985, էջ 9:

<sup>107</sup> Ապացուցողական կանխավարկածների մասին մանրամասն տես՝ **Բալլին Օ. Վ.** *Время доказывания при разбирательстве гражданских дел*, М., 2006, էջ 294-239:

*ցական դատողություններով* (մաս 4): Դատական ակտում ոչ միայն հնարավորինս մատչելի լեզվով պետք է արտացոլվի ապացույցների գնահատման, փաստերի հաստատման և իրավունքի կիրառման գործընթացի կապակցությամբ դատարանի դատողությունների ընթացքը, այլ նաև ֆորմալ տրամաբանության կանոնների պահպանմամբ պետք է ապահովվի այդ դատողությունների և դրանից բխող եզրահանգումների միջև համարժեք, այլընտրանքային հետևության հնարավորություն չտվող կապը: Կայացված ակտի բովանդակությունից հստակորեն պետք է երևա, թե ինչպես ձևավորվեց դատարանի ներքին համոզմունքն այս կամ այն հարցի վերաբերյալ: Դատական ակտը չի կարող համարվել պատշաճորեն պատճառաբանված, եթե դատարանի դատողությունների ընթացքը թույլ է տալիս դրանց հիման վրա ողջամտորեն անելու նաև այլ հետևություններ:

Կայացված ակտի բովանդակությունից պետք է հասկանալի լինի, թե ինչպես դատարանը հանգեց հետևության այս կամ այն փաստի գոյության կամ բացակայության մասին, ինչ շարժառիթներով այս կամ այն փաստը ճանաչեց ապացուցման ոչ ենթակա կամ անվիճելի, ինչու եկավ եզրահանգման, որ ապացուցման ենթակա փաստը մնաց վիճելի: Դատարանը չի կարող վերացական գնահատական տալ կողմի փաստարկին՝ այն պարզապես գնահատելով որպես ոչ էական կամ ոչ վերաբերելի. դատական ակտը պետք է պարունակի հստակ պատասխան այդ կապակցությամբ դատարանի շարժառիթների մասին: Վկայակոչված փաստը, իրավական նորմը, ներկայացված ապացույցը չեն կարող համապատասխանաբար պարզապես հայտարարվել գործի համար նշանակություն չունեցող, ոչ վերաբերելի, ոչ թույլատրելի, անարժանահավատ կամ ոչ բավարար. դատական ակտում պետք է շարադրվեն դրա իրավական և փաստական շարժառիթները: Դատարանը չի կարող փաստել, որ գործի լուծման համար նշանակություն ունեցող որևէ փաստական հանգամանք մնաց վիճելի՝ առանց ցույց տալու, թե տվյալ փաստական հանգամանքն ինչ պատճառով չի կարող ապացուցված հա-

մարվել գործում առկա ապացույցներով:

Երրորդ՝ *դատարանը պարտավոր է դատական ակտում արտացոլել ոչ միայն ապացույցների գնահատման և փաստերի հաստատման, այլ նաև իրավունքի կիրառման կապակցությամբ իր դատողությունների ընթացքը*: Դատական ակտը շարադրելիս դատարանը չի կարող բավարարվել բացառապես կիրառելի իրավունքի նորմերի վրա հղումներ կատարելով (այդպիսով ցույց տալով վճռի իրավական հիմքը): *Դատարանը պարտավոր է բացահայտել կիրառելի իրավական նորմերի բովանդակությունը, իսկ այն դեպքում, երբ գործի քննության ընթացքում ծագել է վեճ՝ կիրառման ենթակա նորմի վերաբերյալ, դատական ակտում պետք է պարզառաքանվի, թե հարկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը* (մաս 5): Ինչպես բազմիցս իրավագիտորեն նշել է Վճռաբեկ դատարանը, վճռի պատշաճ իրավական հիմնավորումը ընդգծում է դատական գործունեության և դատական վճռի օրինականությունը<sup>108</sup>:

Հարկ է նկատի ունենալ, որ դատական ակտը պատճառաբանելու պահանջին սերտորեն առնչվում է նաև «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված կանոնը, համաձայն որի՝ յուրաքանչյուր ոք իր գործի քննության ժամանակ որպես իրավական փաստարկ իրավունք ունի վկայակոչելու նույնանման փաստերով այլ գործով Հայաստանի Հանրապետության դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտում առկա օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտի մեկնաբանությունները, իսկ դատարանը պարտավոր է անդրադառնալ նման իրավական փաստարկներին: Հետևում է, որ այն դեպքերում, երբ կողմը որպես իրավական փաստարկ վկայակոչում է այլ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտում առկա օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտի մեկնաբանություններ, դատական ակտը պատճառա-

<sup>108</sup> Տե՛ս, օրինակ, Վճռաբեկ դատարանի թիվ 3-2504/ՏԴ քաղաքացիական գործով 21.12.2006 թ. որոշումը:



բանելու պահանջն առնվազն ենթադրում է վկայակոչված մեկնաբանություններն անընդունելի համարելու պատճառները ցույց տալու անհրաժեշտություն:

Քննարկվող պահանջը որոշակիորեն լրացվում է «Հայաստան Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասով, որը պարտավորեցնում է դատական ակտ կայացնող դատարանին հիմնավորելու, թե ինչ պատճառներով է շեղվել նախկինում նույնանման փաստերով այլ գործով Վճռաբեկ դատարանի կողմից տվյալ իրավական նորմին տրված մեկնաբանությունից: Այլ կերպ ասած՝ դատական ակտը պատճառաբանելու պահանջը ենթադրում է նաև դատարանի պարտականությունը կայացված դատական ակտում հիմնավորելու, թե ինչու Վճռաբեկ դատարանի կողմից տվյալ իրավական նորմին տրված մեկնաբանությունը տվյալ գործով կիրառելի չէ:

Պատճառաբանված դատական ակտ ստանալու իրավունքը Եվրոպական դատարանի կողմից դիտարկվում է որպես արդար դատական քննության իրավունքի կարևոր բաղադրատարր:

Եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայում մշակվել են արդար դատական քննության իրավունքի իրացման որոշակի չափանիշներ (երաշխիքներ): Մ. Ս. Երյոմենկոյի կարծիքով վերջիններս դասակարգվում են երկու խմբերի՝ ակնհայտորեն արտահայտված և ենթադրվող<sup>109</sup>:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի մեկնաբանություններից ելնելով՝ ակնհայտորեն արտահայտված երաշխիքներ են անկախ և անկողմնակալ դատարանի կողմից գործի քննության իրավունքը, ողջամիտ ժամկետներում գործի քննության իրավունքը, հրապարակային քննության իրավունքը: Երաշխիքների երկրորդ խումբն են կազմում այն դրույթները, որոնք ձևավորվել են Եվրոպա-

---

<sup>109</sup> Տե՛ս *Еременко М. С.*, Право на справедливое судебное разбирательство в гражданском процессе: практика Европейского суда по правам человека // Российский ежегодник гражданского и арбитражного процесса, № 3, 2004, էջ 609:

կան դատարանի դատական պրակտիկայի ընթացքում: Այդպիսի երաշխիքների թվին են դասվում արդարադատության մատչելիությունը, իրավաբանական օգնություն ստանալու, ապացույցներ ներկայացնելու, պատճառաբանված դատական ակտ ստանալու իրավունքները<sup>110</sup>:

Ինչպես նշում է Եվրոպական դատարանի դատավոր Լ. Լուկայ-դեսը, Եվրոպական դատարանը մի շարք առումներով կատարելագործել է արդար դատական քննության իրավունքը՝ որպես «արդար դատաքննության» անուղղակի պահանջներ ճանաչելով մի շարք երաշխիքներ կամ պայմաններ, որոնք Կոնվենցիայում ուղղակիորեն նշված չեն<sup>111</sup>: Նման երաշխիքներից է պատճառաբանված դատական ակտ ստանալու իրավունքը: Այսպես, 1994 թվականին Եվրոպական դատարանը որպես արդար դատական քննության պայման ճանաչեց դատավորների պարտականությունը պատճառաբանելու դատական ակտերը:<sup>112</sup> Վան դե Հուրկն ընդդեմ Նիդերլանդների գործով դատարանը նշեց, որ «Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը պարտավորեցնում է դատարաններին պատճառաբանել իրենց որոշումները...»<sup>113</sup>: Հաջիանաստասիոն ընդդեմ Հունաստանի գործով ևս դատարանը սահմանեց, որ դատարանները պարտավոր են բավարար պարզությամբ ցույց տալու այն հիմքերը, որոնց վրա հիմնվում է իրենց որոշումը<sup>114</sup>: Եվրոպական դատարանի տվյալ դիրքորոշումն արտահայտվել է նաև այլ գործերով<sup>115</sup>:

---

<sup>110</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>111</sup> Տե՛ս *Лукайдез Л.*, Справедливое судебное разбирательство. Комментарий к п. 1 Европейской Конвенции о защите прав человека и основных свобод // Российская юстиция, № 2, 2004:

<sup>112</sup> Տե՛ս *Папкова О. А.*, Усмотрение суда, М.: «Статут», 2005, էջ 57:

<sup>113</sup> Տե՛ս *М. де Сальвиа*, Прецеденты Европейского Суда по правам человека, СПб., 2004, էջ 419:

<sup>114</sup> Տե՛ս Հաջիանաստասիոն ընդդեմ Հունաստանի գործով ՄԻԵԴ 16.12.1992 թվականի վճիռը (կետ 33):

<sup>115</sup> Տե՛ս Ռուխ Տորիջան ընդդեմ Իսպանիայի գործով ՄԻԵԴ 09.12.1994 թվականի վճիռը (կետ 29), Գարսիա Ռուիզն ընդդեմ Իսպանիայի գործով ՄԻԵԴ 21.01.1999

Միևնույն ժամանակ հարկավոր է արձանագրել, որ չնայած այն հանգամանքին, որ Եվրոպական դատարանի դատական պրակտիկան պատճառաբանված դատական ակտի առկայությունը դատում է արդար դատական քննության երաշխիքների թվին, այնուամենայնիվ Եվրոպական դատարանը նշել է, որ այդ իրավունքը բացարձակ բնույթ չի կրում: Մասնավորապես, իր վճիռներից մեկում Դատարանը նշել է, որ դատարանները պարտավոր են դատական ակտերում բավարար չափով նշել այն պատճառաբանությունները (շարժառիթները), որոնցով դրանք հիմնավորում են: Այդ պարտականության ծավալը, կախված որոշման բնույթից, կարող է փոփոխվել և պետք է դիտարկվի յուրաքանչյուր գործի հանգամանքներից ելնելով: Եթե 6-րդ հոդվածի 1-ին կետը պարտավորեցնում է պատճառաբանել որոշումները, դա չի կարող մեկնաբանվել որպես յուրաքանչյուր փաստարկի մանրամասն պատասխան տալու անհրաժեշտություն<sup>116</sup>:

Շարադրվածի հաշվառմամբ ՔԴՕ 6-րդ հոդվածը նախատեսել է դատական ակտի պատճառաբանման վերոշարադրյալ կանոններից օրենսգրքով նախատեսված դեպքերում շեղվելու հնարավորություն՝ ամրագրելով, որ «դատական ակտը պետք է լինի հիմնավորված և պատճառաբանված, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենսգրքով»: Նման շեղումները (բացառությունները) տարբեր ծավալով և դրսևորումներով նախատեսված են ՔԴՕ առանձին հոդվածներով: Այսպես՝ դատական խնայողության սկզբունքից ելնելով՝ օրենսդիրն ազատել է դատարանին կողմի վկայակոչած այն փաստարկներին կամ իրավական հիմքերին անդրադառնալու պարտականությունից, որոնք առերևույթ (ակնհայտորեն) սխալ են, և որոնց անդրադառնալը կարող է հանգեցնել ժամանակի ու ռեսուրսների անհարկի կորստի: Օրենսդիրն ազատել է դատարանին նաև կողմի

---

թվականի վճիռը, Հիրո Բալանին ընդդեմ Իսպանիայի գործով ՄԻԵԴ 09.12.1994 թվականի վճիռը (կետ 27):

<sup>116</sup> Տե՛ս *М. де Сальвиа*, Прецеденты Европейского Суда по правам человека, СПб., 2004, էջ 421-422:

վկայակոչած փաստարկներին, իրավական հիմքերին և ապացույցներին դատական ակտում անդրադառնալու պարտականությունից նաև այն դեպքերում, երբ գործով կիրառման է ենթակա հայցային վաղեմության կամ որևէ դատավարական ժամկետ, և այդ փաստարկներին, իրավական հիմքերին կամ ապացույցներին անդրադառնալն անհրաժեշտ չէ տվյալ դատական ակտի կայացման համար (ՔԴՕ 7 հոդ., մաս 2): Դատական ակտի պատճառաբանման «թեթևացված ստանդարտ» է սահմանված պարզեցված վարույթի կարգով կայացվող վճիռների (ՔԴՕ 302 հոդ., մաս 1), դատարանի առանձին ակտի ձևով կայացվող որոշումների (ՔԴՕ 200 հոդ.) համար և այլն: Դատարանն ընդհանրապես ազատված է եզրափակիչ դատական ակտը պատճառաբանելու պարտականությունից, եթե այդ ակտով հաստատել է կողմերի հաշտության համաձայնությունը (ՔԴՕ 193 հոդ.):

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ դատական ակտը կայացնող դատարանի կողմից դատական ակտի պատճառաբանվածության պահանջի խախտումը դատական ակտի բեկանման հանգեցնել չի կարող, եթե տվյալ ակտով գործն (հարցը) ըստ էության ճիշտ է լուծվել: Նման եզրակացությունը բխում է ՔԴՕ 380-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 405-րդ հոդված 1-ին մասի 1-ին կետի բովանդակությունից, որոնք վերադաս դատական ատյաններին հնարավորություն (լիազորություն) են ընձեռում համապատասխանաբար վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքը մերժելիս հիմնավորել կամ պատճառաբանել անփոփոխ թողնված դատական ակտը, եթե այն թերի կամ սխալ է հիմնավորված կամ պատճառաբանված:

Շարադրվածը, իհարկե, չի վերաբերում այն դեպքերին, երբ դատական ակտն ընդհանրապես պատճառաբանական մաս չի պարունակում: Դատական ակտի նման արատն օրենսդիրը դիտարկել է որպես դատական ակտը բեկանելու անվերապահ հիմք (ՔԴՕ 365 հոդ., մաս 2, կետ 9):

Այսպիսով, ըստ գործող կարգավորումների՝ յուրաքանչյուր դա-

տական ակտ, բացառությամբ վճարման կարգադրության և գործի վարույթը հաշտությամբ ավարտելու մասին վճռի, պետք է լինի պատճառաբանված, քանի որ հենց պատճառաբանությունն է թույլ տալիս գործին մասնակցող անձանց և դատական վերադաս ատյաններին հասկանալու դատական ակտը կայացրած դատարանի տրամաբանությունը, ապացույցների գնահատման, փաստերի հաստատման և իրավունքի կիրառման գործընթացի կապակցությամբ դատարանի ներքին համոզմունքի ձևավորման հիմքերը:

Դատավարագիտության մեջ քննարկվում են նաև դատական ակտերին ներկայացվող այլ պահանջներ, որոնք, ուղղակիորեն ամրագրված չլինելով օրենքում, բխում են արդարադատության էությունից և դատական ակտերի իրավական բնույթից:

Ըստ էության, կապված լինելով օրինականության, հիմնավորվածության և պատճառաբանվածության պահանջների հետ՝ դրանք միանգամայն ինքնուրույն և կոնկրետ բնույթ ունեն: Մ. Ա. Գուրվիչն առաջինն է այդպիսի պահանջների թվին դասել դատական ակտի որոշակիությունը (կատեգորիկ բնույթը), անպայմանականությունը և լրիվությունը (սպառիչ բնույթը)<sup>117</sup>: Քանի որ շահագրգռված անձը դատարան է դիմում իր կոնկրետ իրավունքի կամ օրինական շահի պաշտպանության պահանջով, դատական ակտը ևս պետք է կոնկրետ լինի, իսկ նման հստակության մասին խոսք կարող է լինել միայն այն ժամանակ, երբ կայացված դատական ակտը որոշակի է, անպայմանական և սպառիչ<sup>118</sup>:

Նման լրացուցիչ պահանջների առկայությունն ընդունում են նաև այլ դատավարագետներ<sup>119</sup>: Բացի դրանից, ինչպես եզրափա-

---

<sup>117</sup> Տե՛ս *Гурвич М. А.*, Избранные труды, в 2-х томах, том I, Краснодар, 2006, էջ 388-390:

<sup>118</sup> Տե՛ս *Загайнова С. К.*, Судебные акты в гражданском и арбитражном процессе: теоретические и прикладные проблемы. Дисс... д.ю.н., Екатеринбург, 2008, էջ 168:

<sup>119</sup> Տե՛ս, օրինակ, *Պեդրոսյան Ռ. Գ.*, Հայաստանի քաղաքացիական դատավարություն, երրորդ հրատ., Եր., Երևանի համալս. հրատ., 2007, էջ 468, *Դավթյան Ա. Հ.*, Քաղաքացիական դատավարություն, Եր., «Տիգրան Մեծ» հրատ., 2007, էջ 154,

կիչ, այնպես էլ միջանկյալ դատական ակտերը պետք է կազմված լինեն դատական ակտի տվյալ տեսակի ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջների պահպանմամբ<sup>120</sup>:

#### **1.4. Որոշակիությունը (կատեգորիկ բնույթը)**

Դատական ակտի որոշակիությունը պահանջ է, որն ապահովում է դրա իրական կատարումը՝ առանց դժվարությունների: Այդ պահանջի ուժով գործի քննության արդյունքներով կայացվող դատական ակտը հայտարարված բոլոր պահանջներին պետք է տա այնպիսի պատասխան, որը բացառում է կողմերի հարաբերություններում անորոշությունը, ինչպես նաև դատական ակտը կողմերի հայեցողությամբ տարբեր եղանակներով կատարելու հնարավորությունը: Այլ կերպ ասած՝ *դատական ակտը որոշակի է, եթե նրա մեջ դատարանը հստակ պատասխան է տվել վիճելի իրավահարաբերության, ինչպես նաև այդ իրավահարաբերության շրջանակներում կողմերի սուբյեկտիվ իրավունքների և պարտականությունների առկայության կամ բացակայության հարցին և սահմանել է տվյալ դատական ակտը կատարելու հստակ եղանակը:*

Ակնհայտ է, որ որոշակիության պահանջը երկու բաղկացուցիչ տարր է ներառում:

Առաջին՝ գործի քննության և լուծման արդյունքներով կայացվող դատական ակտով դատարանը պետք է հստակ պատասխանի վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության,

---

**Сахнова Т. В.**, Курс гражданского процесса: теоретические начала и основные институты, М.: «Волтерс Клувер», 2008, էջ 441-443, Гражданский процесс: Учебник. Отв. ред. В. В. Ярков, М., 2006, էջ 374-377, Арбитражный процесс: Учебник. Отв. ред. В. В. Ярков, М., 2003, էջ 342-343, **Афанасьев С. Ф., Зайцев А. И.**, Гражданский процесс. Учебно-методический комплекс. М., 2004, էջ 270-271, Гражданский процесс: Учебник. Под ред. М. К. Треушников, М., 2003, էջ 373, Гражданский процесс России: Учебник. Под ред. М. А. Вукот, М., 2004, էջ 289, Гражданское процессуальное право: Учебник. Под ред. М.С. Шакарян, М., 2004, էջ 278 և այլն:

<sup>120</sup> Դատական ակտերի ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջների մասին տե՛ս սույն գլխի հաջորդ ենթագլուխը:

վեճի առարկայի վերաբերյալ կողմերի իրավունքների և պարտականությունների առկայության կամ բացակայության հարցերին: Օրինակ՝ վճռի բովանդակությունից ուղղակիորեն պետք է բխի, որ դատարանը հաստատված է համարել կողմերի միջև առուծախի իրավահարաբերությունների առկայությունը, պայմանագրի առարկայի նկատմամբ գնորդի մոտ սեփականության իրավունքի ծագումը, վաճառողի մոտ պայմանագրի առարկան գնորդին հանձնելու պարտականության առկայությունը:

Դատարանը պարտավոր է վճռում ճշգրիտ նշել, թե ինչ իրավահարաբերություն է հաստատել (կամ չի հաստատել), կողմերից ով որ օբյեկտի (օբյեկտների) նկատմամբ ինչ իրավունք կամ ինչ պարտականություն ունի<sup>121</sup>:

Երկրորդ, բացի վերը նշվածից, գործի քննության արդյունքներով կայացվող դատական ակտում պետք է հստակորեն նշվի դրա կատարման հիմնական եղանակը: Օրինակ՝ վերը նշված դեպքում, բացի վաճառողի մոտ պայմանագրի առարկան գնորդին հանձնելու պարտականության առկայությունը հաստատելուց, վճռում պետք է նշվի առուվաճառքի պայմանագրի առարկան պատասխանողից հարկադրաբար վերցնելու և գնորդին հանձնելու վերաբերյալ դատարանի որոշման մասին: Կամ լուծելով ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով կողմերին պատկանող հողամասը նրանց միջև բաժանելու վերաբերյալ հարցը՝ դատարանը վճռում պետք է հստակորեն սահմանի, թե հողամասի կոնկրետ որ մասի նկատմամբ է ճանաչում կողմերից յուրաքանչյուրի սեփականության իրավունքը:

Ինչպես վերն արդեն նշել ենք, «Օրենսդրությունն այլընտրանքային վճիռներ կայացնելու հնարավորություն դատարաններին չի տալիս նույնիսկ այն դեպքերում, երբ դատավարության առար-

---

<sup>121</sup> Տե՛ս *Պեդրոսյան Ռ. Գ.*, Հայաստանի քաղաքացիական դատավարություն, երրորդ հրատ., Եր., Երևանի համալս. հրատ., 2007, էջ 468:

կան այլընտրանքային պարտավորություններն են<sup>122</sup>: Դատական քննության ընթացքում կողմն իր այլընտրանքային մի շարք պահանջներից պետք է ընտրի որևէ մեկը, որի վերաբերյալ դատարանը պետք է վճիռ կայացնի: Օրինակ, եթե գնորդին վաճառվել է ոչ պատշաճ որակի ապրանք, ապա նա իրավունք ունի դատարանում իր ընտրությամբ պահանջել համաչափ պակասեցնելու ապրանքի գինը, ողջամիտ ժամկետում անհատույց վերացնելու ապրանքի թերությունները, հատուցելու ապրանքի թերությունները վերացնելու համար իր կրած ծախսերը, հրաժարվելու առուծախի պայմանագիրը կատարելուց և պահանջելու վերադարձնել ապրանքի համար վճարված գումարը, պահանջելու փոխարինել ոչ պատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով և այլն (Քաղ. օր. 491 հոդ.): Դատարանը, կախված հարուցված հայցի բովանդակությունից (հայցի առարկայից), կարող է վճռով պատասխանողի վրա դնել այս պարտականություններից որևէ մեկը և չի կարող նշել, թե դրանցից մեկը չկատարվելու դեպքում պետք է կատարել մյուսը: Հետևաբար վճիռը կհամարվի անորոշ, եթե դրա եզրափակիչ մասում դատարանը կիրառել է «կամ-կամ» բանաձևը (օրինակ՝ պարտավորեցրել է պատասխանողին հայցվորին հանձնել որոշակի գույք կամ վճարել դրա արժեքը):

Միևնույն ժամանակ թույլատրվում է կայացնել ֆակուլտատիվ վճիռներ, որոնք նախատեսում են կատարման լրացուցիչ եղանակ այն դեպքերի համար, երբ գանձողի կամքից անկախ պատճառներով դատական ակտը չի կարող կատարվել դրանում նշված հիմնական եղանակով<sup>123</sup>: Ուշագրավ է, որ ֆակուլտատիվ վճիռներ կարող են կայացվել բացառապես օրենքով նախատեսված դեպքերում: Հետևաբար այլ դեպքերում նման վճիռներ կայացնելը ևս պետք է դիտարկվի որպես վճռին ներկայացվող որոշակիության պահանջի

<sup>122</sup> Տե՛ս սույն աշխատության 1-ին գլխի 1-ին ենթագլուխը:

<sup>123</sup> Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս սույն աշխատության 1-ին գլխի 1-ին ենթագլուխը:



խախտում:

Գործող օրենսդրությունը վճիռը կայացրած դատարանին թույլ է տալիս մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելու պահին իր նախաձեռնությամբ կամ կողմի միջնորդությամբ կայացնել լրացուցիչ վճիռ և վերացնել վճռում առկա անորոշությունն այն դեպքերում, երբ, լուծելով իրավունքի մասին հարցը, դատարանը չի նշել հատկացվող գումարի չափը, բռնագանձման ենթակա գումարը կամ այն գործողությունները, որոնք պարտավոր է կատարել պարտապանը, այսինքն՝ երբ վճիռը որոշակի չէ (ՔԴՕ 196 հոդ., մաս 1, կետ 2)<sup>124</sup>: Օրինակ՝ այն դեպքերում, երբ ընդհանուր գույքի բաժանման վերաբերյալ վճռում նշել է, որ գույքը բաժանվում է հավասար բաժիններով, բայց չի նշել, թե հայցվորին այդ գույքի որ մասն է հատկացվում, պատասխանողին՝ որը: Եթե վճռի որոշակիության պահանջի խախտումները չեն վերացվում լրացուցիչ վճռի կայացմամբ, նման դատական սխալները կարող են վերացվել վերադաս դատական ատյանում դատական ակտի բողոքարկման միջոցով:

### **1.5. Դատական ակտի անպայմանականությունը**

Դատական ակտի անպայմանական լինելն այն է, որ դրանում չեն կարող նշվել պայմաններ, որոնցից կախման մեջ է դրվում կայացված դատական ակտի կատարումը: Կողմերի իրավունքների և պարտականությունների վերաբերյալ դատարանի եզրահանգումները պետք է լինեն անպայմանական: Պայմաններ սահմանելը գործնականում դատական ակտը (վճիռը) դարձնում է անկատարելի, որովհետև դրա կատարման փուլում կողմերի միջև կարող են նոր վեճեր ծագել այն հարցի շուրջ, թե այդ պայմանները վրա հասել են, թե՛ ոչ: Այդ վեճերի լուծման համար անհրաժեշտություն կառաջանա կրկին դիմելու դատարան, կրկին քննելու գործ և կրկին կայացնելու վճիռ, ինչը քաղաքացիական դատավարությունում անթույլատրելի է: Ինչպես վերն արդեն նշել ենք, պայմանական վճիռների կայացու-

<sup>124</sup> Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս սույն աշխատության 4-րդ գլուխը:

մը չի թույլատրվում<sup>125</sup>: Օրինակ՝ քաղաքացիական գործով՝ ըստ հայցի Ա-ի ընդդեմ Բ-ի՝ պարտքը բռնագանձելու պահանջի մասին, չի կարելի կայացնել հետևյալ բովանդակությամբ վճիռ. «Բ-ից հօգուտ Ա-ի բռնագանձել 100.000 դրամ, եթե Գ-ն նրան վերադարձնի պարտքի գումարը»:

*Այսպիսով, դատական ակտն անպայմանական է, եթե նրանում նշված չեն պայմաններ, որոնցից կախման մեջ է դրվում դրա կատարումը:*

Անպայմանականության պահանջի խախտումը պետք է դիտարկել որպես դատական ակտը բեկանելու հիմք, որը, մեր կարծիքով, նպատակահարմար է ամրագրել օրենսդրորեն:

### **1.6. Դատական ակտի լրիվությունը**

ՔԴՕ 192-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն վճիռը պետք է պարունակի եզրահանգումներ՝ յուրաքանչյուր հայցապահանջը բավարարելու կամ մերժելու, գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերը բաշխելու, կիրառված հայցի ապահովման միջոցները պահպանելու կամ վերացնելու մասին: ՔԴՕ 181-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցը կամ դիմումն առանց քննության թողնելու մասին որոշմամբ պետք է լուծվեն նաև դատավարության մասնակիցների միջև դատական ծախսերի բաշխման և հայցի ապահովման միջոցների վերացման հարցերը: ՔԴՕ 183-րդ հոդվածի 3-րդ մասով ևս սահմանվում է գործի վարույթը կարճելու մասին դատական ակտով դատավարության մասնակիցների միջև դատական ծախսերի բաշխման և հայցի ապահովման միջոցների վերացման հարցերը լուծելու պահանջ:

Օրենքի տվյալ պահանջներից բխում է առաջին ատյանի դատարանի եզրափակիչ դատական ակտերի լրիվության պահանջը: Դատական ակտը լրիվ (սպառիչ) է, եթե դրա մեջ վերջնական պա-

---

<sup>125</sup> Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս սույն աշխատության 1-ին գլխի 1-ին ենթագլուխը:

տասխան են ստանում հայտարարված բոլոր պահանջները՝ ինչպես սկզբնական, հակընդդեմ և երրորդ անձի հայցերը, այնպես էլ հայտարարված դատական ծախսերի հատուցման ու հայցի ապահովման միջոցների վերացման հարցերը:

Տեղին է հիշել, որ ՀՀ օրենսդրությամբ չի թույլատրվում կայացնել միջանկյալ վճիռներ, որոնք քաղաքացիական գործը լուծում են միայն սկզբունքորեն, ճանաչում են միայն հայցի բավարարման իրավունքը՝ բաց (չլուծված) թողնելով բռնագանձվելիք գումարների չափը կամ հանձնման ենթակա գույքի (իրերի) ցանկը և արժեքները<sup>126</sup>: Վճռում պետք է լուծվեն ոչ միայն իրավունքի, այլև վճռվածի չափի հարցերը<sup>127</sup>:

Առանձին դեպքերում օրենքը հնարավոր է համարում լրացուցիչ վճռի կայացմամբ վճիռը համապատասխանեցնել լրիվության պահանջին: Մասնավորապես, այն դեպքերում, երբ դատարանը վճիռ չի կայացրել որևէ պահանջով, որով գործին մասնակցող անձինք ապացույցներ են ներկայացրել և տվել են բացատրություններ, թույլատրվում է վճռի նման թերությունը վերացնել լրացուցիչ վճռի կայացմամբ: Օրինակ, այն դեպքերում, երբ դատարանը բավարարել է համահայցվորներից մեկի հայցը, իսկ մյուսի պահանջը բավարարելուն կամ մերժելուն չի անդրադարձել, թեև նրա պահանջի հիմքում ընկած հանգամանքները և դրանք հաստատող կամ հերքող ապացույցները հետազոտել է: Այլ դեպքերում լրիվության պահանջին առնչվող դատական սխալները կարող են վերացվել վերադաս դատական ատյանում դատական ակտի բողոքարկման միջոցով:

Լրացուցիչ վճիռ կայացնելու հիմք են նաև այն իրավիճակները, երբ դատարանը չի լուծել կամ թերի է լուծել դատական ծախսերի կամ հայցի ապահովման միջոցները վերացնելու հարցը (ՔԴՕ 196

---

<sup>126</sup> Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս սույն աշխատության 1-ին գլխի 1-ին ենթագլուխը:

<sup>127</sup> Տե՛ս **Պեպրոսյան Ռ. Գ.**, Հայաստանի քաղաքացիական դատավարություն, երրորդ հրատ., Եր., Երևանի համալս. հրատ., 2007, էջ 470:

հող., մաս 1, կետ 3-4)<sup>128</sup>:

### **1.7. Դատական ակտերին ներկայացվող այլ պահանջներ**

Որոշ հեղինակներ առանձնացնում են դատական ակտերին ներկայացվող այնպիսի պահանջներ, ինչպիսիք են նպատակահարմարությունը և արդարացիությունը:

Այսպես, Պ. Ն. Սերգեյևն առաջարկում է կիրառել **նպատակահարմարության պահանջն** այն դեպքերում, երբ դատարանն ունի դատական հայեցողության իրավունք և կարող է կայացնել մի քանի ըստ էության օրինական վճիռ:<sup>129</sup> Ե. Վ. Խախալովայի կարծիքով դատարանի վճռում պետք է հաշվի առնվի այս կամ այն լուծման նպատակահարմարությունն այն դեպքերում, երբ օրինականության շրջանակներում դրսևորվում է դատական հայեցողություն, և իրավական կոնֆլիկտին տրվում է դատարանի տեսանկյունից առավել բարենպաստ լուծում<sup>130</sup>:

Տվյալ դեպքում, թերևս, պետք է համաձայնվել այն հեղինակների հետ, որոնք նպատակահարմարությունը դիտարկում են որպես օրինականության բաղկացուցիչ մաս<sup>131</sup>: Եվ իրոք, դատական հայեցողությունն իրավունքի կիրառման ձև է, որի էությունը հանգում է նրան, որ այն դեպքերում, երբ որոշակի հարց օրենքով ուղղակիորեն կարգավորված չէ, դատարանին վերապահվում է տվյալ հարցը

---

<sup>128</sup> Հատկանշական է, որ օրենսդիրը դատարանին չի տվել հնարավորություն լրացուցիչ որոշմամբ լուծելու դատական ծախսերի կամ հայցի ապահովման միջոցները վերացնելու հարցն այն դեպքերում, երբ վերջինս չի լուծվել հայցն առանց քննության թողնելու կամ գործի վարույթը կարճելու կարճելու մասին որոշմամբ: Տվյալ հանգամանքը, մեր կարծիքով, կարող է բնորոշվել որպես բացթողում:

<sup>129</sup> Տե՛ս **Сергейко П. Н.**, Законность, обоснованность и справедливость судебных актов, Краснодар, 1974, էջ 122:

<sup>130</sup> Տե՛ս **Хахалева Е. В.**, Обоснованность решения суда общей юрисдикции. Автореф. дис. ... к.ю.н. Саратов, 2005, էջ 14-15:

<sup>131</sup> Տե՛ս **Боннер А. Т.**, Применение нормативных актов в гражданском процессе, М., 1980, էջ 57, **Комиссаров К. И.**, Задачи судебного надзора в сфере гражданского судопроизводства, Свердловск, 1971, էջ 24:

ինքնուրույն լուծելու, ընտրություն կատարելու, այնպիսի որոշում կայացնելու հնարավորություն, որը համապատասխանում է իրավունքի սկզբունքներին, օրենքի ոգուն և օրենսդրի գաղափարին: Այդ կապակցությամբ Դ. Բ. Աբուշենկոն իրավացիորեն նկատում է, որ դատական հայեցողության հիմքում ընկած է իրավակիրառ գործունեության ազատությունը, որը, սակայն, պետք է դիտարկվի որպես օրենքով նախատեսված տարբերակներից որևէ մեկն ընտրելու ազատություն<sup>132</sup>:

Դատական հայեցողությունն իրականացվում է օրենսդրի կողմից նախապես ամրագրված սահմանների շրջանակներում: Հետևաբար այդ շրջանակներից դուրս գալը պետք է դիտարկվի որպես օրինականության պահանջի խախտում: Ուստի հիմքեր չկան նպատակահարմարությունը՝ որպես դատական ակտերին ներկայացվող ինքնուրույն պահանջ դիտարկելու համար:

Ռ. Ե. Ղուկասյանը գրում է, որ այն վճիռները, որոնցում դատարանը կոնկրետացնում է կողմերի իրավունքները և պարտականությունները, պետք է նաև **արդարացի** լինեն, այսինքն՝ բռնագանձվող դրամական միջոցների չափը պետք է համապատասխանի կողմերի տնտեսական հնարավորություններին և գործի այլ փաստական հանգամանքներին<sup>133</sup>: Ա. Տ. Բոների կարծիքով օրինական և հիմնավորված վճիռը, որպես կանոն, նաև արդարացի է բարոյական և սոցիալական առումով: Սակայն միաժամանակ հեղինակը նկատում է, որ կյանքում հաճախ են հանդիպում իրավիճակներ, երբ օրենքի վրա հիմնված և իրավաբանորեն արդարացի վճիռը սոցիալական և բարոյական առումով անարդարացի է, քանի որ ըստ էության ճիշտ կիրառված իրավանորմն է անարդարացի:

Ժամանակակից դատավարագիտության մեջ արդարացիութ

---

<sup>132</sup> Տե՛ս **Абушенко Д. Б.**, Судебное усмотрение в гражданском процессе. Автореф. дис. ... к.ю.н. Екатеринбург, 1998, էջ 4:

<sup>133</sup> Տե՛ս Комментарий к гражданскому процессуальному кодексу РФ. Под ред. М. С. Шакарян, М., 2003, էջ 337 (գլխի հեղինակ՝ Ռ.Ե. Ղուկասյան):

յան պահանջը որպես դատական ակտերին ներկայացվող ինքնուրույն պահանջ դիտարկող հեղինակների մեծամասնությունն այդ պահանջի առկայությունը հիմնավորում է արդար դատաքննության իրավունքի մասին միջազգային-իրավական և սահմանադրական դրույթների միջոցով<sup>134</sup>: Եվ իրոք, հաշվի առնելով արդարադատության էությունը՝ օրինական պետք է համարել բացառապես արդարացի դատական ակտը, այն ակտը, որը կայացվել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասին, այլ միջազգային-իրավական փաստաթղթերի և Սահմանադրության այն դրույթներին համապատասխան, որոնք երաշխավորում են արդարացի դատական քննության և դատական կարգով վիճելի հարցի արդարացի լուծում ստանալու անձի իրավունքը: Սակայն ակնհայտ է մեկ հանգամանք, արդարացիությունը, որը հատուկ է բոլոր ակտերին, ամբողջությամբ կլանվում է օրինականության պահանջով: Ոչ արդարացի դատական ակտը, որպես սահմանադրական և միջազգային իրավական պահանջներին հակասող, պետք է դիտարկվի որպես անօրինական: Ուստի մեզ համար առավել ընդունելի է թվում Ն. Ա. Չեչինայի դիրքորոշումը, ըստ որի՝ արդարացիությունը քաղաքացիական դատավարությունում առկա է քողարկված ձևով, ընդգրկվում է այլ իրավական կատեգորիաների՝ դատական ակտերի օրինականության և հիմնավորվածության պահանջների մեջ<sup>135</sup>: Այդ իսկ պատճառով այն չի կարող դիտարկվել որպես դատական ակտերին ներկայացվող ինքնուրույն պահանջ: Դատական ակտի օրինականության և հիմնավորվածության ժամանակակից հայեցակարգը լիովին ընդգրկում է արդարացիության գաղափարը:

---

<sup>134</sup> Տե՛ս, օրինակ, *Сахнова Т. В.*, Курс гражданского процесса: теоретические начала и основные институты, М.: «Волтерс Клувер», 2008, էջ 439-440:

<sup>135</sup> Տե՛ս *Чечина Н. А.*, Категория справедливости в советском гражданском процессуальном праве, Калинин, 1981, էջ 19:

## **§2. Առաջին արյանի դատարանի կողմից կայացվող դատական ակտերի ձևը, կառուցվածքը և բովանդակությունը**

Քաղաքացիական գործերով առաջին ատյանի դատարանի կողմից կայացվող դատական ակտերի էությունը բնութագրող կարևորագույն հատկանիշներից մեկն այն է, որ քաղաքացիական դատավարության օրենսդրությունը ոչ միայն կարգավորում է դրանց կայացման կարգը, այլ նաև սահմանում է դրանց ձևին, կառուցվածքին և բովանդակությանը ներկայացվող պահանջներ: Այդ կապակցությամբ կարելի է ասել, որ, ի տարբերություն այլ իրավակիրառ ակտերի, դատական ակտերն առավել կատարյալ են, քանի որ դատական ակտի յուրաքանչյուր տեսակի ձևին և բովանդակությանը օրենքը ներկայացնում է հատուկ պահանջներ<sup>136</sup>:

Դատական մարմինների ամբողջ իրավակիրառ գործունեությունն արտացոլվում է դատական ակտերում: Դրանք կայացվում են բացառապես **գրավոր ձևով**: Չնայած այն հանգամանքին, որ գործող դատավարական օրենսդրությունը դատական ակտերին ներկայացվող այս կարևորագույն պահանջն օրենսդրորեն ուղղակիորեն չի ձևակերպել, վերջինս տրամաբանորեն բխում է ՔԴՕ առանձին հոդվածների (օրինակ՝ ՔԴՕ 5-րդ, 189-րդ, 196-րդ, 197-րդ, 200-րդ, 365-րդ, 381-րդ հոդ. և այլն) բովանդակությունից:

Դատական մարմինների գործունեության ամրագրումը փաստաթղթերում ապահովում է արդարադատության թափանցիկությունը, մատչելիությունը, քանի որ թույլ է տալիս դատավարության մասնակիցներին քաղաքացիական դատավարության բոլոր փուլերի և իրավակիրառական ցիկլերի ընթացքում վերահսկողություն իրականացնել դատարանի գործունեության նկատմամբ: Այն ապահովում է նաև դատական իշխանության հանրային հաշվետվողակա-

<sup>136</sup> Տե՛ս **Загайнова С. К.**, Судебные акты в гражданском и арбитражном процессе: теоретические и прикладные проблемы. Дисс... д.ю.н., Екатеринбург, 2008, էջ 140:

նությունը:

Որպես կանոն, դատական ակտերը կայացվում են առանձին դատավարական փաստաթղթի ձևով: Բացառություն են կազմում այն միջանկյալ դատական ակտերը, որոնք ՔԴՕ 199-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով կարող են կայացվել առանց առանձին ակտի ձևով ձևակերպելու: Դրանք դատական նիստում հրապարակվում են բանավոր և պարտադիր ներառվում են դատական նիստի արձանագրության մեջ<sup>137</sup>:

Առաջին ատյանի դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտերի (վճիռների) կառուցվածքը և բովանդակությունը կարգավորվում են ՔԴՕ 192-194-րդ հոդվածներով:

Դատական ակտերում արտացոլվում է դատական իշխանության հեղինակությունը, իսկ դա որոշակիորեն պայմանավորում է դրանց շարադրման ոճը: Դատական ակտը պետք է բավարարի խոսքի հստակության, խնայողության, տրամաբանականության և ճշտության պահանջները<sup>138</sup>: Այն պետք է կազմված լինի համոզիչ և շարադրված՝ իրավաբանորեն գրագետ, պարզ, հստակ, սեղմ ձևակերպումներով, ունենա հրամայական բնույթ, չպետք է պարունակի բարդ կամ անդեմ արտահայտություններ ու դատողություններ կամ դրա ընկալումը դժվարացնող դարձվածքներ<sup>139</sup>: Դատական ակտում չպետք է օգտագործվեն խոսակցական լեզվին հատուկ, հուզական և կենցաղային արտահայտություններ, ժողովրդական ասացվածքներ, մեջբերումներ գրական կամ գիտական ստեղծագործություններից, ինչն էականորեն նսեմացնում է փաստաթղթի պաշտոնական ոճը: Անթոյլատրելի են հապավումների, առանց հայերեն տառադարձության օտարալեզու բառերի, պայմանական անունների կիրառությունները:

---

<sup>137</sup> Ավելի մանրամասն տե՛ս սույն աշխատության 1-ին գլխի 3-րդ ենթագլուխը:

<sup>138</sup> Տե՛ս *Решенкин А. Г., Павлов Н. В.*, О языке судебного решения и стиле судебного акта // Вестник ВАС РФ, 2001, № 7, 2008, էջ 116:

<sup>139</sup> Տե՛ս *Պեդրոսյան Ռ. Գ.*, Հայաստանի քաղաքացիական դատավարություն, երրորդ հրատ., Եր., Երևանի համալս. հրատ., 2007, էջ 457:



Դատական ակտում անտեղի կամ սխալ գործածված բառն անգամ կարող է ոչ միայն ստեղծել անորոշություն, սխալ մեկնաբանությունների տեղիք տալ, դատական սխալի և դատական ակտի հետագա վերանայումների պատճառ դառնալ, այլ նաև որոշ դեպքերում առաջացնել ծանր հետևանքներ կողմերի համար<sup>140</sup>, կողմի կամ անկողմնակալ դիտորդի մոտ ստեղծել դատարանի կողմնակալ վերաբերմունքի տպավորություն:

Դատական ակտ կազմելու ձևավորված մշակույթը ենթադրում է նյութի շարադրման տրամաբանականություն և հաջորդականություն, եզրահանգումների պատճառաբանվածություն, համապատասխան ոճի պահպանում:

Առանձին ակտի ձևով կայացվող դատական ակտերի բովանդակությանը ներկայացվող պահանջները սահմանվում են ՔԴՕ 200-րդ հոդվածով, որն ունի ընդհանուր բնույթ ինչպես միջանկյալ, այնպես էլ առանձին ակտի ձևով կայացվող եզրափակիչ դատական ակտերի համար:

Ինչ վերաբերում է արձանագրային բնույթի որոշումներին, թեև օրենքը չի կանոնակարգում դրանց բովանդակությունը, ինչը, մեր կարծիքով, հստակ դատավարական ձև սահմանելու տեսանկյունից այնքան էլ արդարացված չէ, պրակտիկայում դատարանները հրապարակում և դատական նիստի արձանագրությունում ընգրկվում են ՔԴՕ 200-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված բոլոր այն տեղեկությունները, որոնց ներառումը չի հակասում արձանագրային բնույթի որոշման էությանը:

Չնայած ի լրումն ՔԴՕ 200-րդ հոդվածի՝ որևէ այլ իրավական ակտով միջանկյալ դատական ակտերի ձևավորմանը, կառուցվածքին և բովանդակությանը ներկայացվող ձևական պահանջներ չեն սահմանվում, դատական պրակտիկայում վաղուց ձևավորվել են նման ակտերի շարադրման չգրված կանոններ, որոնք, մեր կարծի-

---

<sup>140</sup> Տե՛ս *Матеров Н. В., Судаков Г. В.*, О языке судебного решения. Практические рекомендации по оформлению судебных актов, СПб., 2003, էջ 7:

քով, կարող են ամբողջականացվել, համակարգվել և անհրաժեշտության ծավալով սահմանվել դատավարական օրենսդրության շրջանակներում: Նման կարգավորումն էապես կնպաստի դատական ակտեր կազմելու իրավական մշակույթի զարգացմանը և դատական իշխանության հեղինակության բարձրացմանը: Ինչպես նշում է Ա. Ն. Կոմարովը, «դատական ակտն այն եզակի փաստաթղթերից է, որը պետությունն ընդունում է կոնկրետ անձի նկատմամբ, ուստի դրա գրագետ շարադրանքը և ճիշտ ձևավորումը այն չափանիշներից են, որոնք թույլ են տալիս դատել մեր իրավական մշակույթի և քաղաքացիների նկատմամբ վերաբերմունքի աստիճանի մասին»<sup>141</sup>:

Ասվածը հավասարապես վերաբերում է նաև վճարման կարգադրությանը, վերաքննիչ և վճռաբեկ դատարանների որոշումներին, որոնց բովանդակությանը ներկայացվող պահանջներ են սահմանված համապատասխանաբար ՔԴՕ 312-րդ, 381-րդ, 406-րդ և մի շարք այլ հոդվածներում:

### **2.1. Վճռի կառուցվածքը և բովանդակությունը**

Ինչպես վերն արդեն նշվել է, առաջին ատյանի դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտերի կառուցվածքին և բովանդակությանը ներկայացվող պահանջները սահմանվում են ՔԴՕ 192-194-րդ հոդվածներով:

Ըստ ՔԴՕ 192-րդ հոդվածի 1-ին մասի՝ դատարանի վճիռը պետք է բաղկացած լինի խիստ հաջորդականությամբ շարադրված ներաճական, նկարագրական, պատճառաբանական և եզրափակիչ մասերից: Դրանք անխզելիորեն կապված են իրար հետ և կազմում են միասնական դատավարական փաստաթուղթ:

Դատական պրակտիկայում ընդունված «չգրված» կանոնների

---

<sup>141</sup> Տե՛ս **Комаров А. Н.**, Язык и стиль судебных документов. Практические рекомендации по оформлению судебных актов. Сост. Е. П. Попова, Ю. С. Фадеева, Т. Н. Цыплакова, СПб., 2003, էջ 6:

ուժով գործն ըստ էության լուծող դատական ակտերը շարադրվում են A4 ձևաչափի էջերի վրա: Դատական ակտերում կիրառվում են Unicode համակարգչային տառատեսակներ (քանի որ դատական ակտերը ներբեռնվում են «Դատական համակարգ» համակարգչային ծրագիր կամ գեներացվում են այդ ծրագրի միջոցով, որն այլ տառատեսակներով կազմված տեքստեր չի ընդունում):

Վճռի մասերը գործնականում կազմվում են առանձին բաժիններով (որոշակիորեն զատվում են միմյանցից), իսկ յուրաքանչյուրը, ելնելով շարադրվող մտքի տրամաբանական կապից, կարող է արաբական թվերով բաժանվել առանձին ենթաբաժինների:

ՔԴՕ 192-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ **վճռի ներածական մասը** պետք է պարունակի՝

1. վճիռ կայացնող դատարանի անվանումը,
2. դատարանի կազմը,
3. գործի համարը,
4. վճիռը կայացնելու տարին, ամիսը, ամսաթիվը,
5. գործին մասնակցող անձանց անունը (անվանումը),

6. գործին մասնակցող անձանց՝ քաղաքացու անձնագրային տվյալները, իրավաբանական անձի՝ հարկ վճարողի հաշվառման համարը և պետական գրանցման վկայականի համարը,

7. վեճի առարկան:

«Հայաստանի Հանրապետության զինանշանի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի պահանջներից ելնելով՝ ՀՀ զինանշանը գործածվում է դատական բոլոր ակտերում, այդ թվում՝ վճիռներում: Զինանշանի պատկերը (2,73 սմ բարձրությամբ և 2,84 սմ լայնությամբ) տեղակայվում է փաստաթղթի առաջին էջի վերին կենտրոնական մասում:

Քանի որ ՀՀ բոլոր դատարանները վճիռ կայացնում են Հայաստանի Հանրապետության անունից (ԴՕ 13 հոդ., մաս 1, ՔԴՕ 189 հոդ., մաս 2), զինանշանից ներքև՝ էջի կենտրոնական մասում, մեծատառերով գրվում է «ՎՃԻՌ» բառը, իսկ հաջորդ տողի կենտրո-

նում՝ մեծատառերով՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ»:

Հաջորդ տողում նշվում են վճռի հրապարակման օրը, ամիսը, տարեթիվը:

Բաց թողնելով մեկ տող՝ էջի կենտրոնում նշվում է վճիռ կայացրած դատարանի անվանումը, այնուհետև՝ հաջորդող տողերում դատարանի կազմի և գործին մասնակցող անձանց վերաբերյալ տեղեկությունները, ներառյալ դատավարական կարգավիճակը (յուրաքանչյուրը նոր տողից):

Հաջորդ տողում նշվում է, թե ինչ գործ է դատարանը քննության առել (հայցի (դիմումի) առարկան), որից հետո, բաց թողնելով մեկ տող, էջի կենտրոնում մեծատառերով գրվում է «ՊԱՐԶԵՑ» բառը, որով ավարտվում է վճռի ներածական մասը և սկսվում է նկարագրական մասը:

ՔԴՕ 192-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է **վճռի նկարագրական մասին** ներկայացվող պահանջները:

Վճռի նկարագրական մասը գործնականում բաժանվում է բաժինների, որոնցում համառոտ շարադրվում են՝

1. գործի դատավարական նախապատմությունը,
2. հայցվորի (դիմողի) դիրքորոշումը,
3. պատասխանողի դիրքորոշումը,
4. երրորդ անձի դիրքորոշումը,
5. հակընդդեմ հայցվորի և հակընդդեմ հայցով պատասխանողի դիրքորոշումները,
6. առանձին կատեգորիայի գործերով իրավասու անձանց և մարմինների, դիմումի քննության ելքով շահագրգռված անձանց դիրքորոշումը (ոչ հայցային բնույթի գործերով):

Նշված բաժինները սովորաբար վերնագրվում են ընդգծմամբ և համարակալվում են տվյալ մասում նրանց հերթական համարով:

*Գործի դատավարական նախապատմությունը* շարադրելիս դատարանն անհրաժեշտ մանրամասներով նշում է, թե երբ է հայցը

(դիմումը) ներկայացվել դատարան, ում է մակագրվել գործը և երբ է հայցը (դիմումը) ընդունվել վարույթ, հայցադիմումի պատասխան ներկայացվել է, թե ոչ, եթե այո, ապա երբ է այն ներկայացվել: Եթե պատասխանողի կողմից ներկայացվել է հակընդդեմ հայց, դատարանը վճռի այս բաժնում պետք է նշումներ կատարի այն մասին, թե երբ է հակընդդեմ հայցը վարույթ ընդունվել, դրա դեմ պատասխան ներկայացվել է, թե ոչ: Քննարկվող բաժնում պետք է նշումներ կատարվեն գործով դռնբաց կամ դռնփակ վարույթ կիրառելու, գործը դատաքննության նախապատրաստելու, ոչ պատշաճ կողմին փոխարինելու, իրավահաջորդության, նոր պատասխանող և երրորդ անձ վարույթ ներգրավելու, գործը դատաքննության նշանակելու, պարզեցված այս կամ այն ընթացակարգը կիրառելու մասին:

Եթե գործն լուծվում է ոչ առաջին անգամ (նախկինում կայացված դատական ակտի ամբողջությամբ կամ մասնակի բեկանումից հետո), ապա համառոտ նկարագրվում է նաև համապատասխան դատավարական նախապատմությունը՝ ցույց տալով վերադաս դատարանի կողմից սահմանված գործի նոր քննության ծավալը:

Հայցվորի (դիմողի) դիրքորոշմանը նվիրված բաժնում շարադրվում է հայցվորի (դիմողի) դիրքորոշման հակիրճ բովանդակությունը՝ յուրաքանչյուր պահանջի իրավական և փաստական հիմքը (ներառյալ դատավարական փաստաթղթերում, բանավոր բացատրություններում, հարցերին տրված պատասխաններում ներկայացված բոլոր էական փաստարկները):

Վճռի այս հատվածում է նշում արվում այն մասին, թե արդյոք փոփոխվել է հայցի առարկան կամ հիմքը, փոփոխված լինելու դեպքում նշվում են փոփոխության կատարման ամսաթիվը և փոփոխության էությունը:

*Պատասխանողի դիրքորոշմանը նվիրված* բաժնում շարադրվում են պահանջի փաստական հիմքերից յուրաքանչյուրի դեմ բերված առարկությունները, եթե պատասխանողը ժխտում է հայցվորի առաջադրած փաստերը, առարկության հիմքում դրված փաս-

տական հանգամանքները, պատասխանողի փաստարկները պահանջի իրավական հիմնավորման վերաբերյալ, պատասխանողի կողմից առաջադրված լրացուցիչ իրավական հիմքերը, ինչպես նաև պատասխանողի դիրքորոշումը հայցվորի պահանջի վերաբերյալ: Եթե պատասխանողը սահմանված ժամկետում հայցադիմումի պատասխան չի ներկայացրել, ընդունել է հայցն ամբողջությամբ կամ մասամբ կամ չի առարկել հայցվորի դիրքորոշման, նրա կողմից վկայակոչված այս կամ այն փաստի դեմ, կամ ընդունել է այդ փաստերն ամբողջությամբ կամ մասամբ, դատարանն այդ մասին ևս նշում է կատարում պատասխանողի դիրքորոշմանը նվիրված բաժնում՝ նկատի ունենալով այն իրավական հետևանքները, որոնք առաջանում են նման վարքագծի դրսևորման դեպքում:

*Երրորդ անձանց դիրքորոշումը* շարադրվում է ըստ հայցվորի կամ պատասխանողի դիրքորոշման կետերի՝ կախված այն հանգամանքից՝ երրորդ անձն ինքնուրույն պահանջ ներկայացնում է, թե հանդես է գալիս գործին մասնակցող այս կամ այն անձի կողմում:

Վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձի դիրքորոշումը շարադրելիս հաշվի են առնվում հայցվորի դիրքորոշումը շարադրելու կանոնները, քանի որ, ինչպես գիտենք, նրա դատավարական կարգավիճակը հայցվորի դատավարական կարգավիճակից չի տարբերվում: Վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձի դիրքորոշման համառոտ շարադրանքը պետք է ներառի նաև համապատասխան կողմի դիրքորոշման դեմ նրա բերած փաստարկները:

Վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձի դիրքորոշումը կարող է շարադրվել հայցվորի կամ պատասխանողի դիրքորոշումից հետո՝ կախված նրանից, թե ում կողմում է նա հանդես գալիս:

*Հակընդդեմ հայցվորի և հակընդդեմ հայցով պատասխանողի դիրքորոշումները* կարող են նկարագրվել ինչպես առանձին, այն-

պես էլ համապատասխանաբար պատասխանողի և հայցվորի դիրքորոշումների հետ միասին: Բոլոր դեպքերում հակընդդեմ հայցի առկայության դեպքում վճռի քննարկվող բաժնում պետք է ներկայացվեն նաև հակընդդեմ հայցվորի և պատասխանողի դիրքորոշումները՝ վերոգրյալ բաժինների շարադրման կանոններով:

*Վճռի նկարագրական մասում իրավասու անձանց և մարմինների, դիմումի քննության ելքով շահագրգռված անձանց դիրքորոշմանը բաժին է նվիրվում ոչ հայցային բնույթի այն գործերով, որոնցով նշված անձանց մասնակցությունը պարտադիր է (տե՛ս, օրինակ, ՔԴՕ 247-րդ, 251-րդ, 263-րդ հոդվածները):*

Գործին մասնակցող անձանց դիրքորոշումները շարադրելուց հետո վճռի նկարագրական մասում նշում է կատարվում ապացուցման բեռը բաշխելու վերաբերյալ դատարանի որոշման մասին: Ընդ որում, եթե այդ որոշումը գործի քննության ընթացքում փոփոխվել է, ապա պարտադիր նշում է կատարվում այդ մասին՝ ցույց տալով փոփոխության կատարման ամսաթիվը և փոփոխության էությունը: Հարկ է նկատի ունենալ, որ ըստ գործող կարգավորումների՝ առանձին վարույթների շրջանակներում (ոչ հայցային վարույթներ, պարզեցված վարույթ, արագացված դատաքննություն, հեռակա դատաքննություն) դատարանը չի կրում նախնական դատական նիստ հրավիրելու և ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելու պարտականություն: Հետևաբար նման վարույթների արդյունքում կայացված վճռի նկարագրական մասը ապացուցման պարտականությունը բաշխելու վերաբերյալ դատարանի որոշման մասին նշում չի կարող պարունակել: ՔԴՕ 193-րդ հոդվածի ուժով քննարկվող նշումը չի կատարվում նաև գործի վարույթը հաշտության համաձայնությամբ ավարտելու մասին վճռում:

Վճռի նկարագրական մասի առանձին բաժիններում, ըստ անհրաժեշտության, դատարանը կարող է նշումներ կատարել գործին մասնակցող անձանց կողմից ներկայացված միջնորդությունների և դրանց կապակցությամբ առանձին ակտի ձևով ընդունված

որոշումների մասին:

**Վճռի պատճառաբանական մասը** վճռի հիմքն է, քանի որ հայտարարված պահանջների (գործի) վերաբերյալ դատարանի պատասխանը, նրա եզրահանգումների փաստական և իրավական հիմնավորումը կատարվում են հենց այդ մասում<sup>142</sup>: Վճռի այս մասը կարևոր է այնքանով, որ դրա վերլուծության հիման վրա կարելի է դատել այն մասին, թե որքանով են պահպանվել վճռին ներկայացվող օրինականության, հատկապես հիմնավորվածության ու պատճառաբանվածության պահանջները, քանի որ այստեղ են շարադրվում գործով հետազոտված ապացույցների վերլուծությունը և դատական գնահատումը, կատարվում դրանց խմբավորումն ընդունված (արժանահավատ) և չընդունված (ոչ արժանահավատ) ապացույցների, նշում է կատարվում այն փաստական հանգամանքների մասին, որոնք դատարանը համարել է հաստատված, հերքված կամ վիճելի: Դատական ակտի քննարկվող մասում է դատարանը տալիս վիճելի իրավահարաբերության իրավաբանական որակումը, այդ թվում՝ նաև եզրահանգումներ անում կողմերի սուբյեկտիվ իրավունքների և պարտականությունների վերաբերյալ:<sup>143</sup>

ՔԴՕ 192-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ վճռի պատճառաբանական մասում պետք է նշվեն՝

1) վերլուծություն կիրառելի իրավունքի վերաբերյալ՝ միջազգային պայմանագրերի, օրենքների և այլ իրավական ակտերի, Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների, այդ թվում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ինչպես նաև Սահմանադրական դատարանի, Վճռաբեկ դատարանի այն որոշումների վկայակոչմամբ, որոնք առաջին ատյանի

<sup>142</sup> Տե՛ս **Պեդրոսյան Ռ. Գ.**, Հայաստանի քաղաքացիական դատավարություն, երրորդ հրատ., Եր., Երևանի համալս. հրատ., 2007, էջ 458:

<sup>143</sup> Տե՛ս Теория правосудия, в 3-х томах, **Фурсов Д. А., Харламова И. В.**, т. 2: Гражданское судопроизводство как форма отправления правосудия, М.: «Статут», 2009, էջ 463:



դատարանը կիրառելի է համարում,

2) գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի շրջանակը,

3) ապացուցման կարիք չունեցող փաստերը՝ նշելով, թե սույն օրենսգրքի 61-րդ հոդվածի որ մասի հիման վրա և ինչ հիմքով է գործին մասնակցող անձն ազատվում տվյալ փաստն ապացուցելու պարտականությունից,

4) ապացուցման ենթակա փաստերը՝

ա. շարադրելով ապացուցման ենթակա յուրաքանչյուր փաստը,

բ. նշելով, թե ով է կրում ապացուցման ենթակա յուրաքանչյուր փաստի ապացուցման պարտականությունը և որ իրավական նորմի հիման վրա,

գ. առաջին ատյանի դատարանի եզրակացությունը՝ տվյալ փաստի ապացուցված լինելու վերաբերյալ՝ գնահատելով տվյալ փաստի հաստատման կամ մերժման համար գործին մասնակցող անձանց կողմից ներկայացված յուրաքանչյուր ապացույցը,

5) գործին մասնակցող անձի կողմից ներկայացված ապացույցն անթույլատրելի կամ ոչ վերաբերելի համարելու դեպքում՝

ա. հղում այն իրավական նորմերին, որոնց հիման վրա ապացույցը ճանաչվել է անթույլատրելի կամ ոչ վերաբերելի,

բ. այն փաստերի շարադրանքը, որոնց հիման վրա դատարանը հանգել է նման եզրահանգման.

6) եզրակացություն՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիմնավոր լինելու վերաբերյալ,

7) գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման վերաբերյալ առաջին ատյանի դատարանի պատճառաբանությունը:

ՔԴՕ 192-րդ հոդվածի 4-րդ մասով վճռի պատճառաբանական մասի բովանդակությանը ներկայացվող պահանջների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ յուրաքանչյուր գործով դատարանը վճռում պետք է շարադրի իր պատճառաբանությունները,

փաստարկները, նկատառումները, որոնց հիման վրա հանգել է հայցը (դիմումը) բավարարելու կամ մերժելու վերաբերյալ եզրահանգումների, այլ կերպ ասած՝ նա պետք է տա վճռի փաստական և իրավական հիմնավորումը, որպեսզի այն համոզիչ և հասկանալի լինի բոլորի համար: Գործն ըստ էության լուծող դատական ակտը պետք է հիմնավորված ու պատճառաբանված լինի ոչ թե ձևականորեն, այլ ըստ էության<sup>144</sup>:

Վճռի պատշաճ իրավական հիմնավորման համար կարևոր է նաև նշել այն դատավարական նորմերը, որոնցով ղեկավարվել է դատարանը տվյալ գործը քննելիս: Դրանք, որպես կանոն, ընդհանուր կամ հատուկ բնույթ ունեցող այն նորմերն են, որոնք ամրագրում են վարույթի տվյալ տեսակի շրջանակներում վճիռ կայացնելու դատարանի իրավասությունը և կանխորոշում են վճռի եզրափակիչ մասի բովանդակությունը:

Վճռի պատճառաբանական մասի շարադրանքն ավարտվում է նոր պարբերությունից, մոտավորապես հետևյալ ձևակերպմամբ՝ «Ղեկավարվելով վերոգրյալ պատճառաբանությամբ և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 188-րդ և 189-րդ հոդվածներով, դատարանը...»:

Այնուհետև մեկ տող բաց թողնելով՝ էջի կենտրոնում մեծատառերով նշվում է «ՎՃՌԵՑ» բառը, որից հետո, ևս մեկ տող բաց թողնելով, շարադրվում է վճռի եզրափակիչ մասը:

**Վճռի եզրափակիչ մասը** կարևոր է այնքանով, որքանով այստեղ են ձևակերպվում վճռի (գործի) լուծման վերաբերյալ դատարանի վերջնական եզրահանգումները: Դատական ակտի այս մասն է թույլ տալիս դատել այն մասին, թե որքանով է կայացված վճիռը լրիվ (սպառիչ), անպայմանական և որոշակի (կատեգորիկ):

ՔԴՕ-ն վճիռների եզրափակիչ մասերի բովանդակությանը ներ-

---

<sup>144</sup> См. у Теория правосудия, в 3-х томах, **Фурсов Д. А., Харламова И. В.**, т. 2: Гражданское судопроизводство как форма отправления правосудия, М.: «Статут», 2009, էջ 463:

կայացնում է ինչպես ընդհանուր, այնպես էլ հատուկ պահանջներ:

Ընդհանուր պահանջներին պետք է բավարարի առաջին ատյանի դատարանի գործն ըստ էության լուծող ցանկացած դատական ակտ: Դրանք սահմանված են ՔԴՕ 192-րդ հոդվածի 5-րդ մասում:

Հատուկ պահանջները ենթակա են կիրառման՝ ելնելով բացառապես կոնկրետ գործի առանձնահատկություններից: Նման պահանջներ սահմանված են ՔԴՕ 193-194-րդ հոդվածներում:

Վճռին ներկայացվող *ընդհանուր պահանջները* հանգում են հետևյալին:

Ցանկացած վճռի եզրափակիչ մաս պետք է պարունակի՝

1. վերջնական և սպառիչ եզրահանգումներ՝ հայտարարված յուրաքանչյուր հայցապահանջը բավարարելու կամ դրանք լրիվ կամ մասամբ մերժելու մասին (դատարանը հստակորեն և ճշգրտորեն նշում է, թե ինչ և ում օգտին է գանձվում, կամ հայտարարված պահանջները որ մասով են մերժվում, այդ պահանջների որ մասով է կարճվում գործի վարույթը կամ հայցը (դիմումը) թողնվում առանց քննության, ում օգտին է ճանաչվել վիճելի իրավունքը, հատուկ վարույթի գործերով կոնկրետ ինչ փաստ է հաստատում և այլն: Պետք է ճշգրտորեն նշել գործին մասնակցող անձանց՝ քաղաքացու անունը (ըստ նրանց անձը հաստատող փաստաթղթերի), իրավաբանական անձի անվանումը (ըստ պետական գրանցման փաստաթղթի),

2. եզրահանգումներ՝ գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերը բաշխելու վերաբերյալ,

3. եզրահանգումներ՝ կիրառված հայցի ապահովման միջոցները պահպանելու կամ վերացնելու մասին,

4. հայցն ամբողջությամբ կամ մասնակի բավարարելու և կատարում ենթադրող վճիռ կայացնելու դեպքում նշում՝ վճիռը կամովին չկատարվելու դեպքում այն պարտապանի հաշվին հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով կատարելու մասին,

5. նշում՝ վճռի բողոքարկելու ժամկետի և այն վերադաս դատական ատյանի մասին, ուր կարող է ներկայացվել բողոքը:

Դատարանի վերջնական եզրակացությունները, անշուշտ, պետք է բխեն տվյալ գործով վճռի պատճառաբանական մասում հաստատված փաստական հանգամանքներից: Դրանք ձևակերպվում են կատեգորիկ պատվիրանի ձևով, որը համապատասխանում է վճռի իշխանականային էությանը<sup>145</sup>:

Վճռի եզրափակիչ մասին ներկայացվող *հարուկ պահանջները* հանգում են հետևյալին:

1) Դրամական միջոցներ գանձելու վերաբերյալ հայրը բավարարելու դեպքում վճռի եզրափակիչ մասը պետք է պարունակի՝ բռնագանձվող գումարի ընդհանուր չափը՝ առանձին նշելով հիմնական պարտքի, տուժանքի (տուգանքի, տույժի), վնասների չափերը, ինչպես նաև այն գումարի չափը, որի վրա հաշվեգրվում են տոկոսներ, այդ տոկոսների չափը և դրանց հաշվեգրման սկզբի տարին, ամիսը և ամսաթիվը:

2) Քաղ. օր.-ով նախատեսված ֆոնդի կառավարչի ստանձնած պարտավորությունների խախտման համար դրամական միջոցներ գանձելու վերաբերյալ հայրը բավարարելու դեպքում վճռի եզրափակիչ մասում պետք է սահմանվի, թե բռնագանձվող գումարը ենթակա է գանձման միայն համապատասխան ֆոնդի գույքից, թե միայն պարտապան ֆոնդի կառավարչի՝ ֆոնդի միջոցներ չհամարվող գույքից, իսկ անբավարարության դեպքում՝ նաև պարտապան ֆոնդի կառավարչի՝ ֆոնդի միջոցներ չհամարվող գույքից:

3) Գույք հատկացնելու դեպքում վճռի եզրափակիչ մասում նշվում են հանձնման ենթակա գույքի անվանումը, առկայության դեպքում՝ նույնականացման տվյալները, իսկ եթե հայտնի է, նշվում է նաև դրա գտնվելու վայրը:

4) Մի քանի հայցվորի օգտին վճիռ կայացնելու դեպքում վճռի եզրափակիչ մասը պետք է պարունակի՝ նրանցից յուրաքանչյուրի պահանջը բավարարելու չափը կամ նշում առ այն, որ պահանջի

---

<sup>145</sup> Տե՛ս **Պեպրոսյան Ռ. Գ.**, Հայաստանի քաղաքացիական դատավարություն, երրորդ հրատ., Եր., Երևանի համալս. հրատ., 2007, էջ 461:

իրավունքը համիրավ է, իսկ մի քանի պատասխանողի դեմ վճիռ կայացնելու դեպքում՝ նրանցից յուրաքանչյուրի պարտավորության չափը կամ նշում առ այն, որ նրանց պատասխանատվությունը համապարտ է:

5) Պայմանագիր կնքելուն հարկադրելու հետ կապված վեճով պարտադիր շարադրվում են այն պայմանները, որոնցով կողմերը պարտավոր են կնքել պայմանագիրը, իսկ պայմանագիրը փոխելու հետ կապված վեճով՝ պայմանագրի յուրաքանչյուր վիճելի պայմանի վերջնական ձևակերպումը:

6) Գործին մասնակցող անձանց հաշտության համաձայնությունը հաստատելու դեպքում առաջին ատյանի դատարանի վճռի եզրափակիչ մասը պետք է պարունակի նշում գործի վարույթը հաշտության համաձայնությամբ ավարտելու (գործի վարույթը լրիվ կամ մասով կարճելու) մասին և պարունակի հաշտության համաձայնության բառացի շարադրանքը:

7) Գործի վարույթը հաշտության համաձայնությամբ ավարտելու դեպքում առաջին ատյանի դատարանը վճռով վերացնում է հայցի ապահովման միջոցները և բաշխում է դատական ծախսերը, եթե այլ բան սահմանված չէ հաշտության համաձայնությամբ:

Դատական գործերի բնույթից ու առանձնահատկություններից ելնելով՝ ՔԴՕ-ն վարույթի առանձին տեսակները կարգավորող նորմերում ևս սահմանել է առանձին գործերով վճռի եզրափակիչ մասին ներկայացվող հատուկ պահանջներ: Այդպիսի պահանջներ են ամրագրված, օրինակ, ՔԴՕ 209-րդ, 214-րդ, 241-րդ, 245-րդ, 264-րդ, 275-րդ, 282-րդ, 287-րդ և 291-րդ հոդվածներում:

Հարկ է նկատի ունենալ, որ, թեև դա ուղղակիորեն նախատեսված չէ օրենքով. դատարանը, ելնելով վճռի որոշակիության պահանջից, վճիռների եզրափակիչ մասերում, ըստ անհրաժեշտության, պետք է ներառի նաև այլ հատուկ տվյալներ: Այսպես՝ հայրությունը որոշելու վճիռների եզրափակիչ մասում պետք է մտցնել այնպիսի տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են ՔԿԱԳ մարմնում հայրու-

յան հաստատման ակտը գրանցելու համար (հոր ազգանունը, անունը, հայրանունը, նրա ծննդյան տարին, ամիսը և ամսաթիվը, ծննդյան վայրը, ազգությունը), քաղաքացուն անգործունակ ճանաչելու վերաբերյալ վճռում՝ տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են խնամակալության և հոգաբարձության մարմնին տվյալ քաղաքացուն անհատականացնելու և նրա նկատմամբ խնամակալություն կամ հոգաբարձություն սահմանելու համար, գույքը տիրազուրկ ճանաչելու վերաբերյալ վճռում՝ տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են գույքն անհատականացնելու համար և այլն:

Բոլոր դեպքերում վճռի եզրափակիչ մասում դատարանի կողմից տրված ձևակերպումները պետք է լինեն հստակ, ճշգրիտ, թույլ տան ճշգրիտ որոշելու դատական ակտի հասցեատերերին, կասկածի տակ չդնեն դրա որոշակիությունը, անպայմանականությունը և լրիվությունը, բխեն տվյալ գործով վճռի պատճառաբանական մասում հաստատված փաստական հանգամանքներից, իրավական հարցերի և այդ փաստերի համադրումից արված եզրահանգումներից, չունենան լրացուցիչ պարզաբանման ու լրացման կարիք: Տվյալ պահանջները պայմանավորված են նաև այն հանգամանքով, որ վճռի հարկադիր կատարման անհրաժեշտության դեպքում վճռի եզրափակիչ մասը ներառվում է կատարողական թերթում՝ հանդիսանալով դատական ակտի հարկադիր կատարման միակ հիմքը:

## **2.2. Առանձին ակտի ձևով կայացվող որոշումների կառուցվածքը և բովանդակությունը**

Առանձին ակտի ձևով կայացվող որոշումների բովանդակությանը ներկայացվող ընդհանուր պահանջները սահմանվում են ՔԴՕ 200-րդ հոդվածով: Հարկ է նկատի ունենալ, որ նշված նորմով սահմանված պահանջները կիրառելի են ոչ միայն առաջին ատյանի դատարանի կողմից առանձին ակտի ձևով կայացվող միջանկյալ դատական ակտերի, հայցը (դիմումը) առանց քննության թողնելու և գործի վարույթը կարճելու մասին որոշումների, այլ նաև ոչ հայցային

բնույթի առանձին կատեգորիայի գործերով կայացվող եզրափակիչ դատական ակտերի<sup>146</sup>, վերադաս դատական ատյանների կողմից կայացվող միջանկյալ և առանձին եզրափակիչ որոշումների<sup>147</sup> նկատմամբ:

ՔԴՕ 200-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ որոշման մեջ պետք է նշվեն՝

1) առաջին ատյանի դատարանի անվանումը, դատարանի կազմը, գործի համարը, որոշումը կայացնելու տարին, ամիսը, ամսաթիվը, հայցի (դիմումի) առարկան,

2) գործին մասնակցող անձանց անունը (անվանումը),

3) հարցը, որի վերաբերյալ որոշում է կայացվում,

4) հիմնավորումները, որոնցով դատարանը հանգել է հետևությունների՝ օրենքների և այլ իրավական ակտերի վկայակոչմամբ,

5) քննարկվող հարցի վերաբերյալ եզրահանգումը,

6) որոշումը բողոքարկելու կարգը և ժամկետը, եթե այն ենթակա է բողոքարկման, իսկ եթե որոշումը բողոքարկման ենթակա չէ, ապա նշում այդ մասին:

Ինչպես նշել ենք, ի լրումն ՔԴՕ 200-րդ հոդվածի որևէ այլ ակտով միջանկյալ դատական ակտերի ձևավորմանը, կառուցվածքին և բովանդակությանը ներկայացվող այլ պահանջներ չեն սահմանվում: Այդուհանդերձ, դատական պրակտիկայում վաղուց ձևավորվել են նման ակտերի շարադրման չգրված կանոններ, որոնք, մեր կարծիքով, կարող են ամբողջականացվել, համակարգվել, անհրաժեշտության դեպքում նախատեսվել դատավարական օրենսդրությամբ: Նման կարգավորումն էապես կնպաստի դատական ակտեր կազմելու իրավական մշակույթի զարգացմանը, մոտեցումների միասնականացմանը և դատական իշխանության հեղինակության բարձ-

<sup>146</sup> Տե՛ս ՔԴՕ 320-րդ հոդ., մաս 1, 325-րդ հոդ., մաս 1, 330-րդ հոդ., մաս 1, 335-րդ հոդ., մաս 1, 340-րդ հոդ., մաս 2, 345-րդ հոդ., մաս 3, 356-րդ հոդ., մաս 1:

<sup>147</sup> Տե՛ս ՔԴՕ 382-րդ հոդ., 394-րդ հոդ., մաս 4, 395-րդ հոդ., մաս 2, 397-րդ հոդ., մաս 2, 399-րդ հոդ., մաս 3:

րացմանը:

Չնայած օրենքը նման պահանջ չի ներկայացնում, առանձին ակտի ձևով կայացվող որոշումները ևս բաժանվում են ներածական, նկարագրական, պատճառաբանական և եզրափակիչ մասերի: Ընդ որում, նկարագրական և պատճառաբանական մասերը, որպես կանոն, միմյանցից չեն առանձնացվում և կազմվում են միասնական բաժնով:

Առանձին ակտի ձևով կայացվող որոշումը շարադրվում է այն կայացնող դատարանի՝ ՀՀ զինանշանով ձևաթղթի վրա:

Որոշման **ներածական մասը** շարադրելիս դատարանը էջի կենտրոնական մասում մեծատառերով նշում է «ՈՐՈՇՈՒՄ» բառը, իսկ հաջորդ տողի կենտրոնում՝ մեծատառերով գրվում է որոշման տեսակը (օրինակ՝ հայցադիմումը վերադարձնելու մասին, հայցի ապահովման միջոց կիրառելու մասին, գործի վարույթը կարճելու մասին և այլն):

Հաջորդ տողի ձախ կողմում նշվում են որոշման կայացման օրը, ամիսը, տարեթիվը:

Բաց թողնելով մեկ տող՝ էջի կենտրոնում նշվում են որոշումը կայացրած դատարանի անվանումը, այնուհետև՝ տեղեկություններ դատարանի կազմի և գործին մասնակցող անձանց վերաբերյալ, ինչպես նաև հարցը, որի վերաբերյալ որոշում է կայացվել:

Եթե հարցը քննվել է դատական նիստում, նշվում է, թե ինչպիսի (դռնբաց, դռնփակ) դատական նիստում և ինչ հարց է դատարանը քննության առել:

Նշված տեղեկությունները շարադրելուց հետո, բաց թողնելով մեկ տող, էջի կենտրոնում մեծատառերով գրվում է «ՊԱՐՁԵՑ» բառը, որով ավարտվում է որոշման ներածական մասը, և սկսվում է նկարագրական-պատճառաբանական մասը:

Որոշման **նկարագրական-պատճառաբանական մասը** պետք է տեղեկություններ պարունակի քննարկվող հարցի առաջադրման և լուծման նախապայմաններ հանդիսացող փաստերի, ինչպես նաև



տվյալ հարցի լուծման իրավական հիմքերի մասին: Մասնավորապես, այստեղ դատարանը պետք է համառոտ շարադրի, թե ով, ընդդեմ ում և ինչպիսի պահանջով հայցադիմում է ներկայացրել, կամ գործին մասնակցող անձն ինչի վերաբերյալ է ներկայացրել միջնորդություն, պահպանվել են արդյոք հայցադիմումի ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջները, եթե չեն պահպանվել, ապա ինչպիսի խախտումներ են թույլ տրվել, միջնորդությունը բավարարելու, կամ տվյալ որոշումը կայացնելու համար անհրաժեշտ ինչպիսի փաստեր են առկա և այլն: Տվյալ մասում են ձևակերպվում այն շարժառիթները, որոնցով դատարանը հանգել է հետևությունների՝ օրենքների և այլ իրավական ակտերի վկայակոչմամբ:

Որոշման քննարկվող մասը տվյալ որոշման հիմքն է, որովհետև կոնկրետ հարցի վերաբերյալ դատարանի պատասխանը, նրա եզրահանգումների փաստական և իրավական հիմնավորումը կատարվում են հենց այդ մասում:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ առաջին ատյանի մի շարք եզրափակիչ դատական ակտեր ձևակերպվում են առանձին ակտի ձևով, և դրանցով, ըստ էության, եզրափակվում է վարույթը տվյալ դատական ատյանում, ինչն առաջացնում է գործով կատարված դատական ծախսերի բաշխման հարցը լուծելու անհրաժեշտություն, ՔԴՕ 200-րդ հոդվածի 1-ին մասում ճիշտ կլիներ վճռի եզրափակիչ մասի բովանդակությանը ներկայացվող պահանջների օրինակով սահմանել, որ առանձին ակտի ձևով կայացվող եզրափակիչ դատական ակտերը պետք է նշումներ պարունակեն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխելու և կիրառված հայցի ապահովման միջոցները պահպանելու կամ վերացնելու մասին: Նման մոտեցումը նախ թույլ կտա ընդհանրացնել պահանջը՝ զերծ մնալով առանձին ինստիտուտներին նվիրված հոդվածներում նորմերի կրկնություններ կատարելուց և օրենքն անհարկի ծանրաբեռնելուց (օրինակ՝ ՔԴՕ 181 հոդ., մաս 1, 183 հոդ., մաս 3 և այլն),

երկրորդ՝ կլուծի առկա իրավական կարգավորման բացերը, երբ առանձին վարույթներով կայացված եզրափակիչ դատական ակտերի նվիրված նորմերում այդ մասին պահանջներ սահմանված չեն, իսկ վճռի եզրափակիչ մասի բովանդակությանը ներկայացվող պահանջները սահմանող դրույթները քննարկվող որոշումների նկատմամբ կիրառելի չեն:

Որոշման պատշաճ իրավական հիմնավորման համար կարևոր է նշել նաև այն դատավարական նորմերը, որոնցով ղեկավարվել է դատարանը տվյալ հարցերը լուծելիս:

Առանձին ակտի ձևով կայացվող որոշման նկարագրական-պատճառաբանական մասի շարադրանքն ավարտվում է՝ նոր պարբերությունից վերոգրյալ պատճառաբանությունների ու նշված դատավարական նորմերի վկայակոչմամբ դատական ակտի նախորդող տեքստից մեկ տող բաց թողնելուց հետո էջի կենտրոնում մեծատառերով «ՈՐՈՇԵՑ» բառը տեղադրելով: Դրանից հետո, ևս մեկ տող բաց թողնելով, շարադրվում է որոշման եզրափակիչ մասը:

Որոշման **եզրափակիչ մասում** ձևակերպվում է քննարկվող հարցով դատարանի եզրահանգումը, որը ևս պետք է ունենա հստակ, միանշանակ, անպայմանական, հրամայական, կատեգորիկ բնույթ և բացառի որոշումը մեկնաբանելու անհրաժեշտությունը:

Որոշման եզրափակիչ մասը պետք է տեղեկություններ պարունակի որոշումը բողոքարկելու կարգի և ժամկետի մասին, եթե այն ենթակա է բողոքարկման, իսկ եթե որոշումը բողոքարկման ենթակա չէ, ապա նշում այդ մասին:

Ուշագրավ է, որ առանձին ակտի ձևով կայացվող որոշումների բովանդակությանը ներկայացվող հատուկ պահանջները սահմանվում են համապատասխան ինստիտուտները կարգավորող հատուկ նորմերում: Դրանք կարող են վերաբերել կայացվող դատական ակտի տարբեր մասերին և, անշուշտ, պետք է հաշվի առնվեն համա-

պատասխան դատական ակտերը կազմելիս<sup>148</sup>:

### **2.3. Վճարման կարգադրության կառուցվածքը և բովանդակությունը**

Վճարման կարգադրության կառուցվածքը և բովանդակությունը որոշելու հարցը դատավարագիտության մեջ խնդրահարույց են:

Վճարման կարգադրության բովանդակությանը ներկայացվող պահանջները սահմանվում են ՔԴՕ 312-րդ հոդվածի 1-ին մասով:

Դատական ակտի տվյալ տեսակի կառուցվածքն օրենքով չի կարգավորվում: Օրենսդիրը միայն սահմանել է այն տեղեկությունների շրջանակը, որոնք պետք է տեղ գտնեն վճարման կարգադրության մեջ:

Խնդրահարույց է, մեր կարծիքով, այն հանգամանքը, որ ՔԴՕ-ն վճարման կարգադրության կառուցվածքում չի նախատեսում պատճառաբանական մաս:

Հարկ է նկատել, որ ՀՀ դատարանների նախագահների խորհուրդը 2005 թ. դեկտեմբերի 8-ի թիվ 81 որոշմամբ հաստատել է ՀՀ դատարանների կողմից արձակվող վճարման կարգադրության օրինակելի ձևը, որը, ըստ էության, հստակեցնում էր վճարման կարգադրության կառուցվածքին և բովանդակությանը ներկայացվող պահանջները՝ դրանում նախատեսելով դատարանի պարտականությունը վճարման կարգադրության մեջ շարադրելու դիմումի ուսումնասիրության արդյունքում պարզված հանգամանքները (նկարագրական մաս), ինչպես նաև ներկայացված դրամական պահանջի որոշակի հիմքերից (օրենքից կամ պայմանագրից) առերևույթ բխելու և ՔԴՕ համապատասխան հոդվածի հիման վրա կարգադրություն արձակելու հանգամանքը (փաստական և իրավական հիմքեր):

---

<sup>148</sup> Տե՛ս, օրինակ, 65-րդ հոդ., մաս 4, 86-րդ հոդ., մաս 6, 87-րդ հոդ., մաս 4, 126-րդ հոդ., մաս 3, 127-րդ հոդ., մաս 3, 169-րդ հոդ., մաս 3, 174-րդ հոդ., մաս 1, 181-րդ հոդ., մաս 1, 183-րդ հոդ., մաս 3, 320-րդ հոդ., մաս 2, 325-րդ հոդ., մաս 2, 330-րդ հոդ., մաս 2, 335-րդ հոդ., մաս 2, 340-րդ հոդ., մաս 1, 345-րդ հոդ., մաս 1 և այլն:

ՌԴ ՔԴՕ 127-րդ հոդվածն էլ, սահմանելով դատական հրամանի բովանդակության չափանիշները, պահանջում է դրանում նշել այն օրենքը, որի հիման վրա բավարարվում է դիմումը՝ որևէ անդրադարձ չկատարելով հրամանի փաստական հիմքին:

Նման իրավական կարգավորումները որոշ դատավարագետների հիմք է տվել կարծիք հայտնելու, որ դատական հրամանը (այդ թվում՝ ՀՀ ՔԴՕ-ով նախատեսված և դրա տարատեսակ հանդիսացող վճարման կարգադրությունը) բաղկացած է միայն ներաձական, նկարագրական և եզրափակիչ մասերից:<sup>149</sup> Այլ դատավարագետներ գտնում են, որ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ դատարանը նշում է այն փաստական հանգամանքները, որոնց հիման վրա պահանջ է ներկայացվում, և օրենքը, որի հիման վրա պահանջը բավարարվում է (կարգադրությունն արձակվում է), վճարման կարգադրության մեջ առկա է նաև պատճառաբանական մաս, որը, սակայն, սեղմված և հակիրճ է շարադրվում<sup>150</sup>:

Ակնհայտ է, որ վճարման կարգադրությունը հիմնավորելու խիստ պահանջ օրենքը չի ներկայացնում: Դա պայմանավորված է կարգադրության վարույթի այն առանձնահատկությամբ, որ այստեղ հայցային վարույթի հիմնական կանոնները չեն կիրառվում, դատարանը գործը դատաքննության չի նախապատրաստում, ապացուցման առարկա չի որոշում, գործի ըստ էության քննություն դատական նիստում չի իրականացնում և, հետևաբար, չի կատարում ապացույցների հետազոտում, փաստերի հաստատում և չի անում իրավական եզրահանգումներ: Դատարանը կարգադրության վարույթի շրջանակներում վճարման կարգադրությունն արձակում է առանց պահանջի հիմնավորվածությունը ստուգելու, ուսումնասիրե-

---

<sup>149</sup> Տե՛ս, օրինակ, Комментарий к Гражданскому процессуальному кодексу Российской Федерации. Под ред. М. С. Шакарян, М., 2003, էջ 253, Гражданский процесс: Учебник, под ред. М. К. Треушников, М., 2003, էջ 392:

<sup>150</sup> Տե՛ս, օրինակ, Гражданский процесс: Учебник. Под ред. В.В. Яркова, М., 2004, էջ 399, *Загайнова С. К.*, Судебные акты в гражданском и арбитражном процессе: теоретические и прикладные проблемы. Дисс... д.ю.н., Екатеринбург, 2008, էջ 311-312:

լով միայն ներկայացված պահանջի համապատասխանությունը օրենքով սահմանված՝ վարույթի թույլատրելիության պահանջներին, պահանջի առերևույթ հիմնավորվածությունը և այն հաստատող ապացույցների առերևույթ արժանահավատությունը: Այդուհանդերձ, մեր կարծիքով, քանի որ քննարկվող դատական ակտն արձակելիս դատարանը հիմք է ընդունում որոշակի հանգամանքներ՝ թույլատրելիության պայմանների, պահանջի առերևույթ հիմնավորվածությունը և պահանջը հաստատող առերևույթ արժանահավատ ապացույցների առկայությունը, վճարման կարգադրության տեքստը պետք է պարունակի պատճառաբանական մաս, որից ուղղակիորեն բխում են այն փաստական և իրավական հիմքերը, որոնց հիման վրա համապատասխան դատական ակտն արձակվում է: Նման պահանջը, մեր կարծիքով, պետք է օրենսդրորեն ամրագրվի: Ասվածը հիմնավորվում է նաև հետևյալով:

Կարգադրության վարույթում դատարանն իրականացնում է իրավապահպան գործառույթ և դատական գործունեության արդյունքներն արտացոլում է վճարման կարգադրությունում: Այն, որ վճարման կարգադրությունն արձակվում է վեճի լուծման պարզեցված ընթացակարգի շրջանակներում, դեռևս չի նշանակում, որ դատարանը չպետք է հիմնավորի իր իշխանական պատվիրանը որոշակի հանգամանքներով և գործող օրենսդրության համապատասխան նորմերով, որոնց հիման վրա էլ կարելի է դատել ներկայացված պահանջի թեկուզև առերևույթ հիմնավորվածության մասին: Անկախ նրանից, թե ինչ ձևով է իրականացվում դատական գործունեությունը, նրա էությունը հանգում է նրան, որ դատարանը պետք է կոնկրետ դեպքի նկատմամբ կիրառի կոնկրետ իրավական նորմ և դրա հիման վրա բավարարի կամ մերժի դատական պաշտպանության պահանջը:

Ինչպես իրավացիորեն նշում է Ս. Կ. Զազայնովան, դատական ընթացակարգերի պարզեցումը չպետք է իրականացվի արդարադատության ակտերի ձևի և բովանդակության պարզեցման հաշվին,

դատական պաշտպանության ավանդական ընթացակարգի արագացումը չպետք է իրականացվի արդարադատության ակտերին ներկայացվող պահանջների նվազեցմամբ: Այդ կապակցությամբ հեղինակն առաջարկում է դատավարական օրենսդրությամբ սահմանել դատական հրամանի պարտադիր հակիրճ պատճառաբանման պահանջ, ըստ որի՝ դատավորը պետք է նշի ոչ միայն կիրառվող իրավական նորմը, այլ նաև համառոտակի շարադրի դիմողի կողմից ներկայացված ապացույցների գնահատումը, դատական հրամանն արձակելու շարժառիթները<sup>151</sup>: Նման դիրքորոշումը մենք լիովին հիմնավորված ենք համարում:

Այսպիսով, մեր կարծիքով, վճարման կարգադրությունը գործնականում ևս պետք է շարադրվի այն նույն կառուցվածքով, ինչ դատական մյուս ակտերը, սակայն այն առանձնահատկությամբ, որ դրա նկարագրական մասում հասկանալի պատճառներով պարտապանի իրավական դիրքորոշումը չի ներկայացվում, իսկ պատճառաբանական մասին ներկայացվում են փոքր-ինչ այլ պահանջներ, որոնք բխում են կարգադրության վարույթի առանձնահատկություններից: Հակառակ պարագայում հարկ է լրջորեն մտածել կարգադրության վարույթը դատական ենթակայության շրջանակներից հանելու և վճարման կարգադրությունների արձակումը նոտարական մարմինների իրավասությանը հանձնելու մասին<sup>152</sup>:

«Հ դատարանների նախագահների խորհրդի վերոնշյալ որոշման բավականին տևական գործողության և կիրառման արդյունքում վճարման կարգադրության կառուցվածքի և այն շարադրելու հարցում դատական պրակտիկայում ձևավորվել են միասնական մոտեցումներ, որոնք հանգում են հետևյալին:

Վճարման կարգադրության ներառական մասը շարադրելիս

<sup>151</sup> Տե՛ս *Зазайнова С. К.*, Судебные акты в гражданском и арбитражном процессе: теоретические и прикладные проблемы. Дисс... д.ю.н. Екатеринбург, 2008, էջ 312:

<sup>152</sup> Այդ գաղափարը, ի դեպ, լիովին ընդունելի ենք համարում՝ նկատի ունենալով կարգադրության վարույթի անվիճելի բնույթը և դատարանների գերծանրաբեռնվածության խնդիրը լուծելու օբյեկտիվ անհրաժեշտությունը:

դատարանը էջի վերին կենտրոնական մասում մեծատառերով նշում է «ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ» բառերը:

Հաջորդ տողի ձախ կողմում նշվում է վճարման կարգադրության արձակման օրը, ամիսը, տարեթիվը:

Բաց թողնելով մեկ տող՝ էջի կենտրոնում նշվում են վճարման կարգադրության արձակող դատարանի անվանումը, այնուհետև՝ տեղեկություններ այն արձակող դատավորի, դիմողի, պարտապանի, ինչպես նաև այն դրամական գումարի վերաբերյալ, որը վճարելու մասին վճարման կարգադրություն արձակելու պահանջ է ներկայացվել դատարան:

Գործնականում դատարանները տվյալ դատական ակտի հարկադիր կատարման ընթացքում հնարավոր բարդությունների առաջացումը կանխելու նպատակով նշում են նաև նրանց անհատականացնելու հնարավորություն տվող այլ տեղեկություններ (անձը հաստատող փաստաթղթի, սոցիալական քարտի, պետական գրանցման, ՀՎՀՀ-ի մասին):

Նշված տեղեկությունները շարադրելուց հետո, բաց թողնելով մեկ տող, էջի կենտրոնում մեծատառերով գրվում է «ՊԱՐԶԵՑ» բառը, որով ավարտվում է վճարման կարգադրության ներածական մասը, և սկսվում են նկարագրական և պատճառաբանական մասերը:

Վճարման կարգադրության **նկարագրական մասում** դատարանը շարադրում է վճարման կարգադրություն արձակելու դիմումի հակիրճ բովանդակությունը և նշումներ է կատարում պահանջի հիմնավորվածությունը հաստատելու համար դիմողի կողմից դիմումին կից ներկայացված փաստաթղթերի մասին: Այլ կերպ ասած՝ վճարման կարգադրության քննարկվող մասում դատավորը շարադրում է դիմողի իրավական դիրքորոշումը, մասնավորապես՝ տեղեկություններ այն մասին, թե կողմերի միջև ինչպիսի իրավահարաբերություն է ծագել, ինչից է այն բխում (օրենքից, պայմանագրից), որ իրավաբանական փաստերի ուժով է պարտապանի մոտ ծագել վճարում

կատարելու պարտականությունը, որքան է կազմում պարտքի գումարը, ինչպիսի փաստաթղթերով (ապացույցներով) է դիմողը հաստատում այդ փաստերը, որ իրավական նորմերից է բխում նման պահանջ ներկայացնելու իրավունքը և այլն:

Վճարման կարգադրության **պատճառաբանական մասը** սկսվում է «Ուսումնասիրելով ներկայացված դիմումը և կից փաստաթղթերը՝ դատարանը գտնում է, որ...» արտահայտությամբ: Պատճառաբանական մասը շարադրելիս դատարանը քննարկվող մասում պետք է ներառի՝

1. իր եզրահանգումը՝ վճարման կարգադրություն արձակելու թույլատրելիության պայմանների առկայության մասին (պահանջի դրամական և որոշակի բնույթը):

2. նշում այն մասին, որ ներկայացված պահանջն առերևույթ հիմնավորված է, և պահանջը հաստատող ապացույցներն առերևույթ արժանահավատ են:

3. նշում առ այն, որ դատարանն ըստ էության չի ստուգել պահանջի հիմնավորվածությունը:

4. նշումներ այն նյութափրավական հիմքերի և դատավարական նորմերի մասին, որոնցով դատարանը ղեկավարվել է վճարման կարգադրություն արձակելիս:

Գործող ՔԴՕ-ն պարտադիր չի համարում վճարման կարգադրության մեջ նշումներ կատարելն այն մասին, որ ներկայացված պահանջը առերևույթ հիմնավորված է, և պահանջը հաստատող ապացույցներն առերևույթ արժանահավատ են: Չի ներկայացվում վճարման կարգադրություն արձակելիս այն նյութափրավական հիմքերը վկայակոչելու պարտականությունը, որոնցով դատարանը ղեկավարվել է վճարման կարգադրություն արձակելիս: Սակայն, մեր կարծիքով, ինչպես վերն արդեն նշել ենք, նշված տեղեկությունները վճարման կարգադրության պատճառաբանական մասում զետեղելը մեծապես կարող է նպաստել տվյալ տեսակի դատական ակտի հեղինակության բարձրացմանը՝ ընդգծելով դրա իրավապահպան



նշանակությունը:

Վճարման կարգադրության **եզրափակիչ մասը** պետք է պարունակի ՔԴՕ 312-րդ հոդվածի 2-րդ մասի 2-4 կետերով սահմանված տեղեկությունները, մասնավորապես՝

1. կարգադրություն՝ երկու շաբաթվա ընթացքում կատարելու հետևյալ գործողություններից որևէ մեկը՝

ա. կատարել վճարման պահանջը, եթե պատասխանողը պահանջը հիմնավորված է համարում,

բ. առաջին ատյանի դատարանին ներկայացնել գրավոր առարկություն, եթե պարտապանը ներկայացված պահանջը մի մասով համարում է չհիմնավորված՝ մյուս մասով կատարելով վճարման պահանջը,

գ. առաջին ատյանի դատարանին ներկայացնել գրավոր առարկություն, եթե պարտապանը ներկայացված պահանջը համարում է չհիմնավորված.

2. նշում այն մասին, որ առարկություն ներկայացնելու դեպքում պահանջի վիճարկված մասը կարող է քննվել ըստ էության հայցալիսին վարույթի կարգով, որի դեպքում պարտվող կողմը կրելու է դատական ծախսերը,

3. նշում այն մասին, որ վճարման կարգադրությունն ստանալու պահից երկշաբաթյա ժամկետում առարկություն չներկայացնելու դեպքում վճարման կարգադրությունն ստանում է օրինական ուժի մեջ մտած վճռի ուժ և ենթակա է հարկադիր կատարման:

## ԳԼՈՒԽ III

### ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՅԱՑՎՈՂ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆ ՈՒԺԸ

#### ***§1. Դատական ակտերի օրինական ուժի մեջ մտնելու հասկացությունը և ժամկետները***

Իսախտված կամ վիճարկվող իրավունքի (օրինական շահի) դատական պաշտպանությունն ավարտվում է եզրափակիչ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու պահից: Այդ պահից էլ սկսվում է դատական ակտի իրավական գործողությունը: Քաղաքացիական գործով պարզված փաստական հանգամանքների նկատմամբ իրավական նորմերի կիրառման արդյունքում դատական ակտում արտահայտված պետաիշխանական կամահայտնության ուժով վիճելի իրավահարաբերությունները դառնում են անվիճելի, ապահովվում են այդ իրավահարաբերությունների որոշակիությունը և քաղաքացիական շրջանառության կայունությունը:

Դատական ակտի իրավական գործողությունը դատավարագիտության մեջ ավանդաբար կոչվում է օրինական ուժ: Այդ իրավական գործողության ընթացքում իրացվում են դատական ակտի բազմազան որակներն ու հատկանիշները, որոնք հիմնված են դատարանի իշխանական լիազորությունների վրա:

Դատական ակտի օրինական ուժի ինստիտուտը և օրինական ուժի մեջ մտնելու իրավական հետևանքները սերտորեն կապված են «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով երաշխավորված իրավունքի գերակայության, ներառյալ իրավական որոշակիության սկզբունքների հետ:

Արդար դատաքննության իրավունքը պահպանված է համարվում այն դեպքում, երբ անձը հնարավորություն ունի ստանալու որո-

շակի, հաստատուն որոշում՝ կապված իր իրավունքների և պարտականությունների հետ, և կարող է համոզված լինել, որ որոշ ժամանակ անց այդ որոշումը չի վերացվի:

Թե՛ ՄԻԵԴ-ը, թե՛ Վճռաբեկ դատարանը իրավական դիրքորոշում են արտահայտել, որ իրավական որոշակիության սկզբունքը ենթադրում է «res judicata» սկզբունքի, այն է՝ դատական ակտերի վերջնական լինելու սկզբունքի պահպանում, որի բովանդակությունն են կազմում հետևյալ հիմնադրույթները.

1. դատարանների կողմից կայացված վերջնական դատական որոշումները ենթակա չեն վերանայման,

2. անթույլատրելի է դատարանի կողմից արդեն մեկ անգամ լուծված գործի կրկնակի քննություն,

3. կողմերից ոչ մեկը չի կարող պահանջել վերջնական դատական ակտերի վերանայում՝ միայն կրկնակի քննության իրականացման և նոր ակտի կայացման նպատակով,

4. վերջնական դատական ակտի վերանայումը նահանջ չէ իրավական որոշակիության սկզբունքից, եթե այն իրականացվում է դատական սխալի ուղղման նպատակով,

5. վերանայումը չի կարող լինել բողոքարկման քողարկված ձև, իսկ գործի նկատմամբ կողմերի հակադիր հայացքների առկայությունն ինքնին չի կարող հիմք ծառայել վերջնական դատական ակտի վերանայման համար<sup>153</sup>:

Առաջին ատյանի դատարանի դատական ակտի իրավական գործողությունը, որպես կանոն, սկսվում է օրենքով սահմանված ժամկետն անցնելուց հետո: Վերջինիս ավարտն ավանդաբար կոչվում է օրինական ուժի մեջ մտնելու պահ: Այդ պահից էլ դատական ակտը դառնում է վերջնական, քանի որ սպառվում է դրա հետագա բողոքարկման ու վերանայման հնարավորությունը, և այն ձեռք է

---

<sup>153</sup> Տե՛ս Բրումարեսկուն ընդդեմ Ռումինիայի գործով ՄԻԵԴ 28.10.1999 թ. վճիռը, Վճռաբեկ դատարանի թիվ ԱԲԴ/0062/02/09 քաղաքացիական գործով 13.02.2009թ. որոշումը:

բերում իրավական ակտի որոշակիության հատկանիշ՝ խիստ որոշակիացնելով վեճի կողմերի սուբյեկտիվ իրավունքները և պարտականությունները, վերջնականորեն դադարեցնելով սուբյեկտիվ իրավունքի (փաստի) մասին վեճը:

Օրինական ուժը դատական ակտի իրավական որոշակիության արտահայտումն է<sup>154</sup>: Մտնելով օրինական ուժի մեջ՝ դատական ակտը ձեռք է բերում օրենքի ուժ, կողմերի համար դառնում է «մասնավոր օրենք», խիստ որոշակի վարքագծի կոնկրետ կանոններ սահմանող անհատական իրավական ակտ, որը, ընդհանուր կանոնի համաձայն, չի կարող վերանայվել ոչ՝ այն կայացնող դատարանի և ո՛չ էլ վերադաս աստիանների կողմից:

Հենց օրինական ուժի մեջ մտնելու պահից են դատական ակտերը ստանում վերջնական բնույթ՝ կարգավորելով որոշակի հարաբերություններ, դառնում պարտադիր և ապահովվում պետական հարկադրանքի ուժով, իսկ դրանց վերանայումը հնարավոր է դառնում միայն արդարադատության կամ դատական սխալի ուղղման նպատակով՝ օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով<sup>155</sup>:

Ընդհանուր կանոնի համաձայն՝ **վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո** (ՔԴՕ 198 հոդ., մաս 1):

Այս կանոնից օրենքը սահմանում է երկու խումբ բացառություններ, այն է՝ դեպքեր, երբ վճիռն օրինական ուժի մեջ է մտնում.

- 1) կրճատ ժամկետներում,
- 2) հրապարակման պահից:

Օրինական ուժի մեջ մտնելու **կրճատ ժամկետներ** են սահմանված՝

---

<sup>154</sup> Տե՛ս **Сахнова Т. В.**, Курс гражданского процесса: теоретические начала и основные институты, М.: «Волтерс Клувер», 2008, էջ 451:

<sup>155</sup> Տե՛ս **Հովհաննիսյան Վ. Վ.**, Վերաքննության կարգով դատական ակտերի վերանայման հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում, Եր., ԵՊՀ հրատ., 2013, էջ 500:

- պարզեցված վարույթի կարգով կայացված վճիռների համար՝ հրապարակման պահից 15 օր հետո (ՔԴՕ 302 հոդ., մաս 3),
- արագացված դատաքննության կիրառմամբ կայացված վճիռների համար՝ հրապարակման պահից 15 օր հետո (ՔԴՕ 305 հոդ., մաս 4)<sup>156</sup>,
- ՀՀ անօրինական տեղափոխված կամ ՀՀ-ում ապօրինի պահվող երեխայի վերադարձի պահանջներով հատուկ հայցային վարույթի կարգով կայացված վճիռների համար՝ հրապարակման պահից 7 օր հետո (ՔԴՕ 209 հոդ., մաս 3):

Հաշվի առնելով մի շարք հանգամանքներ (իրավունքի կամ օրենքով պահպանվող շահի պաշտպանության անհետաձգելիությունն ու արդարադատության արդյունավետությունն ապահովելու անհրաժեշտությունը, վճիռը բողոքարկելու հավանականության ցածր աստիճանը կամ նման հնարավորության բացակայությունը և այլն)՝ օրենսդիրը նախատեսել է մի շարք դեպքեր, երբ գործով կայացված վճիռն օրինական ուժի մեջ է մտնում **հրապարակման պահից:**

Մասնավորապես, հրապարակման պահից են օրինական ուժի մեջ մտնում՝

1) գործի վարույթը հաշտության համաձայնությամբ ավարտելու մասին վճիռները (ՔԴՕ 198 հոդ., մաս 5), այդ թվում՝ հարկադիր կատարողի դիմումով կողմերի հաշտության համաձայնության հիման վրա դատարանի վճռի վերանայման վերաբերյալ դիմումի քննության արդյունքում կայացված վճիռը (ՔԴՕ 287 հոդ., մաս 3) և արտոնագրված հաշտարարի մասնակցությամբ արտադատական

<sup>156</sup> Բացառություն են նվազագույն աշխատավարձի հիսնապատիկը չգերազանցող գումար բռնագանձելու վերաբերյալ պահանջ ներկայացված լինելու հիմքով արագացված դատաքննության կիրառմամբ կայացված վճիռները, որոնք, ՔԴՕ 198-րդ հոդվածի 7-րդ մասին համապատասխան, օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից:

կարգով կնքված հաշտության համաձայնությունը հաստատելու հաստատելու մասին վճիռը (ՔԴՕ 291 հոդ., մաս 3).

2) ալիմենտ բռնագանձելու, ինչպես նաև կերակրողին կորցնելու դեպքում վնասի հատուցման վերաբերյալ վճիռները (ՔԴՕ 198 հոդ., մաս 6).

3) այն վճիռները, որոնք կայացվում են այնպիսի գործերով, որոնցում հայցագինը կամ դրամական արտահայտությամբ գնահատված հայցի առարկայի արժեքը չի գերազանցում նվազագույն աշխատավարձի հիսնապատիկը (ՔԴՕ 198 հոդ., մաս 7).

4) քաղաքացուն հոգեբուժական կազմակերպություն ոչ հոժարակամ հոսպիտալացման ենթարկելու վերաբերյալ դիմումի քննության արդյունքում կայացված վճիռը (ՔԴՕ 270 հոդ., մաս 1).

5) քաղաքացուն բժշկական ոչ հոժարակամ հետազոտության և (կամ) բուժման ենթարկելու վերաբերյալ դիմումի քննության արդյունքում կայացված վճիռը (ՔԴՕ 275 հոդ., մաս 4), ինչպես նաև քաղաքացուն ոչ հոժարակամ բուժման ենթարկելու վերաբերյալ նախկինում կայացված վճիռը վերացնելու մասին վճիռը (ՔԴՕ 276 հոդ., մաս 2):

Բոլոր այլ դեպքերում առաջին ատյանի դատարանի կայացրած վճիռն օրինական ուժի մեջ է մտնում ընդհանուր կանոնին համապատասխան, այն է՝ հրապարակման պահից մեկ ամիս հետո:

Մինչույն ժամանակ հարկ է նկատի ունենալ, որ օրենսդիրը դատարանին լիազորություն է վերապահել՝ բացառիկ դեպքերում վճիռը հրապարակման պահից հայտարարելու օրինական ուժի մեջ մտած, եթե դա չանելն անխուսափելիորեն կառաջացնի ծանր հետևանքներ գործին մասնակցող անձի համար (ՔԴՕ 198 հոդ., մաս 9): Ուշագրավ է, որ նման լիազորություն նախատեսելու հետ մեկտեղ օրենքով սահմանվել են դրա իրականացման որոշակի պայմաններ, որոնց միաժամանակյա առկայության պարագայում միայն վճիռը դատարանի կողմից կարող է հայտարարվել հրապարակման պահից օրինական ուժի մեջ մտած: Այդ պայմանները հանգում են

հետևյալին.

ա. դատական ակտին իրավական գործողություն տալը պետք է հետապնդի գործին մասնակցող անձի համար ծանր հետևանքների առաջացումը, այն է՝ նա գույքին, կյանքին, առողջությանը, իրավունքներին կամ օրենքով պահպանվող շահերին սպառնացող անդառնալի վնասը կանխելու նպատակ.

բ. գործին մասնակցող անձի համար ծանր հետևանքների առաջացումը պետք է լինի ոչ թե հավանական, այլ անխուսափելի.

գ. դատական ակտին հրապարակման պահից իրավական գործողություն տալը պետք է լինի միակ գործիքը, որը թույլ կտա կանխելու գործին մասնակցող անձի համար ծանր հետևանքների առաջացումը: Եթե գործին մասնակցող անձի համար ծանր հետևանքների առաջանալու վտանգը «չեզոքացվում» է կիրառված և վճռահատությունից հետո պահպանվող հայցի ապահովմամբ, կայացված վճիռը չի կարող հրապարակման պահից հայտարարվել օրինական ուժի մեջ մտած:

Ակնհայտ է, որ քննարկվող լիազորությունը պետք է կիրառվի բացառիկ դեպքերում (դա, ի դեպ, շեշտվում է ՔԴՕ 198-րդ հոդվածի 9-րդ մասում): Ավելին, վճռին ներկայացվող հիմնավորվածության և պատճառաբանվածության պահանջներից բխում է, որ դատարանը պարտավոր է հրապարակման պահից վճիռն օրինական ուժի մեջ մտած հայտարարելու անհրաժեշտությունը հիմնավորվել և պատճառաբանել դրա պատճառաբանական մասում:

Հատկանշական է, որ հրապարակման պահից օրինական ուժի մեջ մտած կարող է հայտարարվել բացառապես առաջին ատյանի դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտը՝ վճիռը. նշված ինստիտուտը կիրառելի չէ այլ եզրափակիչ դատական ակտերի նկատմամբ:

Առաջին ատյանի դատարանի **այլ եզրափակիչ դատական ակտերն** օրինական ուժի մեջ են մտնում հատուկ ժամկետներում, եթե ՔԴՕ-ով նախատեսված չէ, որ դրանք օրինական ուժի մեջ են

մտնում հրապարակման պահից:

Այսպես, օրինական ուժի մեջ մտնելու *հալոսկ ժամկետներ* են սահմանված հետևյալ եզրափակիչ որոշումների համար.

1) հայցը կամ դիմումն առանց քննության թողնելու մասին որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից յոթ օր հետո (ՔԴՕ 181 հոդ., մաս 3),

2) գործի վարույթը կարճելու մասին որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո (ՔԴՕ 183 հոդ., մաս 4),

2) պարզեցված վարույթի կարգով կայացված գործի վարույթը կարճելու մասին որոշումն օրինական ուժի մեջ է մտնում այն հրապարակելու պահից 15 օր հետո (ՔԴՕ 302 հոդ., մաս 3),

3) արագացված դատաքննության կիրառմամբ կայացված գործի վարույթը կարճելու մասին որոշումն օրինական ուժի մեջ է մտնում այն հրապարակելու պահից 15 օր հետո (ՔԴՕ 305 հոդ., մաս 4),

4) օտարերկրյա արբիտրաժի վճիռների ճանաչման և հարկադիր կատարման վերաբերյալ դիմումների քննության արդյունքում կայացված որոշումներն օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից յոթ օր հետո (ՔԴՕ 330 հոդ., մաս 3),

5) ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու և ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումների քննության արդյունքում կայացված որոշումներն օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից յոթ օր հետո (ՔԴՕ 340 հոդ., մաս 3, 345 հոդ., մաս 4),

6) օտարերկրյա դատական ակտը ճանաչելու և կատարման թույլատրելու վերաբերյալ դիմումի քննության արդյունքում կայացված որոշումներն օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից յոթ օր հետո (ՔԴՕ 356 հոդ., մաս 2):

*Հրապարակման պահից* են օրինական ուժի մեջ մտնում ար-



բիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու, արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու, արբիտրաժին դատական աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ դիմումների քննության արդյունքում կայացված որոշումները (ՔԴՕ 320 հոդ., մաս 3, 325 հոդ., մաս 3, 335 հոդ., մաս 5):

Հարկ է նկատի ունենալ, որ եզրափակիչ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետի ընթացքում դրա դեմ վերաքննիչ բողոք բերելու դեպքում բողոքարկված եզրափակիչ դատական ակտն օրինական ուժի մեջ չի մտնում<sup>157</sup>:

ՔԴՕ 198-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վճիռը բողոքարկվելու և վերաքննիչ դատարանի կողմից մասնակի բեկանվելու դեպքում վճռի չբեկանված մասն օրինական ուժի մեջ է մտնում վերաքննիչ դատարանի համապատասխան որոշումն ուժի մեջ մտնելու պահից<sup>158</sup>: Ըստ նույն հոդվածի 4-րդ մասի՝ վճիռը բողոքարկվելու և վերաքննիչ դատարանի կողմից վերաքննիչ բողոքը վերադարձնելու կամ դրա ընդունումը մերժելու դեպքում դատարանի վճիռն օրինական ուժի մեջ է մտնում վերաքննիչ բողոքը վերադարձնելու կամ դրա ընդունումը մերժելու մասին որոշումը բողոքարկելու համար սահմանված ժամկետն ավարտվելու պահից, իսկ եթե վերաքննիչ դատարանի համապատասխան որոշումը բողոքարկվում է Վճռաբեկ դատարան, ապա՝ Վճռաբեկ դատարանի կողմից վճռաբեկ բողոքը վերադարձվելու, առանց քննության թողնվելու, վարույթ ընդունելը մերժվելու կամ վճռաբեկ բողոքը մերժվելու պահից<sup>159</sup>:

---

<sup>157</sup> Նշվածը չի վերաբերում այն եզրափակիչ դատական ակտերին, որոնք օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից կամ մտել են օրինական ուժի մեջ սահմանված ժամկետը լրանալու փաստի ուժով: Նման դատական ակտերի հետագա բողոքարկումը չի ազդում դրանց իրավական գործողության վրա: Հարկ է, սակայն, նկատի ունենալ, որ ՔԴՕ 370-րդ հոդվածի 5-րդ մասով օրենսդիրը վերաքննիչ դատարանին վերապահել է լիազորություն՝ նման դատական ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու դեպքում ամբողջությամբ կամ մասնակիորեն կասեցնելու բողոքարկված դատական ակտի կատարումը:

<sup>158</sup> Մանրամասները տե՛ս ՔԴՕ 387-րդ հոդվածում:

<sup>159</sup> Վճռաբեկ դատարանի ակտն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պա-

Առաջին ատյանի դատարանի միջանկյալ դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում կայացման պահից, եթե օրենքով այլ ժամկետ սահմանված չէ (ՔԴՕ 199 հոդ., մաս 4): Հարկ է նկատել, որ օրինական ուժի մեջ մտնելու հատուկ ժամկետ սահմանված է միայն ՔԴՕ 154-րդ հոդվածի 4-րդ մասով, որի համաձայն՝ նկատողությունը և դատական նիստերի դահլիճից հեռացնելը կիրառվում են նույն դատական նիստում կայացվող դատարանի արձանագրային որոշմամբ, որն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՔԴՕ 314-րդ հոդվածի համաձայն՝ **վճարման կարգադրությունը** ստանում է օրինական ուժի մեջ մտած վճոի ուժ, երբ պարտապանի կողմից վճարման կարգադրությունն ստանալու օրվանից հետո՝ երկու շաբաթվա ընթացքում, դատարանում չի ստացվում դրա դեմ առարկություն:

## ***§2. Առաջին ատյանի դատարանի դատական ակտերի օրինական ուժի մեջ մտնելու հետևանքները***

Օրինական ուժի մեջ մտնելու պահից սկսվում է դատական ակտի իրավական գործողությունը: Օրինական ուժի մեջ մտնելով՝ դատական բոլոր ակտերը ձեռք են բերում որոշակի հատկանիշներ, որոնք կոչվում են նաև օրինական ուժի իրավական հետևանքներ: Կախված դատական ակտի տեսակից՝ օրինական ուժի հետևանքները տարբեր են, սակայն միևնույն տեսակի դատական ակտերն իրենց իրավական գործողության ընթացքում ունեն միևնույն հատկանիշները:

### **2.1. Եզրափակիչ դատական ակտի օրինական ուժի հետևանքները**

Դատական ակտերի՝ օրինական ուժի մեջ մտնելու իրավական հետևանքների հարցը լայնորեն քննարկվում է դատավարագիտությամբ:

---

ից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման (ՔԴՕ 408 հոդ.):

յան մեջ<sup>160</sup>:

Արտահայտված տեսակետների, գործող օրենսդրության և ՄԻԵԴ դիրքորոշումների վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնելու օրինական ուժի մեջ մտած, այսինքն՝ վերջնական դարձած դատական ակտերի մի շարք հատկանիշներ, որոնք դիտարկվում են որպես օրինական ուժի մեջ մտնելու (դատական ակտի իրավական գործողության) հետևանքներ: Դրանք են՝

1. անհերքելիությունը,
2. բացառիկությունը,
3. նախադատելիությունը,
4. պարտադիրությունը,
5. կատարելիությունը:

Առաջին ատյանի դատարանի օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտերի նշված հատկանիշները կարելի է բաժանել երկու խմբի՝

---

<sup>160</sup> Տե՛ս, օրինակ, **Авдюков М. Г.**, Судебное решение, М., «Госюриздат», 1959, **Гурвич М. А.**, Судебное решение: теоретические проблемы, М., 1976, **Масленникова Н. И.**, Законная сила судебного решения в советском гражданском процессуальном праве. Автореф. дис.... к.ю.н. Свердловск, 1975, **Завадская Л. Н.**, Реализация судебных решений, М., 1982, **Зейдер Н. Б.**, Судебное решение по гражданскому делу, М., 1966, **Чечина Н. А.**, Норма права и судебное решение, ЛГУ, 1961, **Чечот Д. М.**, Постановления суда первой инстанции по гражданским делам, М., «Госюриздат», 1958, **Клинова Е. В.**, Проявление законной силы судебного решения. Автореф. дис. ... к.ю.н., М., 2004, **Князев А. А.**, Законная сила судебного решения. Автореф. дис. ... к.ю.н., М., 2004, **Невский И. А.**, Исполнимость постановлений судов общей юрисдикции и арбитражных судов в контексте задач гражданского судопроизводства. Дис. ... к.ю.н., Саратов, 2005; **Скобелев В. П.**, Законная сила постановлений суда первой инстанции в гражданском процессе. Автореф. дис. ... к.ю.н., Минск, 2005, **Загайнова С. К.**, Судебные акты в гражданском и арбитражном процессе: теоретические и прикладные проблемы. Дисс... д.ю.н., Екатеринбург, 2008, **Պեփրոսյան Ռ. Գ.**, Հայաստանի քաղաքացիական դատավարություն, երկրորդ հրատ., Եր., Երևանի համալս. հրատ., 2003, **Պեփրոսյան Ռ. Գ.**, Հայաստանի քաղաքացիական դատավարություն, երրորդ հրատ., Եր., Երևանի համալս. հրատ., 2007, **Դավթյան Ա. Հ.**, Քաղաքացիական դատավարություն, Եր., «Տիգրան Մեծ» հրատ., 2007, **Հովհաննիսյան Վ. Վ.**, Վերաքննության կարգով դատական ակտերի վերանայման հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում, Եր., ԵՊՀ հրատ., 2013 և այլն:

ա) հատկանիշներ, որոնք ապահովում են դատական ակտի կայունությունը,

բ) հատկանիշներ, որոնք ուղղակիորեն ապահովում են դատական ակտով սահմանված պետաիշխանական պատվիրանների կենսագործումը, իրավունքի սուբյեկտների խախտված կամ վիճարկվող իրավունքների, ազատությունների և օրինական շահերի ռեալ պաշտպանությունը և քաղաքացիական շրջանառության կայունությունը:

Դատական իշխանության իրավական անորոշությունը վերացնելու գործառույթի իրացման համար, ինչի արդյունքում պաշտպանվում են քաղաքացիների և կազմակերպությունների խախտված կամ վիճարկվող իրավունքները և օրինական շահերը, անհրաժեշտ է ապահովել գործով կայացված եզրափակիչ (վերջնական) դատական ակտի կայունությունը: Դատական ակտի կայունությունն ապահովվում է օրինական ուժի այնպիսի հատկանիշների գործողությամբ, ինչպիսիք են անհերքելիությունը, բացառիկությունը և նախադատելիությունը:

Դատական ակտի ***անհերքելիությունը*** դրա կայունության ապահովման ուղղված հատկանիշն է:

Տվյալ հատկանիշի հիմքում նախևառաջ դրված է այն գաղափարը, որ «դատարանը չի կարող հերքել ինքն իրեն»: *Անհերքելիության հատկանիշի ուժով առաջին արյանի դատարանի եզրափակիչ դատական ակտը վերաքննության կարգով բողոքարկելու ժամկետը լրանալուց պահից ավարտվում է տվյալ քաղաքացիական գործի վարույթը, և դատական ակտ կայացրած դատարանն իրավունք չունի փոխելու կամ լրացնելու այն*: Օրենսդիրը սահմանում է, որ վճիռը կայացնող դատարանն իրավունք ունի օրինական ուժի մեջ մտած վճռում կատարելու միայն վրիպակների, գրասխալների և թվաբանական սխալների ուղղում (ՔԴՕ 197 հոդ.), սակայն քննարկվող հատկանիշի ուժով չեն կարող փոփոխվել օրինական ուժի մեջ մտած դատական ակտի բովանդակությունը և էությունը:

Եզրափակիչ դատական ակտի անհերքելիությունն ունի նաև այլ դրսևորում: Մասնավորապես, *եթե դատական ակտը բողոքարկելու իրավունք ունեցող անձինք սահմանված ժամկետում չեն իրականացնում այդ իրավունքը, ապա դատական ակտը դառնում է վերջնական և ընդհանուր կանոնի համաձայն՝ չի կարող բողոքարկվել և վերանայվել վերադաս դատական արյանների կողմից*: Տվյալ կանոնից ՔԴՕ-ն նախատեսում է օբյեկտիվ անհրաժեշտություն համարվող երեք բացառություն, որոնք, ըստ էության, դատական պաշտպանության իրավունքի կարևոր երաշխիքներ են:

Առաջինը՝ վերաքննիչ բողոք բերելու ժամկետի խախտմամբ բերված բողոքը վերաքննիչ դատարանը կարող է ընդունել վարույթ, եթե ներկայացված է համապատասխան ժամկետի բացթողումը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդություն, և այն դատարանի կողմից բավարարվել է (ՔԴՕ 119 հոդ., մաս 1, 4):

Երկրորդ բացառությունը սահմանված է այն դեպքերի համար, երբ դատական ակտը բողոքարկում են գործին մասնակից չդարձված այն անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ այն կայացվել է: Նշված անձինք իրավունք ունեն վերաքննիչ բողոք բերելու՝ այն օրվանից սկսած՝ երեք ամսվա ընթացքում, երբ իմացել են կամ կարող էին իմանալ նման դատական ակտի կայացման մասին (ՔԴՕ 362 հոդ., մաս 5)՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո անցել է 20 տարի (ՔԴՕ 362 հոդ., մաս 7):

Երրորդ բացառությունն այն է, որ այն դեպքերում, երբ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը բողոքարկվում է նոր կամ նոր երևան եկած հանգամանքներով, վերաքննիչ բողոքը կարող է ներկայացվել՝ այն օրվանից սկսած՝ երեք ամսվա ընթացքում, երբ բողոք բերող անձն իմացել է կամ կարող էր իմանալ դրանց ի հայտ գալու մասին (ՔԴՕ 420 հոդ., մաս 1), բացառությամբ այն դեպքերի, երբ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո անցել է 20 տարի (ՔԴՕ 420 հոդ., մաս 2, 362 հոդ., մաս 7):

Առաջին ատյանի դատարանի եզրափակիչ դատական ակտի անհերքելիության կարևորագույն երաշխիքներից է նաև այն, որ վերաքննության կարգով բողոքարկված դատական ակտը կարող է ամբողջովին կամ մասամբ բեկանվել (փոփոխվել) բացառապես օրենքով նախատեսված և վերաքննիչ բողոքում վկայակոչված հիմքերով և հիմնավորումներով (ՔԴՕ 363-366 հոդ., 379 հոդ., մաս 1):

Եզրափակիչ դատական ակտի կայունությունն ապահովելուն ուղղված հատկանիշներից է **բացառիկությունը**: Վարույթը տվյալ ատյանում եզրափակող դատական ակտի վերջնական ու անհերքելի բնույթով պայմանավորված է օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտով լուծված պահանջներին նույնական պահանջներ միևնույն հիմքերով նույն անձի դեմ ներկայացնելու, դատարանի կողմից այդ պահանջները քննելու և լուծելու օրենսդրական արգելքը, որը դրսևորվում է հենց դատական ակտի բացառիկության մեջ: Վերջինս նախևառաջ նրանում է, որ *օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտը բացառում է լուծված հայցին (դիմումին) նույնական երկրորդ հայցի (դիմումի) ներկայացումը, քննությունը և լուծումը*:

Գործող քաղաքացիադատավարական օրենսդրության մեջ եզրափակիչ դատական ակտի քննարկվող հատկանիշն արտահայտվում է հայցադիմումի (դիմումի) ընդունումը մերժելու և գործի վարույթը կարճելու ինստիտուտներում: Մասնավորապես, ՔԴՕ 126-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ հայցադիմումի ընդունումը մերժվում է, եթե նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն փաստական հիմքերով գործի վերաբերյալ առկա է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտ՝ բացառությամբ հայցը (դիմումը) առանց քննության թողնելու մասին որոշման<sup>161</sup>, իսկ ՔԴՕ 1-ին մասի 2-րդ կետում նույն հիմքը դիտարկ-

---

<sup>161</sup> Գործող դատավարական օրենսդրությունը հայցը (դիմումը) առանց քննության թողնելը չի դիտարկում որպես նույնական հայցով (դիմումով) կրկին դատարան դիմելու արգելք: Հայցը (դիմումը) առանց քննության թողնելու հիմքերը վերանալուց հե-

վում է որպես գործի վարույթը կարճելու հիմք:

Եզրափակիչ դատական ակտի բացառիկությունն այն է, որ *օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտը բացառում է ոչ միայն նույնական երկրորդ հայցի (դիմումի) ներկայացումը, քննությունը և լուծումը, այլ նաև վարչական վարույթի հարուցումը*: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարուցված վարչական վարույթը կարճվում է, եթե պարզվում է, որ առկա է միևնույն անձի, միևնույն առարկայի վերաբերյալ և միևնույն հիմքերով ուժի մեջ մտած դատական ակտ: Ընդ որում, ըստ նույն հոդվածի 4-րդ մասի՝ տվյալ հիմքով վարչական վարույթը կարճելու դեպքում նույն հարցով վարույթի վերսկսում և համապատասխան վարչական ակտի ընդունում չի թույլատրվում:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ նույնական հայց (դիմում) ներկայացնելու արգելքը վերաբերում է ոչ միայն գործին մասնակցող անձանց, այլ նաև նրանց իրավահաջորդներին: Բացի դրանից, եթե գործը հարուցվել, քննվել և լուծվել է այլ անձի իրավունքների պաշտպանությամբ հանդես եկող անձանց հայցով (դիմումով), դատական ակտի բացառիկությունը տարածվում է նաև այն անձի վրա, որի իրավունքների պաշտպանության նպատակով հայցը (դիմումը) ներկայացվել է: Ընդ որում, որևէ նշանակություն չունի այն հանգամանքը, որ տվյալ անձը գործի քննությանը չի մասնակցել, քանի որ նման գործերով նա ունի հայցվորի դատավարական կարգավիճակ և որպես այդպիսին ներգրավվում է գործի քննությանը: Ասվածը հավասարապես վերաբերում է նաև այն անձին, որի անունից դատարանում հանդես է գալիս դատական ներկայացուցիչը (օրենքի կամ պայմանագրի հիման վրա կամ ի պաշտոնե):

---

տո անձը զրկված չէ միևնույն հիմքերով նույն պահանջն ընդհանուր հիմունքներով կրկին դատարան ներկայացնելու հնարավորությունից: Նշված հանգամանքը հիմք է տալիս եզրակացնելու, որ հայցը (դիմումը) առանց քննության թողնելու մասին եզրափակիչ դատական ակտը զուրկ է այլ եզրափակիչ դատական ակտերին հատուկ բացառիկության հատկանիշից:

Եզրափակիչ դատական ակտի վերջնական բնույթով պայմանավորված է նաև օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատված փաստերը գործին մասնակցող անձանց և նրանց իրավահաջորդների կողմից մեկ այլ վարույթի շրջանակներում վիճարկելու, իսկ դատարանի կողմից դրանք հաստատող կամ հերքող ապացույցները հետազոտելու արգելքը, որը դրսևորվում է օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտի այնպիսի հատկանիշում, ինչպիսին նախադատելիությունն է: Օրինական ուժի մեջ մտած դատական ակտի **նախադատելիությունն** այն է, որ *եզրափակիչ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո դատարանի կողմից հաստատված և դատական ակտում ձևակերպված փաստերը չեն կարող կասկածի տակ դրվել կամ կրկին հետազոտվել նույն անձանց մասնակցությամբ ուրիշ գործերի քննության ժամանակ:*

Օրինական ուժի մեջ մտած սկզբնական դատական ակտի նախադատելիությունը պայմանավորում է նոր կայացվելիք դատական ակտի բովանդակությունն այն մասով, որը վերաբերում է նախկինում քննված այլ գործով արդեն իսկ հաստատված հանգամանքներին:

Գործին մասնակցող անձանց համար նախադատելիությունը նշանակում է որոշակի սահմաններում ապացուցման պարտականությունից ազատում, ինչպես նաև կրկնակի ապացուցման կամ նման հանգամանքները հետագա դատավարություններում հերքելու արգելք: Նախադատելիությունը դատարանի համար ենթադրում է պարտականություն՝ ներմուծելու նման հանգամանքը նոր կայացվող դատական ակտում:

Նախադատելիությունն օրենքի ուժով միանշանակ կանխորոշիչ դերակատարություն է ունենում նոր դատական ակտի համար:

Օրինական ուժի մեջ մտած դատական ակտի տվյալ հատկանիշի շնորհիվ գործնականում բացառվում է միևնույն փաստերի տարբեր, հակասական գնահատումը, որը կարող է առաջացնել իրավա-



կան անորոշություն, դատական իշխանության հեղինակության անկման պատճառ հանդիսանալ և դիտարկվել որպես իրավունքի գերակայության սկզբունքի ոտնահարում<sup>162</sup>: Դրանից խուսափելու համար օրենսդիրը ՔԴՕ 61-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանել է կանոն, ըստ որի՝ նախկինում քննված քաղաքացիական, սնանկության կամ վարչական գործով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտով հաստատված գործի քննության համար նշանակություն ունեցող փաստերը գործին մասնակցող նույն անձանց մասնակցությամբ այլ գործ քննելիս կրկին չեն ապացուցվում: Օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատված փաստերը նույն անձանց մասնակցությամբ մեկ այլ գործ քննող դատարանի համար ունեն նախապես հաստատվածի ուժ (ՔԴՕ 66 հոդ., մաս 4):

Դատական ակտերի նախադատելիության (պրեյուդիցիալ կապի) մասին խոսելիս անհրաժեշտ է հաշվի առնել երկու կարևոր հանգամանքներ, որոնք հատուկ ընդգծվել են Վճռաբեկ դատարանի թիվ 3-93 (ՎԴ) քաղաքացիական գործով 29.02.2008 թ. կայացված որոշման շրջանակներում:

*Առաջին՝* վճռով հաստատված հանգամանքները նույն անձանց մասնակցությամբ այլ գործ քննելիս դատարանի համար նախադատելի նշանակություն ունենալ չեն կարող, եթե նախկինում քննված քաղաքացիական գործով այդ հանգամանքները հաստատվել են ֆորմալ դատավարական կանոնների կոպիտ խախտմամբ կամ կողմերից մեկի՝ դատավարական հնարավորությունների սահմանափակվածության պայմաններում:

Որևէ հանգամանքի նախադատելիության որոշման համար Վճռաբեկ դատարանը կարևորել է նախևառաջ դատավարական կանոնը, ըստ որի՝ գործով հաստատված որևէ հանգամանքի նախադատելիությունը պետք է պայմանավորվի այդ հանգամանքի՝

---

<sup>162</sup> Տե՛ս *Загайнова С. К.*, Судебные акты в гражданском и арбитражном процессе: теоретические и прикладные проблемы. Дисс... д.ю.н., Екатеринбург, 2008, էջ 386:

մրցակցային դատավարության կանոններով հաստատված լինելու փաստի հետ: Հետևաբար այն դեպքերում, երբ հանգամանքը հաստատվել է առանց ֆորմալ դատավարական կանոնների պահպանման՝ ապացույցների հավաքման, հետազոտման և գնահատման դատավարական կանոնների կոպիտ խախտմամբ կամ կողմերից մեկի դատավարական հնարավորությունների սահմանափակվածության պայմաններում (օրինակ, երբ կողմը պատշաճ չճանուցվելու պատճառով չի մասնակցել դատաքննությանը) վճռով հաստատված հանգամանքն այլ գործ քննող դատարանը պետք է չճանաչի որպես նախադատելի իր կողմից քննվող գործի համար:

*Երկրորդ*՝ նախկինում քննված քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատված հանգամանքները նույն անձանց մասնակցությամբ այլ գործ քննելիս դատարանի համար նախադատելի նշանակություն ունենալ չեն կարող, նաև այն դեպքերում, երբ այդ հաստատված հանգամանքները վերաբերելի չեն եղել նախկինում քննված քաղաքացիական գործով հայցի առարկային, չպետք է դասվեին հաստատման ենթակա հանգամանքների շարքին և մտցվեին ապացուցման առարկայի մեջ: Վճռաբեկ դատարանը վճռով հաստատված հանգամանքների նախադատելիության որոշման համար, փաստորեն, կարևորել է նաև գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները ճիշտ որոշելու հարցը: Ըստ Վճռաբեկ դատարանի՝ նախադատելիության օբյեկտիվ սահմանները որոշվում են հանգամանքների այն շրջանակով, որոնք պետք է հաստատված լինեն օրինական ուժի մեջ մտած դատական ակտով, ուստի ապացուցման առարկայի սահմանների կամայական ընդլայնումը բերում է գործով կայացված դատական ակտով հաստատված որոշակի հանգամանքների նախադատելիության բացառման<sup>163</sup>:

---

<sup>163</sup> Ի դեպ, հենց նշված նկատառումներից ելնելով է ՔԴՕ 61-րդ հոդվածի 2-րդ մասում ընդգծվել, որ նախադատելի նշանակություն ունեն օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտով հաստատված ոչ թե բոլոր, այլ «գործի քննության համար

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման համաձայն՝ կոնկրետ գործով մանրակրկիտ դատական ստուգման է ենթակա նախադատելիության բացառման յուրաքանչյուր դեպք, և միայն վերը նշված կանոնների պահպանմամբ իրականացված ստուգման արդյունքներով գործը քննող դատարանը կարող է հանգել օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատված հանգամանքների նախադատելիության մասին եզրակացության<sup>164</sup>:

Հարկ է նկատի ունենալ, որ, ի տարբերություն այլ եզրափակիչ դատական ակտերի, քննարկվող հատկանիշը հատուկ չէ վճարման կարգադրությանը, քանի որ կարգադրության վարույթում դատարանը պահանջի հիմնավորվածությունն ըստ էության չի ստուգում, գործի դատաքննություն չի իրականացնում, հետևաբար որոշակի փաստական հանգամանքներ վճարման կարգադրությամբ չի հաստատում և դրա հիմքում չի դնում՝ ելնելով այն ենթադրությունից, որ դիմողի կողմից ներկայացված հանգամանքները և ապացույցները արժանահավատ են: Այդպիսի ենթադրությունը, հետևաբար նաև դատական ակտի իրավաչափությունը կարող են հերքվել առարկությունների ներկայացման փաստի ուժով: Նույն տրամաբանությամբ էլ այդ ենթադրությունը կարող է հաստատվել սահմանված ժամկետում առարկություններ չներկայացնելու փաստի ուժով: Վերջին հանգամանքը մի շարք հեղինակների հիմք է տվել կարծիք հայտնելու, որ չհերքված փաստերը պետք է դիտարկել հաստատված և նախադատելի նշանակություն ունեցող<sup>165</sup>: Սակայն, մեր կարծիքով, նման դիրքորոշումն այնքան էլ համոզիչ չի թվում, քանի որ փաստը չհերքելը կամ չվիճարկելը փաստն անվիճելի չի դարձնում: Ինչ վե-

---

նշանակություն ունեցող» փաստերը:

<sup>164</sup> Տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ 3-93 (ՎԴ) քաղաքացիական գործով 29.02.2008 թ. որոշումը // Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի որոշումների ընտրանի (հունվար-դեկտեմբեր 2008), հատոր III, Եր., 2010, էջ 351-355:

<sup>165</sup> Տե՛ս *Загайнова С. К.*, Судебные акты в гражданском и арбитражном процессе: теоретические и прикладные проблемы. Дисс... д.ю.н., Екатеринбург, 2008, էջ 404:

րաբերում է փաստն ընդունելուն, որի արդյունքում ընդհանուր կանոնի ուժով այն դառնում է անվիճելի (ՔԴՕ-ի 61 հոդ., մաս 5), ապա պետք է նկատի ունենալ, որ դա դեռ չի նշանակում, որ դատարանը սահմանված դատավարական ձևի պահանջների պահպանմամբ այն հետազոտել և հաստատված է համարել: Ընդհանուր կանոնի համաձայն՝ ընդունված փաստը դատարանը կարող է հաստատված համարել, եթե չկան ողջամիտ կասկածներ, որ կողմն այն չի ընդունել խաբեության, բռնության, սպառնալիքի, մոլորության ազդեցության տակ, մեկ կողմի ներկայացուցչի հետ մյուս կողմի չարամիտ համաձայնության հետևանքով կամ ճշմարտությունը թաքցնելու կամ ոչ իրավաչափ գործողություններ քողարկելու նպատակով (61 հոդ., մաս 5): Ակնհայտ է, որ կարգադրության վարույթում դատարանը չունի նման կասկածները ստուգելու, չվիճարկվող փաստերը գործի այլ հանգամանքների հետ համադրելու հնարավորություն: Հետևաբար վճարման կարգադրություն արձակելու հիմք հանդիսացած առերևույթ արժանահավատ հանգամանքներին նախադատելի նշանակություն վերապահելը, մեր կարծիքով, արդարացված չէ:

Եզրափակիչ դատական ակտերի այնպիսի հատկանիշները, ինչպիսիք են պարտադիրությունը և կատարելիությունը, ուղղված են դատական ակտով սահմանված պետաիշխանական պատվիրանների կենսագործմանը, իրավունքի սուբյեկտների խախտված կամ վիճարկվող իրավունքների, ազատությունների և օրինական շահերի ռեալ պաշտպանության և քաղաքացիական շրջանառության կայունության ապահովմանը:

**Պարտադիրությունն** այն է, որ *օրինական ուժի մեջ մտած դատական ակտը պարտադիր է ոչ միայն գործին մասնակցող, այլև տվյալ գործում անմիջական իրավաբանական շահ չունեցող բոլոր կողմնակի անձանց, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, պաշտոնատար անձանց և քաղաքացիների համար, որոնք հանդիսանում են տվյալ դատական ակտի հասցեատեր (ԴՕ 13 հոդ., մաս 2): ՔԴՕ 5-րդ հոդվածի 5-րդ*

մասի համաձայն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը պարտադիր է դրա հասցեատերերի համար և ենթակա է կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում: Նշված սուբյեկտները պարտավոր են հարգել դատական ակտի հեղինակությունը, իրենց գործողություններով նպաստել դրա կատարմանը, իրենց գործունեության ընթացքում հաշվի առնել դատական ակտը և չեն կարող ելնել այն ենթադրությունից, թե օրինական ուժի մեջ մտած դատական ակտը ճիշտ չէ: Օրինական ուժի մեջ մտնելու պահից դատական ակտը ձեռք է բերում իրավական ակտի, իսկ դատարանի՝ դրանում ձևակերպված իշխանական պատվիրանները՝ իրավական նորմի ուժ:

Պետական մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները, դրանց պաշտոնատար անձինք, քաղաքացիները, իրավաբանական անձինք և այլ կազմակերպությունները պարտավոր են կատարել բոլոր անհրաժեշտ գործողությունները դատական ակտը կատարելու, անհրաժեշտության դեպքում՝ դրանով հաստատված իրավունքները ձևակերպելու կամ գրանցելու համար:

Պետք է նկատի ունենալ, որ պարտադիրության հատկանիշով օժտված է օրինական ուժի մեջ մտած դատական ակտի եզրափակիչ մասը, որում ամրագրվում է դատարանի գործունեության վերջնական արդյունքը՝ վեճի (գործի) լուծման վերաբերյալ նրա պետաիշխանական կամքը (պատվիրանները)<sup>166</sup>: Այդ կապակցությամբ անհրաժեշտ է սահմանազատել եզրափակիչ դատական ակտի պարտադիրությունը և նախադատելիությունը: Եթե նախադատելի բնույթ ունեն դատական ակտի պատճառաբանական մասում շարադրված այն փաստերը, որոնք դատարանը հաստատված է համարել, ապա պարտադիրությունը վերաբերում է դատական ակտի եզրափակիչ մասում ձևակերպված եզրահանգումներին:

**Կապարելիությունը** դատական ակտով նախատեսված գործո-

---

<sup>166</sup> Տե՛ս *Загайнова С. К.*, Судебные акты в гражданском и арбитражном процессе: теоретические и прикладные проблемы. Дисс... д.ю.н., Екатеринбург, 2008, էջ 391:

ղությունների իրականացման անհրաժեշտությունն է, դատական ակտը կամովին չկատարելու դեպքում՝ դրա հարկադիր կատարման հնարավորությունը<sup>167</sup>: Տվյալ հատկանիշի գոյությունը որոշ դատավարագետներ ժխտում են՝ այն դիտարկելով որպես պարտադիրության բաղկացուցիչ տարր<sup>168</sup>: Այլ հեղինակներ էլ այն դիտարկում են որպես դատական ակտի պարտադիր բնույթից ածանցվող հատկանիշ<sup>169</sup>: Առավել տարածված է այն կարծիքը, որ կատարելիությունը, թեև խիստ փոխկապակցված է պարտադիրության հետ, օրինական ուժի մեջ մտած դատական ակտի ինքնուրույն հատկանիշ է:<sup>170</sup>

Մենք ևս համամիտ ենք վերջին դիրքորոշմանը հետևյալ պատճառներով: Կատարելիությունը պետք է դիտարկվի որպես օրինական ուժի մեջ մտած դատական ակտի ինքնուրույն հատկանիշ՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ դատական ակտի կատարումն իրավունքի պաշտպանության մեխանիզմի կարևորագույն բաղկացուցիչ տարրն է: Իրավունքի պաշտպանության համար դատական ակտի անհերքելիությունը, պարտադիրությունը, բացառիկությունը և նախադատելիությունն իրենց ամբողջության մեջ բավարար չեն, եթե օրենսդրորեն չամրագրվեն դատական ակտը կատարելու պարտականությունը, այն չկատարելու դեպքում հարկադիր կատարման հնարավորությունը և արդյունավետ մեխանիզմները:

Եվրոպական դատարանը մի շարք գործերով կայացված վճիռներում բազմիցս նշել է, որ դատական պաշտպանության իրավուն-

---

<sup>167</sup> Տե՛ս *Պեբրոյան Ռ. Գ.*, Հայաստանի քաղաքացիական դատավարություն, երրորդ հրատ., Եր., Երևանի համալս. հրատ., 2007, էջ 477:

<sup>168</sup> Տե՛ս, օրինակ, *Масленникова Н. И.*, Законная сила судебного решения в советском гражданском процессуальном праве. Автореф. дис.... к.ю.н., Свердловск, 1975, էջ 11:

<sup>169</sup> Տե՛ս, օրինակ, *Чечина Н. А.*, Норма права и судебное решение, Ленинград, 1961, էջ 57, *Зейдер Н. Б.*, Судебное решение по гражданскому делу, М., 1966, էջ 19:

<sup>170</sup> Տե՛ս, օրինակ, Гражданский процесс. Под ред. В. В. Яркова, М., 2006, էջ 390-391 (զլխի հեղինակ՝ Ի. Վ. Ռեշետնիկովա), Гражданский процесс. Под ред. М. К. Треушников, М., 2003, էջ 379 (զլխի հեղինակ՝ Ի. Վ. Պիսկարյով), Гражданский процесс России. Под ред. М. А. Виду, М., 2004, էջ 296-297 (զլխի հեղինակ՝ Մ. Ա. Վիկուտ):

քը տեսիլքի է նման, երևութական է, եթե ներպետական օրենսդրությունը թույլ է տալիս վերջնական և պարտադիր բնույթ ունեցող դատական ակտին մնալ չկատարված: Ըստ Եվրոպական դատարանի՝ «...եթե Կոնվենցիայի 6-րդ հոդվածն առանց պաշտպանության թողնի դատական ակտերի ի կատար ածումը, ապա դա, հավանաբար, կհանգեցնի այնպիսի իրողության, որն անհամատեղելի կլինի իրավունքի գերակայության սկզբունքի հետ, որը պայմանավորվող պետությունները պարտավորվել են պահպանել Կոնվենցիան վավերացնելիս»<sup>171</sup>:

Օրինական ուժի մեջ մտած դատական ակտի պարտադիրությունը սահմանելով՝ պետությունը պարտավորեցնում է դրա հասցեատերերին իրենց գործունեության մեջ հաշվի առնել օրինական ուժի մեջ մտած դատական ակտը: Միննույն ժամանակ, սահմանելով վճռի կատարելիությունը, պետությունը պարտավորեցնում է դատական ակտի կատարմանն առնչություն ունեցող բոլոր սուբյեկտներին իրականացնել բոլոր անհրաժեշտ գործողությունները՝ դատական ակտը կատարելու համար, իսկ այն կամովին չկատարելու դեպքերի համար սահմանում և կենսագործում է հարկադիր կատարման անհրաժեշտ մեխանիզմները՝ դրանով իսկ վերջնականորեն լուծելով իրավական անորոշությունը, վերացնելով իրավական կոնֆլիկտը, իրավահարաբերությունը համապատասխանեցնելով գործող իրավունքի նորմերին:

Վերը նշվածն է պատճառը, որ ՔԴՕ 5-րդ հոդվածի 5-րդ մասում օրենսդիրը ոչ միայն սահմանում է օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի պարտադիրությունը, այլ նաև ամրագրում է դրանք կատարելու պարտականությունը՝ միաժամանակ շեշտելով, որ դատական ակտի չկատարումը հանգեցնում է օրենքով նախատեսված պատասխանատվության (ՔԴՕ 5 հոդ., մաս 7): Եթե կա-

---

<sup>171</sup> Տե՛ս Բուրդովն ընդդեմ Ռուսաստանի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 07.05.2002 թվականի վճիռը, կետ 34, Հորնսբին ընդդեմ Հունաստանի 19.03.1997 թվականի վճիռը, կետ 40:

տարելիությունն օրենսդիրը դիտարկեր որպես պարտադիրության մեջ ներառվող հատկանիշ, ապա կատարման պարտականության մասին նշված իրավանորմի շրջանակներում պարզապես չէր նշվի:

Հավելենք նաև, որ, ի տարբերություն պարտադիրության, կատարելիության հատկանիշը հատուկ չէ այն եզրափակիչ դատական ակտերին, որոնք կատարում չեն ենթադրում, ունեն զուտ ճանաչողական բնույթ և չեն նախատեսում նույնիսկ պետական տուրքի կամ հայցի ապահովման միջոցների վերացման գծով որոշակի գործողություններ կատարելու անհրաժեշտություն: Պատահական չէ, որ օրենսդիրը, սահմանելով վճռի եզրափակիչ մասի բովանդակությամբ ներկայացվող պահանջները, պարտավորեցրել է դատարանին հայցը (դիմումը) ամբողջությամբ կամ մասամբ բավարարելու և կատարում ենթադրող վճիռ կայացնելու դեպքում դատական ակտի այդ մասում նշում կատարել՝ վճիռը կամովին չկատարելու դեպքում այն պարտապանի հաշվին հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով կատարելու մասին (ՔԴՕ 192 հոդ., մաս 5, կետ 4):

Կատարելիությունը եզրափակիչ դատական ակտի այն հատկանիշն է, որի իրացմամբ է միայն նվաճվում կոնկրետ գործով արդարադատության նպատակը՝ վիճելի իրավահարաբերության սուբյեկտների խախտված կամ վիճարկվող իրավունքների և պարտականությունների ռեալ պաշտպանությունը<sup>172</sup>:

## **2.2. Միջանկյալ դատական ակտերի օրինական ուժի իրավական հետևանքները**

Առանձին ընթացակարգային հարցերի լուծման կապակցությամբ դատարանի կողմից ընդունված միջանկյալ դատական ակտերը, ի տարբերություն եզրափակիչ դատական ակտերի, որպես կանոն, օրինական ուժի մեջ են մտնում կայացման պահից: Այդ պահից

---

<sup>172</sup> См. у Гражданский процесс. Под ред. М. К. Треушников, М.: «Городец», 2003, էջ 379:



սկսած՝ դատարանի որոշումները ևս առաջացնում են որոշակի իրավական հետևանքներ, որոնք իրենց էությանը գրեթե նույնական են եզրափակիչ դատական ակտի օրինական ուժի հետևանքներին, սակայն փոքր-ինչ այլ կազմ և բովանդակություն ունեն:

Բոլոր միջանկյալ դատական ակտերի օրինական ուժի մեջ մտնելու հետևանքներ են՝ դրանց անհերքելիությունը, պարտադիրությունը և կատարելիությունը:

**Անհերքելիության** հատկանիշի ուժով *միջանկյալ դատական ակտը կայացնող դատարանն իրավունք չունի փոխելու կամ լրացնելու այն*: Որոշ հեղինակներ ժխտում են միջանկյալ որոշումների անհերքելիության հատկանիշը՝ հիմք ընդունելով այն, որ դատարանը գործի քննության ընթացքում կարող է կրկին անդրադառնալ նույն հարցի լուծմանը<sup>173</sup>: Նման դիրքորոշումը համոզիչ չի թվում, քանի որ դատարանը նույն հարցի քննությանը (օրինակ՝ ինքնաբացարկի միջնորդությանը) կարող է անդրադառնալ բացառապես այլ հիմքերի առկայության դեպքում, ընդ որում, քննության արդյունքներով նա ոչ թե փոփոխում կամ լրացնում է իր կողմից կայացված որոշումը, այլ կայացնում է նոր դատական ակտ: Կարծում ենք, որոշակի փաստական և իրավական հիմքերով կայացված և օրինական ուժի մեջ մտած իր իսկ որոշումը փոփոխելը հակասում է դատական ակտի օրինական ուժի էությանը, կարող է նսեմացնել դատական իշխանության հեղինակությունը, խափանել գործի քննության բնականոն ընթացքը, առաջացնել անբարենպաստ այլ հետևանքներ: Այդ իսկ պատճառով ՔԴՕ 152-րդ հոդվածի 6-րդ մասում, որպես միջանկյալ դատական ակտերի անհերքելիության ապահովմանն ուղղված երաշխիք, արգելվել է նույն հիմքով կրկին միջնորդություն ներկայացնելը, և սահմանվել է, որ նախկինում մերժված միջնորդությունը նույն հիմքով ներկայացվելու դեպքում չի քննարկվում:

Միջանկյալ դատական ակտերի անհերքելիությունը դրսևոր-

---

<sup>173</sup> Տե՛ս **Պեդրոսյան Ռ. Գ.**, Հայաստանի քաղաքացիական դատավարություն, երկրորդ հրատ., Եր., Երևանի համալս. հրատ., 2003, էջ 450:

վում է նաև նրանում, որ *ընդհանուր կանոնի ուժով օրինական ուժի մեջ մտած միջանկյալ դատական ակտը չի կարող վերանայվել վերադաս դատական ատյանի կողմից, եթե այլ բան սահմանված չէ օրենքով:*

Կախված միջանկյալ դատական ակտի անմիջական բողոքարկման հնարավորությունից՝ դրա անհերքելիությունը կարող է ունենալ տարբեր դրսևորումներ:

Բողոքարկման ենթակա դատական ակտի անհերքելիության առանձնահատկությունը նաև այն է, որ վերջինս լիարժեքորեն ծագում է դատական ակտը բողոքարկելու՝ օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո: Եթե այդպիսի դատական ակտը բողոքարկվում է վերաքննության կարգով, ապա այն վերջնական է դառնում դատական ակտն անփոփոխ թողնելու վերաբերյալ վերաքննիչ դատարանի որոշումն օրինական ուժի մեջ մտնելուց հետո<sup>174</sup>: Ընդ որում, վերաքննիչ դատարանը կարող է հերքել առաջին ատյանի դատարանի եզրահանգումները բացառապես օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում՝ գործելով օրենքով կանխորոշված սահմաններում:

Անմիջական բողոքարկման ոչ ենթակա դատական ակտի անհերքելիության առանձնահատկությունն այն է, որ դրանք վերջնական են դառնում կայացման պահից, չեն կարող վիճարկվել գործին մասնակցող անձանց կողմից, իսկ վերադաս դատական ատյաններն էլ չեն կարող դրանք վերանայել առաջին ատյանի դատարանում գործի քննության ընթացքում: Նման որոշումների ճշտությունը և ազդեցությունը գործի լուծման վրա կարող է ստուգվել (գնահատ-

---

<sup>174</sup> ՔԴՕ 388-րդ հոդվածի բովանդակությունից բխում է, որ վերաքննիչ դատարանի՝ միջանկյալ դատական ակտի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքի քննության արդյունքում կայացված որոշումները վճռաբեկության կարգով բողոքարկման ենթակա չեն: ՔԴՕ 387-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանի նման որոշումներն օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից: Հետևաբար վերաքննության կարգով բողոքարկված միջանկյալ դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում դրանց կայացման պահից:

վել) բացառապես եզրափակիչ դատական ակտի դեմ բերված բողոքը քննելու վարույթի շրջանակներում:

ՔԴՕ 5-րդ հոդվածի 5-րդ մասով պարտադիրության և կատարելիության հատկանիշները սահմանվել են բոլոր, այդ թվում՝ միջանկյալ դատական ակտերի համար:

Օրինական ուժի մեջ մտած միջանկյալ դատական ակտի **պարտադիրությունը** ենթադրում է տվյալ դատական ակտի բոլոր հասցեատերերի՝ դատավարության մասնակիցների, վարույթի մասնակից չհանդիսացող պետական, տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, կազմակերպությունների և քաղաքացիների կողմից տվյալ որոշումը ճանաչելու ու դրան ենթարկվելու պարտականություն: **Կատարելիության** հատկանիշի ուժով էլ դատավարության մասնակիցները և գործի քննությանը չմասնակցող այլ անձինք, որոնք տվյալ դատական ակտի հասցեատեր են, պարտավոր են կատարել դատարանի որոշումը: Ընդ որում, օրենքով նախատեսված դեպքերում միջանկյալ դատական ակտով սահմանված պահանջները չկատարելը կարող է դատական սանկցիաների կիրառման հիմք հանդիսանալ<sup>175</sup>, իսկ որոշ միջանկյալ դատական ակտեր էլ, օրենքի համաձայն, ենթակա են հարկադիր կատարման (օրինակ՝ ապացույցներ պահանջելու, վկային բերման ենթարկելու, իրեղեն ապացույցի զննում կատարելու ընթացքն ապահովելու, փորձաքննության կատարման ընթացքն ապահովելու, դատական տուգանք կիրառելու, հայցի ապահովման միջոց կիրառելու, հայցի ապահովումը վերացնելու, անձին հարկադիր կարգով դատահոգեբուժական փորձաքննության ուղարկելու մասին որոշումները):

Միջանկյալ դատական ակտերը **բացառիկության** հատկանիշ, որպես ընդհանուր կանոն, չունեն, քանի որ տվյալ առարկայի վերաբերյալ որոշման առկայությունը չի զրկում գործին մասնակցող ան-

---

<sup>175</sup> Տե՛ս, օրինակ, ՔԴՕ 44-րդ հոդ., մաս 7, 64-րդ հոդ., մաս 7, 69-րդ հոդ., մաս 3, 132-րդ հոդ., մաս 4, 218-րդ հոդ., մաս 3:

ծին նույն առարկայի վերաբերյալ կրկին դատարան դիմելու հնարավորությունից: Որպես բացառություն դիտարկվում են հայցադիմումի ընդունումը մերժելու, ինչպես նաև նույն հիմքով կրկնակի ներկայացված միջնորդությունը չքննարկելու մասին մասին որոշումները: Դրանցից առաջինը ՔԴՕ 129-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, իսկ երկրորդը 152-րդ հոդվածի 6-րդ կետով համապատասխանաբար նախատեսվել են որպես նույնական հայցի հարուցումը և նույն հիմքով կրկնակի ներկայացված միջնորդության քննարկումը բացառող հանգամանքներ:

Միջանկյալ դատական ակտերը չունեն նաև **նախադատելի** բնույթ, քանի որ դրանք կայացվում (ընդունվում) են զուտ ընթացակարգային (դատավարական) հարցերի կապակցությամբ, և դրանց շրջանակներում դատարանը նյութափրավական նշանակություն ունեցող հանգամանքներ չի հաստատում: Այդ իսկ պատճառով ՔԴՕ 61-րդ հոդվածի 2-րդ մասում խոսվում է բացառապես եզրափակիչ դատական ակտերով հաստատված փաստերի մասին: Այդուհանդերձ, դատավարագիտության մեջ տեսակետ է արտահայտվել, որ միջանկյալ որոշմամբ հաստատված դատավարական փաստերին ևս պետք է տրվի նախադատելի նշանակություն<sup>176</sup>: Ըստ այդ տեսակետի՝ օրենքով պետք է նախատեսել, որ նախկինում քննված գործով դատարանի միջանկյալ դատական ակտով հաստատված դատավարական փաստերը նույն անձանց միջև դատարանում այլ գործ քննելիս ապացուցման կարիք չեն զգում: Նման նորմ ՔԴՕ-ում նախատեսելը մեզ ևս արդարացված է թվում: Նման նորմի առկայության դեպքում, եթե, օրինակ, մի գործի դատական քննության ընթացքում հաստատվում է գործին մասնակցող անձի կողմից ապացույցը ոչնչացնելու փաստը, և դատարանը, տվյալ հանգամանքը հաշվի առնելով ու ղեկավարվելով ՔԴՕ 62-րդ հոդվածի 5-րդ մա-

---

<sup>176</sup> Տե՛ս **Загайнова С. К.**, Судебные акты в гражданском и арбитражном процессе: теоретические и прикладные проблемы. Дисс... д.ю.н., Екатеринбург, 2008, էջ 418-419:

սով, իր որոշմամբ ապացույցը ոչնչացնողի վրա է դնում հակառակն ապացուցելու պարտականությունը, տվյալ որոշմամբ հաստատված՝ ապացույցը ոչնչացնելու փաստը նույն անձանց միջև դատարանում այլ գործ քննելիս ապացուցման կարիք չի զգա: Նման լուծումը, մեր կարծիքով, մի կողմից, կազատի դատարանին և գործին մասնակցող անձանց ավելորդ ապացուցողական գործունեություն ծավալելուց՝ դրանով իսկ արագացնելով վարույթը, իսկ մյուս կողմից՝ կբարձրացնի դատարանի միջանկյալ դատական ակտերի հեղինակությունը:

## ԳԼՈՒԽ IV

### ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՑՈՒՄՆ ԱՅՆ ԿԱՅԱՑՆՈՂ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ

Դատական ակտը հրապարակելուց (գործին մասնակցող անձանց ուղարկելուց) հետո դատարանն իրավունք չունի վերացնելու կամ փոփոխելու այն: Եթե գործով որոշում կամ վճիռ կայացնելիս դատական սխալներ են թույլ տրվել, ապա դրանք կարող է վերացնել վերաքննիչ դատարանը՝ բողոքարկված միջանկյալ դատական ակտը վերացնելով և/կամ նոր դատական ակտ կայացնելով, եզրափակիչ դատական ակտը լրացուցիչ հիմնավորելով և պատճառաբանելով, այն բեկանելով կամ փոփոխելով և այլն:

Հնարավոր են դեպքեր, երբ դատական ակտը հրապարակելիս, հասցեատերերին ուղարկելիս կամ դրանից հետո այն կայացնող դատարանը դրանում հայտնաբերի այնպիսի թերություններ, որոնք ակտի էությունը չեն փոխում, դատական սխալ չեն, սակայն կարող են դժվարացնել կամ անհնարին դարձնել տվյալ ակտի կատարումը կամ հանդիսանալ նոր իրավական անորոշության պատճառ<sup>177</sup>:

Բացառապես նման իրավիճակներում օրենքը թույլ է տալիս տվյալ դատական ակտը կայացրած դատարանին լրացնել այն կամ ուղղումներ կատարել դրանում:

Իր կողմից կայացված դատական ակտի թերությունները վերացնելու համար դատարանին իրավունք է վերապահված օրենքով խստորեն սահմանափակված դեպքերում և սահմանված դատավարական ձևի կիրառմամբ, առանց դատական ակտի բովանդակությունը և էությունը փոխելու՝

---

<sup>177</sup> Տե՛ս *Сакнова Т. В.*, Курс гражданского процесса: теоретические начала и основные институты. М.: «Волтерс Клувер», 2008, էջ 429:

1. կայացնել լրացուցիչ վճիռ կամ որոշում (ՔԴՕ 196 հոդ.),

2. ուղղել վճռում տեղ գտած վրիպակները, գրասխալները և թվաբանական սխալները (ՔԴՕ 197 հոդ.):

Բոլոր նշված դեպքերում դատարանի՝ դատական ակտի թերությունների վերացմանն ուղղված գործունեության արդյունքում, այն եզրափակող դատական ակտով (վրիպակները, գրասխալները կամ թվաբանական սխալներն ուղղելու մասին որոշմամբ, լրացուցիչ վճռով, լրացուցիչ որոշմամբ) չեն կարող փոխվել դատական ակտի բովանդակությունը և էությունը: Այսպես, օրինակ, չի կարող բավարարված հայցը վերածվել չբավարարվածի, որոշակի գործողությունների կատարման պարտադրող վճռով չեն կարող փոփոխվել այն գործողությունների բնույթն ու ծավալը, որոնք պետք է կատարի պարտավոր կողմը, չի կարող լրացվել (փոփոխվել) վճռով հաստատված կամ հերքված փաստական հանգամանքների կազմը և այլն: Նշված բոլոր գործողությունների կատարման արդյունքում փոփոխվում են դատական ակտի բովանդակությունը և էությունը, ինչն անթույլատրելի է:

Հարկ ենք համարում նշել, որ ՀՀ դատավարական օրենսդրությունն ավանդաբար նախատեսում էր նաև վճռի պարզաբանման ինստիտուտը, որը, սակայն, ներկայումս գործող ՔԴՕ-ով նախատեսված չէ: Նկատի ունենալով այդ ինստիտուտի կարևորությունը՝ դրան ևս կանդորադառնանք սույն գլխի շրջանակներում:

### ***§1. Լրացուցիչ վճիռ (որոշում) կայացնելը***

Ինչպես վերին արդեն նշվել է, եզրափակիչ դատական ակտերին ներկայացվող պահանջներից են դրանց լրիվությունը և որոշակիությունը: Դատական ակտը համարվում է լրիվ (սպառիչ), եթե պարունակում է գործի հարուցման և քննության ընթացքում գործին մասնակցող անձանց կողմից հայտարարված բոլոր պահանջների պատճառաբանված պատասխանը, ինչպես նաև այն հարցերի լու-

ծումը, որոնց դատարանը օրենքի ուղղակի ցուցումով պարտավոր է անդրադառնալ: Դատավարագիտության մեջ դատական ակտը դիտարկվում է որպես անորոշ, եթե չի պարունակում հստակ, որոշակի պատասխան հայցադիմումով ներկայացված ու գործի քննության ընթացքում հայտարարված պահանջներին և օրենքով նախանշված հարցերին:

Որպես դատական ակտի ոչ լրիվության և անորոշության առանձին դրսևորումների վերացման եղանակ՝ գործող օրենսդրությունը նախատեսում է լրացուցիչ վճիռ (որոշում) կայացնելու հնարավորությունը:

Լրացուցիչ վճիռը (որոշումը) դատական ակտ է, որը կայացվում է եզրափակիչ դատական ակտը հրապարակելուց հետո՝ վերջինիս թերությունները վերացնելու և լրիվությունն ու որոշակիությունը ապահովելու նպատակով: Լրացուցիչ դատական ակտը անբաժանելի է տվյալ գործով կայացված հիմնական եզրափակիչ ակտից: Նրանք կոնկրետ գործով կազմում են արդարադատության միասնական ակտ, ինչով էլ պայմանավորված է այն կարգավորումը, համաձայն որի՝

ա. վճռի բեկանման դեպքում լրացուցիչ վճիռը համարվում է բեկանված, եթե այլ բան սահմանված չէ վերադաս դատական ատյանի որոշմամբ.

բ. առաջին ատյանի դատարանը չի կարող լրացուցիչ վճիռ կայացնել այն հարցի կապակցությամբ, որի վերաբերյալ ներկայացվել է բողոք (ՔԴՕ 196 հոդ., մաս 8-9):

Լրացուցիչ դատական ակտ կարող է կայացվել օրենքով նախատեսված հետևյալ պայմանների պահպանմամբ:

1) **Լրացուցիչ դատական ակտ կարող է կայացվել բացառապես օրենքով սպառիչ կերպով նախատեսված հիմքերով:** Ընդ որում, ՔԴՕ 196-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է լրացուցիչ վճիռ կայացնելու, իսկ 10-րդ մասը՝ լրացուցիչ որոշում կայացնելու հիմքերը:



Լրացուցիչ վճիռ կարող է կայացվել հետևյալ դեպքերում:

ա. Վճռի պատճառաբանական մասում որևէ պահանջի անդրադառնալով՝ դատարանը վճռի եզրափակիչ մասում ըստ էության չի լուծել այդ պահանջի բավարարման կամ մերժման հարցը (ՔԴՕ 196 հոդ., մաս 1, կետ 1), այսինքն՝ երբ վճիռը լրիվ (սպառիչ) չէ: Վճռին ներկայացվող լրիվության պահանջներից ելնելով՝ դատարանը վճռի եզրափակիչ մասում պետք է եզրահանգումներ ձևակերպի գործի հարուցման և քննության ընթացքում հայտարարված բոլոր սկզբնական և հակընդդեմ պահանջների վերաբերյալ: Բացի դրանից, եթե հայցվորը ներկայացրել է մի քանի հայցապահանջներ, դատարանի որոշմամբ մեկ վարույթում միացվել են մի քանի գործեր, առկա է եղել դատակցություն, գործի քննությանը մասնակցել է ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձ, վճռում դատարանը պարտավոր է պատասխան տալ ընդդեմ դատավարության յուրաքանչյուր մասնակցի հայտարարված բոլոր պահանջներին: Այն դեպքերում, երբ գործին մասնակցող անձը գործի հարուցման կամ դատական քննության ընթացքում պահանջ է ներկայացրել, դատական նիստում հետազոտվել են դրա հիմքում ընկած հանգամանքները հաստատող կամ հերքող ապացույցները, վճռի պատճառաբանական մասում անդրադարձ կա այդ պահանջին, սակայն վճռի եզրափակիչ մասում տվյալ պահանջը մնացել է անպատասխան, տվյալ թերությունը կարող է վերացվել լրացուցիչ վճիռ կայացնելու միջոցով: Լրացուցիչ վճիռ կայացնելու հիմքն առկա է, օրինակ, այն դեպքում, երբ դատարանը բավարարել է համահայցվորներից մեկի հայցը, իսկ մյուսի պահանջին վճռում չի անդրադարձել, թեև դրա հիմքում ընկած փաստական հանգամանքները հաստատող կամ հերքող ապացույցները դատական նիստում հետազոտվել են, իսկ հետազոտման արդյունքները արտացոլվել են վճռի պատճառաբանական մասում:

բ. Լուծելով իրավունքի մասին հարցը՝ դատարանը չի նշել հատկացվող գումարի չափը, բռնագանձման ենթակա գումարը կամ

այն գործողությունները, որոնք պարտավոր է կատարել գործին մասնակցող անձը (ՔԴՕ 196 հոդ., մաս 1, կետ 2), այսինքն՝ երբ վճիռը որոշակի չէ: Նման իրավիճակ հնարավոր է, օրինակ, այն դեպքերում, երբ դատարանն ընդհանուր սեփականության իրավունքով կողմերին պատկանող գույքի բաժանման վերաբերյալ վճռում նշել է, որ գույքը բաժանվում է հավասար բաժիններով, բայց չի նշել, թե հայցվորին այդ գույքի որ մասն է հատկացվում, պատասխանողին՝ որը, կամ գործարքն անվավեր ճանաչելու վերաբերյալ վճիռ է կայացրել, սակայն չի անդրադարձել տվյալ գործարքի անվավերության հետևանքներին: Նման թերությունը ևս կարող է վերացվել լրացուցիչ վճռի կայացմամբ:

գ. Դատարանը վճռով չի լուծել կամ թերի է լուծել դատական ծախսերի հարցը (ՔԴՕ 196 հոդ., մաս 1, կետ 3): Դատավարագիտության մեջ վճիռը ոչ լրիվ է համարվում նաև նման դեպքերում, քանի որ դատարանը պարտավոր է վճռով պատասխան տալ նաև դատական ծախսերը կողմերի միջև բաշխելու հարցին: Ըստ ՔԴՕ 101-րդ հոդվածի՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված գործողությունների կատարման առնչությամբ կատարված այլ ծախսերից, որոնց հնարավոր կազմը ներկայացված է ՔԴՕ 105-րդ հոդվածում: Քննարկվող հիմքով դատարանը կարող է լրացուցիչ վճիռ կայացնել, եթե գործի քննության ընթացքում ներկայացվել է կատարված դատական ծախսերը հատուցելու պահանջ, այդ թվում՝ ներկայացվել են դրանց կատարման փաստը և չափը հաստատող ապացույցներ, սակայն դատարանը վճռի եզրափակիչ մասում դրանց բաշխման մասին եզրահանգումներ չի արել կամ լուծել է միայն դրանց մի մասի բաշխման հարցը: Հակառակ դեպքում դատարանը պետք է մերժի գործին մասնակցող անձի ներկայացրած՝ լրացուցիչ վճիռ կայացնելու դիմումը<sup>178</sup>:

---

<sup>178</sup> Տե՛ս **Загайнова С. К.**, Судебные акты в гражданском и арбитражном процессе: теоретические и прикладные проблемы. Дисс... д.ю.н., Екатеринбург, 2008, էջ 284:

Քննարկվող հիմքով լրացուցիչ վճիռ կայացնելու հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանը 2014 թ. հայտնել է բավականին ուշագրավ իրավական դիրքորոշում, որն իր արդիականությունը չի կորցրել նաև գործող ՔԴՕ նոր կարգավորումների լույսի ներքո<sup>179</sup>:

Նախ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վճռի եզրափակիչ մասում պետական տուրքի չվճարված գումարը գործին մասնակցող անձից հոգուտ պետական բյուջեի բռնագանձելու հարցին չանդրադառնալու, դատական ծախսերի հարցը լուծված չլինելու պարագայում այդ հարցը կարող է լուծվել բացառապես լրացուցիչ վճիռ կայացնելու միջոցով: Վճռաբեկ դատարանն անթույլատրելի է համարել նշված հարցի լուծումը դատական ակտում առկա վրիպակն ուղղելու ինստիտուտի կիրառմամբ:

Երկրորդ՝ Վճռաբեկ դատարանը միաժամանակ նշել, որ ոչ բոլոր դեպքերում է, որ վճիռ կայացրած դատարանն իրավունք ունի լրացուցիչ վճիռ կայացնել չլուծված դատական ծախսերի հարցի վերաբերյալ: Վճռաբեկ դատարանի մեկնաբանությամբ՝ դատական ծախսերի հարցը լուծված չլինելու դեպքում յուրաքանչյուր գործով լրացուցիչ վճիռ կայացնելիս դատարանները պետք է հաշվի առնեն հետևյալ հանգամանքները՝

1. հայցադիմումը դատարան ներկայացնելիս կցվե՞լ է արդյոք սահմանված կարգով և չափով պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթը,

2. այդպիսին կցված չլինելու դեպքում դատարանին ներկայացվե՞լ է պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու կամ դրա չափը նվազեցնելու մասին միջնորդություն,

3. հայցադիմումը վարույթ ընդունելիս դատարանն անդրադարձե՞լ է այդ միջնորդությանը,

4. ի՞նչ որոշում է կայացվել նշված միջնորդության վերաբերյալ,

5. գործի քննության ընթացքում փոփոխվե՞լ է հայցի հիմքը

---

<sup>179</sup> Տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/0139/02/13 քաղաքացիական գործով 28.11.2014 թ. որոշումը:

կամ առարկան, ավելացվե՛լ է հայցապահանջի չափը:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ այն դեպքում, երբ պե-  
տական փորձի վճարած լինելը հավաստող փաստաթուղթը կամ  
պետական փորձի վճարման ժամկետը հետաձգելու կամ փարա-  
ժամկետելու կամ դրա չափը նվազեցնելու վերաբերյալ միջնորդու-  
թյունը հայցադիմումին կցված չի եղել, սակայն դատարանը կայացրել  
է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշում, ապա չվճար-  
ված պետական փորձի գումարը հետագայում հայցվորից բռնա-  
գանձվել չի կարող, քանի որ հայցադիմումը վարույթ ընդունելու մա-  
սին որոշման կայացման փաստի ուժով հայցվորի մոտ արդեն իսկ  
ձևավորվել է այն համոզմունքը, որ հայցը ներկայացվել է օրենքի  
պահանջների պահպանմամբ, այդ թվում՝ պահպանված է օրենքով  
սահմանված կարգով և չափով պետական տուրքի վճարված լինելու  
պահանջը: Հակառակ դեպքում դատարանը թույլ է տալիս «Մարդու  
իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության  
մասին» կոնվենցիայով երաշխավորված իրավական որոշակիութ-  
յան սկզբունքի խախտում, որի ուժով դատարանի կողմից որևէ  
հարցի կապակցությամբ կայացված և ուժի մեջ մտած դատական  
ակտը պետք է կասկած չհարուցի:

դ. Դատարանը վճռով չի լուծել հայցի ապահովման միջոցները  
վերացնելու հարցը (ՔԴՕ 196 հոդ., մաս 1, կետ 3): Դատական ակ-  
տի նշված թերությունը ևս կապված է վճռին ներկայացվող լրիվութ-  
յան պահանջը խախտելու հետ: ՔԴՕ 192-րդ հոդվածի 5-րդ մասի  
3-րդ կետի համաձայն՝ վճռի եզրափակիչ մասը պետք է պարունակի  
եզրահանգումներ՝ կիրառված հայցի ապահովման միջոցները պահ-  
պանելու կամ վերացնելու մասին: Եթե կիրառված ապահովման մի-  
ջոցները հայցը բավարարելու մասին վճիռ կայացնելու դեպքում  
պահպանվում են մինչև վճռի կատարումն օրենքի ուժով (ՔԴՕ 136  
հոդ., մաս 2), և վճռի եզրափակիչ մասում դրանց պահպանման վե-  
րաբերյալ նշումների բացակայությունը գործնականում որևէ խնդիր  
չի առաջացնում, ապա նույնը չի կարելի ասել այն դեպքերի մասին,

երբ կայացվում է հայցը մերժելու մասին վճիռ կամ գործի վարույթը կարճելու կամ հայցը առանց քննության թողնելու մասին որոշում: Ինչպես բխում է ՔԴՕ 134-րդ հոդվածի 1-2-րդ մասերի բովանդակությունից, հայցի ապահովման միջոցը կարող է վերացվել բացառապես դատական ակտով: Հետևաբար, եթե դատարանը վճռով չի լուծել հայցի ապահովման միջոցները վերացնելու հարցը, այն կարող է լուծվել այդ նպատակով կայացված լրացուցիչ վճռով:

Ինչ վերաբերում է այլ եզրափակիչ դատական ակտերին, ապա հարկ է նշել, որ նախ օրենսդիրը հնարավորություն է նախատեսել լրացուցիչ որոշում կայացնելու միայն հայցն առանց քննության թողնելու և վարույթը կարճելու մասին եզրափակիչ դատական ակտերի կապակցությամբ՝ ըստ էության բացառելով այլ եզրափակիչ դատական ակտերը լրացնելու հնարավորությունը<sup>180</sup>, ապա նախատեսվել է, որ լրացուցիչ որոշում կարող է կայացվել այն դեպքերում, երբ նշված որոշումներով դատարանը չի լուծել կամ թերի է լուծել դատական ծախսերի հարցը, ինչպես նաև չի լուծել հայցի ապահովման միջոցները վերացնելու հարցը:

Ուշագրավ է, որ այլ հիմքերով լրացուցիչ վճիռ (որոշում) կայացնելու հնարավորություն օրենքը չի նախատեսում:

**2) Լրացուցիչ վճիռ (որոշում) կարող է կայացվել բացառապես օրենքով նախատեսված սուբյեկտների նախաձեռնությամբ:** Նման սուբյեկտների թվին են դասվում դատական ակտը կայացրած դատարանը, ինչպես նաև գործին մասնակցող անձինք (ՔԴՕ 196 հոդ., մաս 1): Չնայած օրենսդիրը սահմանել է, որ լրացուցիչ վճիռ (որոշում) կայացնելու հարցը դատարանը քննության է առնում

---

<sup>180</sup> Ինչպես նշվել է սույն աշխատանքի նախորդ շարադրանքում, առաջին ատյանի դատարանը վճիռներից ու վճարման կարգադրություններից բացի, առանձին կատեգորիայի գործերով կայացնում է նաև այլ եզրափակիչ որոշումներ, որոնցով գործի քննությունն ավարտվում է, ուստի տվյալ դատական ակտերի լրիվության և որոշակիության վրա ազդող քննարկվող թերությունների վերացումը լրացուցիչ դատական ակտի՝ տվյալ դեպքում լրացուցիչ որոշման միջոցով վերացնելը խիստ տրամաբանական է թվում: Այդուհանդերձ, կարելի է արձանագրել, որ տվյալ հանգամանքն օրենսդրի կողմից պատշաճ կարգավորման չի ենթարկվել:

գործին մասնակցող անձանց միջնորդությամբ կամ իր իսկ նախաձեռնությամբ, վճեի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձինք լրացուցիչ վճիռ (որոշում) կայացնելու դիմում ներկայացնել չեն կարող, քանի որ նրանք, հաշվի առնելով լրացուցիչ վճիռ կայացնելու հիմքերի բնույթը, տվյալ հարցում իրավաբանական շահ չունեն: Շահագրգռվածության բացակայությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ տվյալ տեսակի երրորդ անձինք վիճելի նյութական իրավահարաբերության մասնակիցներ չեն, վճռի (որոշման) եզրափակիչ մասում նրանց իրավունքներին և պարտականություններին անդրադարձ չի կատարվում: Կարծում ենք՝ նույնը կարելի է ասել նաև հատուկ վարույթի գործերով դիմումի քննության ելքով շահագրգռված այլ անձանց մասին, որոնք ՔԴՕ 31-րդ հոդվածի ուժով հանդես են գալիս որպես գործին մասնակցող անձ:

**3) Պետք է պահպանվեն լրացուցիչ վճիռ (որոշում) կայացնելու նախաձեռնությունը ցուցաբերելու համար օրենքով սահմանված դատավարական ժամկետները:** ՔԴՕ 196-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ լրացուցիչ վճիռ (որոշում) կայացնելու մասին միջնորդությունը կարող է ներկայացվել մինչև վճռի (որոշման) օրինական ուժի մեջ մտնելը, իսկ հրապարակման պահից օրինական ուժի մեջ մտած վճռով լրացուցիչ վճիռ կայացնելու մասին միջնորդությունը կարող է ներկայացվել վճռի հրապարակման պահից մեկամսյա ժամկետում: Օրենքի նման ձևակերպումից բխում է, որ դատարանը կարող է լրացուցիչ վճիռ (որոշում) կայացնել նաև այն դեպքերում, երբ վճիռը (որոշումը) մտել է օրինական ուժի մեջ, սակայն լրացուցիչ վճիռ (որոշում) կայացնելու միջնորդությունը ներկայացվել է վճռի (որոշման) օրինական ուժի մեջ մտնելուց առաջ:

Քննարկվող հարցում տարբերակված մոտեցում է ցուցաբերված այն դեպքերի համար, երբ դատարանը վճռով չի լուծել հայցի ապահովման միջոցները վերացնելու հարցը: Այդ հիմքով լրացուցիչ վճիռ (որոշում) կայացնելու միջնորդությունը կարող է ներկայացվել

նաև վճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո (ՔԴՕ 196 հոդ., մաս 3):

Դատարանի՝ լրացուցիչ վճիռ (որոշում) կայացնելու նախաձեռնությունը ևս կարող է ցուցաբերվել մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելու պահը:

Հարկ է նկատել, որ լրացուցիչ վճիռ (որոշում) կայացնելու մասին դիմում ներկայացնելիս պետական տուրք չի վճարվում:

**4) Լրացուցիչ վճիռ (որոշում) կարող է կայացվել միայն գործի սկզբնական քննության ժամանակ հաստատված փաստական հանգամանքների հիման վրա:** Գործի սկզբնական քննության ժամանակ չհետազոտված և չհաստատված հանգամանքները լրացուցիչ վճռի (որոշման) հիմքում դրվել չեն կարող: Դատարանի՝ լրացուցիչ ակտում ձևակերպված եզրահանգումները պետք է բխեն գործով կայացված եզրափակիչ ակտի փաստական հիմքից: Լրացուցիչ վճիռ (որոշում) կայացնելու հարցը քննելիս դատարանը նոր ապացույցներ չի հետազոտում, նոր փաստեր չի հաստատում: Դատարանը հիմնվում է միայն այն ապացույցների վրա, որոնք ներկայացվել և հետազոտվել են գործի սկզբնական քննության ընթացքում և որպես հիմք է ընդունում բացառապես եզրափակիչ դատական ակտով հաստատված փաստերը:

**5) Լրացուցիչ վճիռ (որոշում) կայացնելու հարցը քննվում է դատական նիստում:** Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ լրացուցիչ վճիռը (որոշումը) կայացվում է հայցի ապահովման միջոցները եզրափակիչ դատական ակտով լուծված չլինելու հիմքով. այդ դեպքում լրացուցիչ դատական ակտ կայացնելու միջնորդությունը քննվում է առանց դատական նիստ հրավիրելու (ՔԴՕ 196 հոդ., մաս 4):

Անկախ նրանից, թե ինչ դատավարական ձև է նախատեսված լրացուցիչ դատական ակտ կայացնելու վերաբերյալ միջնորդությունը քննելու համար, օրենսդիրը դատարանի վրա դրել է պարտականություն՝ քննելու և լուծելու այդ միջնորդությունը ստանալու օրվա-

նից 20 օրվա ընթացքում:

Լրացուցիչ վճիռը (որոշումը) կայացվում է վճռի կայացման և հրապարակման ընդհանուր դատավարական կարգի պահպանմամբ: Այն կարող է բողոքարկվել ինչպես հիմնական վճռի հետ, այնպես էլ նրանից առանձին:

Այն դեպքերում, երբ լրացուցիչ վճիռ (որոշում) կայացնելու մասին միջնորդությունը ներկայացվել է օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ, նման դիմում ներկայացնելու իրավունք չունեցող անձի կողմից, օրենքով չնախատեսված հիմքերով կամ այն հարցի կապակցությամբ, որի վերաբերյալ ներկայացվել է բողոք, ինչպես նաև այն դեպքերում, երբ գործի սկզբնական քննության ժամանակ հաստատված փաստական հանգամանքները կամ եզրափակիչ դատական ակտի պատճառաբանական մասի բովանդակությունը թույլ չեն տալիս որոշակի եզրահանգումներ կատարել լրացուցիչ վճռով լուծման ենթակա հարցի վերաբերյալ, դատարանը որոշում է կայացնում լրացուցիչ վճռի (որոշման) կայացումը մերժելու մասին: Նման որոշումը ևս կարող է բողոքարկվել վերաքննության կարգով (ՔԴՕ 196 հոդ., մաս 7):

Հավելենք, որ եթե դատարանը որևէ պատճառով լրացուցիչ դատական ակտում կրկին չի լուծում հայցապահանջներից որևէ մեկը, ապա շահագրգիռ անձն իրավունք ունի այդ պահանջով դիմելու դատարան ընդհանուր կարգով, որովհետև դրա վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտ գոյություն չունի:

## ***§2. Վրիպակները, գրասխալները և թվաբանական սխալներն ուղղելը***

Վրիպակների, գրասխալների և թվաբանական սխալների ուղղումը դատական ակտում տեղ գտած թերություններն այն կայացնող դատարանի կողմից վերացնելու օրենքով թույլատրված եղա-



նականերից է:

**Վրիպակաները (գրասխալները)** վճիռը շարադրելիս դատավորի կողմից անուշադրության հետևանքով թույլ տրված բառերի, անունների, անվանումների, ամսաթվերի, դատական ակտի գործողության և կատարման համար նշանակություն ունեցող այլ տեղեկությունների մեխանիկական աղավաղումներն են: Այսպես, վրիպակի (գրասխալի) մասին կարող է խոսք լինել այն դեպքերում, երբ դատական ակտի եզրափակիչ մասում հայցվոր քաղաքացու կամ իրավաբանական անձի անունը (անվանումը) գրվել է տառասխալով (Կարենի փոխարեն՝ Կորեն, «Հրաշք» ՍՊԸ-ի փոխարեն՝ «Հրաշկ» ՍՊԸ և այլն), հայցվորի անվան փոխարեն գրվել է պատասխանողի անունը, իրավաբանական անձի անվանումը թերի է նշվել («Առ Ընդ Դի» հայ-կանադական ՀՁ ՍՊԸ-ի փոխարեն՝ «Առ Ընդ Դի» ԲԲԸ), սխալ կամ թերի են նշվել գործին մասնակցող անձ քաղաքացու անձնագրի կամ իրավաբանական անձի պետական գրանցման տվյալները, սխալ կամ թերի են նշվել այն անշարժ գույքի հասցեն կամ այլ անհատականացնող տվյալները, որի նկատմամբ իրավունքի հարցը դատարանը լուծել է և այլն:

Վրիպակի (գրասխալի) ուղղումը թույլատրելի է, եթե գործում առկա նյութերը ստուգելիս ակնհայտ է դառնում, որ տվյալ անճշտությունը պատահական սխալի, անուշադրության հետևանք է: Անկախ նրանից, թե դատական ակտի որ մասում է հայտնաբերվել նման թերությունը, այն անվերապահորեն ենթակա է վերացման, եթե դրա արդյունքում դատական ակտի էությունը և բովանդակությունը չեն փոխվում:

**Թվաբանական սխալները** դատական ակտը շարադրելիս մաթեմատիկական գործողությունների ոչ ճիշտ կատարման արդյունքում դատավորի կողմից թույլ տրված սխալներն են: Օրինակ, եթե բռնագանձման ենթակա ընդհանուր գումարը հաշվարկելիս դատարանը պարտքի հիմնական գումար 1.000.000 դրամին գումարել է դրա 15 %-ի չափով տուգանքի գումար՝ վերջինիս սխալմամբ

150.000 դրամի փոխարեն սահմանելով 15.000 դրամ (տոկոսը հաշվարկելիս թույլ տալով թվաբանական սխալ), կամ 150.000 դրամի չափով հիմնական պարտքի գումարին գումարել է 33.000 դրամի չափով հաշվարկված տույժերի գումարը և ստացել է 193.000 դրամի չափով բռնագանձման ենթակա ընդհանուր գումար և այլն:

Դատական ակտում տեղ գտած թվաբանական սխալի ուղղումը թույլատրելի է, եթե դրանում նշված ելակետային տվյալները ստուգելիս ակնհայտ է դառնում, որ տվյալ սխալը գումարման, բաժանման, բազմապատկման, մաթեմատիկական այլ գործողության ոչ ճշգրիտ կատարման արդյունք է:

Ուշագրավ է, որ բռնագանձման ենթակա գումարի սխալ հաշվարկի պատճառ կարող է լինել ոչ թե մաթեմատիկական գործողության ոչ ճշգրիտ կատարումը, այլ ոչ պատշաճ իրավական նորմի կիրառումը: Նման դեպքերի նկատմամբ ՔԴՕ 197-րդ հոդվածով սահմանված կանոնները կիրառվել չեն կարող: Թույլ տրված սխալը հնարավոր է ուղղել միայն դատական ակտը վերադաս դատական ատյանում վերանայելու միջոցով: Ասվածը պարզաբանենք օրինակով: Քաղ. օր. 411-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերության համաձայն՝ ուրիշի դրամական միջոցներն ապօրինի պահելու, դրանք վերադարձնելուց խուսափելու, վճարման այլ կետանցով դրանք օգտագործելու դեպքերում այդ գումարին վճարվում են տոկոսներ, որոնք հաշվարկվում են կետանցի օրվանից մինչև պարտավորության դադարման օրը՝ ըստ համապատասխան ժամանակահատվածների համար ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքների: Ընդ որում, 411-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության համաձայն՝ տվյալ կանոնը գործում է, եթե տոկոսի այլ չափ նախատեսված չէ պայմանագրով: Եթե դատարանը բռնագանձման ենթակա տոկոսները հաշվարկելիս հիմք ընդունի ոչ թե պայմանագրով նախատեսված տոկոսի չափը, այլ համապատասխան ժամանակահատվածների համար ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային

դրույքները, բռնագանձման ենթակա տոկոսների գումարը սխալ կհաշվարկվի: Տվյալ դեպքում կարելի է խոսել ոչ թե վճռում առկա թվաքանական սխալի, այլ վճռի բեկանման հիմք հանդիսացող դատական սխալի մասին, քանի որ դատարանը ոչ թե ոչ ճշգրիտ մաթեմատիկական գործողություն է կատարել, այլ սխալ է կիրառել օրենքը (կիրառել է այն իրավական նորմը, որը չպետք է կիրառեր, և չի կիրառել այն նորմը, որը պետք է կիրառեր):

Ուղղումների քողի տակ դատարանը չի կարող ըստ էության փոխել գործով արված իր եզրահանգումները՝ կիրառման ենթակա նորմերի, բռնագանձման ենթակա գումարի հաշվարկման սկզբունքի, դրա կազմի, չափի վերաբերյալ: Կայացված դատական ակտի էությունը որևէ պարագայում փոփոխվել չի կարող: Բռնագանձվող գումարների, վճռված իրերի քանակի վերաբերյալ ուղղումներ կատարելը թույլատրվում է միայն այն դեպքում, երբ անճշտությունը պատահական սխալի կամ ոչ ճշգրիտ հաշվարկման արդյունք է, ինչը պետք է ակնհայտորեն բխի վճռի մյուս մասերի ուսումնասիրությունից:

Վրիպակների, գրասխալների և թվաքանական սխալների ուղղումը կարող է կատարվել ինչպես դատարանի նախաձեռնությամբ, այնպես էլ գործին մասնակցող անձանց միջնորդությամբ:

Ըստ ՔԴՕ 197-րդ հոդվածի 1-ին մասի՝ դատարանն իր նախաձեռնությամբ կարող է թվարկված բացթողումները շտկել, իսկ գործին մասնակցող անձը՝ դիմել համապատասխան միջնորդությամբ դատական ակտի կայացման պահից մինչև դրա փաստացի կատարման պահը: Գործնականում վրիպակների, գրասխալների և թվաքանական սխալների ուղղման պահանջ կարող է ներկայացվել կատարման վաղեմության ընթացքում (ԴԱՀԿ մասին օրենքի 23 հոդ.): Եթե վճիռը փաստացի կատարվել է կամ պահանջատերը բաց է թողել կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետը, իսկ դատարանը մերժել է այն վերականգնելու ժամկետը, վճռում ուղղումներ կատարելու դիմում ներկայացվել չի կարող:

Նման դիմումը ենթակա է մերժման: Սակայն, եթե դատարանը վերականգնում է կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետը, ապա վճռում ուղղումներ կատարելու ժամկետը ևս երկարաձգվում է:

ՔԴՕ 197-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտում տեղ գտած վրիպակները, գրասխալները և թվաբանական սխալներն ուղղելու հարցը դատարանը լուծում է առանց դատական նիստ հրավիրելու: Ընդ որում, դատական ակտում տեղ գտած վրիպակները, գրասխալները և թվաբանական սխալներն ուղղելու մասին միջնորդությունն առաջին ատյանի դատարանը պետք է քննի և լուծի այն ստանալու օրվանից 10 օրվա ընթացքում:

Վրիպակները, գրասխալները և թվաբանական սխալներն ուղղելու մասին դատարանը կայացնում է որոշում (ՔԴՕ 197 հոդ., մաս 3): Ընդ որում, օրենքով սահմանված կարգով ենթակա են բողոքարկման թե՛ դատական ակտում տեղ գտած վրիպակները, գրասխալներն ու թվաբանական սխալներն ուղղելու մասին և թե՛ գործին մասնակցող անձի համապատասխան միջնորդությունը մերժելու մասին որոշումները (ՔԴՕ 197 հոդ., մաս 3):

Վրիպակները, գրասխալները և թվաբանական սխալներն ուղղելու մասին դատարանի որոշումը ևս անբաժանելի է այն դատական ակտից, որի կապակցությամբ կայացվել է. նրանք հանդես են գալիս որպես միասնական իրավակիրառ ակտ, ինչով էլ պայմանավորված է այն կարգավորումը, համաձայն որի՝ դատական ակտը բեկանելու դեպքում իրենց ուժը կորցնում են դրանում տեղ գտած վրիպակները, գրասխալները և թվաբանական սխալներն ուղղելու մասին որոշումները, եթե այլ բան սահմանված չէ վերադաս դատական ատյանի որոշմամբ (ՔԴՕ 197 հոդ., մաս 5):

### **§3. Դատական ակտի պարզաբանումը**

Ինչպես վերը նշել ենք, դատական ակտի պարզաբանման ինստիտուտը գործող ՔԴՕ-ով չի նախատեսվել: Դրա պատճառների մասին հետևություններ անելը բավականին բարդ է՝ նկատի ունենալով այն, որ գործող ՔԴՕ նախագծի ընդունման հիմնավորումներում քննարկվող ինստիտուտի վերացման վերաբերյալ որևէ պատճառաբանություն ներկայացված չէ, բացակայում են նաև տվյալ հարցի վերաբերյալ հրապարակումներ:

Դատական ակտի պարզաբանման՝ որպես դատական ակտի անորոշության առանձին դրսևորումների հաղթահարմանն ուղղված դատավարական ինստիտուտի կարևորությունը և արդյունավետությունը ընդունվում են բազմաթիվ դատավարագետների և պրակտիկ իրավաբանների կողմից: Դա պայմանավորված է նախևառաջ նրանով, որ դատական ակտի ոչ բոլոր թերությունները կարող են արդյունավետ և նվազագույն ծախսերի կատարմամբ վերացվել օրենսդրությամբ նախատեսված դատավարական այլ գործիքակազմով: Այսպես, դատական ակտի ընկալումը և կատարումը դժվարացնող ոչ հստակ կամ բազմիմաստ ձևակերպումները հայտնի պատճառներով չեն կարող վերացվել լրացուցիչ դատական ակտի կամ վրիպակը, գրասխալը, թվաբանական սխալն ուղղելու մասին որոշման կայացմամբ: Միևնույն ժամանակ վերաքննության կարգով առաջին ատյանի դատարանի դատական ակտի վերանայման վարույթը, մի կողմից, չի կարող ծառայել ըստ էության ճիշտ և չվիճարկվող դատական ակտի առանձին դրույթների պարզաբանմանը, մյուս կողմից, վերադաս դատական ատյանի կողմից դատական ակտի վերանայման ընթացակարգ սկսելը չի բխում արդարադատության շահերից այն առումով, որ առաջացնում է նոր դատական ծախսեր, հանգեցնում է դատարանի և գործին մասնակցող անձանց ժամանակի և այլ ռեսուրսների անհարկի վատնման այնպիսի գործով, որը սկզբունքորեն լուծված է ըստ էության չբողոքարկվող դա-

տական ակտով:

Դատական ակտի պարզաբանումն իր էությանը տարբերվում է դատական ակտում առկա թերությունները վերացնելու այլ եղանակներից նրանով, որ դատական ակտը պարզաբանելիս դատարանը ոչ թե պատասխան է տալիս գործի հարուցման կամ քննության ընթացքում ներկայացված, սակայն չլուծված պահանջներին, ոչ թե կատարում է վրիպակների, գրասխալների կամ թվաբանական սխալների ուղղում, այլ պարզաբանում է դատական ակտում ոչ հստակ շարադրված դրույթները:

Նախկին դատավարական օրենսդրությամբ վճռի պարզաբանում կարող էր կատարվել այն դեպքերում, երբ վճիռը ոչ պարզ, անհասկանալի կամ իրար հակասող դրույթներ էր պարունակում, որոնք դժվարացնում էին դրա կատարումը: Օրինակ՝ երբ ճշգրիտ չէին նշված հանձնվող գույքի անհատական հատկանիշները կամ հողամասի օգտագործման կարգը սահմանելիս դատարանը չէր նշել հողամասի սահմանները:

Դատավարագիտության մեջ համընդհանուր ճանաչում ունի այն գաղափարը, որ դատական ակտը պարզաբանելու նպատակը դրա կատարման համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելն է<sup>181</sup>: Ուստի, եթե դատարանը, օրինակ, լուծելով իրավունքի մասին վեճը, չի նշել հանձնման ենթակա գույքը, ապա այդ թերությունը կարող է վերացվել լրացուցիչ վճռով, իսկ եթե դատարանն այդ գույքը նշել է, սակայն հստակորեն չի սահմանել այն անհատականացնող հատկանիշները, ապա կարող է կատարվել վճռի պարզաբանում:

Դատական ակտի պարզաբանման ինստիտուտի բացակայությունը, մեր կարծիքով, առաջացնում է իրավական կարգավորման բավականին լուրջ բաց, քանի որ գործող օրենսդրությունը չի նախատեսում դատական ակտում առկա և դրա կատարմանը խոչընդոտող ոչ հստակ ձևակերպումների հաղթահարման այնպիսի մե-

---

<sup>181</sup> См. Комментарий к гражданскому процессуальному кодексу РФ. Под ред. М. С. Шакарян, М., 2003, էջ 345:

խանիզմներ, որոնք ապահովում են այդ դատական ակտի ռեալ ու արագ կատարումը՝ զերծ պահելով դատարանին ու նրա ծառայություններից օգտվող անձանց ժամանակի և այլ ռեսուրսների անհարկի վատնումից:

Ճիշտ է՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածը նախատեսում է դատական ակտի հիման վրա տրվող կատարողական թերթը պարզաբանելու ինստիտուտը, սակայն այն, մեր կարծիքով, չի կարող համարժեքորեն փոխարինել դատական ակտը պարզաբանելուն հետևյալ պատճառներով<sup>182</sup>:

ա. Ինչպես հայտնի է, առաջին ատյանի դատարանը կայացնում է նաև կատարում չպահանջող ճանաչողական բնույթի վճիռներ (օրինակ՝ անչափահասի կնքած գործարքը վավեր ճանաչելու, նոտարական վավերացման պահանջի խախտմամբ կնքված գործարքը վավեր ճանաչելու, անչափահասին լրիվ գործունակ ճանաչելու, ամուսնությունն անվավեր ճանաչելու, հատուկ վարույթի կարգով շարժական գույքը տիրազուրկ ճանաչելու և դրա նկատմամբ դիմողի սեփականության իրավունքը ճանաչելու մասին և այլն): Բացի դրանից՝ դատարանը հաճախ կայացնում է այնպիսի եզրափակիչ որոշումներ և միջանկյալ դատական ակտեր, որոնք ևս կատարում չեն ենթադրում, որոնցով նախատեսված չէ որոշակի ակտիվ գործողություններով դատարանի պատվիրանները կատարելու անհրաժեշտություն, իսկ դրանք չկատարելու դեպքում՝ ԴԱՀԿ ծառայության միջոցով հարկադիր կատարման հնարավորություն (օրինակ՝ գործի վարույթը կարճելու, արբիտրաժի կամ ֆինանսական

---

<sup>182</sup> Ուշագրավ են վիճակագրական տվյալները. առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում՝ ըստ «Դատական համակարգ» համակարգչային ծրագրի, 01.01.2015-08.04.2018 թթ. ընկած ժամանակահատվածում քաղաքացիական գործերով ստացվել է վճիռը պարզաբանելու մասին թվով 300 և կատարողական թերթը պարզաբանելու մասին թվով 237 միջնորդություն: Նշված թվերն ինքնին ևս խոսում են համեմատվող դատավարական ինստիտուտների ինքնուրույն նպատակային նշանակության մասին:

համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու, օտարերկրյա արբիտրաժի կամ դատարանի ակտի ճանաչումը մերժելու մասին որոշումները, հայցի ապահովման կարգով պատասխանողին որոշակի գործողություններ կատարելն արգելելու մասին միջանկյալ դատական ակտը և այլն): Ակնհայտ է, որ նման դատական ակտերով գործնականում կատարողական վարույթ չի հարուցվում, կատարողական թերթ չի տրվում, հետևաբար չի կարող նաև հարկադիր կատարողի որոշմամբ դիմում ներկայացվել դատարան՝ կատարողական թերթը պարզաբանելու խնդրանքով<sup>183</sup>:

բ. Կատարողական թերթը պարունակում է դատական ակտի եզրափակիչ մասը (ԴԱՀԿ մասին օրենքի 21 հոդ., մաս 1): Համապատասխանաբար կայացված դատական ակտի մյուս մասերը դրանում չեն արտացոլվում: Գործնականում պարզաբանման կարիք կարող է զգալ ոչ թե դատական ակտի եզրափակիչ մասում ձևակերպված եզրահանգումը, այլ այն փաստերը, որոնք դատարանը հաստատված է համարել և ձևակերպել է եզրափակիչ դատական ակտի պատճառաբանական մասում: Ակնհայտ է, որ նման իրավիճակներում ևս կատարողական թերթի պարզաբանման ինստիտուտը կիրառելի չէ և թույլ չի տալիս վերացնել դատական ակտի թերությունը:

գ. Դատական ակտի հասցեատիրոջ համար պետք է երաշխավորված լինի այն կամովին կատարելու հնարավորությունը: Դատական ակտում նշված պահանջները դրանց հասցեատիրոջը պարզ չլինելու դեպքում վերջինս պետք է ունենա հնարավորություն այն կայացրած դատարանից սահմանված կարգով ստանալու որոշակի

---

<sup>183</sup> «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կատարողական թերթում նշված պահանջները պարզ չլինելու դեպքում հարկադիր կատարողն իրավունք ունի դիմելու կատարողական թերթ տված դատարան՝ այն պարզաբանելու համար: Ուշագրավ է, որ, ի տարբերություն դատական ակտի պարզաբանման, որի վերաբերյալ, ըստ նախկին ՔԴՕ 143-րդ հոդվածի, դիմում կարող են ներկայացնել գործին մասնակցող անձինք, կատարողական թերթը պարզաբանելու խնդրանքով դատարանին իրավասու է դիմել բացառապես հարկադիր կատարողը:



պարզաբանում: Նման հնարավորության բացակայության պարագայում գործնականում անձը չի կատարելու դատական ակտը (քանզի պարզ չէ դրա պահանջը)՝ սպասելով կատարողական վարույթի հարուցման, ինչը թույլ կտա համապատասխան պարզաբանումները ստանալ հարկադիր կատարողի միջոցով: Նման իրավիճակը, կարծում ենք, չի համապատասխանում արդյունավետ արդարադատության մասին ժամանակակից պատկերացումներին և էականորեն կարող է ազդել դատական իշխանության հանրային ընկալման վրա:

Շարահրվածի հաշվառմամբ, կարծում ենք, որ գործող ՔԴՕ-ում հարկ է վերականգնել դատական ակտի պարզաբանման ինստիտուտը, ընդ որում՝ կայացված դատական ակտը պարզաբանելու իրավասություն վերապահելով ոչ միայն առաջին ատյանի, այլ նաև վերաքննիչ և Վճռաբեկ դատարաններին: Ընդ որում, ինստիտուտի հնարավոր չարաշահումները բացառելու նկատառումներից ելնելով՝ ճիշտ կլինի սահմանել, որ դատական ակտի պարզաբանումը կարող է կատարվել բացառապես գործով դատական քննության առարկա հանդիսացած հարցերի շրջանակներում, դատարանի կողմից հաստատված փաստերի և հետազոտված ապացույցների հիման վրա և չի կարող հանգեցնել դատական ակտի էության կամ դրա բովանդակության փոփոխման: Միևնույն ժամանակ նպատակահարմար ենք համարում դատական ակտը պարզաբանելու մասին որոշումը ներառել բողոքարկման ենթակա դատական ակտերի կազմում:

**ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ,  
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՆՅՈՒԹԵՐԻ  
ՑԱՆԿ**

**ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ**

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն՝ փոփոխություններով և լրացումներով (2005):
2. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենք (07.02.2018), ՀՀՊՏ 2018.02.12/10 (1368):
3. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրք (09.02.2018), ՀՀՊՏ 2018.03.05/16(1374):
4. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրք (17.05.1998), ՀՀՊՏ 1998/17(50), 10.08.1998:
5. Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգիրք (05.12.2013), ՀՀՊՏ 2013.12.28/73(1013).1:
6. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք (05.05.1998), ՀՀՊՏ 1998/17(50), 10.08.1998:
7. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 28.11.2007 թ. ՀՀ օրենքը, ՀՀՊՏ 2007/66 (590), 26.12.2007:
8. «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենք (05.05.1998), ՀՀՊՏ 1998/12(45), 15.06.1998:
9. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք (18.02.2004), ՀՀՊՏ 2004/18(317), 31.03.2004:
10. Սահմանադրական դատարանի 09.04.2007 թ. թիվ ՍԴՈ-690 որոշումը:
11. Սահմանադրական դատարանի 11.04.2007 թ. թիվ ՍԴՈ-691 որոշումը:
12. Սահմանադրական դատարանի 28.11.2007 թ. թիվ ՍԴՈ-719 որոշումը:
13. Սահմանադրական դատարանի 28.09.2010 թ. թիվ ՍԴՈ-918 որոշումը:

14. Սահմանադրական դատարանի 02.11.2010 թ. թիվ ՍԴՈ-922 որոշումը:
15. ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 2008 թ. հունիսի 13-ի թիվ 122 որոշումը՝ «Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտերի կառուցվածքը հաստատելու մասին»:
16. ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 2005 թ. դեկտեմբերի 8-ի թիվ 81 որոշումը՝ «ՀՀ դատարանների կողմից արձակվող վճարման կարգադրության օրինակելի ձևը հաստատելու մասին»:
17. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրք (1964 թ.):
18. ՀՍԽՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք (30.03.1923):
19. «Պետական նոտարիատի մասին» ՀՀ օրենք (26.12.1974):
20. ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության 27.02.1985 թ. հրամանագիր՝ «Անչափահաս երեխաների օգտին ալիմենտների բռնագանձման կարգը փոփոխելու վերաբերյալ», ՀՍՍՀ ԳՍՏ 1985 թ., թիվ 4:
21. ԵԴԽԵՄ թիվ 11 (2008) կարծիքը «Դատական ակտերի որակի մասին» // <https://www.coe.int/en/web/ccje/ccje-opinions-and-magna-carta>:

**ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ԴԱՍԱԳՐՔԵՐ. ՁԵՌՆԱՐԿՆԵՐ.**  
**ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ**

1. **Դավթյան Ա. Հ.**, Քաղաքացիական դատավարություն, «Տիգրան Մեծ» հրատ., Եր., 2007:
2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, Գ. Հարությունյանի և Ա. Վաղարշյանի խմբ., «Իրավունք» հրատ., Եր., 2010:
3. **Հովհաննիսյան Վ. Վ.**, Արբիտրաժային վճիռների (որոշումների) ճանաչումը և կատարումը Հայաստանի Հանրապետությունում, ԵՊՀ հրատ., Եր., 2009:

4. **Հովհաննիսյան Վ. Վ.**, Իրավունքների պաշտպանության արբիտրաժային ձևը, ԵՊՀ հրատ., Եր., 2008:
5. **Հովհաննիսյան Վ. Վ.**, Վերաքննության կարգով դատական ակտերի վերանայման հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում, Եր., ԵՊՀ հրատ., 2013:
6. **Մանուկյան Հ.**, Դատաիրավական բարեփոխումները Հայաստանի Հանրապետությունում. անցյալի դասերը և ապագայի հեռանկարները // Օրենք և իշխանություն, 2001, № 8:
7. **Պեդրոսյան Ռ. Գ.**, Դատարանը և քաղաքացիական դատավարությունն Արևելյան Հայաստանում XIX-XX դարերում (պատմաիրավական հետազոտություն և օրենսդրության իրավահամեմատական վերլուծություն), Երևանի համալս. հրատ., Եր., 2001
8. **Պեդրոսյան Ռ. Գ.**, Հայաստանի քաղաքացիական դատավարություն, Երկրորդ հրատ., Երևանի համալս. հրատ., Եր., 2003:
9. **Պեդրոսյան Ռ. Գ.**, Հայաստանի քաղաքացիական դատավարություն, Երրորդ հրատ., Երևանի համալս. հրատ., Եր., 2007:
10. **Абрамов С. Н.**, Гражданский процесс. Учебник для вузов, М., 1948.
11. **Абрамов С. Н.**, Советский гражданский процесс, М., 1958.
12. **Авдеенко Н. И.**, Механизм и пределы регулирующего воздействия гражданского процессуального права, Л., 1969.
13. **Авдюков М. Г.**, Судебное решение, М., 1959.
14. Арбитражный процесс. Под ред. В. В. Яркова, М.: «Юрист», 1998.
15. Арбитражный процесс: Учебник. Отв. ред. В. В.Ярков, М., 2003.
16. **Афанасьев С. Ф., Зайцев А. И.**, Гражданский процесс. Учебно-методический комплекс, М., 2004.
17. **Безруков А. М.**, Преюдициальная связь судебных актов, М., 2007.
18. **Боннер А. Т.**, Применение нормативных актов в гражданском процессе, М., 1980.
19. **Васильев С. В.**, Гражданский процесс, Харьков: «Одиссей», 2007.
20. **Викут М. А., Зайцев И. М.**, Гражданский процесс. Курс лекций, Саратов, 1998.

21. Гражданский процесс России. Под ред. М. А. Видука, М., 2004.
22. Гражданский процесс Российской Федерации. Под ред. А. В. Власова, М., 2003.
23. Гражданский процесс. Под ред. В. А. Мусина, Н. А. Чечиной, Д. М. Чечота, М., 2001.
24. Гражданский процесс. Под ред. В. В. Яркова, М., 2004.
25. Гражданский процесс. Под ред. М. К. Треушниковой, М.: «Городец», 2003.
26. Гражданское процессуальное право России, М.: «Былина», 1999.
27. Гражданское процессуальное право. Под ред. М. С. Шакарян, М.: «Перспект», 2004.
28. **Громошина Н. А.**, Упрощение процесса: все ли сделано правильно? // Lex Russica, Научные труды МГЮА, 2004, № 1.
29. **Гурвич М. А.**, Судебное решение (теоретические проблемы), М., 1976.
30. **Гурвич М. А.**, Избранные труды в 2-х томах, том I, Краснодар, 2006.
31. **Гурвич М. А.**, Лекции по советскому гражданскому процессу, М., 1950.
32. **Гурвич М. А.**, Учение об иске (состав, виды), М.: ВЮЗИ, 1981.
33. **Еременко М. С.**, Право на справедливое судебное разбирательство в гражданском процессе: практика Европейского суда по правам человека // Российский ежегодник гражданского и арбитражного процесса, № 3, 2004.
34. **Жилин Г. А.**, Гражданское дело в суде первой инстанции, М., 2000.
35. **Жилин Г. А.**, Суд первой инстанции в гражданском процессе, М., 2000.
36. **Жилин Г. А.**, Цели гражданского судопроизводства и их реализация в суде первой инстанции, М.: «Городец», 2000.
37. **Жуйков В. М.** Проблемы гражданского судопроизводства, М., 2001.

38. **Жуйков В. М.**, Проблемы гражданского процессуального права, М., 2001.
39. **Жуйков В. М.**, Судебная защита прав граждан и юридических лиц, М., 1997.
40. **Завадская Л. Н.**, Реализация судебных решений, М., 1982.
41. **Загайнова С. К.**, Судебный приказ как форма реализации судебной власти в гражданском процессе // Современная доктрина гражданского, арбитражного процесса и исполнительного производства: теория и практика. Сб. науч. статей, Краснодар, СПб., 2004.
42. **Зейдер Н. Б.**, Судебное решение по гражданскому делу, М., 1966.
43. **Клейман А. Ф.**, Новейшие течения в советской науке гражданского процессуального права. В кн.: Гражданский процесс. Хрестоматия: Учебное пособие. Под ред. М. К. Треушников, М., 2005.
44. **Комаров А. Н.**, Язык и стиль судебных документов. Практические рекомендации по оформлению судебных актов. Сост. Е. П. Попова, Ю. С. Фадеева, Т. Н. Цыплакова, СПб., 2003.
45. **Комиссаров К. И.**, Задачи судебного надзора в сфере гражданского судопроизводства, Свердловск, 1971.
46. Комментарий к гражданскому процессуальному кодексу Российской Федерации. Под ред. М. С. Шакарян, М.: «Кодекс», 2003.
47. **Лебедь К. А.**, Решение арбитражного суда, М., 2005.
48. **Лукайдеc Л.**, Справедливое судебное разбирательство. Комментарий к п. 1 Европейской Конвенции о защите прав человека и основных свобод // Российская юстиция, № 2, 2004.
49. **М. де Сальвиа**, Прецеденты Европейского Суда по правам человека, СПб., 2004.
50. **Малышев К. И.**, Курс русского гражданского судопроизводства. В 3-х томах, т. 1, СПб., 1874.
51. **Масленникова Н. И.**, Судебный приказ // Гражданский процесс, М., 1999.
52. **Масленникова Н. И.**, Судебный приказ // Российский юридический журнал, 1996, № 3.

53. **Матеров Н. В., Судаков Г. В.**, О языке судебного решения. Практические рекомендации по оформлению судебных актов, СПб., 2003.
54. **Мельников А. А.**, Советский гражданский процессуальный закон, М., 1973.
55. **Новицкий И. Б., Перетерский И. С.**, Римское частное право, М., 1948.
56. **Папкова О. А.**, Усмотрение суда, М.: «Статут», 2005.
57. **Перетерский И. С.**, Очерки судоустройства и гражданского процесса иностранных государств, М., 1952.
58. **Решенкин А. Г., Павлов Н. В.**, О языке судебного решения и стиле судебного акта // Вестник ВАС РФ, 2001, № 7, 2008.
59. **Решетникова И. В., Ярков В. В.**, Гражданское право и гражданский процесс в современной России, Екатеринбург, 1999.
60. **Решетняк В. И., Черных И. И.**, Заочное производство и судебный приказ в гражданском процессе, М., 1997.
61. **Салозубова Е. В.**, Римский гражданский процесс, М., 1997.
62. **Сахнова Т. В.**, Курс гражданского процесса: теоретические начала и основные институты, М.: «Волтерс Клувер», 2008.
63. **Сахнова Т. В., Шишмарева Т. П.**, О судебных процедурах в цивилистическом процессе или к вопросу о дифференциации процессуальной формы // Теоретические и практические проблемы гражданского, арбитражного процесса и исполнительного производства. Сб. науч. статей, Краснодар-СПб., 2005.
64. **Сергейко П. Н.**, Законность, обоснованность и справедливость судебных актов, Краснодар, 1974.
65. Теория правосудия, в 3-х томах, **Фурсов Д. А., Харламова И. В.**, т. 2: Гражданское судопроизводство как форма отправления правосудия, М.: «Статут», 2009.
66. **Ткачев Н. И.**, Законность и обоснованность судебных постановлений по гражданским делам, Саратов, 1987.
67. **Туманова Л. В.**, Новое гражданское процессуальное законодательство

в свете Европейской конвенции о защите прав человека и основных свобод // Проблемы защиты прав и охраняемых законом интересов: Сб. науч. трудов, Тверь, 2003.

68. **Черемин М. А.**, Приказное производство в российском гражданском процессе, М., 2001.
69. **Чечина Н. А.**, Норма права и судебное решение. В кн.: Избранные труды по гражданскому процессу, СПб., 2004.
70. **Чечина Н. А.**, Категория справедливости в советском гражданском процессуальном праве, Калинин, 1981.
71. **Чечот Д. М.**, Постановления суда первой инстанции по гражданским делам, М.: «Госюриздат», 1958.

### **ԱՏԵՆԱԿՆՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՂՍԱԳՐԵՐ**

72. **Абушенко Д. Б.**, Судебное усмотрение в гражданском процессе. Автореф. дис. ... к.ю.н. Екатеринбург, 1998.
73. **Загайнова С. К.**, Судебные акты в гражданском и арбитражном процессе: теоретические и прикладные проблемы. Дисс... д.ю.н., Екатеринбург, 2008.
74. **Клинова Е. В.**, Проявление законной силы судебного решения. Автореф. дис. ... к.ю.н. М., 2004.
75. **Князев А. А.**, Законная сила судебного решения. Автореф. дис. ... к.ю.н. М., 2004.
76. **Козлов А. Ф.**, Суд первой инстанции как субъект советского гражданского процессуального права. Автореф. дис. ... д.ю.н. Свердловск, 1970.
77. **Масленникова Н. И.**, Законная сила судебного решения в советском гражданском процессуальном праве. Автореф. дис.... к.ю.н. Свердловск, 1975.
78. **Невский И. А.**, Исполнимость постановлений судов общей юрисдикции и арбитражных судов в контексте задач гражданского судопроизводства. Дис. ... к.ю.н. Саратов, 2005.



79. **Плюхина М. А.**, Процессуальные средства обеспечения эффективности судопроизводства по гражданским делам. Автореф. дисс. ...к.ю.н. Екатеринбург, 2002.
80. **Скобелев В. П.**, Законная сила постановлений суда первой инстанции в гражданском процессе. Автореф. дис. ... к.ю.н. Минск, 2005.
81. **Сысоев Д. В.**, Реализация права на судебную защиту в приказном производстве в общих судах. Автореф. дисс. ... к.ю.н. Минск, 2006.
82. **Хахалева Е. В.**, Обоснованность решения суда общей юрисдикции. Автореф. дисс. ... к.ю.н. Саратов, 2005.
83. **Чуйков Ю. Н.**, Частные определения в советском гражданском судопроизводстве. Автореф. дис. ... к.ю.н. Харьков, 1971.
84. **Широкоев Ю. А.**, Акты суда общей юрисдикции об окончании производства по делу без принятия судебного решения. Автореф. дис. ... к.ю.н. Саратов, 2006.
85. **Щеголов В. Н.**, Законность и обоснованность судебного решения. Автореф. дисс. ...к.ю.н. Томск, 1955.

### ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՆՅՈՒԹԵՐ

86. ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 2008 թ. հունիսի 13-ի թիվ 122 որոշումը՝ «Հայաստանի Հանրապետության առաջին աստիճանի դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտերի կառուցվածքը հաստատելու մասին»:
87. ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 2005 թ. դեկտեմբերի 8-ի թիվ 81 որոշումը՝ «ՀՀ դատարանների կողմից արձակվող վճարման կարգադրության օրինակելի ձևը հաստատելու մասին»:
88. Բուրդովն ընդդեմ Ռուսաստանի գործով ՄԻԵԴ 07.05.2002 թ. վճիռը:
89. Գարսիա Ռուիզն ընդդեմ Իսպանիայի գործով ՄԻԵԴ 21.01.1999 թ. վճիռը:

90. Հորնսբին ընդդեմ Հունաստանի գործով ՄԻԵԴ 19.03.1997 թ. վճիռը:
91. Հաջիանաստասիուն ընդդեմ Հունաստանի գործով ՄԻԵԴ 16.12.1992 թ. վճիռը:
92. Հիրո Բալանին ընդդեմ Իսպանիայի գործով ՄԻԵԴ 09.12.1994 թ. վճիռը:
93. Հելլեն ընդդեմ Ֆինլանդիայի գործով ՄԻԵԴ 19.12.1997 թ. վճիռը:
94. Վան դե Հուրկն ընդդեմ Նիդերլանդների գործով ՄԻԵԴ 19.04.1994 թ. վճիռը:
95. Ռուիս Տորիջան ընդդեմ Իսպանիայի գործով ՄԻԵԴ 09.12.1994 թ. վճիռը:
96. Վճռաբեկ դատարանի թիվ 3-2504/ՏԴ քաղաքացիական գործով 2006 թ. դեկտեմբերի 21-ի որոշումը:
97. Վճռաբեկ դատարանի թիվ 3-130(Ա) քաղաքացիական գործով 2008 թ. փետրվարի 1-ի որոշումը:
98. Վճռաբեկ դատարանի թիվ 3-93 (ՎԴ) քաղաքացիական գործով 2008 թ. փետրվարի 29-ի որոշումը:
99. Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/0292/05/08 վարչական գործով 2008 թ. հոկտեմբերի 31-ի որոշումը:
100. Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/3468/02/08 քաղաքացիական գործով 2010 թ. ապրիլի 2-ի որոշումը:
101. Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/0139/02/13 քաղաքացիական գործով 28.11.2014 թ. որոշումը:

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ՍԵՐԳԵՅ ԳՈՒՐԳԵՆԻ ՄԵՂՐՅԱՆ**

**ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆԻ  
ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ  
ԲՆՈՒՅԹԸ ԵՎ ՈՐԱԿԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ  
ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ  
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի  
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի  
Հրատ. խմբագրումը՝ Մ. Հովհաննիսյանի

Տպագրված է «ՎԱՌՄ» ՍՊԸ-ում:  
Ք. Երևան, Տիգրան Մեծի 48, 43

Ստորագրված է տպագրության՝ 20.02.2020:  
Չափսը՝ 60x84 <sup>1</sup>/<sub>16</sub>: Տպ. մամուլը՝ 12.125:  
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն  
Ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1  
[www.publishing.am](http://www.publishing.am)



ՎՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ  
ՆՐԵՎԱՆ 2020  
[publishing.ysu.am](http://publishing.ysu.am)